

# ՋՈՀՐԸՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԼԵԿԵՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՄԻ ԱՄԵՐԻԿԱՆ  
ՄԻՋԵՐԿԵՐԱԺՈՎՅԱՆ ԱՌԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՄԻ  
XIII-XIV դդ.



Երևան  
2015

9(47.925)

Գ-47

հղ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶՈՒՐԸԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Արևիկալիսյան Հայկական պոետո-լիցո-նը  
միջերկրամասն առևտրի Համակարգում  
**XIII-XIV** ԳԳ.

5503

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՃՃԱՆ  
ՄԱՏԵՆԱՇԱՐ

119



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

119

*Signature*

ԵՐԵՎԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2015



ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(22)

Գ 479

Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու  
Վ. Ա. Տեր-Ղևոնդյան

Գևորգյան Ջ. Հ.

Գ 479 Կիլիկիայի հայկական պետությունը միջերկրածովյան առևտրի  
համակարգում (XIII-XIV դդ.)/ Ջ. Հ. Գևորգյան.- Եր.:  
Պատմության ինստիտուտ, 2015.- 271 էջ + 8 էջ նկար:

Աշխատությունը նվիրված է Կիլիկիայի հայկական պետության  
միջազգային առևտրա-տնտեսական հարաբերությունների պատմությանը:  
Քննության են առնված Կիլիկյան Հայաստանի ինչպես սոցիալ-տնտեսական  
հարաբերություններին, այնպես էլ պետության միջազգային քաղաքական  
հարաբերություններին առնչվող տարատեսակ խնդիրներ: Ուսումնասիրվել են  
Կիլիկիայի խոշոր քաղաքներում հանգրվանած օտարերկրյա  
վաճառականության առևտրային գործունեության բնույթը, նրանց  
համայնքային կյանքի կազմակերպումը և այլն: Նորովի ներկայացվել են  
Կիլիկյան Հայաստանի ֆիզիկա և տնտեսա աշխարհագրական բնութագիրը,  
նրա դիրքն ու նշանակությունն Արևելք-Արևմուտք առևտրային  
ճանապարհների խաչմերուկում: Հատուկ ուշադրության են արժանացել  
տնտեսության ու առևտրի ազդեցությունը Կիլիկյան Հայաստանի միջազգային  
քաղաքական հարաբերությունների վրա և այլ խնդիրներ:

Աշխատությունը կարող է օգտակար լինել հայոց և Եվրոպայի  
միջնադարյան պատմության մասնագետներին, արևելագետներին,  
տնտեսագետներին, ինչպես և հայագիտության հետաքրքրվող ընթերցող  
հասարակայնությանը:

Գ941(479.25)

ԳՄԴ 63.3(22)

ISBN 978-9939-860-05-3

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2015

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Պատմություն գիտության ընկալումը, արժևորումը, իմաստավորումն ու հնարավոր տարաբնույթ բանաձևումները դարերի, հազարամյակների ընթացքում փոփոխության են ենթարկվում: Պատմության դասական շարադրանքը, որտեղ առյուծի բաժինը կազմում էր զուտ քաղաքական պատմությունը (պետություններ, պատերազմներ, թագավորներ և այլն) հատկապես XX դ. բովանդակային և աշխարհայացքային կերպափոխումներ ունեցավ: Առաջ եկան պատմագիտական դպրոցներ (Աննալների դպրոց և այլն), որոնց ներկայացուցիչներն ուսումնասիրության առարկա դարձրեցին հասարակ մարդու առօրյան, նրա կենսակերպը, հասարակական ու տնտեսական կյանքը: Միահյուսվելով այս կամ այն ժամանակին տիրող մարդու գործունեության աշխարհայացքային, նյութական-տնտեսական ու հասարակական դրվածքները՝ Ֆեռնան Բրոդելը, Ժակ Լը Գոֆֆը ու մյուսները պատմությունը վերածնցին առավել ընկալելի, իրական, հնարավորինս զերծ առասպելականությունից, տրամաբանական հստակ շղթա ունեցող գիտության: Հասարակը, առօրյան, կյանքի պարզագույն դրվագը դարձան պատմության ուսումնասիրության առարկա, ինչի շնորհիվ տարբեր ժամանակներում ապրած մարդու կերպի վերհանումն ու նկարագրումը դարձավ ավելի բնութագրական ու դիպուկ: Առևտուր նրկայից ինքնին ունի քաղաքակրթական բացառիկ նշանակություն: Վերցնելու և տալու մշակույթը, թմրուս, որևէ մարդու, հանրային քաղաքակրթական զարգացման մակարդակի կարևորագույն ցուցիչներից է: Վաղնջական ժամանակներից առևտուրն էր, որ տարբեր իրականություններին բերում էր նրկխոսության: Առևտրականները դարձան հին աշխարհի առաջին ճանապարհորդները և փաստացի նրկիր մոլորակի ճանաչողության առաջին դրոշակակիրները: Պարզ է, որ առևտուրը, այն էլ միջազգային առևտուրը այդ տարբեր իրականությունների շփման սահմանում պետք է անհամեմատ ավելի զարգացած լինի:

Թե՛ն Մեծ Հայքը, և թե՛ն Կիլիկիայան Հայաստանը մշտապես եղել են Արևելքի և Արևմուտքի միջև նրկխոսության յուրահատուկ հարթակներ, ինչը խորապես արտահայտվել է միջազգային առևտրի պարագայում ևս:

Միջերկրական ծովը համաշխարհային տնտեսության կառուցվածքային զարգացման բնօրրաններից է եղել: Այդ միջավայրի ծնունդն են ծովային հնագույն ամենահայտնի քաղաքակրթությունները՝ փյունիկյան, հին հունական ու հռոմեական և այլն: Ժամանակի ընթացքում այստեղ մշակվել և կատարելագործվել են տնտեսական քաղաքակրթո հարաբերությունների ավանդույթներ, որոնց շարժիչ ուժը դարեր ի վեր եղել է միջազգային առևտուրը: XIII-XIV դդ. միջերկրածովյան առևտրային համակարգի պատմության առանցքային փուլերից է, երբ Արևմտյան Եվրոպայում ընթանում էին տնտեսական աննախադեպ ձևափոխումներ, որոնք դրսևորվում էին ոչ միայն ձեռնարկատիրական արտադրության զարգացմամբ, այլև ֆինանսատրամական բոլորովին նոր որակի հարաբերություններով: Արդյունքում տնտեսություն-քաղաքականություն փոխազդեցությունն արտահայտվում էր առավել բարդ կազմությամբ: Խաչակրաց արշավանքներին անմիջականորեն մասնակցած իտալական հանրապետությունները (Վենետիկի, Ջենովայի, Պիզայի և այլն), որոնք միջերկրածովյան առևտրի գլխավոր դերակատարներն էին, արդեն XIII դ. իրենց անդրծովյան տնտեսական ու քաղաքական գործունեությունը ծավալում էին դարերով մշակված ու կատարելագործված հմուտ ռազմավարությամբ: Ավելին, XII դ. հատկապես իտալական քաղաքներում ձևավորվել էին առաջին բանկերը, որոնք մեծ չափի ֆինանսներ էին ներդնում նաև միջազգային առևտրի բնագավառում: Միևնույն ժամանակ մերձավորարևելյան ու հյուսիսաֆրիկյան պետություններն աստիճանաբար ընկղմվում էին տնտեսական ճգնաժամի մեջ: Հարավեվրոպական պետությունների հետ առևտրական շփումներից վերջիններիս կախվածությունը գնալով ավելի նկատելի էր դառնում, ինչը, անշուշտ, չէր կարող չանդրադառնալ նաև նրանց արտաքին քաղաքականության վրա:

Ահա այս նոր բնույթի գործոններով ձևավորվող աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում, XIII դ. սկզբից Կիլիկիայի հայկական պետությունը սկսում է մեծ թափով ներգրավվել տվյալ ժամանակի ամենազարգացած տնտեսական համակարգի՝ միջերկրածովյան առևտրի մեջ: Ի դեմս արևմտաեվրոպական առևտրական գերտերությունների՝ Կիլիկիայան Հայաստանը միջազգային հարաբերություններում ձեռք էր բերում բոլորովին նոր տնտեսի գործընկերներ: Հայոց թագավորությունն այդուհետև հայտնվում էր շատ ավելի ընդգրկուն կառուցվածք ունեցող աշխարհաքաղաքական միջավայրում: Առևտուրը Կիլիկիայի պետական գանձարանին մեծ եկամուտներ էր ապահովում, խթանում տնտեսության զարգացումը և դառնում երկրի արտաքին քաղաքականության օրակարգի առաջնահերթ խնդիրներից:

Ուսումնասիրվող թեման, որը ունի գրեթե երկու դարի ընդգրկում, հայոց պատմության այն եզակի և յուրահատուկ ժամանակափուլերից է, երբ հայ իրականությունը դարձել էր միջերկրածովյան մեծ ընտանիքի լիարժեք անդամ: Կիլիկիայի գրեթե բոլոր մեծ քաղաքներում, այդ թվում և մայրաքաղաք Միսում հանգրվանած միայն եվրոպացի վաճառականները հաշվվում էին հարյուրներով: Հայ մարդն ապրում էր բացառիկ, կոսմոպոլիտ իրականության պայմաններում, որտեղ նրա հետ մեկ փողոցի վրա բնակություն էին հաստատել վենետիկցին, ջենովացին, ֆրանսիացին, կատալոնացին, հրեան, արաբը, հույնը և այլն: Վերջիններիս առևտրային գործունեությունը, համայնքային կյանքի բնութագիրը և այլ խնդիրների հետազոտությունն առանձնահատուկ կարևորություն ունի նաև Կիլիկիայի քաղաքներում առօրեական կյանքի պատմության լուսաբանման տեսանկյունից: Միևնույն ժամանակ միջազգային առևտրի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի ամբողջական ու համակողմանի ներկայացնելու Կիլիկիայան Հայաստանի քաղաքական պատմությունը:

Սույն աշխատության մեջ օգտագործվել են բազմաթիվ ու տարաբնույթ սկզբնաղբյուրներ, որոնցում սակայն հայկական աղբյուր-

ները փոքր մաս են կազմում: Պատճառն այն է, որ մասնավորապես XIII-XIV դդ. ինչպես Կիլիկիայի, այնպես էլ բուն Հայաստանի հայ պատմիչներն պնտության տնտեսական կյանքն իրենց հետաքրքրության շրջանակում չեն պահել<sup>1</sup>: Նրանք հիմնականում անդրադարձել են Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմությանը: Այնուամենայնիվ, հարկ է առանձնացնել որոշ հնդինականների, որոնք թեև նույնպես չեն նկարագրել Հայոց թագավորության տնտեսական կյանքը և առավել ևս առևտրային հարաբերությունները, սակայն կարևոր վկայություններ են թողել Վենետիկի և Ջենովայի Հանրապետությունների պատմությանն առնչվող մի շարք կարևոր անցքերի մասին: Այդ առումով հատկապես արժեքավոր են Հեթում Նդիրցու<sup>2</sup>, Հեթում Պատմիչի<sup>3</sup> և Հեթում Բ-ի<sup>4</sup> աշխատությունները: Վերջին երկուսը բացառիկ տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայի ավերիկ Վենետիկի և Ջենովայի նավատորմների միջև տեղի ունեցած խոշոր ծովամարտի մասին:

Առանձնակի կարևորություն ունեն Սմբատ Սպարապետի<sup>5</sup>, Կիրակոս Գանձակեցու<sup>6</sup>, Ներսես Պալիաննեցի<sup>7</sup>, ինչպես նաև Լևոն Ե-ի (1374-1375) ֆրանսիացի խոստովանահայր և կենսագիր Հովհան

<sup>1</sup> Микаел ян Г., История Киликийского Армянского государства, Е., 1952, с. 396.

<sup>2</sup> Հեթում Նդիրցի, Համառոտ պատմութիւն ժամանակաց, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Ե., 2007, էջ 527-554:

<sup>3</sup> Հեթում Պատմիչի ժամանակագրությունը, Մանր ժամանակագրություններ, XIII-XV III դդ., հ. II, կազմ. Հակոբյան Վ. Ա., Ե., 1956, էջ 33-93:

<sup>4</sup> Հեթում Բ-ի տարեգրությունը, Մանր ժամանակագրություններ, XIII-XV III դդ., հ. I, կազմ. Հակոբյան Վ. Ա., Ե., 1951, էջ 65-101:

<sup>5</sup> Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդտաբլի), Ս. Էջմիածին, 1918: СМбат Спарпет, Судебник, Е., 1958. Սմբատ Սպարապետ, Պատմութիւն, Մոսկովա, 1856 (այսուհետև՝ Սմբատ Սպարապետ):

<sup>6</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությանը՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի):

<sup>7</sup> Ներսես Պալիաննեցի ժամանակագրական հատվածները, Մանր ժամանակագրություններ, XIII-XV III դդ., հ. II, կազմ. Հակոբյան Վ. Ա., Ե., 1956, էջ 173-194:

Դարդելի<sup>8</sup> Կիլիկիայի պատմության ուսումնասիրության համար արժեքավոր աշխատությունները:

Հայտնի է, որ Կիլիկյան Հայաստանն ունեցել է թագավորական արխիվ, որը 1266, 1275 և 1375 թթ. այրվել է մամլոքների կողմից: Դրա հետևանքով Կիլիկիայի հայոց թագավորության պնտական հարուստ դիվանից մեզ են հասել հայերեն ընդամենը 6 բնագրեր, որոնք պահպանվել են նվրոպական արխիվներում<sup>9</sup>: Չենք բացառում, որ հենց արքունական արխիվում են պահվել պնտության տնտեսության տարբեր բնագավառներին այս կամ այն կերպ առնչված իրավական տարաբնույթ փաստաթղթեր, որոնց բացակայությունն անդառնալի հետևանքներ է ունենում Կիլիկյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի պատմության ուսումնասիրության համար:

Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրի պատմության լուսաբանմանը նպաստում են օտարալեզու բազմաբնույթ սկզբնաղբյուրներ, որոնք ներառում են նույնիսկ XIV դ. նվրոպական գրականության հռչակավոր գործերը: Բավական է միայն նշել Վերածննդի խոշորագույն ներկայացուցիչ Ջիովաննի Բոկաչչոյին (1313-1375), որի «Դեկամերոն» նշանավոր նրկում բազմաթիվ հիշատակություններ կան Կիլիկյան Հայաստանի՝ մասնավորապես Այասի մասին: Այդ հիշատակությունների զգալի մասը կապված է վաճառականների հետ<sup>10</sup>: Իր հիշատակություններում Բոկաչչոն Կիլիկյան Հայաստանն ուղղակի անվանում է «Հայաստան»: Նշենք, որ միջնադարյան նվրոպական գրքերում բոլոր պատմագնդարվեստական նրկներում, տարաբնույթ սկզբնաղբյուրներում Կիլիկիայի հայկական պնտությունը հիշատակված է կամ «Հայաստան», կամ էլ՝ «Փոքր Հայաստան» (համեմատաբար ավելի քիչ դեպքերում) ձև-

<sup>8</sup> Յովհան Դարդելի, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետրբուրգ, 1891 (այսուհետև՝ Յովհան Դարդելի):

<sup>9</sup> Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պնտությունում XII-XIV դարերում, Ե., 1973, էջ 25-26:

<sup>10</sup> Ջիովաննի Բոկաչչո, Դեկամերոն, Ե., 1960, էջ 174, 409, 416-419, 650-651:

րով: Հայաստանի (այն է՝ Կիլիկյան Հայաստան) մասին հիշատակություններից գատ, Բոկաչչոն բազմիցս խոսում է նաև Կիլիկյան Հայաստանի խոշորագույն նավահանգստի՝ Այասի մասին: Կիլիկիայի մասին Բոկաչչոյի շարադրանքի ոճը, նրա գրած այս կամ այն հետաքրքրաշարժ դրվագները խիստ կարևոր են այն տմասնկյունից, թեմ ինչպես էին ընկալվում Հայոց պետությունն ու հայերը ոչ միայն հռչակավոր ֆյոբնետացու կողմից (Ջովաննի Բոկաչչո), այլև իտալական և ընդհանրապես միջնադարյան եվրոպական իրականությունում:

XIV դ. անգլիական գրականության գոհարի՝ «Քենտերբերյան պատմվածքների» հեղինակ Ջեֆրի Չոսերն (1343-1400) Այասը հիշատակել է Արևելքի խոշորագույն քաղաքների կողքին<sup>11</sup>:

Կիլիկյան Հայաստանի և ընդհանրապես միջերկրածովյան ու սևծովյան միջնադարյան պետությունների ու քաղաքների միջազգային առևտրի պատմության հետազոտության մեծարժեք սկզբնաղբյուրները դրանցում առևտրական գործունեություն ծավալած եվրոպացիների գրառած տարատեսակ փաստաթղթերն են:

Առաջնահերթ կարևորություն ունեն նոտարական գործերը, որոնք պարունակում են փաստառատ ու բազմակողմանի հարուստ տեղեկություններ: Դրանք նոտարական գործակալների կողմից կազմվել են անդրծովյան երկրների եվրոպական վաճառականական գաղութներում և այժմ պահպանվում են Իտալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի ու շատ այլ պետությունների արխիվներում: Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրի ուսումնասիրության համար անփոխարինելի են Այասում և կիպրական քաղաքներում գործած ջննովացի և վենետիկցի նոտարական գործակալների՝ լատիններենով ձևակերպած գործերը, որոնք առևտրական տարատեսակ պայմանագրեր են՝ կումմենդաներ, փոխառություններ, վստահագրեր, անդորրագրեր, կտակներ և այլն: Մինչ այժմ հրատարակվել

<sup>11</sup> Chaucer's *Canterbury Tales* (Selected), New York, 1970, p. 5.

են դրանց հազարավոր օրինակներից կազմված սովորաձավալ բազմաթիվ ժողովածուներ:

Իտալացի պատմաբան Կ. Դեզինոնին հրատարակել է Այասում 1270-ական թթ. կազմված ջննովական նոտարական հարյուրավոր փաստաթղթեր: Նույն գիտնականի խմբագրությամբ լույս է տեսել նաև 1299-1301 թթ. Ֆամագուստայում ձևակերպված ջննովական նոտարական գործերի հավաքածուն<sup>12</sup>:

1270-ական թթ. մինչև XIV դ. վերջին վերաբերող վենետիկյան արխիվային փաստաթղթերի հարուստ մի այլ ժողովածուի հրատարակողը Ղևոնդ Ալիշանն է: Այդ ժողովածուում ներառված են նոտարական գործեր, վենետիկյան Սենատի որոշումներ և այլ փաստաթղթեր<sup>13</sup>:

Կիպրոսի ջննովական նոտարական մեծաքանակ գործեր են հրատարակվել նաև XX դ. սկզբին, որոնց զգալի մասը վերաբերում է Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական կապերին<sup>14</sup>: Շատ ավելի մեծածավալ հատորներ են լույս տեսել XX դ. նրկրողը կնսին, որոնց խմբագիրները ֆրանսիական ու իտալական հեղինակավոր համալսարանների հայտնի միջնադարագետներ են: Ա. Բոնդի Մեթլիլիքոն հրատարակել է վենետիկցի նոտարական գործակալ Ֆելիչե դե Մերլիսի՝ 1315-1348 թթ. Այասում և վենետիկում ձևակերպած նոտարական գործերի նրկհատոր արժեքավոր ժողովածուն<sup>15</sup>:

<sup>12</sup> Desimoni C., *Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aïas (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois* // Archives de l'Orient latin, T. I, Paris, 1881. Նույնի՝ *Actes passés à Famaguste de 1299 à 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto* // Archives de l'Orient latin, T. II, Paris, 1884.

<sup>13</sup> Alishan L., *L'Ameno-Veneto, Compendio Storico e Documenti delle Relazioni degli Armeni coi Veneziani, Primo periodo, secoli XIII-XIV, Parte II, Documenti, Venezia, 1893.*

<sup>14</sup> Ferretto A., *Codice diplomatico delle relazioni fra la Liguria, la Toscana e la Lunigiana ai tempi di Dante (1265-1321), parte seconda (dal 1275 al 1281)* // Atti della Società Ligure di storia Patria, V. XXXI. Parte Seconda, Roma, 1903. Նույնի՝ *Annali storici di Sestri Ponente e sue famiglie (dal secolo VII al secolo XV)* // Atti della Società Ligure di storia Patria, V. XXXV, Genova, 1904.

<sup>15</sup> Bondi Sebellico A., *Felice de Merlis, prete e notaio in Venezia ed Ayas, 1315-1348, V. 1, Venezia, 1973, V. 2, Venezia, 1978.*

1980-ական թթ. լույս են տեսնել կիպրական քաղաքներում կազմված ջննովական նոտարական հազարավոր փաստաթղթերի ժողովածուներ. Մ. Բալարը<sup>16</sup>, Ռ. Պավոնին<sup>17</sup> և Վ. Պոլոնիոն<sup>18</sup> հրատարակել են նոտարներ Լամբերտո դե Սամբուչետոյի և Ջիովաննի դե Ռոքայի հեղինակած փաստաթղթերի սովորածավալ հինգ հատոր: XIII դ. վերջին և XIV դ. առաջին կեսին Միջերկրական ծովի արևելյան մասում կիպրոսի թագավորության արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռում կիլիկյան Հայաստանն առաջին տեղում է եղել, ուստի պատահական չէ, որ նոտարական վերոնշյալ գործերի առեւտրի քանակությունն ուղղակիորեն վերաբերում է կիլիկյան քաղաքների հետ առևտրական կապերին:

Թեմայի մշակման համար հատուկ կարևորություն է ունեցել Ջննովայի միջնադարյան առևտրի պատմության իտալացի հեղինակավոր մասնագետ Լ. Բալլետտոյի հրատարակած նոտարական գործակալներ Պեդրո դե Բարգոնեյի և Ֆեդերիկո Պիացցալունգայի կողմից 1270-ական թվականներին Այասում ձևակերպված փաստաթղթերի ժողովածուն<sup>19</sup>:

<sup>16</sup> **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296 - 23 giugno 1299), Genova, 1983 (այսուհետև՝ **Balard M.**, Notai genovesi in Oltremare, A.). Նույնի՝ Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo 1304 - 19 luglio 1305, 4 gennaio - 12 luglio 1307), Giovanni de Rocha (3 agosto 1308 - 14 marzo 1310), Genova, 1984 (այսուհետև՝ **Balard M.**, Notai genovesi in Oltremare, B.).

<sup>17</sup> **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio - 27 ottobre 1301), Genova, 1982 (այսուհետև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, A.). Նույնի՝ Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio - agosto 1302), Genova, 1987 (այսուհետև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, B.).

<sup>18</sup> **Polonio V.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio 1300 - 3 agosto 1301), Genova, 1983.

<sup>19</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279), Genova, 1989.

Բարեբախտաբար, կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական պայմանագրերի մեծ մասը պահպանվել է<sup>20</sup>: Ֆրանսիացի մեծանուն հայագետ Վ. Լանգլուան եվրոպական քաղաքների բազմաթիվ արխիվներում սփռված այդ արժեքավոր փաստաթղթերը հավաքել և հրատարակել է ժողովածուի տեսքով, որտեղ ներառված են մի շարք պայմանագրերի գրաբարով կազմված օրինակները ևս<sup>21</sup>: Իտալացի պատմաբան Ա. Սոպրակասան նույնպես հրատարակել է նման ժողովածու, որտեղ, սակայն, ընդգրկված են միայն կիլիկյան Հայաստանի և Վենետիկի միջև կնքված պայմանագրերը<sup>22</sup>:

Միջնադարյան առևտրատնտեսական հարաբերությունների յուրաքանչյուր հետազոտողի մշտական ուղեկիցները վաճառականական ձեռնարկներն են: Դրանց հեղինակները մեծ մասամբ իտալացի առևտրական գործակալներն էին, որոնք, այցելելով տարբեր երկրներ, գրի էին առնում դրանցում տարածված չափի ու կշռի միավորները, վաճառվող ապրանքների տեսականին և այլն: Նման մի ձեռնարկի հեղինակ է 1335 թ. (կամ 1336 թ.) կիլիկյան Հայաստան այցելած և Լևոն Դ-ի (1320-1342) հետ առևտրական պայմանագիր կնքած, ֆլորենտական Բարդի բանկային տան գործակալ Ֆրանչեսկո Բալդուչի Պեզոլոտտին: Ի թիվս հայտնի բոլոր առևտրական ձեռնարկների՝ այդ աշխատությունն ամենանշանավորն է, որտեղ Պեզոլոտտին բավական ծավալուն բաժին է հատկացրել կիլիկյան Հայաստանին<sup>23</sup>:

Հաջորդ մեծարժեք ձեռնարկը գրվել է XIV դ. առաջին կեսին վենետիկցի Ջիբալդոնե դա Կանալի կողմից: Այստեղ նույնպես կիլիկյան Հայաստանը ներկայացված է առանձին վերնագրի տակ, որտեղ

<sup>20</sup> **Բոզոյան Ա.**, կիլիկյան Հայաստանի պատմությանը Միջերկրական ծովի պետությունների արխիվներում // Հայաստանի պատմության նիւթեր կենտրոնական Եվրոպայի դիսաններում, Ե., 2001, էջ 9-20:

<sup>21</sup> **Langlois V.**, Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863.

<sup>22</sup> **Sopracasa A.**, I trattati con il regno armeno di Cilicia, 1201-1333, Roma, 2001.

<sup>23</sup> **Francesco Balducci Pegolotti**, La Pratica della Mercatura, New York, 1970 (այսուհետև՝ **Pegolotti**).

օգտակար տնօրէնություններ կան Այասում վաճառված ապրանքների, կիրառված չափ ու կշռի միավորների և այլնի մասին<sup>24</sup>:

Արժեքավոր է նաև XIV դ. առաջին կեսին Արևելքում քաղաքական ակտիվ գործունեություն ծավալած, վենետիկյան ազնվականական հանրահայտ Սանտոտո ընտանիքի ներկայացուցիչ Մարինո Սանտոտո Տորսելլո Ավագի «մաշակիրների գաղտնի գիրքը Սուրբ Երկրի վերագրավման և պահպանման մասին» աշխատությունը, որտեղ հնդիսակը բազմակողմանի, արժեքավոր տնօրէնություններ է հաղորդում կիլիկյան Հայաստանի մասին<sup>25</sup>:

Կիլիկյան Հայաստանում միջազգային առևտրական նավագնացության, օտարազգի վաճառականության և այլ խնդիրների ուսումնասիրությանը մեծապես նպաստում են Վենետիկի Սենատի որոշումների<sup>26</sup>, դիվանագիտական փաստաթղթերի<sup>27</sup> ու եվրոպական քաղաքների ծովային առևտրին վերաբերող տարատեսակ նյութերի<sup>28</sup> հավաքածուները: Պապության և եվրոպական միապետների հետ կիլիկյան Հայաստանի XIII-XIV դդ. դիվանագիտական շփումների ուսումնասիրության համար բացառիկ են հոմումը և Ավինյոնում

<sup>24</sup> Zibaldone da Canal, Manoscritto Mercantile del sec. XV, ed. A. Stussi, Venezia, 1967 (այսուհետև՝ Zibaldone). Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice: "The Zibaldone da Canal", Binghamton, NY, 1994.

<sup>25</sup> Marino Sanuto, Liber secretorum fidelium crucis super Terrae Sanctae recuperatione et conservatione, Prelum Academicum Universitatis Torontonensis, 1972. Reprint of the edition: Hanoviae: Heredes I. Aubrii, 1611, with a new foreword in English by J. Prawer (այսուհետև՝ Marino Sanuto).

<sup>26</sup> Thiriet F., Régestes Des Délibérations Du Sénat De Venise Concernant La Romanie. T. I. 1329-1399. Consiglio dei Rogati, Paris, 1958. Giacom G., Regeste di alcune deliberazioni del Senato Misti // Archivio Veneto, T. XXXI, Venezia, 1886, p. 179-200. Leduc F., Venezia-senato, deliberazioni miste: Registro 19 (1340-1341). V. 6, Senato, Venezia, 2004.

<sup>27</sup> Diplomatarium Veneto-Levanticum, V. 1, 1300-1350, ed. G. M. Thomas, R. Predelli, Venetis, 1880. Finke H., Acta Aragonensia, Quellen zur deutschen, italienischen, französischen, spanischen, zur Kirschen- u. Kulturgeschichte aus der diplomatischen Korrespondenz Jaymes II (1291-1327), B. II, Berlin, Leipzig, 1908.

<sup>28</sup> Capmany y de Montpalau A. de, Libro del Consulado del Mar, Barcelona, 1965. Palleja C. de, Consulado del Mar de Barcelona, Barcelona, 1732. Pardessus J. M., Us et coutumes de la mer ou collection des usages maritimes des peuples de l'antiquité et du moyen âge, T. 2, Paris, 1847.

կազմված պապական դիվանատան փաստաթղթերի հրատարակված ժողովածուները<sup>29</sup>:

Հայ պատմագիտության մեջ կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրին առնչվող խնդիրներին առաջինն անդրադարձել է Ղևոնդ Ալիշանն իր «Սիսուան» և «Հայ-Վենետ» կոթողային աշխատություններում<sup>30</sup>: Հնդիսակը հատկապես մեծ աշխատանք է կատարել իտալական դիվանների հետազոտության ուղղությամբ՝ նրեվան հանելով բազմաթիվ կարևոր փաստաթղթեր, որոնց միջոցով լուսաբանել է կիլիկիայում եվրոպացի վաճառականության գործունեության, դրամներին, չափ ու կշռի միավորներին վերաբերող բազմաթիվ խնդիրներ:

Տաճարային անց Գր. Միքայելյանը հրատարակ հաննջ կիլիկիայի հայկական պետության ամբողջական պատմությանը նվիրված, մինչ այժմ իր արդիականությունը չկորցրած մենագրությունը, որտեղ նա ծավալուն երկու բաժին է հատկացրել կիլիկիայի միջազգային առևտրական հարաբերությունների բազմակողմանի քննությանը: Ձեռքի տակ կարևորագույն բազմաթիվ սկզբնաղբյուրներ չունենալով հանդերձ, հնդիսակը կարողացել է խնդիրը համակողմանի քննել: Հատկապես արժեքավոր են Այաս-Թավրիզ մայրուղու, կիլիկյան Հայաստանի և եվրոպական պետությունների միջև

<sup>29</sup> Les registres de Nicolas IV, Recueil des bulles de se Pape, pub. par Langlois M., Fascicule VI // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, V. 6, Paris, Ernest Thorin, 1891. Jean XXII (1316-1334), Lettres Communes, analysées d'après les registres dits d'Avignon et du Vatican par Mollat G., T. IV // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, Paris, 1910. Benoit XII (1334-1342), Lettres closes, patentes et curiales, pub. par Daumet G., Fascicule I // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, Paris, 1899. Benoit XII (1334-1342), Lettres Communes, analysées d'après les registres dits d'Avignon et du Vatican par Vidal J., T. I // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, Paris, 1903.

<sup>30</sup> Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885: Նոյնի՝ Հայ-Վենետ, Վենետիկ, 1896:

առևտրական փոխհարաբերությունների վերաբերյալ բազմաշերտ դիտարկումները<sup>31</sup>:

Միջազգային առևտրի բնագավառում Կիլիկիայի հայկական պետության հարկային քաղաքականությունը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական այլ բնույթի հարաբերությունները հանգամանալից վերլուծվել են Ս. Բոռնազյանի արժեքավոր մենագրությունում<sup>32</sup>:

Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական հարաբերությունների պատմության տարբեր հարցերին անդրադարձել են նաև Հ. Մանանդյանը<sup>33</sup>, Ա. Տիրացյանը<sup>34</sup>, Ա. Սուրիսայանը<sup>35</sup>, Յու. Բարսեղովը<sup>36</sup> և Վ. Զյուրբջյանը<sup>37</sup>: Կիլիկյան Հայաստանի դրամների ուսումնասիրության առումով մեծ ավանդ ունի Ջ. Պտուկյանը<sup>38</sup>:

Աշխատանքը շարադրելիս չափազանց օգտակար են եղել նաև Հ. Բարթիկյանի<sup>39</sup>, Ժ. Դեղնյանի<sup>40</sup>, Կ. Մուրաֆյանի<sup>41</sup>, Լ. Տեր-

Պետրոսյանի<sup>42</sup>, Ա. Բոզոյանի<sup>43</sup> և Վ. Տեր-Ղևոնդյանի<sup>44</sup> մենագրություններն ու հոդվածները:

Եվրոպական և ընդհանրապես համաշխարհային պատմագիտության մեջ նույնպես Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրի պատմությանը նվիրված ամբողջական աշխատություն չի ստեղծվել: Սակայն XIX-XX դդ. օտարազգի միջնադարագետների XIII-XIV դդ. միջերկրածովյան և սևծովյան առևտրի մասին գրած մեծաքանակ աշխատություններում Հայոց թագավորությունը եղել է ուշադրության շրջանակում:

Կիլիկիայի սոցիալ-տնտեսական, այդ թվում և միջազգային առևտրական հարաբերությունների ուսումնասիրության մեջ մեծ ավանդ ունի Վ. Լանգլուան: Բացառիկ են հատկապես եվրոպական բազմաթիվ արխիվներում նրա կատարած հետազոտությունները, որոնց միջոցով լուսաբանվել են սույն թեմային առնչվող տարաբնույթ խնդիրներ<sup>45</sup>:

Գերմանացի միջնադարագետ Վ. Հնյդի՝ XIX դ. վերջին գրած «Լևանտի առևտուրը միջին դարերում» երկհատոր աշխատությունը հիմնարար նշանակություն ունի միջնադարյան առևտրատնտեսական հարաբերությունների յուրաքանչյուր հետազոտողի համար և այսօր էլ չի կորցրել իր կարևորությունը: Հեղինակը բավական համեստ նյութերի հիման վրա կարողացել է սնդմ, սակայն հնարավոր

<sup>31</sup> Микаелян Г., История Киликийского Армянского государства, Е., 1952.

<sup>32</sup> Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում:

<sup>33</sup> Манандян Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Е., 1954.

<sup>34</sup> Տիրացյան Ա., Կիլիկյան Հայկական պետության սեփական նավատորմի ունենալու հարցի շուրջ «Լճամիածին», 1957, N Է-Ը, էջ 43-48:

<sup>35</sup> Սուրիսայան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Ե., 1978:

<sup>36</sup> Барсегов Ю., Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 3, էջ 71-84: Նույնի՝ Отказ армян от «берегового права», «Պատմա-բանասիրական հանդես», 1971, N 1, էջ 95-110:

<sup>37</sup> Զյուրբջյան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919:

<sup>38</sup> Պտուկյան Ջ., Կիլիկյան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963:

<sup>39</sup> Բարթիկյան Հ., Նյութեր կրեմլի հայկական գաղութի վերաբերյալ // Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա Ե., 2002, էջ 493-503: Նույնի՝ Հունական միջնադարյան արխիվային փաստաթղթեր Բյուզանդական կայսրության տարածքում հայոց ներկայության մասին (XI-XIV դդ.) // Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Գ, Ե., 2006, էջ 127-170:

<sup>40</sup> Dedeyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, Etude sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150), V. 1, Aux origines de l'état Ciliciens: Philarete et les premiers Oubeniens, Lisbonne, 2003. V. 2, De l'Euphrate au Nil: Le réseau diasporique, Lisbonne, 2003.

<sup>41</sup> Մուրաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001: Նույնի՝ La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles) // L'expansion catalane a la Méditerranée a la Basse Edad Mitjana, Barcelona, 1999, p. 105-119.

<sup>42</sup> Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, հ. Բ, Ե., 2007:

<sup>43</sup> Bozoyan A., Le cadre juridique du commerce de la Cilicie arménienne // Arménie entre Orient et Occident, Paris, 1996, p. 128-133.

<sup>44</sup> Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական ներկրները 1145-1226 թվականներին, Ե., 1994:

<sup>45</sup> Langlois V., Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie, St. Pétersbourg, 1860.

րինս ամփոփ ներկայացնել Կիլիկյան Հայաստանի դերակատարությունը Լևանտի առևտրի համակարգում<sup>46</sup>:

Լևանտի առևտրի պատմության XX դ. նրկրորդ կեսի հանրահայտ մասնագետներից է հրեա պատմաբան Է. Աշտորը, որի «Լևանտի առևտուրը ու շրջին դարերում» մենագրությունը կարևոր ներդրում է միջնադարյան տնտեսության պատմության ուսումնասիրության բնագավառում: Արտահայտիչ են պատմաբանի գնահատականները միջերկրածովյան առևտրում Այասի և Կիլիկյան Հայաստանի դերակատարության վերաբերյալ<sup>47</sup>:

XX դ. վերջին երեսնամյակից մինչև XXI դ. սկիզբն ընկած ժամանակամիջոցում արևմտամերձքաղաքական հնդինակավոր համալսարանների հայտնի միջնադարագետներից շատերն առանձին հոդվածներով հատուկ անդրադարձել են Այասի և ընդհանրապես Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրին առնչվող որոշ խնդիրներին: Հատկապես բովանդակալից են Այասի ջննդական վաճառականության վերաբերյալ Լ. Բալլետտոյի հետազոտությունները<sup>48</sup>: Առանձնակի հիշատակության են արժանի ֆրանսիացի պատմաբան Կ. Օթթեն-Ֆրուի մի շարք հոդվածները, որոնցում բավական հանգամանորեն քննված են Կիլիկյան Հայաստանում օտարերկրյա վաճառականության գործունեությանը վերաբերող տարբեր խնդիրներ<sup>49</sup>: Գրեթե նույն հարցերն են արժարժվում նաև ֆրանսիացի

<sup>46</sup> Մեր կողմից օգտագործվել է 1885-1886 թթ. գերմաներեն լույս տեսած սույն աշխատության 1967 թ. ֆրանսերեն վերահրատարակությունը: Heyd W., Histoire du commerce du Levant au moyen âge, t. I, Amsterdam, 1967, t. II, Amsterdam, 1967.

<sup>47</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, Princeton, New Jersey, 1983.

<sup>48</sup> Balletto L., Genovesi a Laiazzo: il caso di Cerasia Ciciliana (1279) // Atti dell'Accademia Ligure di Scienze e Lettere, XLII, Genova, 1985, p. 188-196. Նույնի՝ Nuovi documenti sui genovesi a Laiazzo // Studi Genuensi, n.s. 4, 1986, p. 39-44. Նույնի՝ Il commercio Armeno-Italiano (secoli XIII-XV) // Roma-Amenia, Roma, 1999, p. 184-188.

<sup>49</sup> Otten-Froux C., L'Aïas dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle d'après les notaires génois // Medieval Levant. Studies in Memory of Elyahu Ashtor (1914-1984), Haifa, 1988, p. 147-169. Նույնի՝ Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie d'après les actes notariés (1270-1320) //

պատմաբան Պ. Ռասինի աշխատություններում<sup>50</sup>: Կիլիկյան Հայաստանի և Կիպրոսի թագավորության միջև առևտրական փոխաբանություններն ուսումնասիրելիս առանձնապես օգտակար են եղել ռուս հայտնի միջնադարագետ Ս. Բլիզնյուկի<sup>51</sup> և Կիպրացի պատմաբան Ն. Կուրմասի<sup>52</sup> հետազոտությունները:

Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական նավագնացությունը, եվրոպական քաղաքների հետ առևտրական շփումները և ապրանքաշրջանառությունը հետազոտելիս օգտակար են եղել Ֆ. Լեյնի<sup>53</sup>, Ջ. Պիստարինոյի<sup>54</sup>, Մ. Բալարի<sup>55</sup>, Ռ. Ս. Լուպիզի<sup>56</sup>, Դ.

L'Aménie et Byzance, Paris, 1996, p. 157-179. Նույնի՝ La Cilicie arménienne dans le réseau commercial pisan en Méditerranée orientale // Gli Armeni lungo le strade d'Italia, Atti del convegno internazionale, Pisa, Roma, 1997, p. 1-13. Նույնի՝ Les échanges commerciaux // Le Royaume Arménien de Cilicie XII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> s., ed. Mutafian C., Paris, 1999, p. 119-125.

<sup>50</sup> Racine P., Marchands placentins a l'Aïas a la fin du XIII<sup>e</sup> siècle // Byzantinische Forschungen, IV, 1972, p. 195-205. Նույնի՝ L'Aïas dans la seconde moitié du XIII<sup>e</sup> siècle // Rivista di bizantinistica, N 2, 1992, p. 173-206. Նույնի՝ Images de la colonisation placentine a l'Aïas et Caffa a la fin du XIII<sup>e</sup> siècle // Rivista di bizantinistica, N 3, 1993, p. 327-354.

<sup>51</sup> Близнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, 1192-1373, М., 1994.

<sup>52</sup> Couras N., Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia: 1300-1310 // «Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան ԺԱ տարի, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 319-338:

<sup>53</sup> Lane F., Venice. A Maritime Republic, London, 1973. Նույնի՝ Venetian Merchant Galleys, 1300-1334: Private and Communal Operation // Speculum, N 2, V. 38, Cambridge, Massachusetts, 1963, p. 179-205.

<sup>54</sup> Pistorino G., Dal declino sul mare di Levante tra cristiani ed islamici alla conquista del mar Nero // Genovesi d'Oriente, a cura di Pistorino G., Genova, 1990, p. 95-141. Նույնի՝ Economia e società del Mediterraneo Genovese nel tempo degli orizzonti aperti // I signori del mare, a cura di Pistorino G., Genova, 1992, p. 97-154.

<sup>55</sup> Balard M., L'emigrazione monferrino-piemontese in Oriente (sec. XII-XV) // Atti del congresso internazionale "Dai feudi Monferrine e dal Piemonte ai nuove oltre gli oceani", a cura di L. Balletto, Alessandria, 1993, p. 249-261. Նույնի՝ La place de Famagouste génoise dans le Royaume des Lusignan (1374-1464) // Les Lusignan et l'Outre-mer, Poitiers, 1993, p. 16-27. Նույնի՝ Les transports maritimes génois vers la Terre Sainte // I Comuni italiani nel regno crociato di Gerusalemme, a cura di G. Aivaldi, B. Z. Kedar, Collana storica di fonti e studi, 48, Genova, 1986, p. 114-175.

Ստոկլի<sup>57</sup>, Դ. Ջեյքոբի<sup>58</sup>, Դ. Աբուլաֆիայի<sup>59</sup>, Մ. Մացցատի<sup>60</sup>, Ջ. Փրայորի<sup>61</sup>, Կ. Ռեյերսոնի<sup>62</sup> գրքերն ու հոդվածները:

Միջնադարյան առևտրի կառուցվածքի բազմակողմանի ուսումնասիրության համար առանձնահատուկ կարևորություն են ունեցնում միջնադարագետ Ս. Կարպովի մենագրություններն ու հոդվածները<sup>63</sup>:

<sup>56</sup> Lopez R. S., Storia delle colonie genovesi nel Mediterraneo, Bologna, 1938. Նույնի՝ Medieval Trade in the Mediterranean World, New York, 1955.

<sup>57</sup> Stöckly D., Le système de l'incanto des galées du marché à Venise (fin XIIIe-milieu XVe siècle), Leiden, 1995.

<sup>58</sup> Jacoby D., A Venetian Manual of Commercial Practice from Crusader Acre // I Comuni italiani nel regno crociato di Gerusalemme, a cura di G. Airdi, B. Z. Kedar, Collana storica di fonti e studi, 48, Genova, 1986, p. 401-429. Նույնի՝ Dalla materia prima ai drappi tra Bisanzio, il Levante e Venezia: la prima fase dell'industria serica veneziana // La seta in Italia dal Medioevo al Seicento. Dal baco al drappo, eds. Molà L., Mueller R. C., Zanier C., Venezia: Marsilio, 2000, p. 265-304. Նույնի՝ Mercanti genovesi e veneziani e le loro merci nel Levante crociato // Genova, Venezia, il Levante nei secoli XII-XIV, Atti del Convegno, Genova - Venezia, 10-14 marzo, 2000, a cura di G. Ortali, D. Puncuh, Atti della Società Ligure di Storia Patria, Genova, 2001.

<sup>59</sup> Abulafia D., The Levant Trade of the Minor Cities in the Thirteenth and Fourteenth Centuries: Strengths and Weaknesses // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XI, p. 183-202. Նույնի՝ The Merchants of Messina: Levant Trade and Domestic Economy // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XII, p. 196-212. Նույնի՝ Narbonne, the Lands of the Crown of Aragon, and the Levant Trade 1187-1400 // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XV, p. 189-207. Նույնի՝ The Anconitan Privileges in the Kingdom of Jerusalem and the Levant Trade of Ancona // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XIII, p. 525-570.

<sup>60</sup> Mazzaoui M., The Italian Cotton Industry in the Later Middle Ages, 1100-1600, Cambridge, 1981.

<sup>61</sup> Pryor J., The Origins of the Commenda Contract // Speculum, V. LII, N 1, Cambridge, Massachusetts, 1977, p. 5-37.

<sup>62</sup> Reyerson K., The Art of the Deal: Intermediaries of Trade in Medieval Montpellier, Boston, 2002. Նույնի՝ Business, Banking, and Finance in Medieval Montpellier, Toronto, 1985.

<sup>63</sup> Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье в XIII-XV вв.: проблемы торговли, М., 1990. Նույնի՝ Трапезундская империя и Западноевропейские государства в XIII-XV вв.,

Եվրոպայի տնտեսական պատմության ուսումնասիրության առումով սույն աշխատանքի համար խիստ արդյունավետ են եղել Ա. Ջիվելեգովի<sup>64</sup>, Ջ. Լուցցատոյի<sup>65</sup>, Վ. Ռուտենբուրգի<sup>66</sup> և Գ. Տուշինայի<sup>67</sup> աշխատությունները:

Միջերկրածովյան առևտրի համակարգում XIII-XIV դդ. Կիլիկիայի հայկական թագավորության դերակատարության պատմությունն ուսումնասիրելիս մեր առջև դրնել ենք հետևյալ խնդիրները՝

- Ներկայացնել Կիլիկիայի աշխարհագրական բնութագիրը որպես միջազգային առևտրի զարգացման կարևոր նախապայման՝ հատուկ ուշադրություն դարձնելով թագավորության տարածքում խաչածակող առևտրական մայրուղիների նկարագրությանը:
- Հանգամանալից վերլուծության ենթարկելով Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական ապրանքաշրջանառության կազմությունը՝ ցույց տալ, թե որքանով էին դրանում ներառված պետության տնտեսական՝ արհեստավորական ու գյուղատնտեսական արտադրանքները, ինչպես նաև ներկայացնել երկրի նշանակությունը տարանցիկ առևտրում:
- Մանրագնին քննելով Կիլիկյան Հայաստանում կիրառված միջազգային առևտրի կազմակերպման եղանակները՝ բացահայտել միջերկրածովյան առևտրի համակարգում Հայոց թագավորության տնտեսական ներգրավվածության աստիճանը:

М., 1981. Նույնի՝ Контракт комменды в итальянской торговле в Южном Причерноморье (XIII-XV вв.) // Византийский временник, Т. 48, 1987, с. 23-32. Նույնի՝ Кредит в системе итальянской торговли в Южном Причерноморье (XIII-XV вв.) // Византийский временник, т. 49, 1988, с. 40-49.

<sup>64</sup> Дживеллегов А., Торговля на Западе в средние века, СПб., 1904.

<sup>65</sup> Луццатто Дж., Экономическая история Италии. Античность и средние века, М., 1954.

<sup>66</sup> Рутенбург В., Очерк из истории раннего капитализма в Италии: флорентийские компании XIV века, Москва-Ленинград, 1951.

<sup>67</sup> Тушина Г., Из истории средиземноморских торговых объединений (Античность и средние века) // Страны Средиземноморья в эпоху феодализма, Вып. 2, Горький, 1975, с. 3-28.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ  
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԲՆՈՒԹՍԳԻՐԸ

1.1 Կիլիկիայի բնական պայմանները

Կիլիկյան Հայաստանում միջազգային առևտրի զարգացման առաջնային նախապայմանը պետության աշխարհագրական նպաստավոր դիրքն ու բնակլիմայական պայմաններն էին: Պատահական չէ, որ հնագույն ժամանակներից այս տարածքը եղել է զարգացած քաղաքակրթությունների օրրան: Կիլիկիայի հյուսիսարևելյան և արևմտյան շրջանները լեռնային են, իսկ հարավարևելյան մասը՝ դաշտային: Այդ իսկ պատճառով թե՛ օտարերկրյա, և թե՛ հայ պատմագրության և պատմագիտության մեջ հանդիպում են Լեռնային և Դաշտային Կիլիկիա աշխարհագրական տերմինները: Կիլիկիայի հայկական պետությունն իր սահմանների առավել ընդարձակ ժամանակաշրջանում զբաղեցրել է 40000 քառ. կմ տարածություն: Հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող Տավրոսի լեռնաշղթան Կիլիկիան սահմանազատում է Փոքր Ասիայի մնացյալ տարածքներից: Արևելքում՝ հյուսիսից հարավ, Կիլիկիան շրջապատում են Անտիտավրոսի լեռնաշղթայի ճյուղավորումները, ինչպես նաև Ամանոսյան (Սև) լեռները: Հարավում Կիլիկիան շուրջ 500 կմ նրկարությամբ ափով ողողում են Միջերկրական ծովի ջրերը: Կիլիկիայի լեռնային և դաշտային մասերում կլիմայական պայմանները զգալիորեն տարբեր են: Թեև լեռնային շրջաններում ամռանը շոգ է, սակայն ձմեռը խստաշունչ է: Դաշտային մասում ձմեռը գրեթե անձույն է՝ առանց սառնամանիքների, զարունը սկսվում է փետրվարից, իսկ ամառն առանձնաբերում շոգ կլիմայով: Տավրոսի և Անտիտավրոսի լեռներից դեպի Միջերկրական ծով են հոսում բազմաթիվ գետեր՝ Պիրամոս (Չեյհան), Սարոս (Մեյհան), Կյուդնոս (Տարսուսայ), Կալկադնոս (Մելեկիա) և այլն: Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակաշրջանում առաջին երեք գետերն իրենց ներքին հո-

- Միջազգային առևտրում հարկային քաղաքականության օրինակով ներկայացնել Կիլիկիայի հայկական պետության երաշխավորած նպաստավոր պայմանները վաճառականներին:
- Անդրադառնալ Կիլիկյան Հայաստան այցելած ու բնակություն հաստատած օտարազգի վաճառականության ազգային և սոցիալական կազմին, հնարավորինս լուսաբանել նրանց առևտրական գործունեությանը, բնութագրել համայնքային կյանքը:
- Համադրելով Հայկական Կիլիկիայի միջազգային՝ առևտրական և քաղաքական հարաբերությունների պատմական զարգացումները՝ լուսաբանել դրանց միջև ձևավորված փոխազդեցության մակարդակը:

Գրքում առաջին անգամ տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա լուսաբանվել են Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրային հարաբերություններին առնչվող առանցքային խնդիրները: Օրինակ պարբերացման է ենթարկվել միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի ներգրավման ընթացքը: Ապրանքների տեսականու կազմության, կիլիկյան նավահանգիստների առևտրական կապերի և առևտրի կազմակերպման նորանակների քննությունը հնարավորություն է ընձեռնել բացահայտելու խնդրո առարկա ժամանակաշրջանում միջերկրածովյան ավազանում ձևավորված ֆինանսատնտեսական համակարգում Կիլիկյան Հայաստանի նշանակությունը: Մերձավոր Արևելքում և Եվրոպայում տեղի ունեցած աշխարհաքաղաքական վճռորոշ իրադարձությունների և միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումների ընթացքի վերլուծությամբ հետազոտվել է այդ գործընթացների փոխազդեցության աստիճանը, ինչը թույլ է տվել ավելի համակողմանի ներկայացնելու Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմության տարբեր հարցեր:

ասանքում նախարկելի են ևղել: Ռելիեֆի նման բազմազանությամբ պայմանավորված ուղղաձիգ գոտիականության, նպաստավոր կլիմայական պայմանների ու ռոտզման լայն հնարավորության շնորհիվ կլիմկիան դասվում է նրկրագնդի ամենաբերրի վայրերի շարքը: Լեռնային շրջանները հատկապես հարմար էին հացահատիկի մշակման և անասնապահության համար: Լեռները պատված էին կաղնու, մայրու, ինչպես նաև ձիթենու անտառներով, որոնցում հանդիպում էին գանազան վայրի կենդանիներ: Իսկ նրկրի դաշտային մասն առանձնանում էր գարգացած հողագործությամբ, որտեղ նույնիսկ տարեկան նրկու բերք էր հավաքվում: Մշակում էին մրգատու ծառերի հարուստ տեսակների, ինչպես նաև բամբակ, շաքարեղեգ և այլն<sup>1</sup>: Կլիմկյան Հայաստանում բուծված ձիերն ու ջորիները հայտնի էին Արևելքի շատ նրկրներում: Դա է վկայում նաև 1285 թ. հայմանությունից խաղաղության պայմանագիրը, ըստ որի՝ յուրաքանչյուր տարի Եգիպտոսի սուլթանություն պետք է ուղարկվեին. «Լավ ձիեր և ընտիր ջորիներ՝ հիսուն հատ, այսինքն, ընտիր ձի՝ ազնիվ ցնդից, քսանհինգ հատ, ընտիր ջորի՝ քսանհինգ հատ»<sup>2</sup>:

Կլիմկիան հարուստ էր նաև տարատեսակ օգտակար հանածոներով: Գուզլակում, Ստում արդյունահանում էին ոսկի, արծաթ ու պղինձ, Տավրոսյան լեռներում՝ կապար<sup>3</sup>: Սմբատ Սպարապետը գրում է. «Եթե իշխանի գաւառն՝ կամ յերկիր որ ընդ թագաւորի հնագանդութեամբ լինի՝ ոսկեհանք գտվի, նա թագվորին է. և թե արծաթահանք՝ նա թագուհոյն է: Ապա անճարակ բաժին հասնի նրկրին տիրոջն, զինչ ցնդ որ կարենան հաշտել՝ որ նրկութն լինին շահած: Ապա նրկաթն ու պղինձն ու այլ իրք զինչ և լինի՝ որ ի հողե ևնե՝ տնդոյն իշխանին է: Նոյնպէս և աղն և բորակն, նալթն և կուպրն,

<sup>1</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 13-15, 360: Հայաստանի պատմության առկա, մաս Ա, հնդ. Հարությունյան Բ., Ե., 2004, էջ 76-77: **Микаел ян Г.**, նշվ. աշխ., էջ 13-17:

<sup>2</sup> Սուրխայան Ա., նշվ. աշխ., էջ 220: Բակուրան, Դաշնագիր խաղաղութեան ընդմեջ Լեւոն Գ թագաւորի և Եգիպտոսի Մեմլուքեան սուլթան Գալատունի, կնքուած 1285 մայիս 7-ին, «Բանասիր», N Դ, թիւ 1, 1902, էջ 74 (այսուհետև՝ Բակուրան, Դաշնագիր խաղաղութեան):

<sup>3</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 9-10:

ձուլթն ևւ ապակին՝ խունկն ու մագտաքին՝ դնդնախունկն ևւ այլ այսպիսի իրք...»<sup>4</sup>: Դատելով այս տողերից, կլիմկիայում թանկարժեք մետաղների արդյունահանումը բավական մեծ ծավալներ ուներ. «Եթե որ ի դուրս ի յիր աներակք, յարտ կամ յայգի ոսկի գտնու կամ արծաթ, նա թե հին դաղ կենայ ի վերայ՝ որ ճանչվի որ հին թագաւորի է լել, նա այլ վայրի թագաւորին լինի, և ի հնկէն մէկն գտնաւորին ևւ տան ևւ տնդոյն տիրոջն»<sup>5</sup>: Կլիմկյան Հայաստանում նրկաթի մեծաքանակ արդյունահանման և մշակման մասին են վկայում որոշ այլ սկզբնաղբյուրներ: Մամուլութեան հետ կնքված վերոնշյալ պայմանագրով հայկական կողմը պարտավորվում էր տարեկան 10000 նրկաթն պայտ (իրենց գամներով) վճարել Եգիպտոսի սուլթանությանը<sup>6</sup>: Հատկանշական է, որ Սսի մտակայքում արդյունահանվում էր նաև քարածուխ, ինչն անհրաժեշտ նախապայման էր նրկաթի մշակման համար<sup>7</sup>:

## 1.2 Առևտրական ուղիների աշխարհագրությունը

Տնտեսաաշխարհագրական բացառիկ նպաստավոր դիրքի շնորհիվ կլիմկյան Հայաստանը հայտնվել էր առևտրական կարևորագույն ճանապարհների հանգուցակետում: Այստեղ խաչաձևվում էին աշխարհի չորս կողմերից ձգվող թե՛ ծովային, և թե՛ ցամաքային ուղիները: XIII-XIV դդ. Հարավային Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական կապերում առաջնային նշանակություն էր ստացել Այասթավրից քարավանային ճանապարհը: Թավրիզից Բաղդադով ու Պարսից ծոցով տնտեսական կապ էր պահպանվում հարավարևելյան Ասիայի, իսկ ցամաքային ուղով՝ Միջին Ասիայի ու Հնդկաստանի Արևելքի հետ: Ֆրանչեսկո Բալդուչի Պեգոլոտտին իր ձեռնարկում

<sup>4</sup> Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստարի), էջ 19-20: **См бат Спарпет, Судебник**, с. 15-17.

<sup>5</sup> Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստարի), էջ 19-20: **См бат Спарпет, Судебник**, с. 15-17.

<sup>6</sup> Բակուրան, Դաշնագիր խաղաղութեան, էջ 74:

<sup>7</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 212:

ներկայացրել է գրաստի վրա բարձրագույն ապրանքն Այասից Թավրիզ տեղափոխելու ճանապարհաձևախարհը, որտեղ կայան առ կայան նշել է այդ ուղու վրա գտնվող խոշոր բնակավայրերը: Բանն այն է, որ Պեգոլոտտին քաղաքների անվանումներին տվել է արտահայտված իտալերեն հնչողություն, ինչն էլ նրկար ժամանակ բազմաթիվ ուսումնասիրողների համար նշյալ ուղին հետազոտելու հիմնական դժվարությունն է եղել: Բավական է միայն նշել, որ ճանապարհի վերջնամասում գտնվող Խոյ քաղաքը ֆլորենտացին հիշատակել է *Condro* ձևով<sup>8</sup>: Համադրելով Վ. Հեյդի<sup>9</sup>, Հ. Յուլի<sup>10</sup>, Հ. Մանանյանի<sup>11</sup> և մի շարք այլ ուսումնասիրողների տեսակետները՝ Գր. Միքայելյանն առանձնացրել է ուղու հիմնական կայանները՝ Այաս-Կենսարիա-Սեբաստիա-Երզնկա-Էրզրում-Խոյ-Թավրիզ: Ինչպես տեսնում ենք, դրանց մեծ մասը բուն Հայաստանի հայաշատ խոշորագույն քաղաքներն էին: Հայտնի է, որ Նախիջևանը ևս Խոյի միջոցով կապվում էր այս մայրուղուն: Էրզրումից Կարս և Անի գնացող ճյուղավորումը ճանապարհը կապում էր Կովկասի և ընդհանրապես հյուսիսի հետ<sup>12</sup>: Բաքերդով գնացող ճանապարհով էլ Էրզրումը կապվում էր Տրապիզոնի հետ<sup>13</sup>, որի միջոցով Այասը միանում էր սևծովյան ամբողջ ավազանին:

Ասորիքից Փոքր Ասիա տանող գլխավոր ճանապարհը նույնպես անցնում էր Կիլիկիայի տարածքով: Այն Կիլիկյան Հայաստան էր մտնում Պորտելլա (Դեռնակ կամ Դրունքն Ասորոց, իտալ. *Portella*) լեռնանցք-անցակետով և ձգվում Միջերկրական ծովի ափի ամբողջ նրկայնքով, որից դեպի հյուսիս ուղղված բազմաթիվ ճյուղավորումներն էին:

<sup>8</sup> Pegolotti, p. 28-29.

<sup>9</sup> Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 112-119:

<sup>10</sup> Yule H., Cathay and the Way Thither. Being a Collection of Medieval Notices of China, V. II, London, 1866, p. 299-301.

<sup>11</sup> Манандян Я., նշվ. աշխ., էջ 285-296:

<sup>12</sup> Микаелян Г., նշվ. աշխ., էջ 350-361:

<sup>13</sup> Карпов С., Трапезундская империя и Западноевропейские государства, с. 22. Canestrini G., Documenti spettanti al commercio dei Veneziani con l'Armenia e Trebisonda, Ragusa e Negroponte (1201-1321) // Archivio Storico Italiano, T. IX, Ap. 29, Firenze, 1853, p. 335. Racine P., Images de la colonisation placentine a l'Atlas et Caffa, p. 354.

րումներն սկիզբ էին առնում Կիլիկյան խոշոր նավահանգիստներից: Ի դեպ, Պորտելլայով հարավ գնացող ուղին ձգվում էր մինչև Արաբական թերակղզու ծայր հարավ՝ Ադեն նավահանգիստ, որը Կարմիր ծովի դարպասն էր: Մինայի թերակղզու մոտ այս ճանապարհը ճյուղավորվում էր դեպի եգիպտական նավահանգիստներ: Գուգլակ (Կապան Կուկկայ, Անցք Կիլիկիոյ, *Pylae Ciliciae*) կոչված մյուս կարևոր անցակետով, որը գտնվում էր Կիլիկիայի արևմուտքում, կարելի էր անցնել Սեբաստիա, իսկ այնտեղից էլ նրկու ճյուղավորումներով՝ Սև ծով ու Թավրիզ<sup>14</sup>:

### 1.3 Կիլիկյան Հայաստանը միջերկրածովյան առևտրական նավագնացության համակարգում

Ծովային առևտրի ապրանքաշրջանառության կարևորագույն օժանդակ օղակը լինելով՝ զարգացած նավագնացությունը եղել է միջնադարյան պետությունների տնտեսական հզորության գլխավոր արտահայտիչներից մեկը: XIII դ. սկզբից աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ Կիլիկյան Հայաստանն արագորեն ընդգրկվեց Արևելքի և Արևմուտքի միջև ձևավորվող ծովային առևտրական հիմնական ուղիների համակարգում: Փորձենք ներկայացնել նավագնացային այդ ցանցում Կիլիկիայի հայկական թագավորության դերակատարությունը, ինչը թույլ կտա առավել ամբողջականորեն պատկերացնելու այնտեղ իրականացված առևտրական ապրանքաշրջանառությունը:

Բանի որ խաչակրաց արշավանքներից սկսած Վենետիկի ու Ջենովայի, Հանրապետությունները, ապա նաև Արագոնի թագավորությունը միջերկրածովյան առևտրական նավագնացության հիմնական դերակատարներն էին, ուստի հարկ ենք համարում XIII-

<sup>14</sup> Ալիշան Ղ., Միսուսն, էջ 129, 416-417: Մուրադյան Կ., Կիլիկյան կայսրությունների խաչմերուկում, էջ 321-322: Տեր-Ղևոնդյան Վ., նշվ. աշխ., էջ 136-137: Հայաստանի պատմության ատլաս, էջ 76-77: Lane F., Venice. A Maritime Republic, p. 71.

XIV դդ. Հայկական Կիլիկիայի ափերի միջազգային նավագնացության պատմության հետազոտությանն անդրադառնալ առավելապես հիշյալ պետությունների օրինակով:

«Նետագոտողները վենետիկյան առևտրական նավագնացության կազմակերպման մեջ առանձնացրել են 5 հիմնական եղանակներ. ա) Մասնավոր սեփականության և օգտագործման նավերի «ազատ» (*navigazione libera*) ուղևորություններ, բ) Մասնավոր սեփականության և օգտագործման նավերի, սակայն այս դեպքում պետության կողմից վերահսկվող՝ «կանոնավոր» ուղևորություններ, գ) Հատուկ արտոնագրով թույլատրվող մասնավոր նավագնացություններ, դ) Կոմունային<sup>15</sup> պատկանող և աճուրդով մասնավոր անհատին տրվող նավերի ուղևորություններ, ե) Կոմունային պատկանող նավերի և նրա կողմից իրականացվող ճանապարհորդություններ: Վենետիկյան իշխանությունները փորձում էին իրենց ձեռքում կենտրոնացնել առևտրական նավագնացության ամբողջ ներուժը, ուստի վերոնշյալ բոլոր եղանակներն այս կամ այն չափով կանոնակարգվում և հսկվում էին պետության կողմից: Նույնիսկ «ազատ» կոչված ուղևորությունները, որոնք իրականացվում էին մասնավոր անձանց նախաձեռնությամբ, հաճախ արգելվում կամ որոշ սահմանափակումների էին ենթարկվում պետության կողմից: «Կանոնավոր» ուղևորությունները թեև նույնպես կազմակերպվում էին մասնավոր ձեռներնցների կողմից, սակայն դրանց մեկնարկի և բեռնման ժամանակացույցը սահմանվում էր պետական օրենքով: Համանման պայմաններով էին իրականացվում նաև արտոնագրով թույլատրվող ուղևորությունները, որոնք «կանոնավորից» տարբերվում էին նրանով, որ ուղարկվող գալերների քանակությունը որոշում էր

<sup>15</sup> 1143 թ. սկսած՝ վենետիկի կառավարությունը սովորաբար անվանվել է Կոմունա (*Commune Veneciarum*) (**Lane F.**, *Venice. A Maritime Republic*, p. 91-95. **Crouzet-Pavan E.**, *Venice Triumphant: The Horizons of a Myth*, Baltimore, London, 2002, p. 197-199).

Մենատը: Մյուս երկու եղանակներում վենետիկյան պետությունը գրեթե մենաշնորհային դիրքեր ուներ<sup>16</sup>:

Յուրաքանչյուր տարի Վենետիկի Ռիալտո կամրջի մոտ կազմակերպվում էր աճուրդ, որտեղ Մենատի որոշումով նախօրոք ծրագրված առևտրական ճանապարհորդություններ կատարելու համար մասնավոր անձանց տրամադրվում էին սարքավորված գալերներ<sup>17</sup>: Պետության կողմից ծովային առևտրում մենաշնորհի ձեռք բերման գործընթացն առավել մեծ թափ ստացավ 1280-ական թվականներից, երբ Վենետիկում սկսեցին կազմակերպվել կանոնավոր ուղևորություններ դեպի-Սև ծով, Կիպրոս ու Կիլիկյան Հայաստան<sup>18</sup>: Այդ ճանապարհորդություններն իրականացվում էին հատուկ սարքավորված գալերներով՝ ռազմական նավերի ուղեկցությամբ: Բացի այն, որ յուրաքանչյուր գալեր ուներ նետածիզների խումբ, գրեթե ողջ անձնակազմին թույլատրվում էր զենք կրել: Անվտանգության այդ քայլերը նպատակ ունեին նավերը պաշտպանել ոչ միայն ծովահենային, այլ նաև ջննովական ու բյուզանդական նավատորմների հարձակումներից: Այսպես, 1301 թ. Վենետիկից Կիպրոս-Կիլիկյան Հայաստան մեկնող 10 գալերից 3-ը նշանակված էին նավաշարըն ուղեկցելու մինչև Ադրիատիկ ծովի սահմանները և միայն համոզվելուց հետո, որ ծովահենային վտանգ չկա, մյուս 7 գալերը պետք է շարունակեին իրենց ուղին: Դրանցից յուրաքանչյուրն ուներ ամենաքիչը 25 նավաստուց բաղկացած անձնակազմ<sup>19</sup>: Բնականա-

<sup>16</sup> **Lane F.**, *Venetian Merchant Galleys, 1300-1334*, p. 180-184.

<sup>17</sup> XIII դ. առաջին կեսին գալերների տարողունակությունը տատանվում էր 94-470 տոննայի սահմաններում, սակայն արդեն XV դ. այն հասել էր 750 տ.: Առևտրական գալերները ներգրավված էին թանկարժեք ապրանքատեսակների (համեմունքներ, մետաքս, թանկարժեք քարեր, մորթեղեն և այլն) տևողափոխան մեջ (**Lane F.**, *Venetian ships and shipbuilders of the Renaissance*, Baltimore, 1934, p. 7. **Pryor J.**, *Geography, Technology and War: Studies in the Maritime History of the Mediterranean, 649-1571*, Cambridge: New York, 1992, p. 25-86).

<sup>18</sup> **Stöckly D.**, *Le système de l'Incanto des galées du marché à Venise*, p. 2, 51.

<sup>19</sup> **Alishan L.**, *L'Armeno-Veneto*, p. 50, 55. **Stöckly D.**, *Le système de l'Incanto des galées du marché à Venise*, p. 179-180. **Mazzaoui M.**, նշվ. աշխ., էջ 181:

բար, նման դեպքերում նավերի վարձակալման գումարը շատ ավելի բարձր էր լինում: Սկզբնաղբյուրներում ճանապարհորդության մեկնող գաղերների սարքավորումը կամ զինումն արտահայտված է տարբեր ձևերով՝ «armentur per Comunem», «armentur per divisum», «armentur per speciales personas» և այլն: «Armentur» բառի տակ հասկացվում էր նավի ապահովումը և՛ անձնակազմով, և՛ անհրաժեշտ բոլոր նյութական միջոցներով: Առաջին դեպքում կոմունան իր վրա էր վերցնում ուղևորության կազմակերպման ծախսերը, իսկ մյուս նրկուսում՝ մասնավոր անհատներից կամ որևէ ընտանիքի անդամներից կազմվում էր ընկերություն, որում ներդրված գումարն էլ օգտագործվում էր նավի սարքավորման համար<sup>20</sup>: Առևտրական նպատակներով մեկնող յուրաքանչյուր նավակազմ ղեկավարվում էր կապիտանի կողմից, որի հետ Վենետիկի Հանրապետության իշխանությունները կնքում էին «կոմիսիոն» (Commission) կոչվող պայմանագիրը: Դրանում ներառված էին այն բոլոր պարտավորությունները, որ ստանձնում էր հրամանատարը, և որոնց իրագործման համար նա հանդիսավոր ներդրում էր դոժի առջև: Հատկանշական է, որ «կոմիսիոնի» մասին ամենահին վկայությունը վերաբերում է 1324 թ. օգոստոսին կնքված մի պայմանագրի, որտեղ որպես նպատակակետեր նշված են Կիլիկյան Հայաստանն ու Կիպրոսը<sup>21</sup>: Այն անձը, որն աճուրդով իրավունք էր ձեռք բերում առևտրական գործունեություն իրականացնել տվյալ նավերով, անվանվում էր «պատրոն»: Վարձը, որը գրանցվում էր Սենատի կողմից, պատրոնը պարտավորվում էր վճարել իշխանություններին և կոչվում էր «ինկանտո»<sup>22</sup>:

Վենետիկից դուրս եկող նավակազմերն ունեին աշխարհագրական 4 հիմնական ուղղություն. ա) Ադրիատիկ ծով, բ) Սև ծով կամ

<sup>20</sup> Lane F., Venetian Merchant Galleys, 1300-1334, p. 182. Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 84-85.

<sup>21</sup> Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 64. Lane F., Venetian Merchant Galleys, 1300-1334, p. 182. Նույնի՝ Venice. A Maritime Republic, p. 130-131.

<sup>22</sup> Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 39-42, 51-54. Карпов С., Трапезундская империя и Западноевропейские государства, с. 82.

Ռոմանիա<sup>23</sup>, գ) Եգիպտոս և «Անդրծով» (Oltremare)<sup>24</sup>, դ) «Արևմտյան», որն ընդգրկում էր ինչպես Հյուսիսային Եվրոպան (Ետանդրիա, Անգլիա, Բալթիկ ծով և այլն), այնպես էլ երբևէն՝ Միկիան, Թունիսը, Բալեարյան կղզիները և այլն<sup>25</sup>: Ֆ. Լեյնը հաստատում է, որ խաչակիրների իշխանությունների անկումից և պապական արգելքների սահմանումից հետո (XIII դ. վերջ) Վենետիկում «Oltremare» անվան տակ գործնականում ընդունվում էին Կիլիկյան Հայաստանն ու Կիպրոսը: Ավելին, նրա կարծիքով XIV դ. առաջին տասնամյակներին Այսոսն Անդրծով մեկնող վենետիկյան նավագնացության գլխավոր նպատակակետն էր<sup>26</sup>: Իսկ Դ. Ստոկլիի և Է. Աշթորի աշխատություններում նավագնացային այս ուղղությունն ուղղակի անվանված է «Կիպրոս-Կիլիկյան Հայաստան»<sup>27</sup>:

Վենետիկի Մեծ Խորհրդի 1283, 1286, 1289 թթ. որոշումներում Կիլիկյան Հայաստանը բազմիցս հիշատակված է նավերի ուղևորության հիմնական նպատակակետերի թվում: Արդեն 1291 թ. սկսած՝ Սենատի որոշումներում «Oltremare» առևտրական նա-

<sup>23</sup> Հատկապես միջնադարյան իտալական սկզբնաղբյուրներում Հունաստանին, Էգեյան ծովի կղզիներին և ընդհանրապես Բյուզանդական կայսրության տիրապատության տակ գտնված շատ այլ տարածքներին տրվել է ընդհանուր Ռոմանիա անվանումը (Lane F., Venice. A Maritime Republic, p. 68).

<sup>24</sup> Oltremare - Միջնադարյան Եվրոպայում ընդունված աշխարհագրական տեղանուն, որը նախապես տրվել էր խաչակրաց իշխանություններին, իսկ ապա տարածվել Կիպրոսը, Ասորիքը, Պաղեստինը, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանն ընդգրկող տարածքների վրա (Lane F., Venice. A Maritime Republic, p. 68).

<sup>25</sup> Ալիշան Ղ., Հայ-Վենետ, էջ 47: Lane F., Venetian Merchant Galleys, 1300-1334, p. 185-186. Նույնի՝ Venetian ships and shipbuilders of the Renaissance, p. 133-134. Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 96-97. Balar d M., La Méditerranée médiévale, Paris, 2006, p. 25-26. Thiriet F., La Romanie vénitienne au moyen âge: le développement et l'exploitation du domaine colonial vénitien, XIIe-XVe siècles, Paris, 1959, p. 328, 335. Depping G., Histoire du commerce entre le Levant et l'Europe depuis les Croisades jusqu'à la fondations des colonies d'Amérique, T. 2, Paris, 1830, p. 158. Rom anin S., Storia documentata di Venezia, T. 2, Venezia, 1854, p. 384.

<sup>26</sup> Lane F., Venetian Merchant Galleys, 1300-1334, p. 185-186. Նույնի՝ Venice. A Maritime Republic, p. 130.

<sup>27</sup> Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 119. Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 55.

վազնացությունն ուղղակի անվանված է «Կիպրոս-Կիլիկյան Հայաստան»: Այն Վենետիկի հանրապետության առևտրական կանոնավոր նավագնացային համակարգի ամենահին ուղղություններից էր: Հայտնի է, որ 1306 թ. իրականացվել է բացառապես Կոմունայի կողմից նախաձեռնված Կիպրոս-Կիլիկյան Հայաստան անունը կրող առաջին ուղևորությունը<sup>28</sup>: Սակայն Ղ. Ալիշանը գրում է. «Ծերակուտին վճռոց մեջ՝ ինչպես ուրիշ տնդնաց՝ ստեպ կը յիշուին նաև հայագնաց տորմիդք և անոնց թիւն, 1278 թուականէն ցվերջ հայկական պնտութեան»<sup>29</sup>: Յավոր, վենետիկյան Սենատի գրանցումների առաջին մատյանները չեն պահպանվել, ինչն անհնար է դարձնում դնպի Արևելք ուղղված կանոնավոր նավագնացության զարգացման վաղ շրջանի հիմնավոր հետազոտությունը<sup>30</sup>:

Վենետիկից դուրս գալով՝ նավերը շարժվում էին Ադրիատիկ ծովի արևելյան ափի երկայնքով՝ այցելելով Դուբրովնիկ (Ռագուզա) և Բալկանյան թերակղզու գլխավոր նավահանգիստներ: Ապա ծովային ուղին շարունակվում էր դնպի Պելոպոննես (Մեթոն), Կրնտն (Կանդիա), Հռոդոս, Կիպրոս (Ֆամագուստա, Լիմասոլ) և, վերջապես, նավերը խարխսխ էին գցում Այասում<sup>31</sup>: Պատահական չէ, որ Կանդիայում, Դուբրովնիկում և նկարագրված ուղու այլ վայրերում գործունեություն ծավալած վենետիկցի նոտարների փաստաթղթերում հանդիպում են տարատեսակ պայմանագրեր, որոնցում Կիլիկյան Հայաստանը բազմիցս ընտրվել է որպես առևտրական գործո-

<sup>28</sup> Alishan L., L'Ameno-Veneto, p. 46, 49, 51, 54. De Mas Latrie L., Histoire de l'île de Chypre sous le règne des princes de la maison de Lusignan, V. II, Paris, 1852, p. 134-135. Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 119-122.

<sup>29</sup> Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 47-48:

<sup>30</sup> Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 84.

<sup>31</sup> Բարթիկյան Հ., Նյութեր Կրնտնի հայկական գաղութի վերաբերյալ, էջ 497: Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 120. Dudan B., Il dominio veneziano di Levante, Bologna, 1938, p. 183.

ությունների իրականացման աշխարհագրական ուղղություն<sup>32</sup>: Այս ճանապարհորդության միջին տևողությունը կազմում էր 8-12 օր: Մասնավորապես 1301 թ. տվյալների համաձայն՝ Վենետիկից Այաս ուղևորությունը ձգվել է 8 օր, սակայն 1335 և 1336 թթ., նրբ ճանապարհին նավերը կանգ էին առել Կրնտնում՝ նշված է 12 օր<sup>33</sup>:

<sup>32</sup> Alishan L., L'Ameno-Veneto, p. 79-81, 94-97, 122-123. Otten-Froux C., Chypre, un des centres du commerce catalan en Orient // Els Catalans a la Mediterrània oriental a l'edat mitjana, ed. Maria Teresa Ferrer i Mallol, Barcelona, 2000, p. 136-137. Maltezos Ch., Attività catalane in Creta veneziana (XIV sec.) // Els Catalans a la Mediterrània oriental a l'edat mitjana, ed. Maria Teresa Ferrer i Mallol, Barcelona, 2000, p. 118. Krekić B., Dubrovnik (Raguse) et le Levant au moyen âge, Paris, 1961, p. 31, 141, 146. Jacoby D., Creta e Venezia nel contesto economico del Mediterraneo orientale sino alla metà del quattrocento // Venezia e Creta, a cura di Ortalli G., Venezia, 1998, p. 96.

<sup>33</sup> Stöckly D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 120, 122-123.

Աղյուսակ 1. XIV դ. առաջին կեսին Արևելք ուղարկված վն-  
նետիկյան առևտրական կանոնավոր նավագնացության զարկերնե-  
րը<sup>34</sup>:

Տարի	Կիպրոս-Կիլիկյան Հայաս- տան		Ռոմանիա-Սև ծով	
	քանակ	նավագնացության կազմակերպման նշանակը	քանակ	նավագնացության կազմակերպման նշանակը
1320	-	կանոնավոր	-	Կոմունայի
1321	-	կանոնավոր	-	Կոմունայի
1322	-	կանոնավոր	-	Կոմունայի
1323	-	Կոմունայի	-	Կոմունայի
1324	-	կանոնավոր	-	Կոմունայի
1325	-	կանոնավոր	-	աճուրդով
1326	-	կանոնավոր	-	Կոմունայի
1327	-	արտոնագրային	-	Կոմունայի

<sup>34</sup> Alishan L., L'A meno-Veneto, p. 82-101, 112-113. De Mas Latrie L., Histoire de l'île de Chypre sous le règne des princes de la maison de Lusignan, p. 134-135. Girom G., նշվ. աշխ., էջ 181-182: Thiriet F., Quelques observations sur le trafic des galées vénitienes d'après les chiffres des incanti (XIVe-XVe siècles) // Studi in onore di A. Fanfani, V. 3, Milano, 1962, p. 505. Նույնի՝ Régestes Des Délibérations Du Sénat De Venise Concernant La Romanie, p. 32. Balard M., La Méditerranée médiévale, p. 25-26. Lane F., Venetian Merchant Galleys, 1300-1334, p. 204. Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 55-56. Pryor J., Commerce, Shipping and Naval Warfare in the Medieval Mediterranean, London, 1987, p. 403.

1328	8	արտոնագրային	10	Կոմունայի
1329	8	արտոնագրային	8	աճուրդով
1330	8	արտոնագրային	6	աճուրդով
1331	8	աճուրդով	6	աճուրդով
1332	7 կամ 9	աճուրդով	8 կամ 10	աճուրդով
1333	10	արտոնագրային	10	աճուրդով
1334	8	աճուրդով	8 կամ 10	աճուրդով
1335	8	-	10	-
1336	8	-	8	-
1337	4	-	8	-
1338	8	-	10	-
1339	8	-	10	-
1340	6	-	8	-
1341	6	-	8	-
1342	-	-	8	-
1343	7	-	7	-
1344	11	-	-	-

Ինչպես նրևում է աղյուսակից, վենետիկյան իշխանությունները Կիլիկյան Հայաստան տարեկան ուղարկում էին միջին հաշվով 8 գալներ: Հաճախ իրականացվում էին տարեկան գալերային երկու ուղևորություններ, ինչը հաստատում է նաև Ղ. Ալիշանը. «Վենետկեցիք կանոնապես սահմանափակ և ժամանակաւ ամի ամի առաքելին խումբ մի եօթն կամ ութ ատուց, և երբեմն երկու խումբ, մի յամսեան օգոստոսի և միս կանուխ յապրիլի (կամ յնլս յունիսի, ըստ որում և այլք)»<sup>35</sup>:

Հետաքրքրական է, որ Վենետիկի Սենատի 1307 թ. մարտի վճռով դնպի Կիլիկիա նավագնացությունը փոսնագավոր համարվելով արգելվել էր<sup>36</sup>: Ամենայն հավանականությամբ սա պայմանավորված էր Կիլիկյան Հայաստանի և վենետիկեցիների միջև լարված հարաբերություններով, որոնք աննախադեպ սրվել էին, երբ 1304 թ. վենետիկյան երկու գալերի վաճառականներն ու ծովայինները Անդրեա Սանուտոյի (1302, 1303 թթ. Վենետիկի Հանրապետության պայլը Կիլիկյան Հայաստանում) և Պատրոնու Պանտալեոնե Մորոզինիների գլխավորությամբ գրավել և թալանել էին Այասի բերդը: Այս դեպքից հետո Լևոն Գ-ի (1301-1306՝ գահակից, իսկ 1306-1307՝ միանձնյա թագավոր) հրամանով վենետիկեցի վաճառականների համար սահմանվում է 4 % մարսավճար, որից նրանք նախկինում ազատված էին<sup>37</sup>: Վենետիկյան իշխանությունները 1307 թ. մայիսի 30-ին համաձայնում են հատուցել պատճառած վնասները: Մինչ այդ՝ մայիսի 20-ին, Լևոն Գ-ը նոր արտոնագիր էր շնորհել վենետիկեցիներին<sup>38</sup>: 1301, 1303, 1327 և 1328 թթ. Սենատի որոշումներում հիշյալ ծովային ուղին պարզապես անվանվել է «Հայկական»<sup>39</sup>, քանի որ

<sup>35</sup> Ալիշան Ղ., Մխուսն, էջ 360:

<sup>36</sup> Alishan L., L'Ameno-Veneto, p. 83. S t ö c k l y D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 123.

<sup>37</sup> Барсегов Ю., Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, с. 81-82. Sopracasa A., նշվ. աշխ., էջ 66:

<sup>38</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 166-177.

<sup>39</sup> Lane F., Venetian Merchant Galleys, 1300-1334, p. 205.

ավելի սուր՝ գրեթե թշնամական հարաբերություններ էին ձևավորվում նաև Կիպրոսի թագավորության ու Վենետիկի միջև: Մասնավորապես 1326, 1327, 1328 թթ. Կիպրոսի թագավոր Հուգո IV Լուգինյանի (1324-1359) հրամանով վենետիկեցիների ունեցվածքը բռնագրավվել էր, ինչի հետևանքով վենետիկյան նավերին արգելվել էր խարիսխ գցել Կիպրոսյան նավահանգիստներում: Հաճախ, հատկապես Բյուզանդիայի կամ Ջենովայի հետ ընթացող պատերազմների շրջանում, Վենետիկից մեկնող նավակազմերին վերապահվում էր մի քանի զործառույթ: Այսպես, օրինակ, 1302 թ. Կիլիկյան Հայաստան և Կրնտն ուղարկված 12 գալերներն ունեին թե՛ ռազմական ու առևտրական, և թե՛ քաղաքական որոշակի առաքելություններ<sup>40</sup>: Նկատենք, որ Ռոմանիայի և սևծովյան ուղղության մեջ ընդգրկված էին բազմաթիվ խոշոր նավահանգիստներ (Կոստանդնուպոլիս, Պերա, Թանա, Կաֆա, Տրապիզոն և այլն)<sup>41</sup>, մինչդեռ Արևելքում խաչակրաց իշխանությունների անկումից հետո «Oltremare»-ն փաստորեն սահմանափակվել էր Կրնտնով, Կիպրոսով ու Կիլիկյան Հայաստանով<sup>42</sup>:

Վենետիկյան առևտրական նավագնացության մեջ XIII դ. վերջին և XIV դ. սկզբին տիրապետում էին գլխավորապես Կոմունայի ջանքերով կազմակերպվող նավագնացությունները<sup>43</sup>: Սակայն, ի տարբերություն Ռոմանիայի և Սև ծովի՝ 1320-ական թվականներից Կիլիկյան Հայաստան և Կիպրոս ուղղության մեջ սկսել են գերակշռել «կանոնավոր», «արտոնագրային» և «աճուրդային» ձևերը,

<sup>40</sup> S t ö c k l y D., Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 123, 326.

<sup>41</sup> Карпов С., Маршруты черноморской навигации венецианских галей "линии" в XIV-XV вв. // Византия. Средиземноморье. Славянский мир, М., 1991, с. 92.

<sup>42</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 43-44.

<sup>43</sup> Ջենովայի Հանրապետության, իսկ ապա Բյուզանդիայի հետ հաճախ պատերազմների վերածվող հակամարտությունը վենետիկյան իշխանություններին ստիպում էր նավագնացությունները կազմակերպել զուտ պետության: Նախաձեռնությամբ (De Mas Latrie L., Histoire de l'île de Chypre sous le règne des princes de la maison de Lusignan, p. 134-135. Lane F., Venetian Merchant Galleys, 1300-1334, p. 185-186).

ինչը հուշում է դրանցում բնակչության ավելի լայն խավերի ներգրավվածության մասին: 1331 և 1332 թթ. սկսած՝ Կիպրոս-Կիլիկյան Հայաստան ուղևորություններում լայնորեն կիրառվում էին կոմունայի կողմից աճուրդային նդանակով մասնավորին տրվող նավակազմերը<sup>44</sup>:

Սենատի որոշումներում գրանցված գալերային նավակազմերից բացի, Կիլիկյան Հայաստան այցելում էին մեծաքանակ այլ գալերներ և, հատկապես, կոկկեր<sup>45</sup>: Ուսումնասիրողները փաստում են, որ Վենետիկի Հանրապետության առևտրական նավագնացության ամբողջական ծավալներն անհնար է ներկայացնել միայն պետության ուղարկված գալերային ճանապարհորդություններով և միաժամանակ ընդգծում գլխավորապես մասնավոր նախաձեռնությամբ կոկկերով<sup>46</sup> իրականացված ուղևորությունների կարևոր նշանակությունը<sup>47</sup>: Ըստ Ջ. Լուցցատոյի՝ տարեկան միայն մինչև 12 կոկկ Կիլիկյան Հայաստան, Կիպրոս և Ասորիք ուղարկվում էին բացառապես բամբակ տեղափոխելու համար<sup>48</sup>:

Նույն պատկերն ուրվագծվում է նաև Ջենովայի Հանրապետության առևտրական նավագնացության պարագայում: Ջենովական սկզբնաղբյուրներում նույնպես «Oltremare» տեղանվան տակ հաճախ ընկալվում էին Ասորիքը, Կիպրոսն ու Կիլիկյան Հայաստա-

նը<sup>49</sup>: Այսպես, ըստ 1311 թ. հուլիսի 10-ին Ջենովայում կնքված մի ալյանանագրի՝ ոմն Տուրկո Լերկարի մի խումբ ջենովացի վաճառականների վարձակալության էր տվել իր «Մանտա Մարիա» նավը, որպեսզի նրանք տեղափոխեին ֆրանսիական և լոմբարդական մահուդից բաղկացած բեռը: Պայմանագրում նավի ուղևորության վերջնակետերը նշված են հետևյալ կերպ. «...մեկնում են Անդրծով, այսինքն՝ դեպի Կիպրոս և Այաս կամ նշված վայրերից որևիցե մեկը»<sup>50</sup>:

Միայն 1274 թ. Այասում կազմված ջենովական նոտարական փաստաթղթերում հիշատակվում են 16 նավ<sup>51</sup>: Ուշագրավ է, որ Այաս էին ժամանում նավածեփի մասնագիտությամբ անծինք, որոնք, հավանաբար, զբաղվել են նավերի նորոգմամբ և ինչու ոչ՝ կառուցմամբ<sup>52</sup>: XIII-XIV դդ. կարևոր դերակատարում ունեին լիգնում կոչված բավական փոքր տարողունակությամբ նավերը, որոնք լայնորեն օգտագործվում էին Կիլիկյան Հայաստանի, Կիպրոսի, ինչպես նաև սևծովյան նավահանգիստների միջև գործող Ջենովայի առևտրական համակարգում<sup>53</sup>: Մասնավորապես 1277 և 1279 թթ. Այասում խարխիս ձգած եվրոպական նավերից լիգնումն առավել շատ հանդիպող տեսակն է<sup>54</sup>: Կիպրական քաղաքներում XIII դ.

<sup>49</sup> **Balletto L.**, Fonti notarili per la storia del Regno Latino di Gerusalemme // I Comuni italiani nel regno crociato di Gerusalemme, a cura di G. A. A. Iraldi, B. Z. Kedar, Collana storica di fonti e studi, 48, Genova, 1986, p. 194, 196.

<sup>50</sup> **Pistarino G.**, Dal declino sul mare di Levante tra cristiani, p. 116.

<sup>51</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 3, 10, 11, 27, 28, 29, 32, 33, 35, 37, 42, 42a, 50, 58, 60, 61, 64, 65, 86, 87, 91, 92, 98, 99, 100, 101, 104, 106, 107. **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aïas, p. 446-453, 456-457, 460, 465-470, 484-491. **Racine P.**, L'Aïas dans la seconde moitié du XIIIe siècle, p. 186.

<sup>52</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 36, 37, B. N 5, 10, 55, 131.

<sup>53</sup> **Velle S.**, I genovesi a Laiazzo sulla fine del Duecento // Saggi e documenti, T. III, Civico Istituto Colombiano, t. 3, Genova, 1983, p. 90-91. **Racine P.**, L'Aïas dans la seconde moitié du XIIIe siècle, p. 184-185. **Balard M.**, Les transports maritimes génois vers la Terre Sainte, p. 156.

<sup>54</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, B. N 35, 36, 64, 65, 75, 72, 78, 107. **Ferretto A.**, Codice diplomatico delle relazioni fra la Liguria, p. 178, 267, 270.

<sup>44</sup> **Alishan L.**, L'Ameno-Veneto, p. 100. **Lane F.**, Venetian Merchant Galleys, 1300-1334, p. 202.

<sup>45</sup> **Ashtor E.**, Levant Trade in the Later Middle Ages, p. 44.

<sup>46</sup> Այսպես կոչված «կոր» առաջատանավերը կամ կոկկերն (cocca, cocche, chocha) ավելի մեծ տարողունակություն ունեին, քան գալերները և հիմնականում ծառայում էին համեմատաբար էթանագին ապրանքատեսակների տեղափոխման համար: Դրանց տարողունակությունը հասնում էր 600-800 տոննայի (**Луццатто Дж.**, նշվ. աշխ., էջ 343; **Lane F.**, Venetian ships and shipbuilders of the Renaissance, p. 7).

<sup>47</sup> **S töckly D.**, Le système de l'Incanto des galées du marché à Venise, p. 36. **Карпов С.**, Маршруты черноморской навигации венецианских галей "линии" в XIV-XV вв., 90.

<sup>48</sup> **Луццатто Дж.**, նշվ. աշխ., էջ 349-350:

վերջին և XIV դ. սկզբին ձևակերպված նոտարական սկզբնաղբյուրներում գրանցված են դեպի կիլիկյան նավահանգիստներ ուղղություն ունեցող առևտրական հարյուրավոր ձեռնարկումներ, որոնց իրականացման համար օգտագործվել են տասնյակ նավեր: Բացի կարճ ուղևորություններից, որոնք ընթանում էին Արևելյան Միջերկրականի նավահանգիստների միջև, շատ նավեր, կիլիկյան Հայաստանում նոր ապրանքներով համալրվելուց հետո, շարունակում էին իրենց ճանապարհը դեպի Ջենովա, Բարսելոնա, Հարավային Ֆրանսիայի քաղաքներ և այլ ուղղություններով<sup>55</sup>: Այստեղ կնքված գործարքների իրականացման նպատակակետերի թվում բազմիցս հիշատակված են Աքքան, Բեյրութը, Տրիպոլիս, Տարտուսը, Ալեքսանդրիան, Դամիստոսան և այլն<sup>56</sup>:

Արևմտյան Եվրոպայի շատ նավահանգիստներում կնքված առևտրական գործարքներում կիլիկյան Հայաստանը բազմիցս հիշատակված է որպես նավերի ուղևորության նպատակակետ<sup>57</sup>:

<sup>55</sup> **Balar d M.**, Notai genovesi in Oltremare, A., N 20, 22, 149. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., I N 22. II N 18, 25, 55, 70, 73, 135. III N 6, 28, 29, 30, 63. **Polonio V.**, նշվ. աշխ., N 5, 88, 89, 101, 127, 183, 205, 207, 211, 217, 220, 223, 225, 257, 282: **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, A., N 18, 236. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 9, 86, 151, 163, 169, 170, 171, 181, 184, 194, 248. **Coureas N.**, Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia, p. 329-330.

<sup>56</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 2, 6, 11, 17, 19, 21, 27, 28, 29, 32, 33, 38, 44, 48, 48a, 49, 50, 53, 58, 59, 60, 63, 85, 87, 88, 91, 93, 94, 95, 105, 108, B. N 20, 35, 43, 69, 85, 87, 88, 126, 129, 137. **Ferretto A.**, Codice diplomatico delle relazioni fra la Liguria, p. 178, 272, 289. **Otten-Froux C.**, L'Als dans le demier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 164. **Lopez R. S.**, Medieval Trade in the Mediterranean World, p. 225. **Depping G.**, նշվ. աշխ., h. 2, էջ 64-65: **Jacoby D.**, Byzantine Trade with Egypt from the Mid-tenth Century to the Fourth Crusade // Commercial exchange across the Mediterranean: Byzantium, the Crusader Levant, Egypt and Italy, Aldershot, 2005, p. 69.

<sup>57</sup> **Canale M. G.**, Nuova istoria della Repubblica di Genova, del suo commercio e della sua letteratura, dale origini all'anno 1797, V. 2, Firenze, 1860, p. 468-469. **Reyerson K.**, The Art of the Deal, p. 40-41. **Pryor J.**, Business Contracts of Medieval Provence: Selected Notulae from the Cartulary of Giraud Amalric of Marseilles, 1248, Toronto, 1981, p. 77. **Balar d M.**, Les Catalans dans l'Outre-Mer génois aux XIIIe-XVe siècles // Els Catalans a la Mediterrània oriental a l'edat mitjana, ed. Maria Teresa Ferrer i Mallol, Barcelona, 2000, p.

Այսպիսի նոտարական աղբյուրներում վկայություններ են պահպանվել նաև Բարսելոնայից, Պիզայից, Լուկայից և այլ քաղաքներից եկած առևտրանավերի մասին<sup>58</sup>: Կատալոնյան սկզբնաղբյուրներում XIII-XIV դդ. Բարսելոնայից Արևելք ուղղված առևտրական նավագրքայության հիմնական ուղղություններն էին Ասորիքը, կիլիկյան Հայաստանը, Կիպրոսը, Հռոդոսը, Կրետեն և Եգիպտոսը<sup>59</sup>: Մասնավորապես կատալոնական ծովային առևտրին և նավագնացությանը վերաբերող ամենահայտնի սկզբնաղբյուրներից մեկի՝ «Օտվային կոնսուլատի»<sup>60</sup> փաստաթղթերի ժողովածուի մի հատվածում Բարսելոնայից մեկնած նավերի նպատակավայրերի թվում կիլիկյան Հայաստանն առաջնային տեղերում է<sup>61</sup>:

Օտվային առևտրական համակարգում ընդգրկվելու առաջին իսկ տարիներից կիլիկյան Հայաստանում սահմանվել էին միջագային նավագնացության անվտանգությունն նրաշխավորող որոշ օրենքներ, որոնցից առանձնահատուկ հիշատակության է արժանի «մերձավինյա իրավունքի» չկիրառման օրենքը: Դեռևս Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքում» դատապարտել է այն<sup>62</sup>, մինչդեռ

110-111. **Hillgarth J. N.**, Spain and the Mediterranean in the Later Middle Ages, Ashgate, 2003, p. 155. **Otten-Froux C.**, Chypre, un des centres du commerce catalan en Orient, p. 134-135.

<sup>58</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 11, 33, 35, 65, 91, 92.

<sup>59</sup> **Capmany y de Montpalau A. de**, Memorias históricas sobre la marina, comercio y artes de la Antigua ciudad de Barcelona, V. I, Barcelona, 1961, p. 13-14, 99-100, 234-235, 241, 259-260.

<sup>60</sup> (Consulado del Mar) XIII դարից Արագոնի թագավորության շատ քաղաքներում հիմնված պետաիրավական հաստատություններ, որոնք առանցքային դերակատարում ունեցան Միջերկրական ծովում կատալոնյան առևտրական ցանցի ձևավորման և զարգացման համար: 1370 թ. այդ հաստատությունների տարաբնույթ նյութերն ընդգրկվեցին «Օտվային կոնսուլատի գիրք» (Libro del Consulado del Mar) վերնագրված հավաքածուում (**O'Callaghan Joseph F.**, A History of Medieval Spain, Ithaca: London, 1975, p. 484-485).

<sup>61</sup> **Capmany y de Montpalau A. de**, Libro del Consulado del Mar, p. 219, 300-301. **Palleja C. de**, նշվ. աշխ., էջ 25, 126-127: **Pardessus J. M.**, նշվ. աշխ., էջ 80, 301:

<sup>62</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Ե., 1975, էջ 126:

այդ ժամանակաշրջանում «մերձափնյա իրավունքը» լայնորեն օգտագործվում էր եվրոպական շատ երկրներում: Լևոն Ա-ը (իշխան՝ 1187-1198, թագավոր՝ 1198-1219) Վենետիկի և Ջենովայի հանրապետություններին 1201 թ. շնորհած արտոնագրերում հրաժարվել է այդ իրավունքի կիրառումից: Դա նշանակում էր, որ Կիլիկիայի ափերին նավաբեկված, այս դեպքում՝ ջննովական ու վենետիկյան նավերի փրկված մասերը և բեռը պետք է վերադարձվեին իրենց տերերին: Այս կետն ամրագրվել է նաև եվրոպացիների հետ հետագայում կնքված առևտրական այլ պայմանագրերում: «Մերձափնյա իրավունքի» փոխադարձ հրաժարման պայմանավորվածություն էր ձևաբանվել նաև 1285 թ. Կիլիկյան հայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված խաղաղության պայմանագրով<sup>63</sup>:

Փորձենք ընդհանրացնել նաև այն սկզբնաղբյուրներն ու գիտական հետազոտությունները, որոնք վերաբերում են Կիլիկյան հայաստանի հայ վաճառականության կողմից իրականացված առևտրական նավագնացության խնդրին: Առաջին անգամ Ղ. Ալիշանն է «Միսուանում» հպանցիկ անդրադարձել այս հարցին: Հետագայում Գ.ր. Միրայելյանը և Ա. Տիրացյանը փորձել են խնդրին համեմատաբար ավելի վերլուծական մոտեցում ցուցաբերել: Երևք հերիանկներն էլ հիմնվել են գլխավորապես նույն սկզբնաղբյուրների վրա, որոնց առավել բնորոշ օրինակներին հարկ ենք համարում վերստին անդրադառնալ<sup>64</sup>:

Կիրակոս Գանձակեցին հայտնում է, թե ինչպես է Լևոն Ա-ն իրեն պատկանող մի ռազմանավով փախուստի մատնել թշնամու նավերին<sup>65</sup>: Հաջորդ վկայությունը պատկանում է Մարկո Պոլոյին, ըստ որի՝ նրա 1271 թ. ինքն իր հոր և հորեղբոր հետ միասին Այասից պետք է մեկնեին Արքա, հայոց արքա Լևոն Բ-ը (1269-1289) հրամա-

յն էր մի ռազմական գալեր սարքավորել, որով էլ պատվով ճանապարհն էր իրենց<sup>66</sup>: 1284 թ. օգոստոսի 12-ին Լևոն Բ-ը 600 բյուզանդով Արքայի Վենետիկի պայլից գնել էր տարիդա տնասկի մի նավ<sup>67</sup>: Վենետիկում գտնվող Օշին արքայի (1307-1320) դեսպանը 1311 թ. նավի 560 թիակ էր գնել և ուղարկել Կիլիկիա<sup>68</sup>: 1338 թ. արդեն Լևոն Դ-ին վենետիկյան նավարանից վաճառվել է մի հին նավ<sup>69</sup>: Բացառիկ տեղեկություններ է հաղորդում արաբ աշխարհագիր Իբն ալ Վարդին: Նկարագրելով 1323 թ. մամլուքների կողմից Այասի պաշարումը, նա հայտնում է, որ հայերն ունեին նրեք ռազմանավ՝ «Ատլաս», «Շամա» և «Այաս» անվանումներով, որոնց վրա Կիպրոս հասնելու նպատակով փախստական հայ ընտանիքներ էին բարձրացնել<sup>70</sup>: Արժեքավոր վկայություն ունի ֆրանցիսկյան միաբան և ճանապարհորդ Օդերիկո Պորդենոնացին, որը նկարագրել է համեմունքների առևտրով հայտնի Պոլումբո կոչված հնդկական նավահանգիստ (ի դեպ, ճանապարհին նա եղել էր նաև Կիլիկյան հայաստանում) 1321 թ. իր կատարած ուղևորությունը, որն իրականացրել էր մի հայ նավատիրոջ նավով<sup>71</sup>: Հայտնի է, որ Հնդկաստանից և Մոլդուքյան կղզիներից համեմունքների տեղափոխման հիմնական ուղիներից մեկն անցնում էր Կարմիր ծովով, ապա ցամաքային կարճ ճանապարհով՝ դեպի Ալեքսանդրիա<sup>72</sup>: Ուշագրավ է, որ 1270 թ. իտալական վաճառականական ձեռնարկներից մեկում ասվում է, որ

<sup>66</sup> Марко Поло, Книга, М., 1956, с. 49 (այստեղևտն՝ Марко Поло).

<sup>67</sup> Alishan L., L'A meno-Veneto, p. 48. Նույնի՝ Միսուան, էջ 369-370:

<sup>68</sup> Alishan L., L'A meno-Veneto, p. 67-68.

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 174:

<sup>70</sup> Տիրացյան Ա., նշվ. աշխ., էջ 45-46: Микаел ян Г., նշվ. աշխ., էջ 400:

<sup>71</sup> Fr. Donichelli T., Sopra la vita e i viaggi del Beato Odorico da Pordenone dell'ordine de'minori: Studi con documenti rari ed inediti, Prato, 1881, p. 217. Ալիշան Ղ., Միսուան, էջ 372:

<sup>72</sup> Donkin R. A., Between East and West: The Moluccas and the Traffic in Spices up to the Arrival of Europeans, Philadelphia, 2003, p. 124-125. Jacoby D., Mercanti genovesi e veneziani, p. 242. Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 78: Dini B., I circuiti de commercio internazionale nel tardo Medioevo // Prodotti e tecniche d'oltremare nelle economie europee. Secoli XIII-XVIII, Settimane di Studi, 29, Firenze, 1998, p. 649.

<sup>63</sup> Барсегов Ю., Отказ армян от «берегового права», с. 101-109. Մուրիայան Ա., նշվ. աշխ., էջ 226:

<sup>64</sup> Ալիշան Ղ., Միսուան, էջ 369-370: Տիրացյան Ա., նշվ. աշխ., էջ 45-46: Микаел ян Г., նշվ. աշխ., էջ 400:

<sup>65</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 159-160:

Այսպես խաչակրաց նավահանգիստներով համեմունքներ ստանում էր նաև Ալեքսանդրիայից<sup>73</sup>: Պարզ չէ, թե Օդերիկոյի հիշատակած նավապետը նդե՞լ է արդյոք Կիլիկյան Հայաստանից: Սակայն փաստ է, որ հայ վաճառականները կարողացել են դուրս գալ Միջերկրական ծովի սահմաններից և հասնել Հնդկաստան: Վերոնշյալ վկայություններին օգնության են գալիս Կիլիկյան Հայաստանում և Կիպրոսում կազմված ջննովական նոտարական գործերը, որոնց ծավալուն ժողովածուները, ի դեպ, միայն 1980-ական թվականներին լույս տեսած լինելով չէին կարող ուսումնասիրվել վերոհիշյալ հայ հետազոտողների կողմից: Դրանցում ամփոփված հարյուրավոր ակտերից նրեքն ուղղակիորեն փաստում են Հայկական Կիլիկիայի թագավորության նավատորմ ունենալու իրողությունը: 1274 թ. հունվարին Այասում և 1302 թ. հուլիսին ու օգոստոսին կազմված այդ սկզբնաղբյուրներում հանդիպում ենք Ջիովաննի Ակվաֆրիզիդա<sup>74</sup>, Հակոբոս Տորնելլո<sup>75</sup> և Հակոբոս Ջերվասիո<sup>76</sup> անուններով անձանց, որոնք ներկայացված են որպես Կիլիկյան Հայաստանի արքայի, կամ էլ պարզապես Կիլիկյան Հայաստանի ծովակալներ: Վերջիններս, ինչպես կարծում է Կ. Օթթեն-Ֆրուս, հայ արքաների մոտ ծառայության անցած եվրոպացիներ էին<sup>77</sup>: Այս տվյալները թույլ են տալիս համաձայնելու Գր. Միքայելյանի և Ա. Տիրացյանի այն կարծիքին, որ Կիլիկյան Հայաստանը, անկասկած, ունեցել է նավատորմ, որը հավանաբար մեծ չի եղել<sup>78</sup>:

Միջնադարում զարգացած նավատորմը պետությունների ոչ միայն ռազմական, այլև տնտեսական ներուժի կարևորագույն

<sup>73</sup> Jacoby D., *Mercanti genovesi e veneziani*, p. 240-242.

<sup>74</sup> Iohanni Aquefrigide, *admirato domini regis Armenie* (Balletto L., *Notai genovesi in Oltremare*, A. N 14).

<sup>75</sup> Iacobo Tomello, *Ianuensi, admirato domini regis Armenie. Iacobum Tomellum, admiratum E menie.* (Pavoni R., *Notai genovesi in Oltremare*, B., N 253. Desim oni C., *Actes passés à Famaguste de 1299 à 1301*, p. 29).

<sup>76</sup> domino Iacobo Zervasio, *admirato E menie* (Pavoni R., *Notai genovesi in Oltremare*, B., N 281).

<sup>77</sup> Otten-Froux C., *L'As dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle*, p. 155.

<sup>78</sup> Микаел ян Г., *նշլ. աշխ.*, էջ 400:

բաղադրիչներից էր: Ինչպես տարատեսակ սկզբնաղբյուրներում, այնպես էլ միջնադարյան տնտեսական պատմության շատ հետազոտողների ուսումնասիրություններում Կիլիկյան Հայաստանը XIII-XIV դդ. միջերկրածովյան առևտրական նավագնացային համակարգում ներկայանում է որպես առաջնային հանգրվան: Դա թույլ է տալիս պնդելու, որ Հայկական թագավորության միջազգային առևտրի ապրանքաշրջանառության կազմակերպումն իրականացվել է ժամանակի ամենաբարձր շտիանիշներին համապատասխան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԿԻԼԻԿՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2.1 Ապրանքատնտեսականին և ապրանքաշրջանառությունը  
Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական  
հարաբերություններում

Ապրանքատնտեսականու քննությունն առևտրի պատմությանը նվիրված յուրաքանչյուր գիտական հետազոտության կարևորագույն բաժիններից է: Այն հնարավորություն է ընձեռում պարզելու, թե որքանով էին Կիլիկյան Հայաստանի տնտեսության զանազան բնագավառներում ձեռք բերված նյութական հարստությունները ներգրավված միջազգային առևտրում: Այն օգնում է նաև պարզել պետության նշանակությունը որպես տարանցիկ առևտրի հանգուցակետ:

Փորձենք խնդիրը դիտարկել XIII-XIV դդ. Հարավային Եվրոպայի և Ասիայի միջև ձևավորված առևտրական ապրանքաշրջանառության համատեքստում: IX-X դդ. եվրոպացի ազնվականության կենցաղում բացակայում էր անզամ հասարակ սպիտակեղենը, իսկ շաքարը համարվում էր հազվագյուտ քաղցրավենիք<sup>1</sup>: Սակայն հեռավոր Չինաստանի, Հնդկաստանի, Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի հետ առևտրական շփումների հետ Եվրոպա էին թափանցում տեխնիկական զանազան նորամուծություններ: Հետամնաց ագրարային հարաբերությունները սկսում էին փոխարինվել արտադրական ձեռնարկություններով զինված քաղաքային տնտեսական համակարգով: Է. Աշթորն առանձնացրել է XIII դ. Եվրոպայում լայն տարածում գտած ընդամենը նրկու կարևորագույն սարքավորումներ՝ ոտքի սնդակով շարժման մեջ դրվող ջուլիակահատողը և ջրային շարժիչով աշխատող մահուդագործ մեքեն-

ան, որոնք հեղաշրջող նշանակություն ունեցան միջնադարյան արտադրության հիմք հանդիսացող տեքստիլ ձեռնարկությունների զարգացման համար<sup>2</sup>: Դրան զուգահեռ՝ մերձավորարևելյան նրկունների արտադրական ներուժն արագությամբ անկում էր ապրում: Այսպես, արաբ պատմիչ Մակրիզին (1364-1442), որը պետական տարբեր պաշտոններ էր զբաղեցրել Եգիպտոսի սուլթանությունում, վկայում է, որ իր օրերում մանլուքյան պետության կողմից կառավարվող բոլոր մեծ ձեռնարկությունները փակված են եղել<sup>3</sup>: Հետազոտողները նկատում են, որ Մերձավոր Արևելքում սկիզբ առած տնտեսական ճգնաժամի գլխավոր պատճառներից մեկը բնակչության թվի խիստ կրճատումն էր: Չանգվածային կոտորածներով ուղեկցվող մոնղոլական արշավանքները և հաճախակի կրկնվող համաճարակներն ամբողջությամբ փոխել էին տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը: Բաղդադի բնակչությունը, որը 1100 թ. հասել էր 400 հազարի՝ 1258 թ. մոնղոլների կողմից գրավվելուց հետո նվազել էր մինչև 60 հազար: XIV դ. բռնկված «Սև մահ» կոչված համաճարակին Ասորիքում և Պաղեստինում 900 հազարից - 1,2 մլն մարդ (բնակչության 1/3-ը) զոհ է գնացել<sup>4</sup>: Տնտեսական ճգնաժամն արտահայտվում էր ոչ միայն արտադրական ձեռնարկությունների համատարած փակմամբ, այլև գյուղատնտեսության անկմամբ: Ռաշիդ ադ Դինը (1247-1318), որը նրկար տարիներ բարձր պաշ-

<sup>2</sup> Ashtor E., The Economic Decline of the Middle East during the Later Middle Ages // Technology, Industry and Trade. The Levant versus Europe, 1250-1500, Great Yarmouth, Norfolk, 1992, II, p. 262, 270, 273. Նույնի՝ L'ascendant technologique de l'Occident Médiéval // Technology, Industry and Trade. The Levant versus Europe, 1250-1500, Great Yarmouth, Norfolk, 1992, IV, p. 386-387.

<sup>3</sup> Ashtor E., The Economic Decline of the Middle East, p. 273.

<sup>4</sup> Ashtor E., Le Proche-Orient au bas moyen âge. Une région sous-développée // Technology, Industry and Trade. The Levant versus Europe, 1250-1500, Great Yarmouth, Norfolk, 1992, I, p. 380-384. Նույնի՝ The Economic Decline of the Middle East, p. 253-254. Петров А., Азиатско-Западноевропейский торговый баланс в средние века // Ближний и Средний Восток, товарно-денежные отношения при феодализме, М., 1980, с. 181-185.

<sup>1</sup> Смет Я., После Марко Поло, М., 1968, с. 37-38.

տոններ էր զբաղեցրել Իլխանությունում, հայտնում է, որ պետության տարածքի միայն տասներորդ մասն էր մշակվում<sup>5</sup>:

Այսպիսով, արդեն XIII դարից սկսած Եվրոպան տնտեսական բազմակողմանի փոփոխությունների շնորհիվ հաղթահարում էր Արևելքի հետ առևտրական կապերում ձևավորված ապրանքային բացասական հաշվեկշիռը: Թանկարժեք մետաղներին փոխարինում էին տարբեր արտադրանքներ: Անմիջական շփման սահմանում գտնվող մերձավորարևելյան ու հյուսիսաֆրիկյան նրկրներն աստիճանաբար վերածվում էին նվրոպական ձեռնարկություններին հումք մատակարարող աղբյուրների:

Վերը նկարագրածին բավական համապատասխան ապրանքաշրջանառության հաշվեկշիռ էր ձևավորվել նաև Կիլիկյան Հայաստանի միջագային առևտրական հարաբերություններում: Տարտնուակ սկզբնաղբյուրների քննությամբ պարզվում է, որ լեանտյան առևտրում հիշատակված ապրանքների հիմնական կորիզը կազմող գրեթե ողջ տնտեսական առատորեն ներկայացված է եղել Կիլիկյան քաղաքների շուկաներում: Ասիայի խորքերից ներկրվում էին համեմունքներ, ներկանյութեր, թանկարժեք քարեր, տնքստիլ արտադրության համար որպես հումք ծառայող զանազան նյութեր և այլն: Եվրոպայից մեծ մասամբ ստացվում էր պատրաստի արտադրանք, ինչպես նաև թանկարժեք մետաղներ<sup>6</sup>:

XIII դ. և XIV դ. առաջին կեսին Հարավային Եվրոպայի և Արևելքի միջև ընթացող ապրանքաշրջանառության ուսումնասիրության համար որպես օրինակ կարող է ծառայել Կիլիկյան Հայաստանի, Կիպրոսի և Կրետեի միջև ձևավորված ապրանքափոխանակությունը: Եվրոպայից Կիլիկյան Հայաստան ժամանած, ինչպես և հակառակ ուղղությամբ շարժվող գրեթե յուրաքանչյուր

<sup>5</sup> Petrushevsky I., The Socio-Economic Condition of Iran under the Il-Khans // The Cambridge History of Iran, Vol. 5, The Saljuq and Mongol Periods, ed. Boyle J. A., Cambridge, 1968, p. 491.

<sup>6</sup> Otten-Fraux C., Les échanges commerciaux, p. 124-125. Նույնի՝ Le commerce cilicieux du XII<sup>e</sup> au XV<sup>e</sup> siècle // Arménie entre Orient et Occident, Paris, 1996, p. 136.

նավ նախապես խարխիս էր գցում այդ նրկու կղզիների նավահանգիստներում: Դրանք Եվրոպա ներմուծվող և այնտեղից արտահանվող ապրանքների կուտակման ու վերաբաշխման կենտրոններն էին: Հաշվումները ցույց են տալիս, որ Կիպրոսի առևտրական գլխավոր գործընկերը Կիլիկիայի հայկական թագավորությունն էր: Այսպես, 1296-1310 թթ. կիպրական քաղաքներում գրառված իտալական նոտարական գործերում հիշատակված ներդրումների ընդհանուր գումարը կազմել է շուրջ 600275 սալիտակ բյուզանդ (այսուհետև՝ ս. բ.)<sup>7</sup>, որը բաժանելով Կիպրոսի առևտրական գործընկեր պետությունների ու քաղաքների, ստանում ենք հետևյալ պատկերը՝ Կիլիկյան Հայաստան (Այսա և Տարսոն) - 142837 ս. բ.<sup>8</sup> կամ ամբողջ գումարի 23,79 %-ը, Ջննովա - 135799 ս. բ., 22,62 %: Անկոնա - 89609 ս. բ., 14,93 %: Վենետիկ - 48188 ս. բ., 8,02 %: Կոստանդնուպոլիս, Պերա, Սև ծով - 47241 ս. բ., 7,87 %: Կիպրոս (ներքին առևտուր) 36144 ս. բ., 6,02 %: Մարսել - 34149 ս. բ., 5,7 %: Ապոլիա - 15818 ս. բ., 2,64 %: Հռոդոս - 9550 ս. բ., 1,6 %<sup>9</sup>:

Հարկ է նկատել, որ նոտարական փաստաթղթերն առևտրի ամբողջ ծավալները ներկայացնելու համար ամենևին բավարար չեն: Նախ, դրանցում առկա են բազմաթիվ գործարքներ, որոնցում ապրանքների գներն ու քանակությունը նշված չեն: Դրան գումարվում է նաև այն հնարավոր ապրանքաշրջանառությունը, որն իրավաբանորեն չի գրանցվել: Ապրանքների հավասարակշիռ փոխլրացման շնորհիվ Կիլիկյան Հայաստանը և Կիպրոսը չեն կարող քիտվել որպես առևտրական մրցակիցներ: Կիպրական քաղաքներից և Կրետե-

<sup>7</sup> Կիպրոսի թագավորության հիմնական դրամական միավորը՝ սալիտակ կոչված ոսկե բյուզանդը կշեղ է 3,87 գր: Ըստ Ղ. Ալիշանի՝ 27 սալիտակ բյուզանդին համարժեք էր 100 հայկական նոր դրամը (Ալիշան Ղ., Սիսուան, էջ 383-385):

<sup>8</sup> Կ. Օթեն-Ֆրաուս ներառելով ընդհանրապես Կիլիկյան Հայաստան ուղղված գործարքները, ինչպես բոլոր հանձնարարականներում, վատահազրերում ու անդորրագրերում ամրագրված գումարները, ստացել է շուրջ 204361 ս. բ. (Otten-Fraux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 169):

<sup>9</sup> Balard M., La place de Famagouste génoise dans le Royaume des Lusignan (1374-1464), p. 19.

ից Կիլիկիա ներկրված ապրանքների մեջ առաջնային տեղում էին հացահատիկը, կտորեղենը և մետաղները: Հանդիպում է նաև տարատեսակ սննդամթերքներ՝ ձեթ, ընկուզեղեն, ձուկ, պանիր և այլն: Եթե վերջիններս կարող էին լինել այդ կղզիների արտադրանքները, ապա հացահատիկի ու մահուդի մեծագույն մասը, անկասկած, արևմտամիջերկրական էր: Կիլիկիայից Կիպրոս արտահանվող հիմնական ապրանքներն էին բամբակը, հումք մետաքսը, համեմունքներն ու ներկանյութերը<sup>10</sup>:

Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական ապրանքաշրջանառության ամբողջական ծավալների մասին կարելի է միայն ընդհանուր պատկերացում կազմել: Առաջին անգամ Ղ. Ալիշանը, հիմք ընդունելով թվային ընդամենը մեկ տվյալ, փորձել է հաշվել Այասում վենետիկցիների իրականացրած առևտրի ծավալները: Այսպես, 1312 թ. Այասի վենետիկյան պայլ Գրիգորիո Դուֆինը դոժին ուղղած նամակում գրել է, որ մեկուկես տարվա ընթացքում վենետիկցի վաճառականների՝ միայն ներմուծած ապրանքներից գանձելով կես տոկոս մաքս, իրեն բաժին է հասել 60 վենետիկյան լիվր գրոսս գումար: Ըստ Ղ. Ալիշանի՝ 1 լիվր գրոսը հավասար էր 120 ֆրանկի, ուստի միայն պայլի գրանցած տվյալների համաձայն՝ մեկուկես տարվա ընթացքում վենետիկցիները 1440000 ֆրանկի (60 x 120=7200 x 200=1440000) ապրանք են ներմուծել Այաս<sup>11</sup>: Զանի որ հետազոտողները շատ այլ պնտություններում վենետիկյան առևտրի

<sup>10</sup> Ferretto A., Annali storici di Sestri Ponente, p. 185-187. Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 165-166, 171-173. Jacoby D., Cretan Cheese: A Neglected Aspect of Venetian Medieval Trade // Medieval and Renaissance Venice, Chicago, 1999, p. 60. Նույնի՝ Creta e Venezia nel contesto economico del Mediterraneo, p. 96. Coureas N., The Structure and Content of the Notarial Deeds of Lamberto di Sambuceto and Giovanni da Rocha, 1296-1310 // Diplomatics in the Eastern Mediterranean 1000-1500: Aspects of Cross-Cultural Communication, Leiden-Boston, 2008, p. 229.

<sup>11</sup> Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 60-61:

ծավալների հաշվումները կատարել են ոսկե դուկատներով<sup>12</sup>, ուստի փորձենք ստացված գումարն արտահայտել այդ դրամական միավորով: Ղ. Ալիշանը 1 թագվորինը գնահատում է կես ֆրանկով, իսկ 1333 թ. հունիսի 17-ի տվյալներով մեկ ոսկե դուկատին համարժեք է եղել 24 թագվորինը<sup>13</sup>: 1440000 ֆրանկը ստացվում է 2880000 թագվորին, իսկ սա էլ՝ 120000 դուկատ: Թեև սա բավական արտկառնիչ գումար էր, սակայն այն պայմանական է և չի կարող ներկայացնել Այասում վենետիկցիների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալները: Ուշագրավ է, որ նույն Գրիգորիո Դուֆինը դոժին հղած նամակում նշում է, որ իր համար չափազանց դժվար է իրականացնել հարկումը: Նա բերում է օրինակ, որ Ռուձինի և Կոնտարինի անուններով երկու վենետիկցի վաճառականների հիշատակած 1400 արկից ավելի ապրանքներից շատ քիչ գումար է կարողացել գանձել<sup>14</sup>: Չի բացառվում, որ Դուֆինը թաքցրել է ստացված շահույթի չափը, սակայն, այսպես թե այնպես, ստացվում է, որ վերոնշյալ թվային տվյալներն ամենևին չեն կարող ներկայացնել Այասում վենետիկյան առևտրի ամբողջ ապրանքաշրջանառությունը: Է. Աշթորի բերած տվյալի համաձայն՝ 1301 թ. վենետիկյան գալերների կողմից Այաս ներմուծված ապրանքների ընդհանուր արժեքը կազմել է 90000 դուկատ<sup>15</sup>: Անշուշտ, այստեղ խոսքը միայն կանոնավոր նավագնացությանը կազմակերպված գալերային ուղևորությունների մասին է, քանի որ ամեն տարի Կիլիկյան Հայաստան էին այցելում բազմա-

<sup>12</sup> Ոսկի դուկատը սկսել է հատվել 1284 թ. վենետիկում և իր ժամանակի ամենաթանկարժեք միջազգային դրամական միավորներից էր. այն հատվում էր մարդը ոսկուց և կշռում 3,452 գր (Ալիշան Ղ., Միսուան, էջ 379):

<sup>13</sup> Թագվորին (խտալերեն սկզբնաղբյուրներում՝ tacorin, taccolini) արծաթյա դրամը Կիլիկյան Հայաստանում սկսել է հատվել XIII դ. վերջից. այն կշռել է 2,48 գր (Ալիշան Ղ., Միսուան, էջ 384-385: Պտուկեան Ջ., Կիլիկեան Հայաստանի դրամները, էջ 59-60):

<sup>14</sup> Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 60-61:

<sup>15</sup> Քրոջված տվյալների մասին որոշակի պատկերացում կազմելու համար նշենք, որ 1369 թ. Ելիպտոսի սուլթանության տիրապետության տակ գտնվող բոլոր տարածքների հետ ջենովացիների իրականացրած առևտրի ծավալները կազմել են շուրջ 400000 դուկատ. 1364 թ. Ջենովայի արտաքին առևտրի հիշատակությունը կազմել է 1570000 դուկատ (Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 44, 100-101):

թիվ այլ գաղերներ և, հատկապես, կոկկեր, որոնք առավելապես ծառայում էին բամբակի տեղափոխմանը: Իսկ թե որքան է եղել կիլիկյան քաղաքներից վենետիկցիների արտահանման ծավալները՝ որևէ կերպ չի պարզվում: Եթե հաշվի առնենք եվրոպական մյուս բոլոր պետությունների ու քաղաքների, մահմեդական, ինչպես նաև տեղացի վաճառականների իրականացրած ներդրումները, ապա կարելի է ենթադրել, որ կիլիկյան Հայաստանի արտաքին առևտրական ապրանքաշրջանառությունը մեծ ծավալներ է ունեցել:

Ասիայի խորքերից Այաս ներկրվող ապրանքների կուտակման գլխավոր կենտրոնը Թավրիզն էր<sup>16</sup>: Հնդկաստանից ու Հարավարևելյան Ասիայի այլ վայրերից կարմիր ծովով Եգիպտոս և Ատրիք բերվող համնմունքների ու դեղանյութերի մի զգալի քանակությունը մինչ Եվրոպա տեղափոխվելու ուղղվում էր Այաս<sup>17</sup>: Մամլուքների համար կիլիկյան նավահանգիստները շագմամթերքի<sup>18</sup> ձեռք բերման կարևոր աղբյուրներ էին<sup>19</sup>:

Թնև առևտրի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններում ապրանքները դասակարգված են ըստ աշխարհագրական ծագման, սակայն կիլիկյան Հայաստանում տեղական՝ արհեստավորական ու գյուղատնտեսական արտադրանքների առատ

<sup>16</sup> Марко Поло, с. 60. Манандян Я., նշվ. աշխ., էջ 298: Canestrini G., նշվ. աշխ., էջ 335-336: Pistorino G., Economia e societa del Mediterraneo Genovese, p. 141. Depping G., Histoire du commerce entre le Levant et l'Europe depuis les Croisades jusqu'à la fondations des colonies d'Amerique, T. 1, Paris, 1830, p. 133-134.

<sup>17</sup> Բաևուրան, Դաշնագիր խաղաղության, էջ 75: Lane F., Venice, A Maritime Republic, p. 130. Rey E., Les colonies Franques de Syrie aux XII<sup>me</sup> et XIII<sup>me</sup> siècles, Paris, 1883, p. 190.

<sup>18</sup> Ուազմամթերքի թվին դասվում էին նաև փայտանյութը, ինչպես նաև որոշ մետաղներ, որոնք օգտագործվում էին զենքի տարբեր տեսակներ պատրաստելու համար:

<sup>19</sup> Marino Sanuto, p. 27-29. Pryor J., Geography, Technology and War, p. 143. Jacoby D., The Supply of War Material to Egypt in the Crusader Period // Commercial Exchange across the Mediterranean: Byzantium, the Crusader Levant, Egypt and Italy, Aldershot, 2005, p. 119. Fleet K., European and Islamic Trade in the Early Ottoman State: The Merchants of Genoa and Turkey, Cambridge, 1999, p. 113.

տեսականու պարագայում այս սկզբունքը միշտ չէ, որ կարելի է կիրառել: Դա անհնար է նույնիսկ տարանցիկ ապրանքների դասակարգման դեպքում, քանի որ նույն ապրանքատեսակը կարող էր բերվել թե՛ Արևելքից, և թե՛ Արևմուտքից:

Բազառություն էին կազմում միայն *համնմունքները*, որոնք Արևելքից ստացվող հիմնական ապրանքներն էին: Հնուաքրքրական է, որ միջնադարում որպես «համնմունքներ» (spezierie) ընդունվում էին ոչ միայն բուն՝ մեզ համար ավանդական դարձած համնմունքները, այլ նաև դեղանյութերը, ներկանյութերը, խմժերը, հոտավետ նյութերը, շաքարը, մեղրը և նույնիսկ որոշ մետաղներ: Թանկարժեք էին համարվում ավելի թեթև կշռով «մանր կամ նուրբ» համնմունքները, որոնցից էին նարդոսը, մեխակը, մշկընկույզը, կուբեբա պղպեղը և այլն: Սև պղպեղը, կոճապղպեղը, դարչինը, խունկը, հոտավետ նյութերը, խմժերն ու ներկանյութերն անվանվում էին «ծանր» համնմունքներ և ավելի էժանագին էին<sup>20</sup>: Չնայած Ալեքսանդրիան համնմունքների առևտրի գլխավոր շուկան էր, սակայն Այաս-Թավրիզ մայրուղու ձևավորման հետ այն աստիճանաբար կորցնում էր իր մենաշնորհային դերը: Հնդկաստանից և Մոլլուքյան կղզիներից համնմունքները բերվում էին նրկու ուղիով՝ կարմիր ծովով Ալեքսանդրիա և Պարսից ծոցով Թավրիզ<sup>21</sup>: Հնդկական «նուրբ» համնմունքների մեծ մասը Պարսից ծոցով, իսկ ապա Բաղդադով ներկրվում էր Թավրիզ<sup>22</sup>: Ղնդ որում, Գր. Միքայելյանը գտնում է, որ Թավրիզից Եվրոպա տարվող համնմունքների մեծ մասն ամենայն հավանականությամբ անցնում էր Այասով և ոչ թե՛ Տրապիզոնով, քանի որ առաջին դեպքում մինչև Իտալիա ծովային ուղին ավելի

<sup>20</sup> Marino Sanuto, p. 3, 23. Pegolotti, p. 26-27, 59. Zibaldone, p. 61. Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 110.

<sup>21</sup> Donkin R. A., նշվ. աշխ., էջ 124-125: Jacoby D., Mercanti genovesi e veneziani, p. 242. Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 78: Dini B., նշվ. աշխ., էջ 649:

<sup>22</sup> Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 78:

կարճ էր, ինչպես նաև Կիլիկիայում մաքսատուրքերն ավելի ցածր էին<sup>23</sup>:

Նոտարական սկզբնաղբյուրներում և Ֆրանչեսկո Պեգոլոտտիի ու Ջիբալդոնե դա Կանալի վաճառականական ձեռնարկներում հիշատակված են Այասում վաճառված համնունքների, դեղանյութերի, խնժերի բացառիկ հարուստ տեսակների՝ մեխակ (garofano), կուբեբա պղպնդ (cubeba), մշկընկույզ (nocemoscada), նրկար պղպնդ, սև պղպնդ, կոճապղպնդ (zenzero, գնջրպի), դարչին (cannella), չաման (cuminum), խավարծիլ (rheum, ռևանդենի), լայնատերև նարդոս (lavandula latifolia), հիլ (cardamomo), հալվնի փայտ (lignum aloes), գնդարիա (zedoaria, արևադարձային բույսի կոճղարմատ), պատաստուկ (scamonea), ֆոլիո (follio, հնդկական դեղանյութ), խունկ (ladanum), պաղլնդ (alum, շիբ), քաֆուրի յուղ (canfora), կնքախնժ (lacca), վիշապածառի կարմիր խնժ (daemonorops), մաստիկենու խնժ (mastiche), տրագականդ կոչվող ծառի բուսախնժ (tragacantha), մեղրամոմ և այլն<sup>24</sup>: XIV դ. կատալոնյան վաճառականական մի ձեռնարկում հիշատակված է, որ Ալեքսանդրիայից, Տրիպոլիից և Կիլիկյան Հայաստանից ձեռք բերվող կնքախնժի տեսակներն ավելի բարձր որակ ունեին, քան Ռոմանիայից ստացվողը<sup>25</sup>:

Կիլիկյան շուկաներում լայնորեն հիշատակված ապրանքներից էին նաև ներկանյութերը, որոնք օգտագործվում էին եվրոպական տնտեսի ձեռնարկությունների կողմից: Դրանցից էին բրազիլ ծառի փայտանյութը (verzino, brasile), ինդիգոն (լեղակ, indaco, indigo), ոսկեգույն ներկանյութը (auripigmentum), ինչպես նաև շաֆրանը

<sup>23</sup> Микаелян Г., նշվ. աշխ., էջ 364:

<sup>24</sup> Pegolotti, p. 59. Zibaldone, p. 108-109. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 161-163. Otten-Froux C., Les relations économiques entre Chypre et le Royaume Aménien de Cilicie, p. 171.

<sup>25</sup> Coulon D., Barcelone et le grand commerce d'orient au moyen âge, Un siècle de relations avec l'Égypte et la Syrie-Palestine, ca. 1330-ca. 1430, Madrid: Barcelone, 2004, p. 461.

(քրքում, zafferano)<sup>26</sup>: Շաֆրան ծաղիկը, որը նաև համնունք է, նրշված է Կիլիկյան Հայաստանում աճող բույսերի ցուցակում, որոնցից հատկապես հայտնի էր կոռիկոսյան տեսակը<sup>27</sup>:

Միջնադարում սև պղպնդը Հնդկաստանից Եվրոպա ներկրվող գլխավոր ապրանքներից էր: Այստեղ կազմված նոտարական գործերում բազմաթիվ են պղպնդի առք ու վաճառքի դեպքերը<sup>28</sup>: Առանձնացնենք դրանցից մի քանիսը. 1279 թ. մարտի 9-ին կնքված գործարքով Ջիովաննի Տավանոն Նիկոլինո Տարտարոյից ստացել էր 1799 հայկական նոր դրամ<sup>29</sup> (այսուհետև՝ հ. ն. դ.) և խոստացել վերադարձնել 10 չենտինաիո (չափի ու կշռի միավորների համար տե՛ս աղյուսակ 2) և 73 լիբրա պղպնդի տնտրով<sup>30</sup>: Այս տվյալների քննությունը ցույց է տալիս, որ խոսքը 53,6 հայկական խոշոր բոսոլ (մոտ 340 կգ) պղպնդի մասին է: Հետևաբար, 1 խոշոր բոսոլ պղպնդը 1279 - թ. Այասում արժեր 33,5 հ. ն. դ.: 1274 թ. փետրվարի 27-ին ձևակերպված մի այլ պայմանագրում նշված է, որ կիլիկյան Պալո նավահանգստում<sup>31</sup> խարխիս գցած մի խումբ կատալոնացի վաճառական-

<sup>26</sup> Pegolotti, p. 59. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 161-163. Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 72, 77, 86. Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 500, 503, 508-509. Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 160. Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 18. Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 668:

<sup>27</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 16, 21, 29:

<sup>28</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 35, 40. B: N 74, 77, 82, 101, 106, 120. Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 451-452, 455, 501, 503, 506-507, 516, 518, 525-526.

<sup>29</sup> Հայկական նոր դրամը սկսել է հատվել Լևոն Բ-ի գահակալության շրջանում: Այն կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական հարաբերություններում ամենից շատ օգտագործված դրամական միավորներից էր. դրանք 2,9 գր կշռով արծաթյա դրամներ էին: Հետագայում՝ XIV դ. առաջին քառորդում, նոր դրամի արծաթի պարունակությունը նվազեցվել է որի հետ միաժամանակ այն սկսել է արժեզրկվել (Ալիշան Ղ., Սիսուան, էջ 385: Պատկերան Զ., կիլիկյան Հայաստանի դրամները, էջ 58-59):

<sup>30</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 82. Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 506-507.

<sup>31</sup> Այս նավահանգիստը գտնվում էր Պիրանոս գետի գետաբերանի արևելյան մասում: Լատիններն և իտալներն սկզբնաղբյուրներում այն հիշատակվում էր Portus Palorum, Portus de Pallibus, Porto Pali և այլ ձևերով (Ալիշան Ղ., Սիսուան, էջ 395-396):

ներին պատկանող նավի վրա բեռնվել էր 90 աքքայան կանտար (ավելի քան 21 տոննա) ընդհանուր կշռով պղպնդ և պաղլնդ<sup>32</sup>: 1279 թ. փետրվարի 24-ի գործարքում ասվում է, որ Ջիովաննի Տավանոն Էնրիկո Գրիմալդիից ստանում էր 3 սպորտա (մոտ 760 կգ) կոճապղպնդ, որի դիմաց պետք է վճարեր 203 ջննովական լիր, 2 սոլդի և 6 դենար գումար<sup>33</sup>: Ըստ հաշվումների՝ ջննովական նշյալ դրամական միավորներով վճարված գումարը համարժեք էր մոտ 3595 հ. ն. դ. ի<sup>34</sup>: Ստացվում է, որ 1 խոշոր թոսլ կոճապղպնդը 1279 թ. Այստում արժեր 29,9 հ. ն. դ.: Նույն թվականի մի այլ աղբյուրի համաձայն՝ կոճապղպնդի բեյնդի տնսակի 1 թոսլի դիմաց վճարվել էր 26 հ. ն. դ.<sup>35</sup>: Այս ապրանքատնսակի բավական խոշոր քանակության մասին է վկայում 1279 թ. մարտի 30-ին կնքված պայմանագիրը, որտեղ 1009 ջննովական լիվրի և 10 սոլդի (շուրջ 17268 հ. ն. դ.) դիմաց որպես գրավ դրվել էր 30 սպորտա (7602 կգ) ընդհանուր կշռով կոճապղպնդ և պղպնդ<sup>36</sup>:

Եթե համեմատենք նրա աշխարհագրական ծագումը հստակ է, ապա բամբակը, մետաքսը, զանազան կտորեղենը, տարատնսակ բոլոր գործվածքները և մորթեղենը կարող էին լինել թե՛ ներմուծված, և թե՛ տեղական արտադրության: Ուստի նման շատ ապրանքատնսակների կանդադարանք առանց որևէ դատակարգման սկզբունքի:

**Բամբակի** ցանքատարածությունները սփռված էին գրեթե ամբողջ Միջին և Մերձավոր Արևելքում՝ Իրանի բազմաթիվ շրջաններում, Միջագետքում, Ասորիքում, Պաղեստինում և այլուր<sup>37</sup>: Դեռևս XI-XII դդ. Դաշտային կլիմայում բամբակի մշակությունը բավական զարգացած էր: Բամբակը մեծ մասամբ տեղափոխվում և վա-

ճառվում էր Անտիոքում, որտեղից, արդեն 1140 թ. սկսած, ջննովացի վաճառականներն այն արտահանում էին միջերկրածովյան շատ երկրներ<sup>38</sup>: Տարաբնույթ սկզբնաղբյուրներում բազմիցս խոսվում է կլիմայան հայաստանում մշակված բամբակի բարձր որակի մասին: Նախ անդրադառնանք Պեգոլոտտիին, որն ըստ որակի դասակարգել է իր ժամանակի բամբակի ամենաեռայտնի տնսակները. «Ասորիքի համայում մշակվում է լավագույն բամբակը. հալեպինն այնպիսին է, ինչպես համայինը, հայաստանի<sup>39</sup> բամբակը համայից և հալեպից հետո է, Ասորիքի Ծամինը<sup>40</sup> նույնպես հետևում է համայի և հալեպի տնսակներին, Աքքայի բամբակը գնում է Ծամից հետո, Կիպրոսինը հետևում է Աքքայի բամբակին, Ասորիքի Լաթաքիայի տնսակը նույնպիսի որակի է, ինչպես Կիպրոսինը, Ապոլիայի Բասիլիկատայի բամբակը հետևում է Լաթաքիայի տնսակին, Մալթայինը Բասիլիկատայից հետո է, կալաբրիականը հետևում է Բասիլիկատայի բամբակին, և սիկիլականը, որը գալիս է կալաբրիականից հետո»<sup>41</sup>:

Ինչպես տեսնում ենք, գերագանց որակի կլիմայան բամբակն անմիջապես հաջորդում էր լավագույնը համարվող ամանոսյան և հալեպյան տնսակներին: Բամբակի մշակմամբ հայտնի էին Կոռիկոս, Սելևկիա և Ադանա քաղաքների մոտակա շրջանները<sup>42</sup>: Ոչ պակաս արժեքավոր է Մարինո Սանուտոյի վկայությունն առ այն, որ կլիմայան հայաստանում մեծաքանակ բամբակ էր աճում և այն շատ բարձր զին ուներ<sup>43</sup>:

<sup>38</sup> Տեր-Ղևոնդյան Վ., նշվ. աշխ., էջ 138:

<sup>39</sup> Ինչպես Գրանչեսկո Պեգոլոտտիի մոտ, այնպես էլ բազմաթիվ այլ սկզբնաղբյուրներում կլիմայան հայաստանն ուղղակի անվանվում է հայաստան:

<sup>40</sup> Թեև Ծամ անվանվել է նաև ամբողջ Ասորիքը, սակայն Վ. Վեյդը նշում է, որ այդպես կոչվել է Դամասկոսն ընդգրկող շրջանը (Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 612):

<sup>41</sup> Pegolotti, p. 366-367. Mazzaoui M., նշվ. աշխ., էջ 34: Jong-Kuk N., Le commerce du coton en Méditerranée à la fin du moyen âge, Leiden, 2007, p. 98-100.

<sup>42</sup> Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 612:

<sup>43</sup> Marino Sanuto, p. 33. Ալիշան Ղ., Միսուան, էջ 14:

<sup>32</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 35.

<sup>33</sup> Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 501-502.

Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 73.

<sup>34</sup> Ալիշան Ղ., Միսուան, էջ 370, 382-383:

<sup>35</sup> Diplomatarium Veneto-Levanticum, p. 41. Ալիշան Ղ., Միսուան, էջ 370:

<sup>36</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 106. Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 518.

<sup>37</sup> Ashtor E., The Economic Decline of the Middle East, p. 262-263.

Արևմուտքի վաճառականները բամբակ էին մատակարարում եվրոպական բազմաթիվ քաղաքների տնտեսի ձեռնարկություններին<sup>44</sup>: Տարեկան նրկու անգամ՝ գարնանը և աշնանը, Վենետիկից Արևելք էր ուղղվում «բամբակի քարավանը» կազմված 5-12 կոկերից: Միջինը 700 տոննա տարողունակությամբ այս նավերը բացառապես ծառայում էին Կիլիկյան Հայաստանից, Կիպրոսից և Ասորիքից դեպի Եվրոպա բամբակի տեղափոխման համար: Քանի որ այն թնթև և մեծ ծավալ պահանջող ապրանքատեսակ էր, նավատերերը տեղ խնայելու նպատակով օգտագործում էին հատուկ սեղմող սարքավորումներ: Սակայն վենետիկյան Սենատը մեծ տուգանքներ էր սահմանել մեկ նավի վրա 800 պարկից (560 տոննա) ավելի բամբակ բեռնելու համար<sup>45</sup>: Բամբակի կուտակման խոշորագույն տարանցիկ կենտրոնը կիպրոսյան Ֆամագուստան էր, որտեղ կառուցվել էին այդ ապրանքի համար նախատեսված մեծ պահեստներ: Այստեղից այն ուղարկվում էր Վենետիկ, Անկոնա, Չենոպա, Ֆլորենցիա, Նեապոլ, Մարսել, Բարսելոնա և այլ քաղաքներ<sup>46</sup>: XIII դ. վերջին և XIV դ. առաջին քառորդին Կիլիկյան Հայաստանը Կիպրոսի համար բամբակի ձեռք բերման գլխավոր աղբյուրն էր՝ այդ դերում գերազանցելով նույնիսկ ասորական նավահանգիստներին: Այսպես, ըստ 1296-1302 և 1307 թթ. կիպրական քաղաքներում ձևակերպված նոտարական հարյուրավոր գործարքների՝ Կիլիկյան Հայաստանից

<sup>44</sup> **Финонова Н.**, Текстильное производство в Венеции XIII-XV вв. // Страны Средиземноморья в античную и средневековую эпохи, Горький, 1985, с. 149. **Ashtor E.**, The Economic Decline of the Middle East, p. 263-264. **Day J.**, The Levant Trade in the Middle Ages // The Economic History of Byzantium: From the Seventh through the Fifteenth Century, Washington, 2002, p. 808.

<sup>45</sup> **Луццатто Дж.**, նշվ. աշխ., էջ 343, 351: **Бл изнюк С.**, Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 83-84. **Mazzaoui M.**, նշվ. աշխ., էջ 37-40:

<sup>46</sup> **Otten-Froux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p.171-172. **Ashtor E.**, Levant Trade in the Later Middle Ages, p. 41, 43. **Jong-Kuk N.**, նշվ. աշխ., էջ 362: **Coureas N.**, The Structure and Content of the Notarial Deeds of Lamberto di Sambuceto and Giovanni da Rocha, 1296-1310, p. 228, 231.

բամբակի գնման վրա ծախսվել է այդ ապրանքի ձեռք բերման համար արված ամբողջ ներդրումների 37 %-ը կամ նշյալ ժամանակամիջոցում Ֆամագուստայում իրականացված բոլոր տեսակի ներդրումների 6,8 %-ը: Ասորական նավահանգիստների համար այդ թվերը կազմում են համապատասխանաբար 25,6 % և 4,03 %<sup>47</sup>: Միևնույն ժամանակ եվրոպական քաղաքներից մեկնող վաճառականները հաճախ ծրագրում էին, որ բամբակ պետք է ձեռք բերեն ուղղակի Կիլիկյան Հայաստանից<sup>48</sup>: Կիլիկիայից գնված բամբակը հայտնի էր նույնիսկ Անգլիայում և Ֆլանդրիայում<sup>49</sup>: Ղ. Ալիշանը, հետազոտելով Բրյուգեում պահպանված արխիվային մի փաստաթուղթ, գրում է. «Փռանկերէն ցուցակի ասի ընդունել Ֆլամանաց ի Հայոց զբամբակ, զհամմունուս, պղպնդ, որդան փայտ»<sup>50</sup> և այլն<sup>51</sup>: Կիլիկյան բամբակի հանդեպ մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում նաև մահմեդական վաճառականները: Թեև եգիպտական բամբակի որոշ տեսակներ կարողանում էին մրցակցել նույնիսկ ասորականի հետ, սակայն մշակման ծավալներով Մամլուքյան սուլթանությունը զգալիորեն զիջում էր ինչպես Կիլիկյան Հայաստանին, այնպես էլ Ասորիքին: Ավելին, Մ. Մացցատին փաստում է, որ XIII դ. Արևմուտք ներկրված բարձրորակ բամբակի մեծագույն մասը տվել են Հայկական Կիլիկիան և Ասորիքը<sup>52</sup>:

Իտալական դիվաններում պահպանվել է նրկու կարևորագույն փաստաթուղթ: Առաջինը 1274 թ. Վենետիկի Սենատի հրամանն է,

<sup>47</sup> **Бл изнюк С.**, Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 78-79.

<sup>48</sup> **Otten-Froux C.**, Chypre, un des centres du commerce catalan en Orient, p. 133.

<sup>49</sup> **Mazzaoui M.**, նշվ. աշխ., էջ 39-40:

<sup>50</sup> Ղ. Ալիշանը բրազիլ ծառի փայտանյութին տվել է «որդան փայտ» անվանումը (Ալիշան Ղ., Միսուան, էջ 359):

<sup>51</sup> Dou royaume de Hemenie vient coutons et tote autre espicerie dessus dite (Poivre, B resis, etc.) (Ալիշան Ղ., Միսուան, էջ 359: **De Mas Latrie L.**, Traités de paix et de commerce et documents divers concernant les relations des Chrétiens avec les Arabes de l'Afrique septentrionale au moyen âge, Paris, 1866, p. 98-99).

<sup>52</sup> **Mazzaoui M.**, նշվ. աշխ., էջ 42:

ըստ որի՝ Կիլիկյան Հայաստանում նստող վենետիկյան պայլին հնարավորություն էր ընձևվում Այասում հիմնել ընկերություն, որը կենտրոնացնելու էր բամբակի և բամբակյա կտորեղենի առևտրի մենաշնորհը: Մյուսը վերաբերում է 1283 թ. հուլիսի 22-ին Վենետիկի Մեծ Խորհրդի որոշմանը, որով Կիլիկյան Հայաստանում ստեղծվում էր սինդիկատ, որը զբաղվելու էր Այասից բամբակի, բամբակյա կտորեղենի, ցփսիի և պղպեղի արտահանմամբ: Սինդիկատը գործելու էր պայլի հատուկ հսկողության ներքո, որտեղ առևտրական գործունեություն ծավալելու համար որպես նվազագույն ներդրում սահմանվել էր 200 բյուզանդը (մոտ 100 ոսկե դուկատ)<sup>53</sup>: Բամբակի առևտրի օրինականացման այս քայլերը նաև միտված էին սահմանափակելու մրցակցությունը և կարգավորելու արագ բարձրացող գները: Այսպես, օրինակ, 1316 թ. վենետիկյան նավով ճանապարհորդող նրկու կատալոնացի առևտրական մեղադրվել էին ընդամենը մեկ պարկ հայկական բամբակի անօրինական արտահանման համար: Իսկ մանտուացի մի վաճառական 1344 թ. օգոստոսի 9-ին ներում էր ստացել Այասից 4 պարկ բամբակի անօրինական արտահանման համար<sup>54</sup>:

Կիլիկյան քաղաքներում վաճառվում էր ինչպես հումքային (cotone mapputo), այնպես էլ մանած բամբակ (cotonum filatum)<sup>55</sup>: Անդրադառնալով Այասում կնքված մի շարք գործարքների<sup>56</sup>: 1279 թ. նոյեմբերի 14-ին Այասում առևտրական միջնորդ Վասիլիոն Մանունլն Լերկարիից պետք է ստանար 313 հ. ն. դ.-ի մահուդ՝ Տարսունում վաճառելու նպատակով: Ձեռք բերված գումարով Վասիլիոն

<sup>53</sup> Alishan L., L'Ameno-Veneto, p. 44, 47. Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 51: Mazzaoui M., նշվ. աշխ., էջ 40:

<sup>54</sup> Alishan L., L'Ameno-Veneto, p. 74, 174. Mazzaoui M., նշվ. աշխ., էջ 40:

<sup>55</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 40. Bondi Sebellico A., նշվ. աշխ., հ. 1, N 83: Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 162. Dulaurier E., Le Royaume de la Petite Arménie au temps des Croisades // Recueil des historiens des croisades, Documents Arméniens, t. I, Paris 1869, p. CII-CIII.

<sup>56</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 35, 72, B. N 130, 134, 135. Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 451-452, 473, 530, 532-533. Alishan L., L'Ameno-Veneto, p. 181, 191.

պարտավորվում էր 200 ռոտլ (1267 կգ) բամբակ (1 ռոտլի դիմաց՝ 9 նոր դրամ գնով) գնել և հանձնել Մանունլեյին<sup>57</sup>: 1298 թ. տվյալներով Այասում 486 խոշոր ռոտլ (ավելի քան 3078 կգ) հալեպյան բամբակի դիմաց վճարվել էր 6323,5 հ. ն. դ.. հետևում է, որ այս ապրանքատեսակի 1 ռոտլն արժեր 13 հ. ն. դ.<sup>58</sup>: 1301 թ. հունվարի 31-ին Կիպրոսում 6 պարկ<sup>59</sup> (156 խոշոր ռոտլ կամ 990 կգ) կիլիկյան բամբակի համար վճարվել էր 1726 տուրյան արծաթ<sup>60</sup>, որը, ի դեպ, պետք է վաճառվեր Մարսելում: Այստեղ նույնպես բամբակի 1 ռոտլի արժեքը մոտ 13 հ. ն. դ.<sup>61</sup>: Հետևաբար, հայկական և հալեպյան բամբակի տեսակները նույն զինն ունեին:

Կիլիկյան շուկաներում վաճառվում էր նաև պուխրամ (bucherami, bocharanum, buckram) կոչված բամբակյա գործվածքը, որի անունը ծագում էր Միջին Ասիայի Բուխարա քաղաքից<sup>62</sup>: Հայտնի էր Երզնկայում արտադրված պուխրամը, որն Էրզրումով բերվում էր Այաս<sup>63</sup>: Բամբակյա արտադրանքների թվում հիշատակվել են նաև զանազան գործվածքներ, ինչպես նաև սավան, բաճկոն, շապիկ, բարձ, տաբակ և այլն<sup>64</sup>:

<sup>57</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 130. Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 530.

<sup>58</sup> Diplomatarium Veneto-Levanticum, p. 41. Ալիշան Ղ., Միսուն, էջ 369:

<sup>59</sup> Մեկ պարկում կարելի էր տեղավորել 26 ռոտլ բամբակ (Ալիշան Ղ., Միսուն, էջ 369):

<sup>60</sup> 2,5 տուրյան արծաթին համարժեք էր 3 հ. ն. դ. (Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 164).

<sup>61</sup> Polonio V., նշվ. աշխ., N 211:

<sup>62</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 77. Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 170.

<sup>63</sup> Bautier R., Les relations économiques des Occidentaux avec les pays de l'Orient au moyen âge // Sociétés et compagnies de commerce en Orient et dans l'océan Indien, ed. M. Mollat, Paris, 1970, p. 318. Michel F., Recherches sur le commerce, la fabrications et l'usage des étoffes de soie d'or et d'argent et autres tissus précieux en Occident, principalement en France pendant le moyen âge, Paris, 1854, p. 34. Mazzaoui M., նշվ. աշխ., էջ 180:

<sup>64</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 7, 14, 38, 45, 72, 79. Պտուկման Ջ., Կիլիկյան Հայաստանի վաճառականությանը, «Հանդես անսօրենյ», 1961, N 1-12, էջ 743-744: Ալիշան Ղ., Միսուն, էջ 370:

Հնուց ի վեր *մետաքսը* համարվել է Արևելք-Արևմուտք առևտրի ամենախորհրդանշական ապրանքատեսակը: Հին աշխարհում մետաքսի արտադրության մենաշնորհը պատկանում էր Չինաստանին: Սակայն Հուստինիանոս կայսեր (527-565) օրոք թթննու շերամը ներմուծվել էր Բյուզանդիա<sup>65</sup>: Իտալիայում մետաքսյա գորվածքների արտադրության առաջին հիշատակությունները վերաբերում են X դ. առաջին կեսին: XIII դ. Ֆլորենցիայից քիչ հեռու գտնվող տոսկանական Լուկա քաղաքը դարձել էր Եվրոպայի մետաքսի արտադրության գլխավոր կենտրոնը: Այն կլանում էր ջենովացիների կողմից Եվրոպա բերվող հումքային մետաքսի մեծագույն մասը<sup>66</sup>: Չնայած XIII-XIV դդ. տիրապետող գյուղատնտեսական խորը ճգնաժամին՝ Հուլավյանների պետությունում թթննիների մշակման և միաժամանակ հումքային մետաքսի արտադրության ծավալները ոչ միայն չէին նվազում, այլև աճում էին<sup>67</sup>: Սկզբնաղբյուրներում հիշատակված են Իլլսանության տարբեր շրջաններում արտադրված մետաքսի տեսակներ: Բարձրորակ էր լեզին (*leggi կամ lezi*), որն իր անունն ստացել էր Գիլանի շրջանի Լահիջան քաղաքից: Հայտնի էին նաև Գիլանի (*seta ghella*), Մազանդարանի (*seta massandroni*), Թալիշի (*seta talani*), Շաքիի (*sicchi կամ sacchi*), Գանձակի (*canzia, cancia*), Շամախիի (*chamaki*) և շատ այլ տեսակներ<sup>68</sup>: Եվրոպացի վաճառականները մետաքս ներմուծում էին նաև հեռավոր Չինաստանից, որտեղ այն շատ ցածր գին ուներ<sup>69</sup>:

<sup>65</sup> Lopez R. S., China Silk in Europe in the Yuan Period // Journal of the American Oriental Society, 1952, V. 72, N 2, p. 72.

<sup>66</sup> Del Punta I., Lucca e il commercio della seta nel Duecento // Per Marco Tangheroni. Studi su Pisa e sul Mediterraneo medievale offerti dai suoi ultimi allievi, Pisa, 2006, p. 99-127. Muthesius A., Silk in the Medieval World // The Cambridge History of Western Textiles, V. 1, Cambridge Un. Press, 2003, p. 333-334.

<sup>67</sup> Petrushevsky I., նշվ. աշխ., էջ 504-505:

<sup>68</sup> Pegolotti, p. 297-300. Марко Поло, с. 58, 252. Ashtor E., The Economic Decline of the Middle East, p. 265-268. Petrushevsky I., նշվ. աշխ., էջ 504-505: Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 670-673:

<sup>69</sup> Lopez R. S., China Silk in Europe in the Yuan Period, p. 75. Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 63.

XIII դ. 50-60-ական թթ. վերջից մինչև XIV դ. 40-ական թթ. Թավրիզից Այաս մեծաքանակ չինական մետաքս է ներկրվել: Այդ նրկու քաղաքներում օգտագործված չափի ու կշռի միավորների համեմատության մեջ համեմունքներից անմիջապես հետո նշված է մետաքսը<sup>70</sup>: Մի շարք հետազոտողների կարծիքով վերոնշյալ ժամանակամիջոցում Իտալիա և Ֆրանսիա ներմուծված չինական մետաքսի մեծ մասը ձեռք էր բերվել Այասում և սեծովյան որոշ նավահանգիստներում<sup>71</sup>: Ի դեպ, Իրանից Այաս և Տրապիզոն արտահանված հումքային մետաքսը և մետաքսյա հագուստը բարձր որակ է ունեցել<sup>72</sup>: Կիլիկյան Հայաստանի շուկաներում վաճառվում էին մետաքսի բազմաթիվ տեսակներ<sup>73</sup>: Այսպես, Այասում 1277 թ. սեպտեմբերի 20-ին կնքված մի գործարքով Գրիմալդո Բնասանիոն կոմս-մեդայի պայմանով Օբերտո Պիկամիլոյից պետք է ստանար մոտ 4036 հ. ն. դ. արժեքով 1 ֆարդել կշռով Ջիջերիոյի մետաքս (*seta de Gigerio*)<sup>74</sup>: 1214 թ. Լևոն Ա-ի կողմից Երուսաղեմի Հյուրընկալ ասպետներին վարձավճարով տրամադրված Կիլիկիայի մի շարք շրջանների թվում հիշատակված է նաև ճկերի շրջանը, որը լատիններենով կազմված պայմանագրում նշված է Giguerei ձևով: Այն գտնվում էր Կիլիկյան Հայաստանի հարավարևելքում՝ Հայկական կամ Ալեքսանդրնտի ծոցի ափին, որտեղ, անշուշտ, կարող էին զբաղվել

<sup>70</sup> Pegolotti, p. 30.

<sup>71</sup> Lopez R. S., China Silk in Europe in the Yuan Period, p. 74. Bautier R., նշվ. աշխ., էջ 291: Balard M., Genes et la mer Noire (XIII-XV siècles) // Revue historique, T. CCLXX, Paris, 1983, p. 35-36. Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 115. Lucidi M., La seta e la sua via, De Luca, Roma, 1994, p. 38.

<sup>72</sup> Карпов С., Трапезундская империя и Западноевропейские государства, с. 32.

<sup>73</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 17, 83. Jacoby D., Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction // Byzantium, the Muslim World, and the Christian West, Dumbarton Oaks Papers, 58, 2004, p. 234. Նույնի՝ Mercanti genovesi e veneziani, p. 240-241. Del Punta I., նշվ. աշխ., էջ 114, 120:

<sup>74</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 17.

շերտնապահությանը և մետաքսի արտադրությանը<sup>75</sup>: Ջիջերիո տեղանվան մյուս տարբերակը կարող էր լինել մետաքսի արտադրությանը հայտնի Իլխանության մերձկասպյան Գուրգան կամ Ջուրջան (Gurgan, Djurdjan) նահանգը<sup>76</sup>: 1277 թ. նոյեմբերի 2-ին Այասում ձևակերպված կոմսնեդայի պայմանագրով Գվիլելմո դե Գրիգորիոն Գանդինո դե Մարիից ստանալու էր 2000 հ. ն. դ. արծնրով երկու տնասկի հումքային մետաքս՝ *seta cancia et garldabam*, որոնք պետք է վաճառեր Աքքայում: Եթե *garldabam* տնասկն անորոշ է, ապա *cancia*-ն Գանձակից ստացվող մետաքսն էր<sup>77</sup>: Հիշատակված են նաև մուգ կարմիր գույնի (*seta chermisi*), նուրբ (*seta sottile*), ինչպես նաև բարձրորակ լեզին: Ընդ որում, վերջինի դիմաց հատուկ նշված է, որ այն ձեռք է բերվել Հայկական ծոցից, ամենայն հավանականությամբ՝ Այասից (*leggi del Golfo d'Erminia*)<sup>78</sup>: Իտալացի միջնադարացու Իգնասիո դել Պունտան սկզբնաղբյուրներից դուրս է գրել Լուկա ներմուծված հումքային մետաքսի տնասկները, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցրել կիլիկյան Հայաստանի Մամեստիա քաղաքի անունն ունեցող արտադրանքը<sup>79</sup>: 1309 թ. նոյեմբերի 19-ին Ֆամագուստայում կնքված գործարքով Միմոնիոն Չեվոլա անունով մի վաճառական ձեռք էր բերել Պերայից բերված տարատեսակ ապրանքներ, որպեսզի վաճառեր Այասում: Ապրանքների թվում նշված է «կավալի» անվանումով հումք մետաքսի մի տեսակ, որն այլ սկզբնաղբյուրներում չի հիշատակվում<sup>80</sup>: Կրկին Ֆամագուստայում 1300 թ. դեկտեմբերի 13-ի պայմանագրում հիշատակվել է հատուկ Այասի անվանումը կրող մետաքս (*seta di Laiazzo*)<sup>81</sup>:

<sup>75</sup> Langlois V., *Le Trésor des chartes d'Arménie*, p. 124. Հայաստանի պատմության առկա, էջ 76-77:

<sup>76</sup> Ashtor E., *The Economic Decline of the Middle East*, p. 266.

<sup>77</sup> Balletto L., *Notai genovesi in Oltremare*, B. N 43.

<sup>78</sup> Pegolotti, p. 59, 297. Zibaldone, p. 61. Bautier R., նշվ. աշխ., էջ 318: Jacoby D., *Dalla materia prima ai drappi tra Bisanzio*, p. 271.

<sup>79</sup> Del Punta I., նշվ. աշխ., էջ 106, 109:

<sup>80</sup> Balard M., *Notai genovesi in Oltremare*, B., III N 28.

<sup>81</sup> Polonio V., նշվ. աշխ., N 149:

«Միսուանում» կարդում ենք. «...ընդ նմին և ազգ ինչ ոսկեճանուկ մետաքսնայ դիպակի. զի եթե Սմբատ թագաւոր ի Վենետկոյ գնէր դիպակս ոսկեթելս (ինն փերթ) (յամի 1298) յընծայ սուլտանին, նորայր նորա Օշին արքայ՝ յամին 1310 առաքէր ընծայ առ Դուքս Վենետկոյ դիպակս ոսկեթելս (*Drapis ad aurum* կամ *Drapis setae* գրեալ ի դիւանս Վենետկոյ)»<sup>82</sup>: Վենետիկյան սկզբնաղբյուրների մի արժեքավոր հավաքածուից տեղեկանում ենք, որ կիլիկիայի Սմբատ արքային (1296-1298) ոսկեթել դիպակ վաճառած վենետիկցի առևտրականի անունը Մարկո Միքայել Լո Թաթարո է եղել: Փաստաթղթում նշված է, որ մեկ փերթ կամ կտոր ոսկեթել դիպակի դիմաց վճարվել էր 800 հ. ն. դ.<sup>83</sup>: Ոսկե թելներով զարդարված մետաքսյա կտորը և հագուստը կարող էին լինել և՛ եվրոպական, և՛ տեղական արնտադրության: Ըստ իտալական սկզբնաղբյուրների՝ 1283 թ. վենետիկյան շուկաները հնդկաճան ոսկեդիպակի (*samitti*, *xamittos* et *drapos omnes sete ultramarino*) ձեռք բերման գլխավոր աղբյուրներն Այասը և Աքքան էին<sup>84</sup>: Սկսած 1295 թ.՝ Եվրոպա ներմուծված ապրանքների ցանկում հայտնվել էր կիլիկյան Տարսոն քաղաքի անվանումն ունեցող մետաքսյա կտորը (*pannus tarsicus*, *pannus de Tarsico*)<sup>85</sup>: Անգլիայում 1328 թ. օտարերկրյա վաճառականներին տրված առևտրական շնորհագրերում բազմաթիվ ապրանքների կողքին տեղ էր գտել ջենովացիների կողմից ներմուծված միևնույն տարածնյան մետաքսյա կտորեղենը<sup>86</sup>: Դ. Ջեյքոբին գտնում է, որ 1317 թ. Ֆրանսիա բերված ապրանքների ցանկում հանդիպող

<sup>82</sup> Alishan L., *L'Ameno-Veneto*, p. 66-67, 133-134. Նույնի՝ Միսուան, էջ 369, 371:

<sup>83</sup> *Diplomatarium Veneto-Levantinum*, p. 38-39.

<sup>84</sup> Bondi Sebellico A., նշվ. աշխ., հ. 1, N 83: Jacoby D., *Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction*, p. 234. Otten-Froux C., *Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie*, p. 171. Dini B., նշվ. աշխ., էջ 653:

<sup>85</sup> Jacoby D., *Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction*, p. 233-234.

<sup>86</sup> Emile Vincens M., *Histoire de la République de Gènes*, T. 1, Paris, 1842, p. 384.

«թուրքական» անվանված ոսկե թելերով ասնդնագործված կտորը, ամենայն հավանականությամբ, արտադրված է եղել Կիլիկյան Հայաստանում և հյուսիսի թուրքական շրջաններում<sup>87</sup>: Սկզբնաղբյուրներում հանդիպում են նաև մետաքսյա բարձր, շալ, վերարկուներ, դրամապանակներ և այլն<sup>88</sup>:

Առավելապես արևելյան ծագում ունեցող Դերբենդով ու Սև ծովով ներկայիս Ռուսաստանի տարածքներից և Ասիայի հեռավոր շրջաններից Կիլիկյան Հայաստան ներմուծված թանկարժեք մորթեղենը: Տարածված էին կզաքիսի, սամույրի, ջրասամույրի, սկյուռի, կուղբի, աղվեսի, վայրի կատվի մորթու տեսակները, որոնք վաճառվում էին ինչպես առանձին, այնպես էլ տարբեր հագուստների օժանդակ մասերի տեսքով: Հատկանշական է, որ թանկարժեք մորթեղենը խաչակրաց տիրույթներ հիմնականում ներկրվում էր Կիլիկյան Հայաստանի տարածքով<sup>89</sup>:

Մեծ հռչակ էր վայելում Կիլիկյան Հայաստանում նրբագեղմ այծի բրդից արտադրված գործվածքը՝ *ցիսիկ*: «Ընդ այծեմանց ի դէպ է իմանալ և զընտանին այծ ստևագեղ, որ ի հնումն յոյժ հռչակեալ էր, և մի ի նշանագոյն և շահաբեր ձեռագործաց վաճառուց ներկրիս էր, յաուրս մերոց պայագատաց՝ Յփսի նոցին, յաճախ զննալ յԻտալացոց և կոչնցնալ ի նոցանէ Zambellotto կամ Ciambellotto»<sup>90</sup>: Եվրոպացիների կողմից «կամելոտ» անվանված այս գործվածքը պատրաստում էին ոչ միայն այծի, այլև ուղտի ու ոչխարի բրդից: Կիլիկյան Հայաստանում ցիսիկ արտադրության

<sup>87</sup> **Jacoby D.**, Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction, p. 234.

<sup>88</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 40. **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aïas, p. 455. **Պտուկման Ջ.**, Կիլիկյան Հայաստանի վաճառականութիւնը, էջ 743-747: **Dulaurier E.**, նշվ. աշխ., էջ CII-CIII:

<sup>89</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 105, B. N 7, 14, 72. **Rey E.**, Les colonies Franques de Syrie, p. 208. **Delort R.**, Le commerce des fourures en Occident à la fin du moyen âge (vers 1300-vers 1450), École française de Rome, V. 1, Palais Farnèse, 1978, p. 259.

<sup>90</sup> **Ալիշան Ղ.**, Սիսուսն, էջ 31:

գլխավոր կենտրոնն Այասն էր<sup>91</sup>: Ի դեպ, տեղական արտադրության ծավալները չէին բավականացնում այս ապրանքատեսակի մեծ պահանջարկը, որը լրացվում էր կիպրական ցիսիկի հաշվին<sup>92</sup>:

Կիլիկիայի շուկաներում վաճառվող եվրոպական ապրանքների հաշվեկշռում *մահուղի* առաջնային նշանակություն ուներ: Ինչպես եվրոպական շատ այլ ապրանքատեսակների պարագայում՝ Կիլիկյան Հայաստան մահուղը գլխավորապես ներկրվում էր Կիպրոսից<sup>93</sup>: Այստեղ կնքված գործարքներում հիշատակվում են միջնադարի եվրոպական մահուղի ամենահայտնի տեսակները՝ Իրիդայի, Իպրի, Ավինյոնի, Նարբոննայի, Ֆրանսիայի Ծամպան նրկրամատում գրտեվող Ծաղոն կամ Յաղոն քաղաքի բազմազույն ու տարատեսակ արտադրանքները և այլն<sup>94</sup>: 1277 թ. մի գործարքում հանդիպում ենք բարձրորակ մահուղի նրկու տեսակ՝ 16 կտոր կարմիր գույնի, ծալքերով և 6 կտոր Սասնոյի կանաչ գույնի<sup>95</sup>: Բավական հայտնի էր նաև Իտալիայի Լոմբարդիա նրկրամասի ձեռնարկությունների արտադրանքը<sup>96</sup>: XIII դ. վերջին և XIV դ. սկզբին Կիպրոսում գործած ջենտվացի նոտարներ Լամբերտո դե Սամբուչետոյի և Ջիովաննի դե

<sup>91</sup> **Heyd W.**, նշվ. աշխ., հ. II, էջ 704-705: **Rey E.**, Les colonies Franques de Syrie, p. 219. **Canale M. G.**, Nuova istoria della Repubblica di Genova, del suo commercio e della sua letteratura, dale origini all'anno 1797, V. 3, Firenze, 1860, p. 246.

<sup>92</sup> **Бл изнюк С.**, Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 110-113.

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 110-112:

<sup>94</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, B. N 27, 29, 30, 31, 47, 50, 130, 134, 135, 136, 138. **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aïas, p. 530, 533-534. **Dulaurier E.**, նշվ. աշխ., էջ CII-CIII: **Abulafia D.**, Narbonne, the Lands of the Crown of Aragon, p. 196. **Նույնի՝** A Mediterranean Emporium: The Catalan Kingdom of Majorca, Cambridge, 2002, p. 182. **Laurent H.**, Un grand commerce d'exportation au moyen âge: La draperie des Pays-Bas en France et dans les pays méditerranéens (Xlle-XVe siècle), Paris, 1935, p. 83, 106, 192.

<sup>95</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, B. N 49.

<sup>96</sup> Նույն տեղում, A. N 39, 51, B. N 1, 18, 51, 53, 80: **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aïas, p. 453-454, 460-461, 504-505. **Oiten-Froux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 170.

Ռոքայի հնդինակած յոթ պայմանագրում Կիլիկիա ուղարկված մահուդի և ուղտի բրոյա գործվածքների ընդհանուր արժեքը կազմել է 11.348 ս. բ. (կամ Կիպրոսից Կիլիկիա ուղղված բոլոր ներդրումների մոտ 8,5 %-ը): Դրանցում գերակշռում է ֆրանսիական մահուդը<sup>97</sup>: 1315 թ. հուլիսի 24-ին Պերայում կնքված գործարքով Կոստանդնուպոլսի բնակիչ Սալվեստո դ'Աստին ուն Անդրևա Մորինոյից ձեռք էր բերել մեծաքանակ ֆրանսիական մահուդ, որպեսզի այն վաճառեր Սիսում<sup>98</sup>: Եվրոպական մահուդը Կիլիկյան Հայաստանով արտահանվում էր դնալի հյուսիս, ինչի մասին վկայում են Այասում կնքված նոտարական մի շարք գործեր: Դրանց մեծ մասում տեղափոխման ու վերավաճառման նպատակակետերը Սեբաստիա և Կոնիա քաղաքներն են եղել<sup>99</sup>:

Կիլիկյան քաղաքներում մեծ սպառում ունեն նվրոպական *կտավը*, որոնցից հայտնի էին Ռեյմսի, Ծամպանի, գերմանական, հյուսիսիտալական արտադրության և այլն<sup>100</sup>: Պեգոլոտտին հիշատակում է Այասում վաճառված նրկու որակի կտավ՝ կաննփի կոշտ և վուշի<sup>101</sup>: Ֆրանսիական կտավին վերաբերող առանձին կետ կա 1288 թ. Լևոն Բ-ի՝ ջենովացիներին շնորհած արտոնագրում. «... եւ զինչ իսկի ֆռանկ կտաւ նլնէ հաստ ու բարակ, ու զինչ իսկի քթան նլնէ հաստ ու բարակ, նայ տայ ի յղոտաբնոն նոր դրամ քսան...»<sup>102</sup>: Արտահայտիչ է հետևյալ խոշոր գործարքը. 1277 թ. նոյեմբերի 22-ին Այասում Սիմոն Լերկարին Անդրիոլո Դրոգոյից կումմենդայի պայ-

մանով ստանում էր 126 կտոր (pezza) շամպանյան կտավ, որը համարժեք էր 1460 ջենովական կաննայի (4340,58 մետր)<sup>103</sup>: Մեկ այլ գործարքում հիշատակվել է կտավի էլ ավելի մեծ քանակություն՝ 229 կտոր<sup>104</sup>: Եվս մի սկզբնաղբյուրում 30 բրաչչո (մոտ 20,5 մետր) կտավը գնահատված է 90 հ. ն. դ.-ով<sup>105</sup>: Վաճառվում էր նաև կտավյա զգնստ<sup>106</sup>:

Կարևոր ապրանքներից էին նաև տարատեսակ գորգերը<sup>107</sup>: Կիլիկյան Հայաստանում արտադրված գորգերն այնպիսի հռչակ են փայնել, որ, ըստ որոշ տվյալների՝ Եվրոպայում մինչ այժմ տարածված կարպետ անվանումը ծագել է հայկական կապերտ (կամ կարպետ) բառից<sup>108</sup>: Հիշատակվում են կոռիկոսյան գորգերը<sup>109</sup>:

Առք ու վաճառքի պայմանագրերից, Կիլիկյան Հայաստանում հաստատված օտարազգիների կտակներից և այլ սկզբնաղբյուրներից կարելի է դուրս գրել նվրոպական արտադրության բազմաբնույթ ապրանքներ: Բացի տեքստիլ տարատեսակ արտադրանքներից, նվրոպացիները կիլիկյան շուկաներում վաճառում էին շաքար, ընկուզեղեն, պանիր, ձիթայուղ, զինի, օճառ, պղինձ, անագ (կլայնկ), ոսկի, արծաթ, վննտիկյան ապակեղեն, սնդիկ, կորալյին զարդեր (քուստ), փղոսկր, մոմ, փայտանյութ, նավի մասեր՝

<sup>97</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 2, 20, 23, 63. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., II N 70, 73. Polonio V., նշվ. աշխ., N 91, 238: Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 165, 173. Бл изнюк С., Мир торговли и политики в королевстве Крестососцев на Кипре, с. 110-112.

<sup>98</sup> Pistorino G., Dal decline sul mare di Levante tra cristiani, p. 117.

<sup>99</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N, 49, 50, 51, 135. Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'A'las, p. 533.

<sup>100</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 1, 7, 14, 49, 51, 53. Polonio V., նշվ. աշխ., N 363, 401, 404: Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 121. Dulaurier E., նշվ. աշխ., էջ CII-CIII:

<sup>101</sup> Pegolotti, p. 59.

<sup>102</sup> Պտուկեան Ջ., Կիլիկեան Հայաստանի վաճառականութիւնը, էջ 742:

<sup>103</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 53.

<sup>104</sup> Նույն տեղում, B. N 49:

<sup>105</sup> Այստեղ ամենայն հավանականությամբ օգտագործվել է բրաչչոյի վննտիկյան տեսակը, քանի որ բերված տվյալը քաղված է 1303-1304 թթ. վննտիկցիների կողմից Այասի բերրի թալանման և ապա 1307 թ. վնասների հատուցման համար կազմված ապրանքների ցանկից (Պտուկեան Ջ., Կիլիկեան Հայաստանի վաճառականութիւնը, էջ 744):

<sup>106</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 47.

<sup>107</sup> Նույն տեղում, B. N 14, 38, 79: Ալիշան Ղ., Սիսուման, էջ 370:

<sup>108</sup> Микаел ян Г., նշվ. աշխ., էջ 393:

<sup>109</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 164.

հատկապես թիակներ, զինամթերք և այլն<sup>110</sup>: Մահմեդական վաճառականներն Այասում ձեռք էին բերում եվրոպական օճառ և վերավաճառում Ալեքսանդրիայում<sup>111</sup>: Անշուշտ, վերոնշյալ ապրանքներից ոչ բոլորն էին արևմտաեվրոպական արտադրության, ինչպես, օրինակ, սնունդ (բացի հացահատիկից) ներկայացնող տնտեսակները, որոնք հիմնականում կիպրական կամ կրետական ծագում ունեին:

Կիլիկյան Հայաստանը միջազգային շուկայում ներկայանում էր տեղական գյուղատնտեսական ապրանքների, ինչպես նաև *օգտակար հանածոների* լայն տեսականիով: Ինչպես արդեն նշել ենք, Կիլիկիայում մետաղների արդյունահանումն ու մշակումը բավական մեծ ծավալներ է ունեցել: Դեռևս XII դ. Կիլիկիան Ասորիք ներմուծված մետաղների հիմնական աղբյուրներից էր<sup>112</sup>: Թեև գործարքների բովանդակությունից դժվար է որոշել վաճառված մետաղների տեղական արտադրության կամ ներմուծված լինելը, բերենք առավել արտահայտիչ մի քանի օրինակ: Այասում 1274 թ. փետրվարի 27-ին պիզացի առևտրական Ռիքոմանտն մի այլ պիզացու՝ Բանդենարոյի հետ գործարքում որպես գրավ դրել էր 420 կտոր երկաթ՝ 38 քրքայան կանտար կշռով (մոտ 8907 կգ)<sup>113</sup>: 1277 թ. հոկտեմբերի 22-ի գործարքում Այասից Տյուրոս և Աքքա ճանապարհվող նավի վրա բարձվել էր երկաթի բավական խոշոր քանակություն (40-50 կանտար)<sup>114</sup>: Այասում 1277 թ. նոյեմբերի 11-ին Ռիչիո դի Նոլին Նիկոսիայի բնակիչ Ջիովաննի կամերլանգոյին վաճառել էր 35-40

<sup>110</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 28, 86. B. N 64, 71, 138. **Alishan L.**, L'A meno-Veneto, p. 180. **Polonio V.**, նշվ. աշխ., N 205: **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, A., N 18, 65, 227. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 9, 18, 147, 164. **Langlois V.**, Le Trésor des chartes d'A ménie, p. 155-157. **Otten-Froux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 173. Թիքոման վ., նշվ. աշխ., էջ 45:

<sup>111</sup> **Fleet K.**, նշվ. աշխ., էջ 24:

<sup>112</sup> **Տեր-Ղևոնդյան վ.**, նշվ. աշխ., էջ 138:

<sup>113</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 33.

<sup>114</sup> Նույն տեղում, B. N 35: **Ferretto A.**, Codice diplomatico delle relazioni fra la Liguria, p. 178. **Jacoby D.**, New Venetian Evidence on Crusader Acre // The Experience of Crusading, V. 2, Defining the Crusader Kingdom, Cambridge, 2003, p. 255-256.

կանտար երկաթ (կիպրական կանտարի չափով), որը պետք է տեղափոխվեր Կիպրոս: Պայմանագրում խոսքը մինչև 1480 հայկական մեծ թուղ (9375,8 կգ) երկաթի մասին է<sup>115</sup>: Հանդիպում են նաև անագ (stagnum) և կապար (piombo)<sup>116</sup>: Ուշագրավ է, որ Լոնդոնի և Այասի կշռի միավորների համեմատությունը Պեգոլոտտին իրականացրել է անագի օրինակով, ինչը երկու քաղաքների միջև այդ մետաղի հիշատակության մասին ուղղակի վկայություն է<sup>117</sup>: Վենետիկցի նոտար Ֆելիչե դե Մերլիսի կազմած փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1317 թ. մարտի 20-ին Անդրեա Բանցոնոն Ֆամագուստայի բնակիչ Ջիակոմո Լանբարդոյին հանձնարարել էր գնել 23 կանտար (թեթև գործարքում օգտագործվել է կանտարի վենետիկյան տեսակը, ապա ստացվում է 1202,164 կգ) պղինձ և 6 կանտար (138 կգ) անագ՝ Այասում վաճառելու համար<sup>118</sup>:

Միջնադարյան առևտրի պատմության մի շարք ուսումնասիրողներ ուրվագծել են XIII-XIV դդ. Եվրոպայից Արևելք թանկարժեք մետաղների հոսքի հիմնական ուղիները: Ոսկին և արծաթը Լյեմստրոնական Եվրոպայի երկրներով թափանցում էին Իտալիա, որտեղից էլ տեղափոխվում էին Արևելքի բոլոր այն երկրները, որոնք առևտրական սերտ շփումների մեջ էին եվրոպական ծովային տերությունների, այդ թվում և Կիլիկյան Հայաստանի հետ<sup>119</sup>: Այս մասին ուշագրավ վկայություններ են հաղորդում Ֆրանչեսկո Պեգոլոտտին և Ջիբալդոնո դա Կանալը: Նրանցից առաջինն Այասի և եվրոպական քաղաքների չափերի ու կշիռների միավորների համեմատական վերլուծության մեջ գրեթե ամենուրեք շեշտում է ոսկին և արծաթը: Նա

<sup>115</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, B. N 46.

<sup>116</sup> Նույն տեղում, A. N 19, B. N 15:

<sup>117</sup> **Pegolotti**, p. 62.

<sup>118</sup> **Bondi Sebellico A.**, նշվ. աշխ., h. 2, N 1307: **Otten-Froux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 173.

<sup>119</sup> **Spufford P.**, Money and Its Uses in Medieval Europe, Cambridge, 1988, p. 149-156. Նույնի՝ Le role de la monnaie dans la révolution commerciale du XIIIe siècle // Études d'histoire monétaire, Lille, 1984, p. 389. **Lane F.**, Exportations vénitiennes d'or et d'argent de 1200 à 1450 // Études d'histoire monétaire, Lille, 1984, p. 32-39. **Coureas N.**, Economy // Cyprus: Society and Culture 1191-1374, Leiden, 2005, p. 142.

թվարկում է Եվրոպայում արդյունահանված արծաթի 9 տնասկ, որոնք օգտագործվում էին Այասի դրամահատարանում: Հետաքրքրական է, որ վենետիկյան, ջննտվական կնիքներ կրող ձուլակտորների հետ միասին այստեղ հիշատակված է նաև Պրահայի մոտակայքում գտնվող հանքից արդյունահանված «Բոհեմական» կոչված արծաթի հայտնի տնասկը: Թե՛ կիպրոսի, և թե՛ կիլիկյան Հայաստանի դրամահատարաններում բարձր հարզ ուներ Ֆրանսիայի Տուր քաղաքի անվանումը կրող արծաթը: Նշված են նաև Սարդիներիայում և Սիկիլիայում մշակված արծաթը<sup>120</sup>: Իսկ XIV դ. առևտրական մի այլ հանրահայտ ձեռնարկի հեղինակ Զիբալդոնն ուղղակիորեն գրում է, որ վենետիկցիները բարձրորակ արծաթի ձուլակտորներ էին ներմուծում կիլիկյան Հայաստան, որոնց վրա դրոշմված էր Ս. Մարկոսի (վենետիկյան) Հանրապետության կնիքը: Դրանք լայնորեն սպառվում էին Սաում գործող հայկական դրամահատարանում<sup>121</sup>: Թանկարժեք մետաղները հաճախակի հիշատակվում են նաև նոտարական փաստաթղթերում, որոնցում դրանք ծառայել են և՛ որպես առք ու վաճառքի առարկա, և՛ ներդրում գործարքներում<sup>122</sup>: Օրինակ, Այասում 1277 թ. սեպտեմբերի 20-ին Գրիմալդո Բուստանիոն Բոտներիկո Լերկարիից Ատրիք և Ալեքսանդրիա մեկնելու և առևտուր անելու համար կումմենդայի պայմանով ստանում էր 231 ջննտվական լիբրա արծաթ (73,227 կգ)<sup>123</sup>: Այասում 1279 թ. մարտի 10-ին կնքված մի գործարքում որպես գրավ դրվել էր 800 հայկական դրամակշիռ ոսկի (մոտ 3,62 կգ)<sup>124</sup>:

<sup>120</sup> Պեգոլոտտին ավելացնում է, որ արծաթն օգտագործվում էր հայկական «թագվորին» (taccolini) կոչվող արծաթյա դրամի հատման համար (Pegolotti, p. 60).

<sup>121</sup> Zibaldone, p. 62. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 111-112, 161. Spufford P., Money and Its Uses in Medieval Europe, p. 152-153. Lane F., Money and Banking in Medieval and Renaissance Venice: Coins and Moneys of Account, V. 1, Baltimore, London, 1985, p. 163, 486.

<sup>122</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 1, 20, 51, 52, 85, 106. Ալիշան Ղ., Միսուան, էջ 370:

<sup>123</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 20.

<sup>124</sup> Նույն տեղում, B. N 85: Desimoni C., Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 508.

Մետաքսագործության բուռն զարգացմանը զուգընթաց՝ առաջ էր եկել դրան օժանդակող ևս մի ճյուղ՝ ոսկյա թելերի արտադրությունը<sup>125</sup>: Աղբյուրների համաձայն՝ կիլիկյան Հայաստան ներկրվել է վենետիկյան արտադրության մեծաքանակ ոսկյա և արծաթյա թել<sup>126</sup>: Խոսելով վենետիկից Այաս, ինչպես և հակառակ ուղղություններով մեկնող նավերով տարբեր ապրանքատեսակների փոխադրափոխների մասին՝ Պեգոլոտտին գրում է. «չյուսված ոսկու, արծաթի և նման առարկաների ամեն մի արկղի համար պետք է վճարվի 3 %»<sup>127</sup>: Տարածված էին նաև ոսկերչական ու արծաթագործական բազմաալիսի արտադրանքներ<sup>128</sup>: Թանկարժեք քարերի ձեռք բերման աղբյուրների թվում՝ Բադդալի, Թավրիզի, Բյուզանդիայի ու կիպրոսի կողքին հիշատակված է նաև կիլիկյան Հայաստանը<sup>129</sup>:

Կիլիկիայում արդյունահանվում էին նաև ապակեհող և աղ: «Սպիտակ ոսկին»՝ աղը, կարևոր ապրանքատեսակ էր միջնադարյան առևտրական ապրանքաշրջանառության մեջ: Վենետիկցիներին 1333 թ. տրված շնորհագրի կետերից մեկը վերաբերում է աղի առևտրին<sup>130</sup>:

Եվրոպայում ապակու, օճառի արտադրության և մետաքսյա կտորեղենի ներկման համար օգտագործվում էր մի անփոխարինելի նյութ՝ ալկալու կարբոնատը, որը ստացվում էր ինչպես կենդանական ճարպից, այնպես էլ մի շարք բույսերի մոխրից: Վենետիկում, որը միջնադարում եվրոպական ապակեգործության գլխավոր

<sup>125</sup> Фионова Н., Текстильное производство в Венеции XIII-XV вв., с. 146-147.

<sup>126</sup> Jacoby D., Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction, p. 237. Pistorino G., Economia e societa del Mediterraneo Genovese, p. 139.

<sup>127</sup> Pegolotti, p. 61.

<sup>128</sup> Տեր-Ղևոնդյան Ն., Ոսկերչությունը կիլիկյան Հայաստանի մեջ ԺԳ-ԺԴ դարերում, «Բազմավեպ», 1991, N 1-2, էջ 212-225: Պտուկեան Զ., կիլիկյան Հայաստանի վաճառականությունը, էջ 743-746: Ալիշան Ղ., Միսուան, էջ 370:

<sup>129</sup> Pegolotti, p. 303. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 162.

<sup>130</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 194. Dulaurier E., նշլ. աշխ., էջ CV-CVI: Ալիշան Ղ., Միսուան, էջ 9:

կենտրոնն էր, այդ բույսերին տրվել էին հետևյալ անունները՝ *cenere, botassa, allumen* կամ *lume de catino, lume de savon*: Արաբական աղբյուրներում դրանք առավելապես հանդիպում են *ushnan* կամ *oshnan* անվանումներով<sup>131</sup>: «Միտումանում» հիշատակվում են այս բույսի մի քանի տեսակներ, որոնք աճում էին Կիլիկյան Հայաստանում՝ օշնան բարձաձև (*saponaria pulvinaris*), օշնան քոչյան (*saponaria kotschyi*), օշնան կարմրաբուն, օշնան պամփյուլյան (*saponaria pamphylica*) և գաճաճ օշնան (*saponaria pumillo*)<sup>132</sup>: Կիպրոսի ու Կրնտի հետ միասին օշնանի ձևեր բերման աղբյուրներից էր նաև Կիլիկյան Հայաստանը<sup>133</sup>:

*Գյուղատնտեսական ապրանքներից* վաճառվում էին ընտանի կենդանիներ՝ գոմեշ, կով, ոչխար, այծ, ավանակ, ջորի, ձի և այլն<sup>134</sup>: Աղբյուրները վկայում են Կիլիկյան Հայաստանից Եվրոպա կաշվի մեծաքանակ արտահանման մասին: Այսպես, օրինակ, 1332 թ. Զիլվաննի Դանդալո անունով վաճառականը Այասից Վենետիկ էր տարել 83 հակ (նույնն է ինչ՝ տուկ կամ բալլա) գոմեշի կաշի<sup>135</sup>: Ձենտվական սկզբնաղբյուրներում ևս այս ապրանքը (լատ. *coria, corium buffari, bufferi*, իտալ. *cuoi de bufalo*) հաճախ է հիշատակվում<sup>136</sup>: 1279 թ. տվյալներով 24 գոմեշի կաշվի դիմաց նշված է 860 հ. ն. դ.<sup>137</sup>: Արաբ պատմիչ և աշխարհագրագետ Աբուլֆիդան (1273-1331) վկայում է, որ իր ժամանակներում մեծ համարում ուներ Մամեստիա-

յան արտադրված և այդ քաղաքի անվանումը կրող կաշվե արտադրանքը<sup>138</sup>: Կաշվի արտահանման և հավանական է նաև արտադրության կարևոր կենտրոններից է եղել Տարսուսը, ինչը փաստում է 1333 թ. վենետիկցիներին տրված շնորհագրի հետևյալ կետը. «Այն ինչ որ օրէնքով կը վճարէին Տարսոն քաղաքին մէջ, ամէն մէկ կաշիի համար արտածման եւ ներածման համար, նոյնը պիտի վճարեն Տարսոնի նաւահանգիստին մէջ մեր կամքին համաձայն»<sup>139</sup>:

Օտարերկրյա վաճառականները կիլիկյան շուկաներից ձեռք էին բերում նաև տեղական հավ, ձու, տարատեսակ մրգեր, բանջարեղեն, շաքար, չամիչ, խաղողի հյութ, գինի, մեղր և զանազան այլ սննդամթերք<sup>140</sup>: Կիլիկյան չամիչի տեսակն այնպիսի հռչակ է վայելել, որ այն առանձին տեղ է զբաղեցրել Պեգոլոտտիի թվարկած ապրանքների ցանկում<sup>141</sup>: Ծաքարեղենի ցանքատարածությունները առարածված էին Միջերկրական ծովի ասորապաղեստինյան ափի ամբողջ երկայնքով<sup>142</sup>: Հայտնի է, որ կիլիկյան Գանամելլա կամ Կանամելլա նավահանգստի անունը ծագում էր *canna* (տղեղ) և *miele* (մեղր) բառերից: Միջնադարում այս քաղաքին հարող շրջանները հայտնի են եղել շաքարեղենի մշակությամբ<sup>143</sup>: Հավելենք, որ 1288 թ. ջենովացիներին շնորհված արտոնագրում տարբեր ապրանքների հետ նշված է նաև շաքարը<sup>144</sup>: Իսկ Պեգոլոտտին և Զիբալդո-

<sup>131</sup> Ashtor E., *Levantine Alkali Ashes and European Industries // Technology, Industry and Trade. The Levant versus Europe, 1250-1500*, Great Yarmouth, Norfolk, 1992, VII, p. 482, 491. Jacoby D., *Mercanti genovesi e veneziani*, p. 255-256.

<sup>132</sup> Ալիշան Ղ., Միսուան, էջ 16, 19, 25, 27, 121, 123, 305, 567:

<sup>133</sup> Ashtor E., *Levantine Alkali Ashes and European Industries*, p. 103, 243. Jacoby D., *Dalla materia prima ai drappi tra Bisanzio*, p. 272. Day J., նշլ. աշխ., էջ 808:

<sup>134</sup> Balletto L., *Notai genovesi in Oltremare*, A. N 105. Langlois V., *Le Trésor des chartes d'Arménie*, p. 155-156. Ալիշան Ղ., Միսուան, էջ 369: 'Նույնի' Հայ-Վենետ, էջ 54: Տեր-Ղևոնդյան Վ., նշլ. աշխ., էջ 139:

<sup>135</sup> Alishan L., *L'Ameno-Veneto*, p. 169.

<sup>136</sup> Balletto L., *Notai genovesi in Oltremare*, B. N 71, 72.

<sup>137</sup> Ալիշան Ղ., Միսուան, էջ 370:

<sup>138</sup> *Géographie d'Aboulféda*, T. II, Paris, 1848, p. 29. Ալիշան Ղ., Միսուան, էջ 32:

<sup>139</sup> Պետրևան Զ., Կիլիկյան Հայաստանի վաճառականությունը, էջ 750:

<sup>140</sup> Balletto L., *Notai genovesi in Oltremare*, A. N 47, 47a. Langlois V., *Le Trésor des chartes d'Arménie*, p. 155-156. Zibaldone, p. 62. Ալիշան Ղ., Միսուան, էջ 13, 369:

<sup>141</sup> Pegolotti, p. 297.

<sup>142</sup> Ashtor E., *Levantine Sugar Industry in the Later Middle Ages - An Example of Technological Decline // Technology, Industry and Trade. The Levant versus Europe, 1250-1500*, Great Yarmouth, Norfolk, 1992, III, p. 227.

<sup>143</sup> Կանամելլան գտնվում էր Հայկական ծոցի ափին՝ Խսոս գետի գետաբերանի մոտ (Ալիշան Ղ., Միսուան, էջ 13, 388, 396: Rey E., *Les périples des côtes de Syrie et de la Petite Arménie // Archives de l'Orient latin*, T. II, Paris, 1884, p. 333).

<sup>144</sup> Langlois V., *Le Trésor des chartes d'Arménie*, p. 124, 157.

նեն ուղղակիորեն փաստում են, որ վննտիկցիները Կիլիկյան Հայաստանում շաքարի և շաքարի փոշու առևտուր են արել<sup>145</sup>:

Հնուց ի վեր Կիլիկիան համարվել է բարձրորակ *զինու* արտադրության կենտրոն: Ըստ Սմբատ Սպարապետի՝ յուրաքանչյուր տարի աշնանը Կիլիկյան Հայաստանի արքան պետք է հավաքեր իր իշխաններին և, հաշվի առնելով ստացված բերքի չափը՝ սահմաններ հացահատիկի և զինու գները<sup>146</sup>: Գինին բազմիցս հիշատակված է Կիլիկիայի արքաների՝ նվրոպական պետություններին շնորհած արտոնագրերում: Մասնավորապես 1333 թ. վննտիկցիների հետ կնքված պայմանագրում միանգամից նրկու կնտ գրեթե ամբողջովին նվիրված են զինու առք ու վաճառքին. «Այն վննտիկցիք, որ մեր նրկրին մեջ զինի ծախելու գործ ունին, այլևս մեր պաշտօնմաներու գանձած շաքաթը մեկ թագուորին տուրքեն ազատ պիտի ըլլան: Բայց եթե անոնք զինի ծախեն օրենքն դուրս չափերով, ամլի մեծ կամ փոքր, այն ատեն մեր պաշտօնմաները իրատուք պիտի ունենան անոնց տուգանք գնելու իրենց ըրած սխալին համեմատ, բայց պատիժը ասկե ամլի չի պիտի ըլլայ»: Հաջորդ կնտում կարդում ենք. «Երբ վննտիկցիք ծախեն և կամ տեղե տեղ փոխադրեն զինի և կամ խաղողի հիւթ, այլևս այն օրենքը որով ամեն մեկ տակառին կը վճարէին մեկ նոր դրամ, վերցուած է մեր կտրով»<sup>147</sup>: Հայտնի է, որ Կիպրոսից Կիլիկյան Հայաստան մեծաքանակ զինի է ներկրվել<sup>148</sup>: Հավանաբար հիշյալ պայմանագրի առաջին կնտով հայկական կողմը փորձել է չափավորել նրկիր ներմուծվող զինու ծավալները՝ տեղական արտադրանքի առավել լայն իրացումն ապահովելու համար:

Այժմ անդրադառնանք Կիլիկյան Հայաստանում իրականացված *հացահատիկի* առևտրին: Հացահատիկի մշակությամբ հայտնի

<sup>145</sup> Pegolotti, p. 61. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 162.

<sup>146</sup> Смбат Спарамет, Судебник, с. 126-127.

<sup>147</sup> Պտուկման Ջ., Կիլիկյան Հայաստանի վաճառականությունը, էջ 750:

<sup>148</sup> Бл изюнок С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 120.

էին նրկրի հյուսիսային շրջանները, որտեղ տարածված էին գերմակ (*բարակ*) ցորենի տեսակը և գարին<sup>149</sup>: Այդուհանդերձ, Կիլիկյան Հայաստանը հացահատիկի միջազգային առևտրում առավելապես ներկայանում էր որպես տարանցիկ նրկիր: Այն ներմուծվում էր ինչպես մերձսևծովյան շրջաններից, այնպես էլ Եվրոպայից՝ հատկապես Հարավային և կենտրոնական Իտալիայից<sup>150</sup>: Չննովացի, վննտիկցի, Ֆլորենտացի, անկոնացի, պիստոնացի և այլ վաճառականներ Ապուլիայի և Սիկիլիայի ցորենի ու գարու բերքի ավելցուկի մի զգալի մասն ուղղում էին Կիլիկյան Հայաստան<sup>151</sup>: Ամենևին պատահական չէ, որ Ֆրանչեսկո Պեգոլոտտիի և Զիբալդոնե դա Կանաչի ձեռնարկներում Այասում կիրառված հացահատիկի կշռի միավորների համեմատության մեջ ներառվել են մի կողմից սաբուլական ու փիկիական, իսկ մյուս կողմից՝ Սնբաստիայի սաբուլայի տեսակները: Այստեղ հանդիպում ենք նաև կիլիկյան ու Աքքայի մոդ և Կիպրոսի կաֆիստ կոչված կշռի միավորների համեմատականներին, ինչը վկայում է Այասի, Ֆամագուստայի և խաչակրաց նավահանգիստների միջև ցորենի առևտրի մասին: Հիշատակված է նույնիսկ իսպանական Սիկիլիա քաղաքի կաֆիստի և հայկական մոդի համեմատությունը<sup>152</sup>: 1288 թ. ջննովացիներին շնորհված արտոնագրում առանձնանում է հետևյալ ուշագրավ կետը. «Եւ ի ցորենն և ի գարին, որ ծովով կու բերեն նայ կու առնուն յիրմնցէ ի հարիւրն չորք, ու ըզսամարչնքն, նայ զայն որ ի հարիւրն չորք կուտային նա չտան, ապայ

<sup>149</sup> Ալիշան Ղ., Սխումսն, էջ 14:

<sup>150</sup> Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 172. Pitarino G., Economia e societa del Mediterraneo Genovese, p. 139.

<sup>151</sup> Alishan L., L'Ameno-Veneto, p. 61, 69, 73. Renouard Y., Une expédition de céréales des Pouilles en Aménie par les Bardi pour le compte de Benoit XII // Etudes d'histoire médiévale, V. 2, Paris, 1968, p. 793-824. A bulafia D., Sul commercio del grano siciliano nel tardo duecento // Italy, Sicily and the Mediterranean, 1100-1400, Variorum Reprints, London, 1987, VII, p. 13. Friedland K., Maritime Food Transport, Köln, 1994, p. 181-182.

<sup>152</sup> Pegolotti, p. 62-63, 65, 91. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 162-163. Ալիշան Ղ., Սխումսն, էջ 396, 376-377:

զատարըչներն տան»<sup>153</sup>: Այսինքն՝ ջննդվացի վաճառականներն ազատվում էին հացահատիկի առևտրի վրա նախկինում սահմանված 4 % տարանցիկ մաքսատուրքից և պետք է վճարեին միայն միջնորդահարկ:

Ինչպես բարբառի դեպքում, Եվրոպայից բերվող հացահատիկի ամբարան կենտրոնները ևս կիպրոսյան քաղաքներն էին՝ Ֆամագուստան, Լիմասոլը և Պաֆոսը: Այստեղից այն վերաբաշխվում էր տարբեր ուղղություններով, հատկապես Կիլիկյան Հայաստան, որը Կիպրոսից հացահատիկի ամենամեծ ներմուծողն էր: Անշուշտ, կարելի է կարծել, որ հացահատիկի նման մեծ քանակությունը նախատեսված է եղել ոչ միայն տեղի բնակչության կարիքների, այլև արտահանման համար: Սակայն Ն. Կորնետը Կիլիկյան Հայաստանում հացահատիկի լայն սպառումը պայմանավորում է նաև XIII դ. վերջին և XIV դ. սկզբին մամլուքների բազմաթիվ արշավանքներով, որոնց ընթացքում ավերվում էին ոչ միայն Կիլիկյան քաղաքները, այլև հրի էին մատնվում ցանրատարածությունները, այդ թվում՝ ցորենի ու գարու դաշտերը<sup>154</sup>:

1299-1310 թթ. Լամբերտո դե Սամբուչետտի և Զիովաննի դե Ռոբայի հեղինակած նոտարական գործերում հաշվվում են Կիպրոս-Կիլիկյան Հայաստան հացահատիկի առևտրին վերաբերող մոտ 50 պայմանագրեր, որոնցում իրականացվել է տվյալ ժամանակամիջոցում նրկու թագավորությունների միջև առևտրական ամբողջ ապրանքաշրջանառության (ըստ հիշյալ նոտարական սկզբնադրությունների) մեջ արված ներդրումների շուրջ 30 %-ը<sup>155</sup>: Դրանցից 35-ում միայն ցորենին վերաբերող ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 55051,5 ս. բ. կամ նույն ոլորտում Կիպրոսում հիշատակված ամբողջ գումարի (220252,5 ս. բ.) մոտ 25 %-ը: Ընդ որում, բավական կարճ ժամանակամիջոցում Ֆամագուստայից միայն Այաս

<sup>153</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 155.

<sup>154</sup> Coureas N., Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia, p. 337.

<sup>155</sup> Նույն տեղում, էջ 319-337:

և Տարսոն ուղղված գործարքներում հիշատակվել է շուրջ 8906,4 սալմա (ըստ սալուական սալմայի՝ 2167 տոննա) ցորեն, ինչպես նաև մեծ քանակությամբ գարի, որի չափը, սակայն, պայմանագրերում չի ամրագրվել<sup>156</sup>: Գործարքներում ներդրումների միջին չափը 1000 ս. բ. է (նվազագույնը՝ 100, իսկ առավելագույնը՝ 3800 ս. բ.): Թեև Միջերկրական ծովում նավագնացության ամենահարմար եղանակները գարունն ու ամառն էին, սակայն Կիլիկիա հացահատիկի ամենամեծ խմբաքանակները բերվում էին աշնան և ձմռան ամիսներին<sup>157</sup>: 1300 թ. հունվար-փետրվարին Ֆամագուստայից Կիլիկյան Հայաստան ուղղված ընդամենը 4 գործարքում հիշատակվել է 400 սալմա կշռով (մոտ 100 տոննա) ցորեն, որի արժեքը կազմել է 41030 հ. ն. դ. (կամ 11730 ս. բ.)<sup>158</sup>: Ցորենի խոշոր քանակություն է գրանցված հետևյալ գործարքում. 1300 թ. ապրիլի 22-ին Ֆամագուստայում կատալոնացի Ռոբերտո Զինետուր ֆլորենտական Բարդի և Պերուցի ընկերությունների գործակալներին վարձակալության էր տվել իր «Սան Սալվադոր» նավը՝ Ապոլիայի Բարլետա և Մանֆրեդոնիա քաղաքներից Կիպրոս, Կիլիկյան Հայաստան և Ատորիք 2400 սալուական սալմա կշռով (մոտ 583 տոննա) ցորեն տեղափոխելու համար<sup>159</sup>: Նկատենք, որ Կիպրոսում վաճառվող ցորենի գներն անկայուն են եղել. 1300 թ. հունվարի 31-ին կնքված գործարքում 100 սալմա ցորենի դիմաց նշված է 9500 հ. ն. դ., սակայն նույն թվականի փետրվարի 23-ին ունի Սալվի Պավան Ֆամագուս-

<sup>156</sup> Desim oni C., Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 23, 30-31, 36-38, 39-41, 59, 112. Balard M., Notai genovesi in Oltremare, B., I N 22. C. N 29. Polonio V., նշլ. աշխ., N 56, 96, 112, 127, 134, 139, 143, 207, 217, 222, 368, 378: Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 28, 56, 229, 236. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 18, 120, 138, 174, 182, 183, 205. Бл изнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 98-100.

<sup>157</sup> Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 165, 171-172. Coureas N., Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia, p. 320-336.

<sup>158</sup> Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 169.

<sup>159</sup> Desim oni C., Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 60-61.

տայից Կիլիկիա էր ուղարկել նույնաբանակ ցորեն՝ 11500 հ. ն. դ. արժեքով: Կրկին 1300 թ. տվյալներով 200 ապամա ցորենի արժեքը 15600 հ. ն. դ. էր<sup>160</sup>: Անշուշտ, գնային այս անհամաչափությունը կարելի է պայմանավորել ապրանքի որակական հատկանիշներով: Սակայն Ս. Բլիզնոկը նկատում է, որ հատկապես XIV դ. սկզբին Կիպրոսում հացահատիկի գներն ընդհանրապես անկայուն էին և կարող էին տատանվել ոչ միայն տարվա, այլև նույնիսկ ամիսների կտրվածքում<sup>161</sup>: Յորենը և գարին հանդիպում են նաև Այասում կազմված նոտարական փաստաթղթերում, որոնցում դրանք հիմնականում ծառայել են որպես ներդրում կոմսնեդայի պայմանագրերում<sup>162</sup>:

Միջնադարում առանձնահատուկ կարևորություն է ունեցել *ստրկավաճառությունը* XIII-XV դդ. հյուսիսսևծովյան նավահանգիստներ Կաֆան և Թանան ստրուկների ձեռք բերման գլխավոր շուկաներն էին: Հատկապես մեծ ծավալների էր հասնում ստրուկների հոսքը դեպի Եգիպտոսի սուլթանություն<sup>163</sup>: Հյուսիսից բերվող թաթար, թյուրք, սլավոնական, կովկասյան ծագման և այլազգի ստրուկների բավական մեծ քանակությունը կենտրոնացվում էր Այասում<sup>164</sup>: Մարինո Սանուտոյի վկայությամբ՝ Եգիպտոսի սուլթանության վաճառականները ստրուկներ գնելու նպատակով այցելում էին նաև Կիլիկյան Հայաստան<sup>165</sup>: Կիլիկյան քաղաքներում վաճառված

<sup>160</sup> Ալիշան Ղ., Միսուան, էջ 396: **Otten-Fr oux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 171-172.

<sup>161</sup> **Бл изнок С.**, Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 103.

<sup>162</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 2, 25. B. N 137. **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 445-446, 533-534.

<sup>163</sup> **Makrizi-Takki-Eddin-A hm ed**, Histoire des sultans Mamlouks de l'Egypte, trad. par Quatremère M., T. II, Paris, 1845, p. 207. **Heyd W.**, նշլ. աշխ., հ. II, էջ 555-557: **Balard M.**, Genes et la mer Noire (XIII-XV siècles), p. 44-45.

<sup>164</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 13, 15, 80, 102, 103. **Rey E.**, Les colonies Franques de Syrie, p. 105-106.

<sup>165</sup> **Marino Sanuto**, p. 27-29. **Heyd W.**, նշլ. աշխ., հ. II, էջ 555: **Langlois V.**, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie, p. 80.

ստրուկների գների մասին որոշ պատկերացում են տալիս հետևյալ գործարքները. 1274 թ. մարտի 12-ին Այասի ջնմովական Սուրբ Լավրենտիոս եկեղեցու ավագ քահանա Միկելեն Կիլիկյան Հայաստանում Ջենովայի հյուպատոս Ֆիլիպինո Տարտարոյի որդի Նիկոլո-զո Տարտարոյից 400 հ. ն. դ.-ով գնել էր Ֆաթմա անունով ստրկուհուն<sup>166</sup>: 1277 թ. նոյեմբերի 4-ին Բրունետա Կորսայի համար Այասում ձևակերպված կտակում հիշատակված է Ելենա անունով մի ստրկուհի՝ 200 հ. ն. դ. արժեքով<sup>167</sup>: Իսկ 1301 թ. կրկին Այասում գրված հույն կամ թուրք մի ստրուկ Ֆամագուստայում վերավաճառվել էր 55 ս. բ.-ով (մոտ 204 նոթ դրամ)<sup>168</sup>: Մի այլ գործարքում հիշատակված են երկու ստրկուհի, որոնք գնվել և Կիպրոս էին տեղափոխվել Տարսուսից<sup>169</sup>: 1274 թ. ապրիլի 14-ին Այասում ձևակերպված պայմանագիրը պարունակում է ստրկավաճառությանը վերաբերող կարևոր կետ. Պասկալն Մանեզևտան Գվիդևտո Ռուբենուսից 200 հ. ն. դ.-ով գնում էր մի մկրտված ստրուկ (schiavo battezzato): Միաժամանակ գնորդը պարտավորվում էր ստրուկին չվաճառել որևէ մահմեդականի<sup>170</sup>: Ի դեպ, չի բացառվում, որ ստրուկներին քրիստոնյա մկրտելը նպատակ ուներ բացառել հետագայում նրանց մամլուքներին վաճառելու հնարավորությունը: Այդպիսի սահմանափակումներով, անկասկած, փորձ էր արվում կանգնեցնել ստրուկների հոսքը Եգիպտոսի սուլթանություն: Այս փաստը հաստատվում է 1288 թ. ջնմովացիներին տրված շնորհագրի կետով. «Եւ ի ծառայքն որ կու գննն ու ի յերկրէս հաննն, նայ իրաունք կու տան, նայ չտան իրաունք. ապայ թէ քրիստոնէ ծառայք գննն նայ երդնուն որ Տաճկի

<sup>166</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 43, 43a, 43b. **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas, p. 456-457.

<sup>167</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, B. N 45.

<sup>168</sup> **Polonio V.**, նշլ. աշխ., N 331:

<sup>169</sup> Նույն տեղում, N 386:

<sup>170</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 80.

չրծախնն ու ոչ հայնց մարդոյ որ կամենայն Տաճկի ծախնի»<sup>171</sup>: Քիչ չեն դեպքերը, երբ գնված ստրուկներին եվրոպացի տերերն ազատություն էին շնորհում: Այսպես, օրինակ, 1274 թ. հունիսի 10-ին Այսսում Նիկոլոզո Բուկուչիո անունով վաճառականը մեկ օրվա ընթացքում նոտարական հատուկ փաստաթղթերով ազատություն էր շնորհել Մարգարիտա և Իզաբելլա անուններով իր երկու ստրկուհիներին<sup>172</sup>:

Եվ այսպես, բնական պայմանների և տնտեսաաշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ XIII-XIV դդ. Կիլիկիայի հայկական թագավորության միջազգային առևտրական ապրանքաշրջանառությունն առանձնացել է բազմաբնույթ ապրանքների մեծ տեսականիով: Եվրոպայի և Ասիայի խորքերից կիլիկյան քաղաքներ ներկրվող տարատեսակ ապրանքներից զատ, միջազգային առևտրում հայոց թագավորությունը ներկայանում էր նաև տեղական՝ գյուղատնտեսական և արհեստավորական որակյալ արտադրանքներով, որոնք բավական մեծ համբավ ունեին թե՛ Մերձավոր Արևելքում, և թե՛ Եվրոպայում:

<sup>171</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 155. Հովհաննիսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Ե., 2008, էջ 107-108: Epstein S., Genoa and the Genoese, 958-1528, Chapel Hill, 1996, p. 179.

<sup>172</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 13, 15, 102, 103.

## 2.2. Չափի ու կշռի միավորները Կիլիկյան հայաստանի միջազգային առևտրային հարաբերություններում.

Ապրանքատեսակների քննության հետ հարկ է ներկայացնել նաև Կիլիկյան հայաստանում առավել շատ օգտագործված չափ ու կշռի, ինչպես նաև դրամական միավորները:

Միջնադարում մերձավորարևելյան և ընդհանրապես միջազգային առևտուրն առանձնանանում էր բազմատեսակ և բազմաանուն չափի ու կշռի միավորներով: Չնայած Կիլիկյան հայաստանի և այլ երկրների չափման միավորների համակարգերում ընդգրկված էին բավական շատ նույնանուն տեսակներ, սակայն թվային արժեքով դրանք շոշափնիորեն տարբերվում էին միմյանցից: Մասնավորապես՝ Կիլիկյան հայաստանում ապրանքների մեծ տեսականի ընդգրկող «րոտլ» (իտալ. ruotolo) անվանումով կշռի միավորը լայնորեն օգտագործվում էր Եգիպտոսում, Խաչակրաց իշխանություններում, Ասորիքում և այլուր: Ընդ որում՝ Աքքայում, Տրիպոլիում, Բեյրութում, ինչպես նաև նեղաբերան Դամիստայում ու Ալեքսանդրիայում ընդունված լուսլի չափերը տարբեր էին<sup>173</sup>: Նմանօրինակ պատկեր ձևավորվել էր նաև Եվրոպայում: Օրինակ, ջննովական, վենետիկյան, իսպանական, սիկիլիական, ապուլական և այլ նույնանուն չափման միավորները զգալիորեն տարբեր էին իրենց արժեքներով:

Որպեսզի չխճճվենք միջնադարում օգտագործված հարյուրավոր միավորների մեջ, հարկ ենք համարում հիմնականում սնդրադառնալ մեր կողմից ուսումնասիրվող սկզբնաղբյուրներում հիշատակվող հայկական տարատեսակներին և դրանց համեմատական վերլուծությանն օտարերկրյա միավորների հետ:

Կիլիկյան հայաստանում տարածված չափ ու կշռի միավորների և միջազգային տարատեսակների միջև համեմատական վերլուծությունը հանգամանորեն ներկայացված է Ֆրանչեսկո Պեզոլու-

<sup>173</sup> Ashtor E., Levantine Weights and Standard Parcels: A Contribution to the Metrology of the Later Middle Ages // Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol. XLV, part 3, 1982, p. 472-474.

տիի և Զիբալդոնն դև կանալի վաճառականական ձևերնարկներում: Այս հեղինակները մանրամասնորեն ներկայացրել են կիլիկյան շուկաներում բազմատեսակ ապրանքների համար նախատեսված միավորները, դրանց արժեքային համեմատությունը եվրոպական և արևելյան շատ պետություններում ու քաղաքներում տարածված բազմաձև տարատեսակների հետ: Վերլուծելով այս և զանազան այլ աղբյուրները՝ Ղ. Ալիշանը հաջողությամբ ստացել է բազմաթիվ չափերի թվային արժեքները<sup>174</sup>: Հատկանշական է, որ կիլիկյան Հայաստանում գործած իտալացի նոտարների կազմած տարատեսակ փաստաթղթերում ապրանքների առք ու վաճառքի համար օգտագործվել են եվրոպական, արևելյան, ինչպես և հայկական չափման միավորներ:

Ստորև ներկայացնում ենք Ֆ. Պեգոլոտտիի ձևերնարկի մի փոքր հատվածը՝ թարգմանված Ղ. Ալիշանի կողմից. «Պղպնդ և կոճապղպնդ և շաքար, և դարխանիկ (դարչին, cannella) և խունկ և որդան փայտ (բրազիլ ծառի փայտ) և կնքայտեթ (լայքա) և բամբակ, և ամենայն խոշոր ախայխիրք, և նրկաթ և պղինձ և անագ. այս ամենայն վաճառքի հ հայս բոտլի. և է բոտլն 15 վաքիայ, և 33 բոտլն առնէ կենդինար մի հայոց:

Մետաքս և ամենայն նուրբ համեմունք (և նիրթ) վաճառքին անդ վաքիայի, 1/12 բոտլի վաքիայի, և որ կոչի վաքիայ հրապարակի (վաճառականաց)»<sup>175</sup>

Կիլիկիայում օգտագործվում էին բոտլի նրկու տարատեսակ՝ փոքր կամ նուրբ և մեծ: Ինչպես տեսնում ենք՝ այս միավորով կշռվող ապրանքներն իրենց բնույթով խիստ տարբեր են նդել. համեմունքների, ներկանյութերի, բամբակի, շաքարի, մեղրի հետ միասին մեծ բոտլով վաճառում էին նրկաթ, պղինձ, անագ, ինչպես նաև օճառ,

զանազան բրդեղեն և այլն:<sup>176</sup> Հնուաբրքրական է, որ Զիբալդոնն դև կանալը հայտնում է, որ կիլիկյան Հայաստանի գյուղերում կիրառվող բոտլն ավելի մեծ էր, քան Այասինը:<sup>177</sup> Բոտլն իր հերթին հանդիսանում էր կենդինար կամ կանտար (cantaro) կոչված միավորի ենթաբաժինը:<sup>178</sup> Բոտլի ենթաչափերն էին վաքիա (օքիա, occhie, ounce) կամ ունկի մեծ և վաքիա փոքր միավորները: Փոքր կամ հրապարակային (occhia della piazza) վաքիա կշռով վաճառվում էին հումքային մետաքսը և նուրբ համեմունքները:<sup>179</sup>

Հավելենք, որ հումք մետաքսի չափման ամենատարածված եվրոպական միավորը ֆարդելլոն (fardello) էր: Ըստ Պեգոլոտտիի՝ 1 ֆարդելլո հավասար էր 252 ջննովական լիբրայի կամ մոտ 80 կգ.:<sup>180</sup>

Ոսկու և արծաթի համար կիլիկյան Հայաստանում գործածվում էր մարկ (marc, marche) միավորը՝ իր դրամակշիռ (pesus) կոչված ենթաչափով:<sup>181</sup> Իտալական մուրհակներում թանկարժեք մետաղների, համեմունքների և այլ ապրանքների չափման համար օգտագործվում էր միջնադարում մեծ տարածում ունեցող լիբրան (libbra), որն, իր հերթին, հանդիսանում էր միաժամանակ՝ կանտար (cantaro) և ջննտինաիո (centinaio, centanaria)<sup>182</sup> միավորների ենթաչափը: Առավել հայտնի էին ջննովական և վենետիկյան լիբրաները,

<sup>176</sup> Pegolotti, p. 59. Zibaldone p. 61-63. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 110-112, 163. Capmany y de Montpalau A. de, Memorias históricas sobre la marina, V. II, p. 1061-1062.

<sup>177</sup> Zibaldone, p. 61-62. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 111.

<sup>178</sup> Zibaldone, p. 61-62. Ալիշան Ղ., Մխուման, էջ 377:

<sup>179</sup> Langlois V., Le Trésor des chartes d'A ménie, p. 171. Pegolotti, p. 59. Zibaldone, p. 61-62.

<sup>180</sup> Pegolotti, p. 300. Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 17. Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 334.

<sup>181</sup> Pegolotti, p. 61-63. Zibaldone, p. 62. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 111. Balletto L., Notai Genovesi in Oltremare, B. N 85. Capmany y de Montpalau A. de, Memorias históricas sobre la marina, V. II, p. 1059.

<sup>182</sup> Ջննովացիները համեմունքների համար օգտագործում էին ջննտինաիո կոչվող կշի միավորը: Pegolotti, p. 215.

<sup>174</sup> Ալիշան Ղ., Մխուման, էջ 377:

<sup>175</sup> Pegolotti, p. 59. Ալիշան Ղ., Մխուման, էջ 373: Պտուկման Օ., Կիլիկյան Հայաստանի վաճառականությունը, էջ 751-754:

որոնք կարող էին լինել նուրբ (sottile) և խոշոր (grosso):<sup>183</sup> Հիշատակվում է նաև լիբրայի հայկական տարատեսակը:<sup>184</sup>

Համեմունքների, բրազիլ փայտի, ինդիգոյի և նմանատիպ այլ ապրանքների առավել խոշոր քանակության դեպքում կիրառվում էր սպորտա (sporta) կշռի միավորը:<sup>185</sup> Ըստ Ղ. Ալիշանի՝ 1 սպորտան հավասար էր 40 հայկական մեծ թուղի:<sup>186</sup> Թեև Է. Աշթորի ներկայացրած սպորտայի տեսակները տատանվում են մոտավորապես 210-230 կգ.-ի սահմաններում, սակայն Ղ. Ալիշանի բերած տվյալի համաձայն՝ հիշյալ տարատեսակի համար ստացվում է մոտ 253 կգ.:

Առք ու վաճառքի նոտարական փաստաթղթերում և այլ բնույթի սկզբնաղբյուրներում հազահատիկը ներկայացված է հայկական և օտարերկրյա միավորներով: Մասնավորապես՝ Այսաի և Աքքայի մոդ (moggia) կոչվող կշռի հետ հանդիպում են ապուլական, սիկիլական ու Սեբաստիայի սալմայի (salma, գրի, բոռ) տեսակները: Այսպիսի 5 մոդ հազահատիկն համարժեք էր Աքքայի 3 մոդը, իսկ 100-ական ապուլական ու սիկիլական սալմաներին համապատասխանաբար՝ 188 և 198 հայկական մոդը: Ամենայն հավանականությամբ, Կիլիկյան Հայաստանին հատկացված բաժնում Պեգոլոտտիից ցույց է տվել իտալական Ապուլիա նրկրամասի Բարլետտա քաղաքի սալմայի տեսակը: Ձեռնարկի մեկ այլ էջում նույն նրկրամասի Մանֆրեդոնիա քաղաքի սալմայի դիմաց նա նշում է 180 հայկական մոդը: Որպես մոդի ենթաչափ օգտագործվում էր մարզնպանը (marzupanne):<sup>187</sup>

Կիլիկյան Հայաստանում կտորնդենի համար գործածվում էին *կշռի*, և՛ նրկարության չափման միավորներ: Մասնավորապես՝ մանուղը և կտավը վաճառում էին «կտորներով» (pezze) և բալլա (տուկ, balla) կշռի միավորով:<sup>188</sup> Հայտնի էր կաննա (նդեզնաչափ, *canna*) նրկարության չափը, որն ուներ իր հայկական, ինչպես և վենետիկյան ու ջենովական տեսակները: Ընդ որում՝ հայկական կաննան լինում էր նրկու տեսակի՝ նախատեսված մետաքսի և բրոյա ու բամբակյա կտորնդենի համար: Հիշատակվում է կտորնդենի նրկարության չափման ևս մեկ՝ վենետիկյան ու ջենովական ծագման *բրաչչո* (պրաքիա, braccio) միավորը:<sup>189</sup>

Փայտանյութի առք ու վաճառքն իրականացվում էր «պարզուհավ» (իտալ. pertica, ձողաչափ) կոչվող միավորով, որի ենթաչափը «ֆիլախն» (լատ. jancono, պարզունակի 1/4 մասը) էր: Ի դեպ, Ղ. Ալիշանը հայտնում է, որ իր կողմից ուսումնասիրված աղբյուրներից «պարզունակի» չափը հնարավոր չէ հաշվել:<sup>190</sup>

Սկզբնաղբյուրներում գինին, ինչպես նաև ձեթը հանդիպում են վեզմտա (փարչ, veges, vegeta) և բոտտա (պրտթե, botta) կշռի միավորներով, որոնք նրկուսն էլ իտալական ծագում ունենին<sup>191</sup>:

Չափի ու կշռի միավորների հետազոտումը միջնադարյան առևտրի ուսումնասիրության կարևոր բաժիններից է, առանց որի հնարավոր չէ պարզել որևէ ապրանքատեսակի գինը և այլ մանրամասներ: Կիլիկյան Հայաստանը 13-14-րդ դդ. Արևելք-Արևմուտք առևտրի խոշոր կենտրոններից էր: Կիլիկիայի քաղաքների շուկաներում

Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 171-172.

<sup>188</sup> Pegolotti, p. 61. Balletto L., Notai Genovesi in Oltremare, B. N 14, N 47, N 49, N 53, N 80, N 134.

<sup>189</sup> Pegolotti, p. 59-63. Zibaldone, p. 38-39. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 111. Balletto L., Notai Genovesi in Oltremare, B. N 7. Ալիշան Ղ., Սիսուան, էջ 377:

<sup>190</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 377:

<sup>191</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 13: Langlois V., Le Trésor des chartes d'A ménie, p. 194. Langlois V., Essai historique et critique sur la constitution sociale et politique de l' A ménie, p. 82.

<sup>183</sup> Pegolotti, p. 61-63, 137-141, 214-216. Balletto L., Notai Genovesi in Oltremare, B. N 20, N 52, N 82, N 74, N 120.

<sup>184</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 377:

<sup>185</sup> Ashtor E., Levantine Weights and Standard Parcels, p. 475-476. Balletto L., Notai Genovesi in Oltremare, B. N 73.

<sup>186</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 370:

<sup>187</sup> Pegolotti, p. 59-63, 166. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 111. Ալիշան Ղ., Սիսուան, էջ 374, 377, 396: Capmany y de Montpalau A. de, Memorias históricas sobre la marina, V. II, p. 983, 1061.

կարելի էր գտնել ժամանակի միջազգային շուկայում տարածված գրեթե ողջ ապրանքատեսականին: Կիլիկիա ներմուծելով որևէ ապրանք վենետիկցի, ջննովացի, նվրոպացի այլ պետությունների, ինչպես նաև արևելքի վաճառականները կիրառում էին միայնացից բոլորովին տարբեր չափի ու կշռի միավորներ: Ավելին, դրանք զգալիորեն տարբեր էին (թե՛ անվանումներով, և թե՛ չափով) նաև տեղական՝ հայերի կողմից օգտագործվող միավորներից:

*Աղյուսակ 2. Չափի ու կշռի միավորները Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական հարաբերություններում<sup>192</sup>:*

Անվանումը	Չափը
1 վաքիա (occhia) կամ ունկի մեծ, 1/12 մեծ բոտլ	527,91 գր
1 վաքիա փոքր, 1/15 մեծ բոտլ	422,333 գր
1 փոքր կամ նուրբ բոտլ (ruotolo)	4,82 կգ
1 մեծ կամ խոշոր բոտլ	6,335 կգ
1 հայկական կանտար (կամ կենդինար), 33 մեծ բոտլ	209,055 կգ
1 հայկական լիբրա (11 վենետ. նուրբ լիբրան՝ 10 հայկ. լիբրա)	331,356 կամ 348,425 գր
1 վենետիկյան խոշոր լիբրա (libbra grosso)	348,5 գր
1 վենետիկյան նուրբ լիբրա (libbra sottile)	316,75 գր
1 վենետիկյան խոշոր կանտար (cantaro grosso), 150	52,268 կգ

<sup>192</sup> Pegolotti, p. 30, 59-63, 65, 91, 113, 137-141, 166, 214-216, 300. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 103, 110-114, 161-163, 199-200. Ashtor E., Levantine Weights and Standard Parcels, p. 471-488. Coureas N., Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia, p. 321. Ալիշան Ղ., Միսուան, էջ 370, 373-377: Նույնի՝ Հայ-վենետ, էջ 58-59: Պտուկեան Զ., Կիլիկիան Հայաստանի վաճառականությունը, էջ 751-756: Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье в. XIII-XV вв.: проблемы торговли, с. 334.

վենետ. խոշոր լիբրա	
1 վենետիկյան նուրբ կանտար (cantaro sottile), 150	47,513 կգ
վենետ. նուրբ լիբրա	
1 ջննովական լիբրա, 1/20 հայկական խոշոր բոտլ	մոտ 317 գր
1 ջննովական կանտար, 150 ջնն. լիբրա	47,55 կգ
1 ջննովական շենտինաիո (centinaio), 100 ջնն. լիբրա	31,7 կգ
1 Ֆամագոստայի կանտար, 37 հայկական խոշոր բոտլ	234,395 կգ
1 արքայան կանտար (cantarium Acconis), 37 հայկական խոշոր բոտլ	234,395 կգ
1 սպորտա (sporta) (ըստ Ղ. Ալիշանի՝ 40 հայկական խոշոր բոտլ)	253,4 կգ
1 հայկական մոդ (moggia)	մոտ 103,18 կգ
1 մարզպան (marzupanne) 1/10 կամ 1/12 հայկ. մոդ	12,94 լ
կիպրական մոդ	մոտ 25 կգ
1 արքայան մոդ (5 հայկ. մոդին համարժեք էր 3 արքայան մոդը)	մոտ 215,7 լ
1 ապուլական Մանֆրեդոնիա քաղաքի սալմա (salma) (100 Մանֆրեդոնիայի սալմային համարժեք էր 180 հայկ. մոդ)	232,9 լ
1 ապուլական սալմա (salma) (100 ապուլական - սալմային համարժեք էր 188 հայկ. մոդ)	մոտ 243,3 լ
1 սիկիլական սալմա (100 սիկիլական սալման՝ 198 կամ 200-205 հայկ. մոդ)	մոտ 256,2 լ
1 հոււմք մետաքսի ֆարդելլ (fardello)	մոտ 80 կգ
1 ջննովական բալլա (balla), 250 ջնն. լիբրա	79,25 կգ
1 հայկական կաննա (canna) քրոյա կտորեղենի	2,153 մ
1 հայկական կաննա մետաքսյա կտորեղենի	2,012 մ
1 վենետիկյան կաննա	2,3 մ
1 ջննովական կաննա	2,973 մ

1 վննտիկյան բրաչչո բրոյա կտորնդնի (braccio, 315 վննտ. բրաչչոն՝ 100 հայկական բրոյա կտորնդնի կաննա)	մոտ 0,683 մ
1 վննտիկյան բրաչչո մետաքսն կտորնդնի	0,638 մ
1 ջննովական բրաչչո	0,58 մ
1 հայկական մարկ (marc, marcha) (100 վննտիկյան մարկը՝ 106,5 հայկական մարկ)	226,25 գր
1 հայկական դրամակշիռ, 1/50 մարկ	4,525 գր
1 ջննովական բոտտա (botta)	482 լ
1 վննտիկյան բոտտա	մոտ 751 լ
1 ջննովական վեգետա (vegeta)	մոտ 525 լ

### 2.3 Միջերկրածովյան առևտրի կազմակերպման նդանակները կիլիկյան Հայաստանում

Միջնադարում միջերկրածովյան առևտրի կազմակերպումն իրականացվել է ընդգրկուն կառուցվածք ունեցող մեթոդների մի ամբողջ համակարգի միջոցով: Սկզբնաղբյուրներում կիլիկիայի հայ վաճառականության օգտագործած միջազգային առևտրի կազմակերպմանը վերաբերող տեղական ծագման մեթոդների մասին վկայությունների գրեթե չենք հանդիպել: Կիլիկյան Հայաստանը միայն XIII դ. սկզբից սկսեց լիարժեքորեն ընդգրկվել միջերկրածովյան առևտրում, որտեղ առևտրի կազմակերպումն արդեն հարյուրամյակների ավանդույթներ ուներ:

XII-XIII դդ. միջազգային առևտրի կազմակերպման՝ գլխավորապես արևմտամիջագետական ծագում ունեցող նդանակների ամբողջ տնտեսական նույն կառուցվածքային բովանդակությամբ հաջողությամբ ներդրվել էր միջերկրածովյան և սևծովյան ավազանների ներկրներում: Դրանց տարածողները հենց եվրոպացի վաճառա-

կաններն էին, որոնց հարուստ փորձառությամբ մշակված առևտրի նմանիկայի միջոցով իրականացվում էր Արևելք-Արևմուտք ապրանքաշրջանառության զգալի մասը: XII-XIV դդ. Եվրոպայում ընթացող ֆինանսատնտեսական փոփոխություններն անդրադարձել էին նաև առևտրի իրականացման մեթոդների վրա: Դրանցում առանձնահատուկ դերակատարում ունեին վաճառականական միությունները, որոնց գործունեության հիմնական ոլորտը մեծածափալ ծովային առևտրն էր: XIII-XV դդ. հյուսիսմիջագետական միություններին բնորոշ էին նրկարաժամկետ վաճառականական միավորումները՝ գիղհանները, մինչդեռ հարավմիջագետական նրկրների առևտրական գործունեությանը հատուկ էին կարճաժամկետ պայմանագրային միությունները: Ի դեպ, անտիկ և միջնադարյան դարաշրջաններում միջերկրածովյան առևտրում օգտագործված միությունների կառուցվածքային բազմաթիվ ընդհանրությունները խոսում են դրանց ժառանգական կապի մասին<sup>193</sup>:

XIII-XIV դդ. միջազգային առևտրում լայն տարածում ստացած վաճառականական միություններից կարևոր նշանակություն ունեին «ընկերությունները», որոնց թվին էր պատկանում *կոմմենդան*<sup>194</sup>: Կոմմենդայի մասին առաջին հիշատակությունները սկսած X դարից վերաբերում են Իտալիային: Հարմարվելով արագ փոփոխվող շուկայական հարաբերություններին՝ այն լայն տարածում գտավ միջազգային առևտրում և իր զարգացման գագաթնակետին հասավ XIII դ. կեսերին և XIV դ. սկզբներին<sup>195</sup>: Այն յուրահատուկ բաժնետի-

<sup>193</sup> Тушина Г., Из истории средиземноморских торговых объединений, с. 20-21. Նույնի՝ Марсельские торговые объединения XIII века // Страны Средиземноморья в эпоху феодализма, Вып. 1, Горький, 1973, с. 39. Луццатто Дж., նշվ. աշխ., էջ 105, 367-369: Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 176-177.

<sup>194</sup> Pryor J., The Origins of the Commenda Contract, p. 10, 22-35. Reyerson K., Commerce and Communications // The New Cambridge Medieval History, V. 5, с. 1198-с. 1300, Cambridge, 1999, p. 64-65. Hunt E., Murray J. M., A History of Business in Medieval Europe, 1200-1550, Cambridge, 1999, p. 61.

<sup>195</sup> Карпов С., Контракт комменды в итальянской торговле в Южном Причерноморье (XIII-XV вв.), с. 25-26. Дживел ег ов А., նշվ. աշխ., էջ 131:

րական, կարճաժամկետ պայմանագրային ընկերություն էր, որտեղ գործընկերներից մեկը՝ կոմմենդատորը, գործարքում կապիտալի միակ կամ էլ գլխավոր ներդրողն էր: Մյուս մասնակիցն անվանվում էր տրակտատոր, որը ներդրված միջոցները ստանալուց հետո առևտրական գործունեություն պետք է ծավալեր նախապես պայմանավորված որևէ վայրում: Կոմմենդատորի ներդրած միջոցները կարող էին լինել ինչպես դրամական, այնպես էլ ապրանքի տեսքով: Սովորաբար կոմմենդայի յուրաքանչյուր գործարք սահմանափակվում էր առևտրի նպատակներով իրականացվող ծովային մեկ ճամփորդությանը: Վերադառնալուս պես՝ տրակտատորը պարտավոր էր վերադարձնել կոմմենդատորի ներդրած գումարը, ինչպես նաև շահույթի մի մասը՝ ըստ նախապես պայմանավորված բաշխման հարաբերության<sup>196</sup>: Հետագոտողներն առանձնացրել են կոմմենդայի երկու տեսակ՝ միակողմանի և երկկողմանի: Գլխավոր սկզբունքը, որը պայմանավորում էր այս երկու ձևերի տարբերությունը, գործարքում արված ներդրումի չափն էր: Եթե տրակտատորը որևէ ներդրում չէր կատարում, ապա նա կարող էր կնքել միայն միակողմանի պայմանագիր: Այս դեպքում կոմմենդատորը ստանում էր շահույթի 3/4-ը և, միաժամանակ, իր վրա էր վերցնում ներդրված կապիտալի ապահովության ամբողջ պատասխանատվությունը, համապատասխանաբար տրակտատորը ստանում էր շահույթի 1/4-ը (երբեմն՝ 1/6, 1/5 կամ 1/3) և չէր կրում որևէ պատասխանատվություն: Երկկողմանի կոմմենդայում, որն անվանվել է նաև «ծովային ընկերություն», կախված տրակտատորի իրականացրած ներդրումի չափից, շահույթը կարող էր բաշխվել նույնիսկ հավասարապես, իսկ կոմմենդատորը ստանձնում էր կապիտալի հնարավոր կորուստի 2/3-ի պատասխանատվությունը: Մինչ առևտրական ուղևորության մեկնելը, տրակտատորը ձգտում էր իր ձեռնարկման մեջ ներգրավել ավելի

<sup>196</sup> Postan M., Medieval Trade and Finance, Cambridge, 1973, p. 68-83. Луццатто Дж., *ibid.*, ш. 105, 367-369: Тушина Г., Марсельские торговые общества XIII века, с. 43, 53. Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 179-180.

շատ ներդրողների՝ հետագայում խոշոր շահույթ ապահովելու ակնկալիքով: Մի քանի կոմմենդատորով ձևավորված միությունները հետագոտողների կողմից անվանվել են բազմակողմանի կոմմենդա: Այս դեպքում համեմատաբար քիչ ներդրում իրականացնողն էլ առանձնում էր տրակտատորի պարտականությունները: Կառուցվածքային առումով նման ընկերությունների և կոմմենդայի ավելի պարզ գործարքների միջև շոշափելի տարբերություններ չկային<sup>197</sup>:

Այստեղ գործած ջնեովացի նոտարական գործակալներ Պեդրո դե Բարգոնելի և Ֆեդերիկո Պիացցալունգայի՝ երեք տարիների ընթացքում կազմած փաստաթղթերի հավաքածուում կարելի է գտնել կոմմենդայի 45 գործարք<sup>198</sup>, որոնցից 13-ը բազմակողմանի են, իսկ 32-ում գրանցված են մեկական կոմմենդատոր և տրակտատոր (այսինքն՝ միակողմանի կամ երկկողմանի կոմմենդաներ): Ընդ որում, եթե 1274 թ. բազմակողմանի կոմմենդաները բավական շատ են (10), ապա 1277 և 1279 թթ. դրանց թիվն ընդամենը 3 է: Պայմանագրերում մասնակցել են արևմտամիջուրապական բազմաթիվ քաղաքներից ժամանած տարբեր խավի ու մասնագիտությունների տեր անձինք, մինչև իսկ՝ հոգևորականներ: Կոմմենդայի հիշյալ ձևերում և՛ շահույթի բաշխման չափը, և՛ ներդրված կապիտալի բնույթը խայտաբղետ են: Նախ անդրադառնանք միակողմանի և երկկողմանի կոմմենդաներին: Այստեղ 32 գործարքից 11-ում ներդրումներն արվել են զանազան ապրանքներով՝ երկաթ, արծաթ, ցորեն, գարի, պղպեղ, բամբակ, մետաքս, մահուդ, կտավ, վուշ և այլն: Այլ կոմմենդաներում ներդրումներն իրականացվել են ինչպես հայկական, այնպես էլ օտարերկրյա դրամական միավորներով: Շահույթի բաշխման չափաբաժինները նույնպես տարբեր են, որոնցից

<sup>197</sup> Pryor J., The Origins of the Commenda Contract, p. 6-8, 10-11. Reyerson K., Commerce and Communications, p. 64-65. Дживелегов А., *ibid.*, ш. 131: Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 179, 187-188. Тушина Г., Марсельские торговые общества XIII века, с. 51, 53-57.

<sup>198</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 1, 2, 12, 16, 17, 19, 21, 23, 24, 25, 31, 40, 63, 70, 72, 73, 74, 77, 82, 85, 88, 93, 94, 95, 108. B. N 6, 17, 20, 43, 48, 51, 52, 53, 70, 84, 87, 88, 94, 125, 133, 134, 135, 137.

հնարավոր է դառնում պարզել գործարքի միակողմանի կամ երկ-  
կողմանի լինելը: Առավել տարածված է 1/4-ի հարաբերությունը<sup>199</sup>  
(իտալ. al quarto del proffito, լատ. ad quartum proficui)<sup>200</sup>, սակայն -  
հանդիպում են նաև 1/3-ի (իտալ. al terzo del proffito, լատ. tercia  
parte lucri)<sup>201</sup>, 1/2-ի (իտալ. alla metà del proffito, լատ. medietate  
lucri)<sup>202</sup> և նույնիսկ «առանց որևէ շահույթի» (իտալ. senza proffito,  
լատ. nullo proficuo)<sup>203</sup> ու «անհատույց» (լատ. gratis et amore)<sup>204</sup>  
ձևակերպված կոմմենդայի տարբերակներ, իսկ երբեմն էլ բաշխման  
հարաբերությունը պարզապես նշված չէ<sup>205</sup>: Վերը բերված տվյալնե-  
րից պարզ է դառնում, որ գործարքներում գերակշռում են միակող-  
մանի պայմանագրերը: Բազմակողմանի կոմմենդաների մեծ մա-  
սում նշված է շահույթի բաժանման 1/4-ի հարաբերությունը, սա-  
կայն հանդիպում են նաև 1/2-ի տարբերակներ<sup>206</sup>, իսկ որոշ դեպքե-  
րում այն ուղղակի չի ամրագրվել<sup>207</sup>:

Այստեղ կնքված կոմմենդաներում առևտրական գործողու-  
թյունների իրականացման աշխարհագրական ուղղությունները բազ-  
մակողմանի են: Դրանք կամ ապրանքը ստանալուց հետո տրակ-  
տատորները մեկնել են Սեբաստիա, Աքքա, Բնյրոյթ, Տյուրոս, Դա-  
միստոս, Ալեքսանդրիա, ինչպես նաև Վենետիկ, Ջենովա, Մարսել,  
Մոնպելիե, Բարսելոնա և եվրոպական այլ քաղաքներ: 1274 թ. փե-  
տրովարի 7-ի մի պայմանագրում ստվում է, որ Ֆեդերիկո Արևալդին

<sup>199</sup> Գործարքներում շահույթի բաշխման հարաբերությունն արտահայտված է տրակտատորին բաժին ընկնող մասով, ուստի մենք ևս կառաջնորդվենք նույն սկզբունքով:

<sup>200</sup> **Ballego L.**, Notai genovesi in Oltremare, A. N 19, 31, 40, 72, 73, 74, 82, 85, 108, B. 43, 84, 87, 88, 125, 133, 137. **Ferretto A.**, Codice diplomatico delle relazioni fra la Liguria, p. 289.

<sup>201</sup> **Ballego L.**, Notai genovesi in Oltremare, A. N 94, B. 48. **Desim oni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aïas, p. 485-486.

<sup>202</sup> **Ballego L.**, Notai genovesi in Oltremare, B. 134, 135.

<sup>203</sup> Նույն տեղում, A. N 70:

<sup>204</sup> Նույն տեղում, B. N 20:

<sup>205</sup> Նույն տեղում, A. N 12, 16, 25, 77, B. N 17, 51, 53, 70, 94:

<sup>206</sup> Նույն տեղում, A. N 17, 21, 63, 88, 93, 95, B. N 6:

<sup>207</sup> Նույն տեղում, A. N 1, 2, 23:

Անդրիոլո Ռատվերիոյից Այստում 400 հ. ն. դ.-ի բազմակողմանի  
կոմմենդայի ներդրում (շահույթի 1/4-ի բաժանման պայմանով)  
ստանալուց հետո պետք է ուղևորվեր Բնյրոյթ, Կապո Բիանկո (բնա-  
կավայր Տյուրոսի մոտակայքում), իսկ հետո հավանաբար նաև Դա-  
մասկոս<sup>208</sup>: Նույն թվականի փետրվարի 17-ին պիզացի տրակտա-  
տոր Ջիովաննի դե Սալան 2400 հ. ն. դ.-ի բազմակողմանի կոմմեն-  
դայի ներդրումն օգտագործելու էր Կիլիկյան Հայաստանի, Ասորիքի  
և Եգիպտոսի ափերով առևտուր անելու համար<sup>209</sup>: Գործարքներում  
պայմանների իրագործման վերջնաժամկետները հազվադեպ են  
ամրագրված՝ 1277 թ. օգոստոսի 26-ի փաստաթղթում տրակտատո-  
րն իրեն տրված գումարը հատուցելու էր մինչև Ծննդյան տոներ, իսկ  
մի այլ տեղում նշված է ութօրյա ժամկետ<sup>210</sup>:

1296-1310 թթ. Ֆամագոստայում արձանագրված նոտարական  
փաստաթղթերում զբաղեցված են Կիլիկյան Հայաստան ուղղված 77  
կոմմենդա՝ 133444 u. p. և 748 լիվր<sup>211</sup> ընդհանուր գումարով, որի կն-  
սից ավելին ներդրվել է զանազան ապրանքների տեսքով<sup>212</sup>: Դրան-  
ցում մեծ չափաբաժին ունի հացահատիկը (մոտ 30 %). հիշատակ-  
ված են նաև մահող, կտավ, ցփսի, տարբեր մետաղներ, օճառ, ձի-  
թայրոլ և այլն: Գերակշիռ մեծամասնություն ունեն շահույթի բաշխ-

<sup>208</sup> Նույն տեղում, A. N 17:

<sup>209</sup> Նույն տեղում, A. N 21:

<sup>210</sup> Նույն տեղում, B. N 6, 70:

<sup>211</sup> Սկզբնաղբյուրներում ջննդական լիվրի և հ. ն. դ.-ի փոխարժեքը փոփոխական է 1274 թ. տվյալներով՝ 10 լիվրին համապատասխանում էր 177 նոր դրամ, իսկ 1296 թ. համար նշված է 1 լիվրի դիմաց 23 դրամ փոխարժեքը (**Balard M.**, Notai genovesi in Oltremare, A., N 20. **Պոտկման Զ.**, Կիլիկյան Հայաստանի դրամները, էջ 58-59):

<sup>212</sup> **Balard M.**, Notai genovesi in Oltremare, A., N 2, 6, 23, 43, 63, 79, 153. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., I N 22, 34. II N 55, 70, 73, 135. III N 45, 75. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, A., N 85, 121, 158, 225, 226, 227, 228, 229, 236, 237. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 9, 18, 114, 120, 135, 136, 138, 147, 174, 205. **Polonio V.**, նշվ. աշխ., N 39, 49, 56, 78, 91, 96, 112, 125, 143, 159, 206, 214, 222, 224, 228, 238, 282, 368, 370, 378, 401, 404: **Desim oni C.**, Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 30-32, 58-59, 77, 112. **Ferretto A.**, Annali storici di Sestri Ponente, p. 185-187. **Otten-Froux C.**, Les relations économiques entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 165-166.

ման 1/4-ի հարաբերությամբ գործարքները, սակայն հանդիպում են նաև 1/3-ի և նույնիսկ 1/6-ի դեպքեր: Կան նաև «առանց շահույթի» և «անհատույց» ձևակերպված տնտեսակներ: Կիպրական մուրիակներում գրեթե բացակայում են բազմակողմանի կոմմենդանտները: Ներդրումների միջին չափը 1000, իսկ առավելագույնը 14000 ս. բ. է: Քիչ չեն նաև հ. ն. դ.-ով ամրագրված կոմմենդանտները (առավելագույնը՝ 19593 (կամ 5290 ս. բ.), նվազագույնը՝ 2000 հ. ն. դ. (540 ս. բ.)): Պայմանների կատարման վերջնաժամկետների միջին տևողությունը մոտ մեկ ու կես ամիս է: 16 կոմմենդանտներում որպես ժամանման վայր ընտրվել է Այասը, 7-ում հիշատակված է Տարսոնը, իսկ 2-ում՝ Կոռնիկոսը: Մյուս դեպքերում պարզապես նշված է, որ վաճառականը մեկնելու է Կիլիկյան Հայաստան:

Միջնադարյան առևտրի կազմակերպման հիմնական միջոցներից մեկը *կրեդիտը կամ փոխառությունն* էր: Միջերկրածովյան շատ երկրներում, այդ թվում և Կիլիկյան Հայաստանում օգտագործվում էին փոխառության տարբեր տնտեսակներ: Այսպես կոչված «ուղիղ» փոխառությունները խստորեն դատապարտվում էին Կաթոլիկ եկեղեցու կողմից և ընդունվում որպես վաշխառություն: Այդ իսկ պատճառով դրանք, որպես կանոն, ներկայացվում էին իբրև «անհատույց» կամ քողարկվում թույլատրելի այլ ձևերով<sup>213</sup>: XIII դ. սկզբին իտալական առևտրում փոխառությունները տրվում էին տարեկան 20-25, իսկ երբեմն՝ 40-50 %-ով: Հետագայում ներդրումների մեծ հոսքի շնորհիվ տոկոսադրույքը նվազել է մինչև 5-8 %<sup>214</sup>:

Չնայած Կիլիկյան Հայաստանը բավական հեռու էր Կաթոլիկ եկեղեցու այդօրինակ հսկողության սահմաններից, սակայն Այասում կազմված փոխառությունները եվրոպացիները նույնպես կազ-

մել են ամենայն զգուշությամբ: 1274 թ. Այասում կազմված նոտարական գործերում կան 13 ուղիղ փոխառություններ: Ընդ որում, «անհատույց» ձևակերպված պայմանագրերում, թվային տվյալների բացակայության պատճառով, վճարվելիք տոկոսադրույքի չափն անհնար է բացահայտել<sup>215</sup>: Գործարքներում պարտավորությունների իրականացման վերջնաժամկետները նույնպես տարբեր են: Մասնավորապես դրանցից երկուսում ասվում է, որ փոխառությունը կհատուցվի պարտատուի ցանկանալուն պես: 1274 թ. մարտի 12-ին Այասում կազմված պայմանագրի համաձայն փոխառությունը պետք է վերադարձվեր 15 օրվա ընթացքում: Նույն թվականի մարտի 14-ի գործարքում խանութատերեր Տոբիան ու Պեդրոն Բարոնո Քսենեյից ստացած 428 հ. ն. դ.-ի պարտքը պարտավորվում էին վճարել մեկուկես ամսվա ընթացքում: Մեկ այլ դեպքում 200 հ. ն. դ.-ի հատուցման վերջնաժամկետը մեկ տարի էր<sup>216</sup>:

Վենետիկյան և ջենովական նոտարական փաստաթղթերում կան տասնյակ պայմանագրեր, որոնցում նշված չէ ուղիղ փոխառություններին հատուկ «in mutuo» (իտալ. փոխառություն) արտահայտությունը: Նմանատիպ բոլոր գործարքներում ամրագրվել է, որ պարտք տրված գումարը պետք է հատուցվեր դրամի փոխանցման՝ այսպես կոչված կամբիոյի (cambio, իտալ. փոխանակություն) տարբերակով: Փոխառության այս ձևն անվանվել է «ծովային փոխանակություն», որը 1250-ական թթ. հիշատակությունից աստիճանաբար դուրս եկած «ծովային փոխառության» հետքերն քողարկված տարբերակն էր: Ի դեպ, դա իրականացվում էր շատ պարզ եղանակով: Այսպես, մի երկրում պարտք տրված գումարը պարտատուն ստանում էր մի այլ երկրում. փոխանցման արդյունքում այդ երկրների դրամական տարբեր միավորների փոխարժեքային հնարավոր տարբերությունից անխուսափելիորեն գոյացող գումարն էլ փոխառություն տվող անձի ակնկալված շահույթի գլխավոր գրավականն-

<sup>213</sup> Le Goff J., Usurai e Purgatorio // L'alba della banca: le origini del sistema bancario tra medioevo ed età moderna, Bari, 1982, p. 33-34. Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 200. De Roover R., Le marché monétaire au moyen âge et au début des temps modernes : Problèmes et méthodes // Revue historique, T. CCXLIV, Paris, 1970, p. 5-6. Pöstan M., նշվ. աշխ., էջ 11-13:

<sup>214</sup> Луццатто Дж., նշվ. աշխ., էջ 368-369: Stöckly D., Le système de l'incanto des galées du marché à Venise, p. 45.

<sup>215</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 7, 9, 11, 22, 26, 27, 36, 42, 44, 47, 47a, 48, 79.

<sup>216</sup> Նույն տեղում, A. N 7, 9, 44, 47, 47a, 79:

րից էր<sup>217</sup>: Այսատում ձևակերպված «ծովային փոխանակություններին» վերաբերող բոլոր պայմանագրերում գերակշռում են դեպի Եգիպտոսի սուլթանություն՝ հատկապես Դամիետտա քաղաք ուղղված գործարքները, որոնց մեծ մասին մասնակցել են պիզացի վաճառականները: Պայմանավորվածությունների իրագործման վերջնաժամկետները տատանվում են 15 օրից մեկ ամսի սահմաններում: Պայմանագրերին կարող էին մասնակցել մեկից ավելի պարտատուներ: Այսատում տրված և Եգիպտոսի սուլթանությունում հատուցվելիք գումարները հաշվարկված են բաբելոնյան հին ոսկե բյուզանդ<sup>218</sup> կոչված դրամական միավորով (առավելագույնը՝ 300, իսկ նվազագույնը 10 բյուզանդ), Աքքայում՝ այդ քաղաքի անունը կրող ոսկե սառակինոսյան բյուզանդով, Կիպրոսի պարագայում՝ ս. բ.-ով և այլն<sup>219</sup>: 1317-1318 թթ. վենետիկյան նոտարական փաստաթղթերում առանձնացվում են Այաս-Կիպրոս ուղղություն ունեցող «ծովային փոխանակության» 5 պայմանագիր՝ 8983 հ. ն. դ. ընդհանուր գումարով<sup>220</sup>: Կիպրոսի քաղաքներում ջննդագի նոտարների կազմած «ծովային փոխանակություններում» կան Կիլիկյան Հայաստան ուղղված 20 պայմանագիր՝ 15719 ս. բ. ընդհանուր գումարով, որոնցում պարտք տրված գումարի միջին չափը 500 ս. բ. է (առավելագույնը՝ 2250, նվազագույնը՝ 47)<sup>221</sup>:

<sup>217</sup> **Hodgett G.**, A Social and Economic History of Medieval Europe, London, 1972, p. 63-64. **Cipolla C.**, Before the Industrial Revolution: European Society and Economy, 1000-1700, New York, 1994, p. 185-186.

<sup>218</sup> Ասբիտնիա քաղաքը գտնվում էր Եգիպտոսում՝ Լահիբի մոտակայքում, որից էլ ծագել է նշյալ դրամի անվանումը (իտալ. bisanti vecchi d'oro di Babilonia): Բյուզանդի այս տեսակին ջին անդրադարձել է Ն. Ալի շահը, և ոչ էլ Ջ. Պտոլյանը (Encyclopedia of Islam 1913-1936, E. J. Brill's First, Edited by M. Th. Houtsma, Leiden, 1993, p. 550).

<sup>219</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 28, 29, 32, 33, 49, 50, 53, 55, 58, 59, 68, 92, 99, 100, 101, 104, 106.

<sup>220</sup> **Bondi Sebellico A.**, նշվ. աշխ., հ. 1, N 82, 86, 87, 89, 97: **Otten-Froux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 166.

<sup>221</sup> Նույն տեղում, էջ 166:

Լայն կիրառություն ունեւր այսպես կոչված «պարտքով կամ փոխարձակությամբ գնումը»: Փոխառության մյուս տեսակներից դրա միակ տարբերությունն այն էր, որ այս դեպքում պարտքը տրվում էր ոչ թե պարտքով, այլ ապրանքի տնտրով<sup>222</sup>: Փոխառության այս ձևի օրինակները սփռված են Այսատում կազմված իտալական նոտարական ակտերում, որոնցում հիշատակվում են տարատեսակ ապրանքներ՝ երկաթ, ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր, մահուդ, մետաքս, պղպեղ, կոճապղպեղ, բրազիլ ծառի փայտանյութ և այլն<sup>223</sup>: Որպես կանոն՝ «փոխառությամբ գնման» գործարքներում նույնպես տոկոսադրույքի չափը չի բացահայտվում: Պարտավորությունների իրագործման ժամկետները տատանվել են 3 օրից 5 ամսի սահմաններում: Օրինակ, 1277 թ. հոկտեմբերի 2-ին, 9-ին, 11-ին և 20-ին Այսատում կազմված պայմանագրերում ամրագրված է մինչև Ծննդյան տոներն ընկած ժամանակամիջոցը<sup>224</sup>: Ֆանագուսայում կնքված և Կիլիկիայում հատուցվելիք հիշյալ ձևի փոխառություններն առավելապես վերաբերում են հացահատիկին, իսկ վերջնաժամկետները տատանվում են 8 օրից 1 ամիս<sup>225</sup>:

XIII-XIV դդ. միջազգային առևտրի վարկավորման, ինչպես նաև վաճառականների միջև իրականացված փոխադարձ հաշվարկների առավել տարածված եղանակը *կամբիոն* էր: Միջնադարում լայն կիրառություն գտած փոխանցումների այս համակարգը թույլ էր տալիս դրամական և այլ տեսակի միջոցները փոխանցել առանց դրանք անմիջականորեն տնդափոխելու, իրականացնելու անկանխիկ վճարումներ և այլն: Այս առումով ուշագրավ է XII-XIII դդ. Կի-

<sup>222</sup> **Postan M.**, նշվ. աշխ., էջ 5-6: **Карпов С.**, Кредит в системе итальянской торговли в Южном Причерноморье (XIII-XV вв.), с. 44-45.

<sup>223</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, B. N 27, 29, 30, 31, 32, 34, 39, 46, 47, 50, 56, 60, 64, 73, 74, 77, 82, 83, 85, 86, 101, 106, 120, 130, 131, 138. **Bondi Sebellico A.**, նշվ. աշխ., հ. 1, N 81, 83, 90: **Otten-Froux C.**, L'Als dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 162.

<sup>224</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, B. N 27, 29, 31, 34.

<sup>225</sup> **Desimoni C.**, Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 23, 36-39. **Balard M.**, Notai genovesi in Oltremare, B., III N 29. **Polonio V.**, նշվ. աշխ., N 139, 205:

լիկյան Հայաստանում գործած վարդան Այգեկցու՝ վաճառականներին նվիրած մի առակ. «Ասի յիմաստնոց, թէ իմաստուն վաճառականք յորժամ յերկնչին յառազակաց ՚ի ճանապարհին, ոչ տաննն զգանձս իրենանց ընդ ինքնանս, այլ տան ՚ի փոխ զգանձս իրենանց յայնպիսի վաճառական, որ ունին յաշխարհն իրենանց տուն և գանձ, և առնուն ի նմանէ ձեռագիր և նրթայ խաղաղութեամբ և տանի զձեռագիր, վաճառականին և առնու զգանձ իր ՚ի տանէ նորա»<sup>226</sup>: Առակում հեղինակը, ամենայն հավանականությամբ, ակնարկել է իր ժամանակներում վաճառականների միջև գործածված դրամական կամ այլ միջոցների յուրօրինակ փոխանցման մասին, որից օգտվելու հիմնական շարժառիթն ավագակային հարձակումներից զերծ մնալն էր: Ուշագրավ է, որ վաճառականն ի պահ տրված հարստությունը պետք է ստանար հատուկ փաստաթղթի ներկայացման դեպքում միայն, ինչը բնորոշ էր նաև կամբիոյի փոխանցումներին:

Արդեն նշեցինք, որ կամբիո ներկայացնող գործարքներում պարտքը տրվում էր մի նրկում և ապա վերադարձվում մեկ այլում՝ կամ պարտապանի, կամ էլ նրա փոստահված անձի կողմից: Գումարը պարտատուն ձեռք էր բերում կամբիոյի նամակը ներկայացնելուց հետո: Դրամի փոխանակումն իրականացվում էր նրկու նդանակով. առաջին դեպքում փոխանցվող գումարի չափը պայմանագրում ամրագրվում էր տեղական դրամական միավորով, միաժամանակ նշելով օտարերկրյա դրամի հետ դրա ունեցած փոխարժեքը, որը որոշում էին գործարքի կնքման վայրում (չնրտ): Երկրորդում փոխանցման չափն ամրագրվում էր օտարերկրյա դրամական միավորով (չնշելով դրամական այլ միավորով գործարքի կնքման վայրում պարտք տրված գումարի չափը)՝ հաշվարկված այն նրկում գործող փոխարժեքով դեպի ուր ուղղվում էր կամբիոն (ինչնրտ): Փոխարժեքային տարբերությունը, որի ճշգրիտ չափը միջնադարյան հաղոր-

<sup>226</sup> Մառ Ն., Ժողովածոյր առակաց վարդանայ, նիւթք առ ի պատմութիւն միջին դարուց դպրութեան հայերնի, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 284: Микаелян Г., նշվ. աշխ., էջ 181:

վագույթյան պայմաններում գործնականում անհնար էր հաշվարկել. դրամական այս փոխանցումներից շահույթի գոյացման գլխափոք ուղիներից էր<sup>227</sup>:

Այստում ձևակերպված փաստաթղթերում կամբիոյի գործարքների առատությունը հուշում է դրա լայն կիրառության մասին: Գրեթե բոլոր պայմանագրերը վերաբերում են փոխառությունների ձեռք բերմանը, որոնք հետագայում պետք է հատուցվեին կամբիոյի նդանակով: 1274, 1277, 1279 թթ. Այստում կազմված ակտերում կամբիո պարունակող 23 գործարքից 3-ը բաժին են ընկնում ուղիղ, իսկ մնացածն՝ այլ տնտեսի փոխառություններին: Դատելով դրանցում ամրագրված պայմաններից՝ պետք է եզրակացնել, որ փոխանցումների մեծ մասն իրականացվել է կամբիոյի «ինչնրտ» տարբերակով: Այսպես, 22 պայմանագրում թեև ասվում է, որ Այստում պարտքը տրվում է հ. ն. դ.-ով, սակայն նրքեր չի հիշատակվում չափը: Անկասկած, տեղական դրամով ձեռք բերված գումարի քողարկումը նպատակ ուներ բացառելու փոխարժեքային տարբերությամբ ձևավորվելիք շահույթի բացահայտումը: Դրան հակառակ՝ այդ գործարքներում մշտապես նշված է այլ նրկներում հատուցվելիք օտարերկրյա դրամական միավորով արտահայտված գումարի ճշգրիտ քանակությունը: Ուշագրավ է, որ փոխանցումների առավել շատ ընտրված նպատակակետը Եգիպտոսի սուլթանության Դամիևտոա քաղաքն է, ուր ուղարկված գումարները հաշվարկված են բաբելոնյան հին ոսկե բյուզանդով (նվագագույնը՝ 10, իսկ առավելագույնը՝ 300 բյուզանդ): Քիչ չեն նաև Կիպրոս և Աքքա ուղղված փոխանցումները<sup>228</sup>:

Կամբիոյի փոխանցման «չնրտ» տարբերակն առավել պարզ ներկայացնելու համար բերենք բնութագրական մեկ օրինակ. 1279 թ. մարտի 12-ին Այստում Մանուել Տավանոն ու Բալիանո Գվիգուֆոն Պեդրո Գվիգուֆոյից որպես փոխառություն ստացել էին

<sup>227</sup> Карпов С., Кредит в системе итальянской торговли в Южном Причерноморье (XIII-XV вв.), с. 45-46. De Roover R., նշվ. աշխ., էջ 6-10:

<sup>228</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 11, 22, 27, 28, 29, 32, 33, 49, 50, 53, 55, 58, 59, 68, 92, 98, 99, 100, 101, 104, 106, B. N 86, 126. Otten-Froux C., L'Als dans le demier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 161-162.

բրազիլ ծառի փայտ՝ 2830 հայկական՝ սառակինոսյան անվանված բյուզանդ<sup>229</sup> արժեքով, որը պետք է հատուցեին Ջենովայում՝ 1 բյուզանդի դիմաց 9 սոլդի և 6 դենար փոխարժեքով<sup>230</sup>: Նույն բովանդակությունն ունեն Այասում գործած վենետիկցի նոտարների ձևակերպած կամբիոյի (մեծ մասամբ՝ «չերտո») տարբերակով փոխանցումներին վերաբերող փաստաթղթերը: Այսպես, 1317 թ. սևաբոնֆերի 5-ին Այասից Ֆամագուստա փոխանցված 2890 հ. ն. դ.-ը Կիպրոսում հատուցվելու էր ս. ք.-ով՝ 100 հ. ն. դ. - մոտավորապես 28 ս. ք. հարաբերությամբ: 1318 թ. մայիսի 5-ին նույն ուղղությամբ արված փոխանցումում ամրագրվել է 100 հ. ն. դ. - մոտ 27 ս. ք.-ը. նույն օրն իրականացված մեկ այլ գործարքում սահմանված է 100 հ. ն. դ. - 26 ս. ք., իսկ 1318 թ. հուլիսի 5-ի փոխանցումում՝ արդեն 100 հ. ն. դ. - 28 ս. ք. փոխարժեքային հարաբերությունները<sup>231</sup>: Թեև դրանցում սահմանված փոխարժեքի չափերը տատանվում են 1-2 բյուզանդի սահմաններում, սակայն մեծ գումարների դեպքում դա բավական մեծ շահույթ էր բերում: 1296-1310 թթ. կիպրական քաղաքներում նոտարական գործակալներ Լամբերտո դե Սամբուչետոյի և Ջիովաննի դե Ռոքայի կազմած գործերում գրանցված են Կիլիկյան Հայաստան ուղղված կամբիոյի 26 փոխանցում, որոնցից 16-ը վերաբերում են «չերտո», իսկ մնացածն «ինչերտո» տարբերակներին<sup>232</sup>: Վերոնշյալ կիպրական ակտերում կան անդորրագրերին, հանձնարարականներին վերաբերող բազմաթիվ մուրհակներ, որոնց միջոցով վաճառականները Կիպրոսում ստացել են կամբիոյի փոխանցման պայմանով այլ նրկրներում իրենց պարտք տված գումարները:

<sup>229</sup> Ջ. Պտուկյանի կարծիքով հայկական սառակինոսյան բյուզանդը Կիլիկյան Հայաստանում հատվել է վենետիկցիների կողմից և առավելապես օգտագործվել է եվրոպացի վաճառականների միջև կնքված առևտրական գործարքներում (Պտուկյան Ջ., Կիլիկյան Հայաստանի դրամները, էջ 50):

<sup>230</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 86.

<sup>231</sup> Bondi Sebellico A., նշլ. աշխ., հ. 1, N 82, 86, 87, 89, 97:

<sup>232</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 4, 20, 22, 124. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., II N 25. III N 53, 63. Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 30, 31, 80. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 146, 151, 169, 170, 171, 172, 181, 248, 258. Polonio V., նշլ. աշխ., N 101, 183, 215, 220: Desimoni C., Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 119-120.

Դրանցում բավական շատ են հ. ն. դ.-ով հաշվարկված գործարքները ինչը փաստում է, որ դեպի Կիպրոս ուղղված այդ փոխանցումներն արվել են Կիլիկյան Հայաստանից<sup>233</sup>: Հաշվարկների մեծ մասն իրականացվել են ս. ք.-ով և հ. ն. դ.-ով, սակայն քիչ չեն նաև հայկական մեկ այլ՝ թագվորին դրամական միավորի և ջենովական լիվրի օգտագործման դեպքերը: Դրանցում քողարկված շահույթը կարելի է բացահայտել հետազոտելով փոխանցման ընդամենը մի քանի պայմանագիր: Այսպես, 1300 թ. նոյեմբերի 6-ին Ֆամագուստայում պիաչչենտացի մի վաճառական նրկու ջենովացիներից վերցրած 999 ս. ք.-ը պարտավորվում էր վերադարձնել Այասում՝ 1600 հ. ն. դ.-ի տեսքով (ստացվում է, որ 62 ս. ք.-ի դիմաց վճարվելու էր 100 հ. ն. դ.): 1301 թ. հունվարի 12-ին նույն ուղղությամբ կատարված փոխանցումում նշված է 29 ս. ք.-ի դիմաց 100 հ. ն. դ. փոխարժեքը: 1301 թ. փետրվարին արված փոխանցումում 1000 ս. ք.-ի համար հաշվարկվել է 3628 հ. ն. դ. (այսինքն՝ 27,5 ս. ք. - 100 նոր դրամ հարաբերությամբ): Իսկ 1301 թ. օգոստոսի 4-ի գործարքում ամրագրված է 28 ս. ք.-ի դիմաց 100 հ. ն. դ. փոխարժեքը: Ընդամենը ութ ամիս անց՝ 1302 թ. ապրիլի 17-ին, կրկին Ֆամագուստայից Այաս իրականացված փոխանցման պայմաններում նշվել է արդեն 32 ս. ք. - 100 հ. ն. դ. հարաբերությունը<sup>234</sup>: Վերոնշյալ տարիների ընթացքում թե՛ Կիլիկյան Հայաստանում, և թե՛ Կիպրոսում միջազգային առևտուրն աննախադեպ ծաղկման շրջանում էր, ուստի նրանց դրամական հիմնական միավորների փոխարժեքային նման տատանումներն այդքան կարճ ժամանակային կտրվածքում հազիվ թե՛ նշանակալիքներ կունենան: Ավելին, Ղ. Ալիշանը և Ջ. Պտուկյանը հ. ն. դ.-ի փոխարժեքի նվազումն արձանագրել են միայն 1313-1316 թթ. սկսած՝ այն էլ ոչ կտրուկ<sup>235</sup>: Կամ-

<sup>233</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, B., II N 13, 170. III N 53. Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 57. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 195. Polonio V., նշլ. աշխ., N 60, 67, 97, 185, 385:

<sup>234</sup> Polonio V., նշլ. աշխ., N 101, 183, 215: Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 30. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 172.

<sup>235</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 385: Պտուկյան Ջ., Կիլիկյան Հայաստանի դրամները, էջ 58-59:

բիոյի փոխանցումների վերոնշյալ օրինակներում շահույթի հետա-  
ախուսումն ակնհայտ է: Կիպրական քաղաքներից Կիփկիա ուղղված  
փոխանցումների վերջնաժամկետներում տիրապետում է 8 օրը, սա-  
կայն հանդիպում են նաև 15, 20 օր, մեկ ամիս և այլն:

Որոշ դեպքերում, եթե փոխանցված գումարը ճիշտ  
ժամանակին և պայմանավորված վայրում չէր հատուցվում, ապա  
կիրառվում էր այսպես կոչված «ռեկամբիոն», որից ակնկալվող շա-  
հույթն էլ ավելի մեծ էր<sup>236</sup>: Եթե կամբիոն փոխանցումներում սովորա-  
բար բերում էր 5-10 % շահույթ, ապա ռեկամբիոն ապահովում էր  
10-20 %, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ մինչև 50 % շահութաբե-  
րություն<sup>237</sup>: Բերենք ռեկամբիոյի դասական մի օրինակ. 1274 թ. ապ-  
րիլի 7-ին Այասում իրականացված գործարքով Օտտոբանտ Յիկա-  
դան Լաֆրանկո Ռուբլուսից ստանում էր հ. ն. դ.-ի ինչ որ քանա-  
կություն և խոստանում կիպրոսում հատուցել Ռուբլուսին կամ ոմն  
Անսալոդ Բեզարիոյին 120 ս. բ. գումարով: Կողմերը պայմանավոր-  
վել էին նաև, որ եթե գումարն ամբողջովին կամ էլ մասնակիորեն  
չվճարվեր կիպրոսում, ապա Օտտոբանտն ստիպված պետք է լիներ  
այն հատուցել Ջենովայում՝ 1 ս. բ.-ի դիմաց ջենովական 3 սուդի և 4  
դենարի փոխարժեքով<sup>238</sup>: Անդրադառնալով նաև Այասում գրանց-  
ված, կամբիոնի առնչվող գործարքների իրականացման վերջնա-  
ժամկետներին. Դամիետտա, Աքքա և Կիպրոս արված փոխանցում-  
ների դեպքում դրանք տատանվում են 15 օրից մինչև մեկուկես ամ-  
սվա սահմաններում, իսկ օրինակ Ջենովա ուղղված կամբիոն վճար-  
վելու էր 4 ամսվա ընթացքում:

Վերոնշյալ առևտրական բոլոր պայմանագրերի հստակ ու ճշգ-  
րիտ իրականացման համար կողմերը հաճախ դիմում էին օժանդակ  
տարբեր միջոցների, որոնցից առավել շատ կիրառվում էին *հանձնա-  
րարականները, վստահագրերն ու անդորրագրերը*. Հանձնարարա-

<sup>236</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 68. Pavoni R., Notai  
genovesi in Oltremare, A., N 30.

<sup>237</sup> Карпов С., Кредит в системе итальянской торговли в Южном  
Приморье (XIII-XV вв.), с. 48.

<sup>238</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 68.

կանների գլխավոր գործառնություններից մեկն այն էր, որ կոմմենդա-  
յում, փոխառությունում կամ այլ տեսակի պայմանագրերում ար-  
ժանագրված պարտավորությունների շրջագործման պարագայում  
կողմերից մեկը նշանակում էր իրավաբանական կարգավիճակ  
ունեցող իր վստահված անձին՝ պրոկուրատորին, որպեսզի նա լու-  
ծեր ծագած խնդիրները: Հարկ է նշել, որ Այասում հանձնարարա-  
կաններին վերաբերող պայմանագրերի մեծ մասը կնքվել են եվրո-  
պական միևնույն քաղաք ներկայացնող անձանց միջև<sup>239</sup>: Դրան-  
ցում գերակշռում են տարբեր բնույթի պարտքերի գանձման հետ  
կապված հանձնարարականները: Երբ նախնական պայմանագիրը  
բազմակողմանի կոմմենդա էր կամ մի քանի պարտատեր ներառող  
փոխառության գործարք, ապա հանձնարարական-մուրհակներում  
հանդես էին գալիս երկու և ավելի պրոկուրատորներ: Հանձնարա-  
րականների և վստահագրերի մյուս կարևոր գործառնությունն առևտրա-  
կան, ինչպես նաև հաշվապահական տարբեր գործերի կառավա-  
րումն էր: Դրանցից էին ապրանքների ձեռքբերումը, առաքումն ու  
սպառումը<sup>240</sup>:

Միջնադարյան ծովային առևտրական համակարգում կարևոր  
նշանակություն ունեին ապրանքների *նավափոխադրավարձերի*  
հետ կապված գործարքները: Դրանցում վճարվող գումարի չափը,  
անշուշտ, կախված էր ապրանքի տեսակից և աշխարհագրական  
այն կետի հեռավորությունից, դեպի ուր նավը պետք է ուղղվեր:  
Իհարկե, թանկարժեք ապրանքների փոխադրման համար վճար-  
վում էր ավելի բարձր գումար: Կիփկյան Հայաստանում նավափո-  
խադրավարձերի հետ կապված պայմանագրերը նույնպես արձա-  
նագրվել են նոտարների կողմից և հանդիսացել իրավական լիար-

<sup>239</sup> Otten-Froux C., L'Asie dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 158-159.

<sup>240</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 1, 2, 3, 5, 6, 10, 12,  
16, 18, 34, 37, 41, 42, 46, 54, 65, 71, 89, 90, 97, B. N 8, 9, 13, 16, 21, 22, 23, 24,  
26, 33, 40, 41, 42, 44, 59, 93, 96, 102, 110, 111, 115, 118, 119. Bondi  
Sebellico A., նշլ. աշխ., հ. 2, N 1307, 1308: Otten-Froux C., Les relations  
économique entre Chypre et le Royaume A ménien de Cilicie, p. 167.

ծնր ուժ ունեցող փաստաթղթեր<sup>241</sup>: Նույն բովանդակությունն ունեն կիպրոսից կիլիկիա ճանապարհված նավերի փոխադրավարձերի պայմանագրերը: Ֆամագուստայում գրանցված 5 նմանատիպ գործարքից 4-ը վերաբերում են կիլիկյան նավահանգիստներին<sup>242</sup>:

Միջնադարում դրամական փոխադարձ հաշվարկների համար լայնորեն կիրառվում էին *անդորրագրերը*, որոնց միջոցով կատարվում էին տարատեսակ վճարումներ: Դրանք սխիված են Այասում գրանցված նոտարական ակտերում, որոնք օգտագործվել են պարտքերի տրման, հատուցման, ապրանքների աք ու վաճառքի և այլ տնտեսական գործարքների համար անհրաժեշտ դրամական փոխանցումներում<sup>243</sup>:

Հարկ է նկատել, որ վերը թվարկյալ բոլոր տնտեսական գործարքները պարունակում են *ապահովագրությանը* հատուկ որոշակի տարրեր: Թեև նոտարական սկզբնաղբյուրներում բացառապես ապահովագրությանը վերաբերող գործարքներ չեն գրանցվել, սակայն կոմմենդա կամ փոխառություն ներկայացնող պայմանագրերում այն սովորաբար արտահայտվել է գրավի տեսքով<sup>244</sup>:

Առևտրաֆինանսական գործառնությունների համար նախատեսված վերոնշյալ նդանակների մեծ բազմազանությունը վկայում է XIII-XIV դդ. կիլիկյան Հայաստանում իրականացված մեծածավալ և զարգացած միջազգային առևտրական ապրանքաշրջանառության մասին: Այդ տարաբնույթ պայմանագրերն ունեն բարձր մակար-

<sup>241</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 3, 35, 60, 61, 91, B. N 35, 69, 92.

<sup>242</sup> **Balard M.**, Notai genovesi in Oltremare, B., III N 30. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, A., N 18. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 86. **Polonio V.**, նշլ. աշխ., N 89, 204, 299: **Otten-Froux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume A ménien de Cilicie, p. 168.

<sup>243</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 20, 45, 51, 52, 56, 61, 64, 67, 80, B. N 5, 10, 32, 37, 55, 57, 58, 63, 65, 66, 67, 69, 76, 81, 89, 90, 91, 97, 98, 100, 104, 105, 107, 109, 113, 122, 123. **Otten-Froux C.**, L'Als dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 158-159.

<sup>244</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 33. B. N 85, 106. **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Als, p. 450. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, B., N 151, 163, 248.

ի իրավաբանական հենք: Նրանցում դրսևորված են ժամանակի քաղաքակիրթ առևտուրը բնութագրող բազմաթիվ հատկանիշներ: Գործարքներում արված բավական խոշոր ներդրումները և նրանց իրագործման ուղղությունների աշխարհագրությունը, որն ընդգրկում է գրեթե ամբողջ Միջերկրական ծով ափագանը, վկայում են կիլիկյան քաղաքներում ընթացած շահութաբեր առևտրի մասին:

#### 2.4 կիլիկիայի հայկական պետության հարկային քաղաքականությունը միջազգային առևտրում

Միջազգային առևտրի վրա հսկողություն սահմանելու և պետական գանձարան եկամուտներ ուղղելու գլխավոր միջոցը հարկային արդյունավետ քաղաքականությունն էր: կիլիկյան Հայաստանում հարկերի գանձումն իրականացնում էր պետության ֆինանսները կառավարող «պոքսիմոս» անվանումով գործակալությունը: Ծատ քաղաքներում ու սահմանամերձ անցակետերում տնդակայվել էին մաքսային վարչություններ, որոնք սկզբնաղբյուրներում անվանված են բաժտուն կամ բայժատուն ձևերով: Ամենախոշոր բաժտները գտնվում էին Այասում, ինչպես նաև Գուզլակ և Պորտնլլա անցակետերում: Դրանցում պոքսիմոսին ներկայացնում էին հատուկ պաշտոնյաները, որոնց կոչում էին բաժտան կապիտան կամ մինապան (միրապան, miraban)<sup>245</sup>: Ի դեպ, պետական վերոնշյալ վարչությունների մասին հայկական աղբյուրները վկայություններ չեն հաղորդում: Դրանց վերաբերյալ հիմնական տնդնկությունները քաղված են կիլիկիայում նվրոպացի վաճառականների շնորհված արտոնագրերի տնքստերից: Օրինակ, 1288 թ. ջննովացիների հետ կնքված առևտրական պայմանագրում որպես Այասի բաժտան կապիտան

<sup>245</sup> **Բոնազյան Ս.**, Մոցիալ-տնտեսական հարաբերությունները կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում, էջ 75, 277-279: **Մուրիսյան Ա.**, նշլ. աշխ., էջ 111: **Քիրբեկյան Վ.**, նշլ. աշխ., էջ 44:

հանդես է եկել ուն պարոն Բակուրանը<sup>246</sup>: Մոնպելիեի վաճառականներին 1314 թ. Օշին արքայի ուղղած շնորհագրում հիշատակված են թե՛ Կիլիկիայի պոռսիմոս Օշին Եհաննեսը, և թե՛ Այասի բաժտան գլխավոր Թորոս Միքայլնցը<sup>247</sup>: Իսկ արդեն Լևոն Դ-ի կողմից 1321 թ. կրկին մոնպելիեցիներին տրված արտոնագրի համաձայն՝ պոռսիմոսի արաշտոնը զբաղեցրել է պարոն Պևորոսը<sup>248</sup>: Միջնադարյան պետություններում միջազգային առևտրին առնչվող գլխավոր հարկատեսակը *տարանցիկ մաքսատուրքն* էր, որի չափը որևէ պետությունում վաճառականների որոշակի խմբի արտոնյալ կարգավիճակն արտահայտող հիմնական ցուցիչներից էր: Այս հարկատեսակն առավել հայտնի է «կոմմերկիում» անվամբ: Այն հաշվարկվում էր տոկոսներով՝ որևէ երկիր ներմուծվող և արտահանվող ապրանքների գնից: Կիլիկիայի արքաների սահմանած տարանցիկ մաքսատուրքերն ամենացածրերից էին սևծովյան և միջերկրածովյան ավազաններում: Վենետիկի և Ջենովայի հետ կնքված բոլոր պայմանագրերով Կիլիկյան Հայաստանում նրանց հարատևներն ազատվում էին հիշյալ հարկից և օտարազգի վաճառականության համեմատ վայելում էին ամենաարտոնյալ պայմաններ: XIV դ. 30-ական թվականներին մաքսատուրքից ազատվել էին նաև սիկիլացիներն ու ֆլորենտական Բարդի ընկերության գործակալները: Այս առումով միջին արտոնյալ կարգավիճակ ունեին պիզացի, կատալոնացի, հարավֆրանսիացի առևտրականները, ինչպես նաև ֆլորենտական ևս մի ընկերության՝ Պերուցցիի գործակալները, որոնց համար Կիլիկիայում սահմանվել էր 2 % մաքսատուրք թե՛ ներմուծման, և թե՛ արտահանման դեպքում: Պեգոլոտտին վկայում է, որ մյուս բոլոր վաճառականները Հայոց թագավորությունում վճարում էին 4 % մաքս<sup>249</sup>: Նշենք, որ XIII-XIV դդ. Բյուզանդիայում անմաքս առևտրի հնարավորություն տրվել էր միայն վենետիկցիներին ու ջե-

նովացիներին, այն էլ՝ ընդմիջումներով. պիզացիներից, ֆլորենտացիներից, արովանացիներից, անկոնացիներից ու սիկիլացիներից գանձվում էր 2 %, նարբոնացիներից՝ 4 %, իսկ մյուսներից՝ 10 % մաքս: Իկոնիայի սմյուրկները 1220 թ. վենետիկցիների համար նախապես սահմանած 10-20 % մաքսատուրքը նվազեցրել էին 2 %-ի: Ուշագրավ է, որ Կիպրոսի թագավորությունում և Կիլիկյան Հայաստանում գործում էին նույն մաքսաչափերը: Ի դեպ, Տրապիզոնի կայսրությունում ջենովացիներն ու վենետիկցիները ազատված չէին այդ հարկատեսակից. ապրանքները ծովով ներմուծելու դեպքում այնտեղ վճարում էին 3 %, իսկ ցամաքով՝ 1 % մաքս: Իլխանությունում նախապես սահմանվել էր 10 % տարանցիկ մաքս, որը Ղազան խանի օրոք իջնցվեց 5 %-ի<sup>250</sup>: Իսկ Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունում այն հասնում էր մինչև 10-20 %<sup>251</sup>:

Տարանցիկ մաքսատուրքից զատ, օտարազգի վաճառականները Կիլիկյան Հայաստանում վճարում էին տարաբնույթ հարկերի մի ամբողջ տեսականի: Այսպես, գոյություն ուներ տարանցիկ հարկի ևս մի տեսակ, որը սահմանվում էր՝ ելնելով ապրանքների կշռից, անկայն այս դեպքում ոչ թե տոկոսներով, այլ ուղղակի դրամով: Որպես կշռի միավոր օգտագործվում էր գրաստի վրա ապրանքի հնարավոր բարձելի քանակությունը՝ ուղտաբեռ, ջորեբեռ և իշաբեռ: Ընդ որում, յուրաքանչյուր ապրանքի համար ամրագրվում էր հարկի առանձին չափ. Այս հարկատեսակը վճարում էին նույնիսկ վենետիկցիներն ու ջենովացիները: Մասնավորապես 1288 թ. ջենովացիներին շնորհված արտոնագրում նրանց համար ամրագրվել էր Այասում և Գուզլակում բազմաթիվ ապրանքներից գանձվող հիշյալ հարկի չափերը, որոնք հաշվարկված են հ. ն. դ.-ով՝ մետաքս և մետաքսյա կտորեղեն - ուղտաբեռ՝ 25. ինդիզո, համմունքներ (բացառությամբ՝ բրազիլ փայտի, պղպեղի ու կոճապղպեղի) և դեղա-

<sup>246</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 161.

<sup>247</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>248</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>249</sup> Pegolotti, p. 60.

<sup>250</sup> Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 221-223, 235. Ближнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 44-45.

<sup>251</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 57.

նյութեր - ուղտաբեր՝ 25, ջորերեն՝ 19, իշաբեր՝ 16. արպեղ, կոճապղպեղ, բրազիլ փայտ - ուղտաբեր՝ 20. ֆրանսիական կտավ - ուղտաբեր՝ 20, ջորերեն՝ 15, իշաբեր՝ 12. բամբակ, շաքար, սնդիկ, կորալներ, անագ, արհիմ - ուղտաբեր՝ 15, ջորերեն՝ 12, իշաբեր՝ 9. օճառ - ուղտաբեր՝ 10, ջորերեն՝ 8, իշաբեր՝ 7: Առանձին մաքսաչափեր էին սահմանվել նաև ընտանի կենդանիները կիլիկիայից արտահանելու դեպքում<sup>252</sup>:

Ը. Դյուլորիեն և Ս. Բոռնազյանն առանձնացրել են մի շարք այլ հարկատեսակներ, որոնք կիլիկյան Հայաստանում սահմանվել էին օտարազգի վաճառականների համար<sup>253</sup>:

ա. *Ոսկուց, արծաթից և թանկարժեք քարերից գանձվող հարկ*. Ս. Բոռնազյանն այս հարկատեսակի մասին գրելիս հղում է կատարել 1288 թ. ջննդագիներին տրված շնորհագիրը, որտեղ, սակայն, համապատասխան վկայությունների չենք հանդիպում<sup>254</sup>: Դրան հակառակ՝ Հայոց արքաների կողմից վենետիկցիներին շնորհված բոլոր արտոնագրերում մշտապես ամրագրվել է առանձին կենտ, որով թույլատրվում էր առանց մաքսավճարի ոսկի ու արծաթ անցկացնել կիլիկյան Հայաստան: Սակայն, եթե նրանք ազնիվ մետաղներն օգտագործելու լինեին դրամահատության նպատակներով, ապա սահմանվում էր նույն մաքսաչափը, ինչ վճարվում էր Աքքայում<sup>255</sup>: Կարծում ենք, որ այստեղ խոսքը հենց խնդրո առարկա հարկատեսակի մասին է, որը, սակայն, հատուկ անվանումով չի հիշատակվում:

բ. *Ցենզարիա* «censaria»՝ միջնորդային հարկ, որը գանձվում էր ապրանքի և՛ վաճառողից, և՛ գնորդից: Սա ամենաին հարկատե-

սակներից էր և լայնորեն կիրառվում էր տարբեր երկրներում<sup>256</sup>: 1288 թ. ջննդագիներին և 1331 թ. սիկիլացիներին շնորհված արտոնագրի հայերեն տարբերակներում այն անվանված է սամարչևք կամ սամարչէք ձևերով: Յուրաքանչյուր ապրանքի համար հայկական կողմը սահմանել էր սամարչևքի առանձին չափեր: Օրինակ, մեկ վեզմետա կամ բոտոա գինուց ջննդագի առևտրականից հարկվում էր 1 հ. ն. դ. գումար<sup>257</sup>:

գ. *Պատսագիումը* ըստ Ս. Բոռնազյանի՝ գանձվում էր կիրճերը, լեռնանցքները, կամուրջները, ինչպես նաև լաստով գետերն անցնելիս: Պատմաբանը հիմնվել է ջննդագիներին 1215 թ. Լևոն Ա-ի շնորհած արտոնագրի վրա: Սակայն պայմանագրի բովանդակությունից պարզ է դառնում, որ, իրականում, խոսքը վերը հիշատակված տարանցիկ մաքսատուրքի (կոմմերկիում) մասին է: Այսպես, այնտեղ նշված է, որ Հայոց արքան ջննդագիներին հնարավորություն էր ընձեռում ազատ և անմաքս առևտուր անել իր թագավորության ամբողջ տարածքում, բացառությամբ մի շարք տարածքների, որոնք պատկանում էին Օթթո դե Թաբարիա, Ադամ դե Գաստոն անուններով անձանց, ինչպես նաև Կոթիկոսի, որը վաճառվում էր մարաջախտի (մարեշալ)<sup>258</sup> տիրույթն էր և Պիրամոս (Ջնիհան) գետի հոսանքի վրա գտնվող լեռնանցքի, որն էլ Լևոն դե Կապանին էր: Այդ վայրերով ապրանքներ տեղափոխելիս ջննդագիները պետք է վճարեին մաքսատուրք<sup>259</sup>: Նույնը հանդիպում է նաև վենետիկցիներին շնորհված գրեթե բոլոր արտոնագրերում, նրբ անմաքս առևտրի իրավունքը տարածվում էր Հայոց թագավորության ամբողջ տարածքի վրա,

<sup>256</sup> Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 224.

<sup>257</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 154-157, 188. Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները կիլիկյան Հայկական պետությունում X II-X IV դարերում, էջ 279: Քիրքճեան Վ., նշվ. աշխ., էջ 52:

<sup>258</sup> կիլիկյան Հայաստանի բանակը ռազմամթերք մատակարարող պետական պաշտոնյա (Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները կիլիկյան Հայկական պետությունում XII-X IV դարերում, էջ 61):

<sup>259</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 126-127.

<sup>252</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 157-158. Ալիշան Ղ., Միսոսան, էջ 386:

<sup>253</sup> Dulaurier E., նշվ. աշխ., էջ XCVII-XCIX: Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները կիլիկյան Հայկական պետությունում XII-X IV դարերում, էջ 279-282.

<sup>254</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 154-157.

<sup>255</sup> Նույն տեղում, էջ 110, 144, 152, 167, 179, 183: Պետկեան Ջ., կիլիկյան Հայաստանի վաճառականությունը, էջ 736:

բացառությամբ Պորտլլա սահմանային անցակետի<sup>260</sup>։ Իր հերթին Է. Դյուլորինն պասսագիումին անդրադառնալիս օգտվել է նույն՝ 1288 թ. ջննդագիներին տրված արտոնագրի ֆրանսերեն և լատիներեն տարբերակների հատվածներից, որոնց համաձայն՝ ջննդագի վաճառականները լատտանավերով յուրաքանչյուր բնոր տեղափոխելու համար վճարում էին կնս հ. ն. դ. գումար։ Նկատենք, որ պասսագիում բառը (թարգմ. անցում) դրանցում արտահայտում է ոչ թե հարկատեսակի անվանում, այլ նախադասության մեջ պարզապես կատարում է գոյականի դեր։ Ուշագրավ է, որ հայերենով կազմված նույն պայմանագրում խոսվում է ընդհանրապես նավերի անցման մասին. «և ի նաւերոյն անցն որ կու անցնին նայ տան դատտիկ յամեն բնոն նոր դրամ կէս»<sup>261</sup>։ Այնուամենայնիվ, մասամբ համաձայնելով նրկու ուսումնասիրողների տեսակետներին՝ գտնում ենք, որ Կիլիկյան Հայաստանում գործել են հարկերի ինչ որ տեսակներ, որոնք գանձվել են գետերով և հնարավոր է նաև կիրճերով ու կանուրջներով ապրանք տեղափոխելու համար, սակայն աղբյուրներում առանձին անվանումներով չեն հանդիպում։

դ. *Արքորագիուս կամ անքորագիուս* (ancora, լատ. խարխիս)՝ հարկի տեսակ, որը գանձվում էր օտարերկրյա առևտրական նավերից՝ Կիլիկիայի ափերին խարխիս գցելու համար։ Ընդ որում, այն վերաբերում էր ոչ միայն նավահանգիստներում, այլ նաև գետաբերաններում խարխիս գցելու պարագային։ Այսպես, 1288 թ. ջննդագիների համար սահմանվում էր. «Եւ գայն ասրէչնքն<sup>262</sup> որ կու առնէին յիրմնցէ ի գետերնրնին, յամեն սարի նոր նրկուք, նայ չառնուն յիրմնցէ»<sup>263</sup>։ Այսինքն՝ հայկական կողմը նրանց ազատում էր հիշյալ հարկից ևս։ Հատկանշական է, որ այս նույն հարկատեսակից սահ-

մանվել էր նաև Կիպրոսի թագավորությունում, որին Պեգոլոտտին հիշատակել է «միսսա» անվամբ<sup>264</sup>։

ե. *Տարուլագիուս*՝ հարկը գանձվում էր շուկաներում վաճառատնության ունենալու համար։ Սա բավական կարևոր տուրք էր, քանի որ այն հատուկ առանձնացվել է այն հարկատեսակներից, որոնց գանձման իրավունքը Կիլիկիայի 10 բնակավայրերում Լևոն Ա-ը 1214 թ. շնորհել էր Վյուրընկալներին<sup>265</sup>։

զ. *Էրզագիոն* գանձվում էր Կիլիկիայում օտարազգի պանդոկապաններից ու գինեվաճառներից։

է. *Յնկան* օտարազգի վաճառականը վճարում էր Կիլիկիայի թագավորական ռատիկանությանը՝ իր գողացված ապրանքը վերադարձնելու համար։ Այն կազմում էր այդ ապրանքի գնի 3 %-ը, որի վճարումից ևս 1288 թ. ջննդագիներն ազատվել էին. «Եւ ճընվիզի իրք որ գողընվի նայ զինչ ազգ որ ու լինի գողն ու գտվի իրքն նայ նրեբակն չառնուն յիրմնցէ»<sup>266</sup>։

Ս. Բռնագյանն իրավացիորեն նկատել է, որ հայկական սկզբնաղբյուրները գրեթե ոչինչ չեն հաղորդում հարկերի և տուրքերի մասին։ Թերևս բացառություն է միայն Սմբատ Մպարապետի «Դատաստանագիրքը», որտեղ տեղ են գտել մի քանի հարկատեսակ, սակայն վերը թվարկյալ որևէ հարկի հետ դրանց նույնականացումը հստակ չէ<sup>267</sup>։

Այսպիսով, հարկերի նման բազմազանությունը և դրանց գանձմամբ զբաղվող պետական գործակալություններն ու վարչությունները, որոնք տեղակայվել էին նավահանգիստներում և սահմանա-

<sup>260</sup> Նույն տեղում, էջ 110։

<sup>261</sup> Նույն տեղում, էջ 156, 160։

<sup>262</sup> Սարկեթ՝ ծագում է արաբերեն սարի բառից, որը նշանակում է կայմ (Նույն տեղում, էջ 156)։

<sup>263</sup> Նույն տեղում, էջ 156, 160։ Dulaurier E., նշվ. աշխ., էջ XCVII-XCIX։

<sup>264</sup> Pegolotti, p. 85.

<sup>265</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 124. Բռնագյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում, էջ 281։

<sup>266</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 156. Բռնագյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում, էջ 281-282։

<sup>267</sup> Смбат Спарамет, Судебник, с. 126-127. Բռնագյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում, էջ 282-283։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ  
ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

3.1 Հայ վաճառականությունը

Միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի հայ վաճառականության գործունեության ուսումնասիրության սկզբնաղբյուրային հենքը, որքան էլ որ տարօրինակ է, խիստ սահմանափակ է: Բացի այն, որ հայ պատմիչները նշյալ խնդրին առնչվող վկայություններ չեն թողել, հայազգի վաճառականները չափազանց աղբյուրիկ են ներկայացված նաև եվրոպական սկզբնաղբյուրներում: Այսպես, 1274, 1277 և 1279 թթ. Այասում կազմված ջննդական նոտաբուկան հարյուրավոր գործերից առանձնանում են ընդամենը նրկու հայեր՝ Այասի բնակիչներ Մարտինը և Հովհաննեսը<sup>1</sup>: Նույն պատկերն է նաև Կիպրոսում ձևակերպված նոտարական հազարավոր փաստաթղթերում, որոնցից ընդամենը մեկն է հստակ վկայություններ պարունակում հայ վաճառականների մասին: Այսպես, 1300 թ. - մարտի 13-ին Ֆամագուստայում կնքված գործարքի համաձայն՝ Սիկիլիայի Մեսինա քաղաքից ժամանած վաճառական Պեդրո Վիզալին իբրև «անհատույց» ձևակերպված 1555 հ. ն. դ. -ի ուղիղ փոխառություն էր սովել Կիլիկյան Հայաստանի բնակիչներ Սիրոն (Սիրոն<sup>2</sup>, Sironus), Կարեն (Carenus) և Մեգալ (Megal) անուններով հայ առևտրականներին, որոնք պարտքը վերադարձնելու էին իրենց հայրենիքում<sup>2</sup>: Արժեքավոր տեղեկություններ են հաղորդում 1268 և 1297 թթ. Կիլիկիայի ափերին ջննդագիների ու վննտիկցիների ծովահենային նրկու գործողություններին վերաբերող իրավական գործերը, որոնցով պետք է հատուցվին տուժողների կրած վնասները: Առաջին փաստաթղթում հիշատակված են Հնթում Ա-ի (1226-1269)

<sup>1</sup> Balleto L., Notai genovesi in Oltremare, B. N 38.

<sup>2</sup> Desimoni C., Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 47.

յին անցակետերում վկայում են Կիլիկիայի իշխանությունների իրականացրած արդյունավետ հարկահանության մասին: Հայոց արքաների սահմանած ցածր հարկերը գրավիչ պայմաններ էին ստեղծում օտարազգի վաճառականների համար: Եվրոպացի վաճառականներին շատ ավելի ձեռնադր էր Թավրիզից Եվրոպա տեղափոխվելիք ապրանքներն անցկացնել Այասով, քանի որ Տրապիզոնում և Կոստանդնուպոլսում նրանք ստիպված էին վճարել շատ ավելի բարձր տարանցիկ մաքսատուրքեր:

կողմից նշանակված հայ առևտրական ներկայացուցիչներ: Հաջորդը վերաբերում է Այասի շուկայի ավերումից տուժած անձանց պատճառված վնասների հատուցմանը, որտեղ ևս գրանցված են մի քանի հայ վաճառականներ<sup>3</sup>:

Հայ վաճառականների մասին հիշատակությունների նման սակավությունը բացատրելու համար նախ փորձենք ուրվագծել Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական կապերում ձևավորված այն ոլորտները, որոնցում պետք է որ հայերը հատկապես ներգրավված լինեին: Ամենայն հավանականությամբ նրանց համար առաջնային նշանակություն է ունեցել ցամաքային, այն է՝ հիմնականում Այաս-Թավրիզ մայրուղով ընթացող առևտուրը, որը ներառում էր բուն Հայաստանի խոշոր քաղաքները: Գր. Միքայելյանը նկատել է, որ սնվջուկների կողմից գրեթե ամբողջ Առաջավոր Ասիայի գրավումը, ինչպես նաև խաչակրաց արշավանքները ծանր հարված հասցրեցին Անիով, Կարսով և հայկական խոշոր այլ քաղաքներով անցնող կարևոր ճանապարհներին, որոնց միջոցով ապրանքները տեղափոխվում էին Տրապիզոն, ապա՝ Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից էլ՝ Եվրոպա<sup>4</sup>: Բաղդադի գրավումից հետո առևտրական ճանապարհների ցանցը տեղաշարժվեց դեպի հյուսիս, որի ողնաշարը փաստորեն Թավրիզից Այաս ձգվող մայրուղին էր: Այս քարավանային ճանապարհի հիմնական կայանները Խոյ, Նախիջևան, Կարին, Երզնկա, Սեբաստիա և հայկական շատ այլ քաղաքներն էին: Ուստի բավական նրկարատև ճգնաժամի պայմաններում գտնվող հայ վաճառականությունը պետք է որ արագորեն ներգրավվեր այդ ճանապարհով տարվող առևտրում: Անշուշտ, այստեղ առանցքային դերակատարում պետք է ստանձնեին նաև Կիլիկիայի հայ առևտրականները: Ուշագրավ է, որ մեր կողմից հետազոտված իտալական նոտարական փաստաթղթերում ձևակերպված գրեթե բոլոր

<sup>3</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Aménie, p. 170-175. De Mas Latrie L., Histoire de l'île de Chypre sous le règne des princes de la maison de Lusignan, p. 74.

<sup>4</sup> Микаелян Г., նշլ. աշխ., էջ 189:

գործարքները վերաբերում են ծովային առևտրին: Դրանցում հանդիպում են նվրոպացիների մասնակցությամբ իրականացված միայն ցամաքային մի քանի ուղևորություններ դեպի Սեբաստիա և Թավրիզ<sup>5</sup>: Շատ հավանական է, որ Կիլիկիայում իտալացիներին Թավրիզից ապրանքների մատակարարման մեջ բավական մեծ է եղել նաև հայ վաճառականների դերակատարությունը:

Հայ վաճառականներն ու նավատերերը լայն հնարավորություններ ունեին նաև միջնորդական դեր կատարելու նվրոպացիների և մավրներին առևտրական շփումներում: Այս առումով բացառիկ վիճակություններ է պարբյունակում 1285 թ. հայ-մավրքյան խաղաղության պայմանագիրը, որտեղ, ի պատասխան Լևոն Բ-ի՝ Կիլիկյան Հայաստանում մահմեդական վաճառականների համար նրաշխատվորած ապահովության՝ եգիպտական կողմը պարտավորվում էր. «Եթե հայ վաճառական մը տակալին բանտ կը մնայ՝ ազատ պիտի արձակուի, և անոր պիտի վերադարձուի ինչ ապրանքը որ մնացած է: Երկու կողմէն ալ, այն վաճառականները որ կը ճամբորդեն իրենց առևտրի համար՝ ոչ մէկ նեղութիւն չպիտի կրեն. անոնց դէմ ոչ մէկ հարստահարութիւն չպիտի լինի, ոչ մէկ կողմի համար (ոստիկաններու) ուղեկցութեան տուրքը չպիտի ամուլցուի և անոնց մասին խղճմտօրէն պիտի յարգուին իրաւանց և արդարութեան օրէնքները»<sup>6</sup>:

Իսկ ովքե՞ր կարող էին լինել Կիլիկիայի հայ վաճառականների գլխավոր գործընկերները միջազգային առևտրում: Դժվար չէ կռահել, որ նրանք առաջին հերթին պետք է ձգտեին առևտրական կապեր գարգացնել բուն Հայաստանի մեծ քաղաքների հայության հետ, ինչը հավաստող սկզբնաղբյուրներ, սակայն, չեն պահպանվել:

<sup>5</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A 31: Polonio V., նշլ. աշխ., N 401, 404, էջ 515:

<sup>6</sup> Բակուրյան, Դա ճագիր խաղաղութեան, էջ 75: Սուրբուսյան Ա., նշլ. աշխ., էջ 220-221: Stewart A. D., The Armenian Kingdom and the Mamluks. War and Diplomacy during the Reigns of Hef'um II (1289-1307). Leyden, 2001, p. 57-58.

Ի դեպ, վկայություններ կան, որ Թավրիզում նույնպես գործել են հայ վաճառականներ<sup>7</sup>:

Հայտնի է նաև, որ XIII-XIV դդ. արևելամիջերկրածովյան և սևծովյան բազմաթիվ պետություններն ու քաղաքներն ունեին հայկական մեծաքանակ բնակչություն: Մասնավորապես հայկական խոշոր համայնքներ էին հաստատվել Ղրիմում, Տրապիզոնի կայսրությունում, Բյուզանդիայում, Կիպրոսում և Կրետեում<sup>8</sup>: Ամենայն հավանականությամբ, կիլիկեցիներն առևտրական աշխույժ կապերի մեջ են եղել նաև նշված երկրների հայ վաճառականության հետ: Ավնիին, Պերայում և Կաֆայում գրառված ջննովական նոտարական մի շարք գործերում հիշատակված են Այասի բնակիչներ<sup>9</sup>: Նշանավոր բյուզանդագետ Հ. Բարթիկյանը նշում է, որ Կրետեում վենետիկեցիների տիրապետության ժամանակաշրջանում (1207-1669) հայերի հոսքն այնտեղ չի դադարել: Ընդ որում, ըստ պատմաբանի՝ նրանք, ամենայն հավանականությամբ, կիլիկեցի հայերն են եղել, որոնք կղզի էին թափանցում առավելապես վենետիկյան առևտրական նավերով, քանի որ վենետիկից Կիլիկյան Հայաստան իրականացվող կանոնավոր նավագնացության ուղին անցնում էր Կրետեով<sup>10</sup>: Նկատենք, որ Ղրիմի և Կիպրոսի հայ առևտրականները բավական հաճախ հանդես էին գալիս որպես՝ այսպես կոչված «նատուրալիզացված» վենետիկեցիներ կամ ջննովացիներ: «Նատուրա-

լիզացիան» եվրոպացի և որևէ երկրի տնտեսական վաճառականական բնակչության փոխառնակում համագործակցության օրինակներից է: Տնտեսիկները, գործելով որպես վենետիկցի կամ ջննովացի, օգտվում էին առևտրական որոշակի արտոնություններից, իսկ իտալացիներն այդ կերպ մեծացնում էին իրենց վաճառականական անձնակազմն անդրծովյան երկրներում<sup>11</sup>: Կաֆան, Թանան և ընդհանրապես ամբողջ Ղրիմը Ոսկե Հորդայի տիրապետության տակ էին, իսկ Կիպրոսը խաչակրաց թագավորություն էր, ուստի դրանցում յուրաքանչյուր ազգի ներկայացուցչի ձեռնտու էր օգտվել «նատուրալիզացիայից»՝ իտալացիներին շնորհված արտոնություններն ունենալու համար: Մինչդեռ, Կիլիկյան Հայաստանում հայ վաճառականության համար այն ուղղակի իմաստազրկվում էր, քանզի սեփական երկրում նրանք շատ ավելի պաշտպանված և արտոնյալ կարգավիճակ ունեին, քան որևէ այլ ազգի ներկայացուցիչ: Միաժամանակ հարց է ծագում՝ իտալական նոտարական գործերում հայերի մասին հիշատակությունների գրեթե բացակայությունն արդյոք ենթադրո՞ւմ է, որ նրանք և եվրոպացի առևտրականներն այդքան հազվադեպ են համագործակցել: Կարելի է միայն կարծել, որ երկու կողմերն էլ խուսափել են հավելյալ ծախսերից և միմյանց հետ գործարքներ կնքելիս չեն դիմել նոտարների ծառայությանը, քանի որ հակառակ պարագայում մասնավորապես ջննովացիներն ու վենետիկեցիները ստիպված կլինեին հարկեր վճարել Կիլիկյան Հայաստանում հաստատված իրենց հյուպատոսին կամ պայլին: Միևնույն ժամանակ, 1291-1344 թթ. ընթացքում Պապության իրականացրած արգելքների քաղաքականությունն իր հերթին կարող էր հայ և եվրոպացի վաճառականների փոխգործակցության (Եգիպտոսի սուլթանության հետ առևտրական կապերի պարագայում) քողարկման պատճառ լինել:

Այսպիսով, թեև միջազգային առևտրում Կիլիկիայի հայ վաճա-

<sup>7</sup> Bratianu G., Recherches sur le commerce Génois dans la mer Noire du XIII<sup>me</sup> siècle, Paris, 1929, p. 184.

<sup>8</sup> Բարթիկյան Հ., Նունական միջնադարյան արևելամիջերկրածովյան փաստաթղթեր Բյուզանդական կայսրության տարածքում հայոց ներկայության մասին (XI-XIV դդ.), էջ 127-170: Բախրյան, Կիպրոս կղզի, Սիկոսիա, 1903, էջ 51: Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 296. Ближнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 145-151. Donabedian P., Gli armeni nella Crimea Genovese (XIII-XV secolo) // Roma-Armenia, Roma, 1999, p. 189.

<sup>9</sup> Bratianu G., Actes des notaries Génois de Pera et de Caffa de la fin du treizième siècle (1281-1290), Bucarest, 1927, p. 90, 173, 244, 331. Микаелян Г., նշվ. աշխ., էջ 395:

<sup>10</sup> Բարթիկյան Հ., Նյութեր Կրետեի հայկական գաղութի վերաբերյալ, էջ 493, 497:

<sup>11</sup> Donabedian P., նշվ. աշխ., էջ 189: Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 296-298. Ближнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 145-151.

ռականների գործունեությանը վերաբերող սկզբնաղբյուրները սակավաթիվ են, սակայն եղած փաստերը բավական համոզիչ վկայում են նրանց կարևոր դերակատարության մասին: Նրանց գործունեության հիմնական ոլորտները մի կողմից Այաս-Թավրիզ մայրուղով և մյուս կողմից Եգիպտոսի առլթանության տիրույթների հետ տարվող առևտրական շփումներն են եղել:

### 3.2 Օտարագրի վաճառականությունը

XIII-XIV դդ. միջագային առևտրի զարգացմանը զուգընթաց, կիլիկյան քաղաքներում արագորեն մեծանում էր վաճառականական բնակչության թվաքանակը և փոխվում էր ազգային ու սոցիալական կազմը: Բնակչության այդ խավին «վաճառականություն» անվանում ենք պայմանականորեն, քանի որ դրա մեջ ընդգրկված էին թե՛ արևեստավարժ վաճառականները, և թե՛ տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, որոնք ևս հաճախ զբաղվում էին առևտրով:

Կիլիկյան Հայաստանում հաստատված օտարագրի վաճառականության պատմության ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրներն Այասում և Կիպրոսում, իսկ որոշ դեպքերում էլ նվրդական քաղաքներում գրառված նոտարական գործերն են: Այդ փաստաթղթերն ընդգրկում են Կիլիկյան Հայաստանում միջագային առևտրի բուռն զարգացման և դրա հետ մեկտեղ այնտեղ օտարներկրյա վաճառականական բնակչության առավել արտահայտված ներկայության, այն է՝ 1270-ական թթ. սկզբից մինչև XIV դ. 30-ական թվականներն ընկած ժամանակամիջոցը: Ցավոք, թե՛ ժամանակի հայ պատմիչների գործերում, և թե՛ հայկական այլ սկզբնաղբյուրներում Կիլիկյան Հայաստանում մոտ մեկ և կես դարի ընթացքում առևտրական աշխույժ գործունեություն ծավալված օտարներկրյա վաճառականների մասին հիշատակությունները գրեթե բացակայում են: Նույնիսկ Սմբատ Սաբարապետն իր «Դատաստանագրքում» որևէ կերպ չի անդրադարձել Կիլիկիայում հաստատված մե-

ծաբանակ օտարագրի համայնքներին: Մինչդեռ, ըստ նվրդական սկզբնաղբյուրների, ինչպես նաև դրանց հիման վրա ստեղծված հիմնարար աշխատությունների՝ Կիլիկյան Հայաստանում հանգրվանած նվրդական վաճառականական գաղութներն ամենակազմակերպվածներից էին ամբողջ Մերձավոր Արևելքում, միջերկրածովյան ու սևծովյան տարածաշրջաններում<sup>12</sup>:

Խնդրի հետազոտությունը հարկ ենք համարում սկսել նվրդացի վաճառականներից: Ընդ որում, դրանց թվին պետք է դասել ոչ միայն իտալացի, ֆրանսիացի, իսպանացի և նվրդական այլ պետությունների ու քաղաքների հպատակներին, այլև խաչակրաց իշխանություններից Կիլիկյան Հայաստան թափանցած «լատին» բնակչությանն ու հոգևոր-ասպետական միաբանությունների անդամներին:

Արդեն XII դ. առաջին կեսին խաչակիրների տիրապետության տակ գտնվող բոլոր մեծ քաղաքներում հաստատվել էր նվրդացի վաճառականական բավական ստվար բնակչություն<sup>13</sup>: XIII-XIV դդ. իտալական վաճառականական գաղութներ էին ձևավորվել ոչ միայն արևելամիջերկրածովյան ու սևծովյան նավահանգիստներում, այլև վերջիններիս միջև ցամաքային կապ ապահովող Փոքր Ասիայի, Հայաստանի և Իրանի շատ քաղաքներում: Մասնավորապես վենետիկցիներն ու ջննովացիները հաստատվել էին Սմբատ-

<sup>12</sup> Heyd W., նշլ. աշխ., հ. II, էջ 80-92: Otten-Froux C., La Cilicie arménienne dans le réseau commercial pisan en Méditerranée orientale, p. 1-13. Racine P., Marchands placentins a l'Aïas a la fin du XIII<sup>e</sup> siècle, p. 195-205. Նույնի՝ Les debuts des consulats italiens outre-mer // Etat et colonisation au moyen âge et à la Renaissance, sous la direction de Michel Balard, Lyon, 1989, p. 273. Velle S., նշլ. աշխ., էջ 90-91: Pistorino G., Da Genova alla Cina nel tempo del Gran Khan // Genovesi d'Oriente, a cura di Pistorino G., Genova, 1990, p. 195, 199, 210. Balard M., L'emigrazione monferrino-piemontese in Oriente (sec. XII-XIV), p. 252. Bliznjuk S., Genovesi e Piemontesi a Cipro dal XIII all'inizio del XV secolo // Atti del congresso internazionale "Dai feudi Monferrine e dal Piemonte ai nuove oltre gli oceani", Alessandria, 1993, p. 309-310.

<sup>13</sup> Луцаццо Дж., նշլ. աշխ., էջ 243-245: Abulafia D., Gli italiani fuori d'Italia // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, X, p. 272-275.

տիայում, Երզնկայում, Կարսում, Նախիջևանում, Թալիզում և այլ քաղաքներում<sup>14</sup>:

Արևելքում առևտրական գործունեություն ծավալած նվրոպացիներին կարելի է բաժանել երկու խմբի. առաջինում ընդգրկվում են այն վաճառականները, որոնք արևմտանվրոպական քաղաքների հիմնական բնակիչներ էին և օտար նրկրներում հաստատված իրենց առևտրականներում (ֆակտորիա) հանգրվանում էին համեմատաբար կարճ ժամանակով: Սակայն նվրոպացի վաճառականության մեջ կային նաև հատուկ իրավական կարգավիճակ ունեցող անձանց խմբեր, որոնք անվանվում էին habitatores և burgenses (habitor, burgensis, burgense): Չնայած բազմաթիվ ուսումնասիրողների տված ձևակերպումներին՝ այս երկու ինստիտուտների տարբերությունները դեռևս վերջնականապես չեն սահմանվել: Այդուհանդերձ, փորձենք ներկայացնել դրանցից մի քանիսը: Այսպես, Ֆ. Տիրինի տնտեսական համաձայն՝ burgenses-ն իրենց հանգրվանած պետություններում ձգտում էին ստանալ քաղաքացիություն, ինչը նրանց հնարավորություն էր ընձեռելու տեղացի բնակիչների հետ առևտրական հավասար արտոնություններ ունենալ: Սակայն Մ. Բալարը habitatores և burgenses խմբերի միջև սկզբունքային տարբերություն չի տեսնում և գտնում է, որ դրանցից որևէ մեկին պատկանելը չէր կարող ազդել նրանց առևտրական գործերի վրա: Ս. Կարպովը, հետազոտելով հարավսևծովյան քաղաքներում հաստատված իտալական վաճառականական բնակչության կարգավիճակը, եզրակացնում է, որ habitatores համարվել են այն անձինք, որոնք պարզապես մշտական բնակություն էին հաստատում այս կամ այն վայրում, մինչդեռ burgenses տերմինն առավելապես արտահայտել է իրավական որոշակի կարգավիճակ: Համադրելով այս բոլոր տնտեսականները՝ Ս. Բլիզնյուկը նշյալ հասկացությունները փորձել է սահ-

<sup>14</sup> Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 66: Свѣт Я., նշվ. աշխ., էջ 53-55: Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 59. Abulafia D., Gli italiani fuori d'Italia, p. 266-275. Canale M. G., նշվ. աշխ., հ. 2, էջ 458: Petech L., Les marchands italiens dans l'Empire Mongol // Journal Asiatique, T. CCL, N 4, Paris 1962, էջ 552:

մանել կիպրոսի թագավորության օրինակով, ինչը կարծում ենք միանգամայն կիրառելի է նաև կիլիկյան Հայաստանում հաստատված նվրոպացի վաճառականական բնակչության պարագայում: Այսպես, burgenses-ը կիպրոսի թագավորությունում բնակություն հաստատած անձինք էին, որոնք թեև ունեին օտար քաղաքացիություն, սակայն նրանց անվտանգությունն ապահովվում էր հյուրընկալ պետության օրենքներով, ինչի համար էլ նրանք ճանաչում էին կիպրոսական արքայի գերիշխանությունը: Habitor տերմինն ավելի լայն խմատ է ունեցել և սովորաբար կարող էր տարածվել յուրաքանչյուր քաղաքագլխի վերաբնակչի վրա, որը կիպրոսի արքայի հպատակ չի համարվել: Այդուհանդերձ, այդ երկու խմբերի ներկայացուցիչներից շատերը կղզում մշտական բնակություն էին հաստատում<sup>15</sup>: Թե՛ կիպրոսում, և թե՛ կիլիկյան Հայաստանում գրառված իտալական առևտրական գործերում որպես burgensis ներկայացած անձինք մշտապես ընդգծել են իրենց «ազգությունը» (վենետիկցի, ջենովացի և այլն), ինչը կարող է ենթադրել, որ նրանք ունեին ներքաղաքացիությունը բնորոշ կարգավիճակ: Ամենայն հավանականությամբ, դա ներարվորություն էր ընձեռում կրկնակի պաշտպանության՝ մի կողմից իրենց հայրենի նվրոպական պետության, իսկ մյուս կողմից՝ հյուրընկալ երկրի<sup>16</sup>:

Արդեն XIII դ. սկզբից կիլիկիայի հայկական պետությունում ակնհայտ ձևավորվել ջենովական վաճառականական բնակչություն: 1201 թ. մարտին Լևոն Ա-ն արտոնագիր է շնորհում *Ջենովայի Հանրապետության* դեսպան Օջերիո դե Պալոյին, որով կիլիկյան Հայաստան ժամանած ջենովացիներին թույլ էր տրվում ազատ և ապահով առևտրական գործունեությամբ զբաղվել թագավորության ամբողջ տարածքում: Միաժամանակ, նրանք կարող էին բնակություն հաս-

<sup>15</sup> Бл изнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 131-141. Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 271-272.

<sup>16</sup> Bondi Sebellio A., նշվ. աշխ., հ. 1, N 72, 75, 77, 78, 84, 88, 99: Бл изнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 141.

տատնի Սիս, Մամնասիա և Տարսոն քաղաքներում, որոնցից յուրաքանչյուրում նրանց հատկացվում էին տարածքներ՝ եկեղեցիների, տների, հյուրանոցների և դատարանի կառուցման համար: Պայմանագրում կանոնակարգվում էին նաև դատական գործերի հետ կապված խնդիրները: 1215 թ. Լևոն Ա-ը վերահաստատում է նախորդ պայմանագիրը՝ ջննդակցիներին հնարավորություն ընձեռնելով փողոց ունենալ Տարսոն քաղաքում: Իրենց թաղամասերում նորաբնակները կարող էին կառուցել բաղնիքներ, խանութներ, ինչպես նաև ունենալ պարտեզներ, այգիներ և այլն<sup>17</sup>: Վ. Լանգլուան իրավացիորեն նկատել է, որ ջննդական համայնքը Կիլիկյան Հայաստանում մեծ քանակությամբ շինություններ է ունեցել և նույնիսկ իր օրերում (XIX դ.) դեռևս պահպանվել էին կառույցներ, որոնց տեղի բնակիչներն անվանում էին «ջննդական»<sup>18</sup>:

1256-1258 թթ. ջննդավա-վննմտիկյան առաջին պատերազմում կրած անհաջողությունից հետո Ջննդական ստիպված էր Արևելյան Միջերկրականում իր գլխավոր հենակետն Աքքայից տեղափոխել Տյուրոս և ավելի զարգացնել իր առևտրական գործունեությունը Կիպրոսում ու Կիլիկյան Հայաստանում<sup>19</sup>: Դրա շնորհիվ հիշյալ թագավորություններում ջննդական վաճառականության թիվն սկսում է նկատելիորեն աճել, ինչը ցայտուն արտահայտված է թե՛ Այսաի, և թե՛ Ֆամագուստայի նոտարական գործերում: Ավելին, 1270-ական թթ. սկզբներից Կիլիկյան Հայաստանում ջննդական հյուպատոսությունն սկսել էր ընդգծված ինքնուրույնություն ձևաբերել գերակա համարվող Տյուրոսից: Ահա թե ինչու, Կիլիկիայի ջննդական հյուպատոսների մասին առաջին հիշատակությունները վերաբերում

են հենց այդ ժամանակամիջոցին<sup>20</sup>: Ի դեպ, Ֆամագուստայում ջննդական հյուպատոսի մասին ամենահին վկայությունը վերաբերում է 1277 թ.<sup>21</sup>: 1288 թ. դեկտեմբերի 23-ին Լևոն Բ-ի և Ջննդակի Հանրապետության դեսպան Բենեդեկտոս Չաքարիայի միջև կրնրվում է առևտրական ծանրակշիռ պայմանագիր, որը բազմակողմանի արտոնություններ էր խոստանում Կիլիկյան Հայաստան այցելող առավել ևս այնտեղ բնակվելի ցանկացող ջննդական հպատակներին: Այս պայմանագրում սահմանված հետևյալ կետը վկայում է Հայկական Կիլիկիայում ջննդացիների բացառիկ արտոնյալ կարգավիճակի մասին. «Եւ վանց ճընուվեզ վաճըռկներոյն որ շլինին ճանչած ճընուվեզ ճընուվիզի որդի, նայ գունցն իր աղեկ մարդկարն, այնէ կեցցութիւն որ ճընուվեզ լինի ու ճընուվիզի որդի. ըւ յըդարկէ զիր մարդն ու զփայտն ի բաժտունն, նայ մենակ խալըսնն զինք, ու գրեն ի մեր տիւանն զգաւնցին անունն ու զվկայիցն»<sup>22</sup>: Այսինքն, եթե ջննդակցի ներկայացած վաճառականի այդպիսին լինելը կասկածի տակ դրվեր, ապա ջննդական հյուպատոսն իր մարդկանց հետ պետք է բններ և հաստատեր տվյալ անձի ծագումը և տեղյակ պահեր հայկական իշխանություններին:

Այստեղ ջննդական հյուպատոսության դատարանը գտնվում էր «Լոջիա» անունը կրող շինությունում: Ուշագրավ է, որ իտալացի նոտարներն իրենց փաստաթղթերի մեծ մասը կնքել են հենց այդ շենքում<sup>23</sup>: Ղ. Ալիշանը «Լոջիան» նույնացրել է «ապարանք» բառի հետ<sup>24</sup>: Հավանաբար, հենց այս կառույցն էլ եղել է ջննդական համայնքային կենտրոնը, այն է՝ հյուպատոսի նստավայրը Կիլիկյան Հայաստանում: 1289 թ. Հնթում Բ-ը (1289-1306 թթ.) ընդհատումներով շնորհում է ջննդակցիներին տրված թվով չորրորդ վերջին ար-

<sup>17</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 105-109, 126-128. Lopez R. S., Storia delle colonie genovesi nel Mediterraneo, p. 150. Balletto L., Il commercio A meno-Italiano (secoli XIII-XV), p. 185.

<sup>18</sup> Langlois V., Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie, p. 74.

<sup>19</sup> Бл изнюк С., Торгово-экономические отношения Кипра с государствами Средиземноморья в 1192-1373 гг. // Византия. Средиземноморье. Славянский мир, М., 1991, с. 60.

<sup>20</sup> Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 83-84:

<sup>21</sup> Бл изнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 34.

<sup>22</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 156.

<sup>23</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, p. 174, 398. Racine P., L'Asie dans la seconde moitié du XIIIe siècle, p. 187.

<sup>24</sup> Ալիշան Ղ., Միտումն, էջ 363:

տոնագիրը: Մեղմ բովանդակությամբ այս պայմանագրի գլխավոր կետերից մեկը վերաբերում էր ջննովական համայնքին ևս մեկ իջևանատուն տրամադրելուն: Այն բացվելու էր դեռևս 1270-ական թթ. Կիլիկյան Հայաստանում բնակություն հաստատած և առևտրական ակտիվ գործունեություն ծավալած ջննովացի Գվիլելմո Սորենիաբրկուսի՝ Այասում գտնվող անձնական տանը<sup>25</sup>: Կիլիկյան քաղաքներում տուն-իջևանատների գործածությունը բավական ընդունված է եղել: Միայն 1274 թ. տվյալները վկայում են Այասում կառուցված ջննովական երեք իջևանատների մասին<sup>26</sup>:

Մյուս խոշոր շինություններից հիշատակության են արժանի նաև ապրանքային պահեստները, որոնք կարող էին լինել և՛ հյուպատոսության ենթակայության տակ, և՛ մասնավոր սեփականություն<sup>27</sup>: Կիլիկյան Հայաստանում ջննովացիների կառուցած եկեղեցիներից առավել շատ հիշատակվում է Այասում գտնվող Սուրբ Լավրենտիոսը<sup>28</sup>: Ավինյոնում 1322 թ. գրառված պապական Կուրիայի փաստաթղթերի ժողովածուում առանձնանում է մի հրաման՝ ուղղված Կիլիկիայի Տարսոն քաղաքի ջննովական եկեղեցում հաստատված իրենց արքեպիսկոպոսին, որտեղ, Ս. Լավրենտիոսից բացի, հիշատակված է նաև Մամեստիայում գտնվող ևս մի կաթոլիկ եկեղեցի<sup>29</sup>:

Գրեթե անհնար է պարզել Կիլիկյան Հայաստանում հանգրվանած ջննովացիների ճշգրիտ թվաքանակը: Եվ եթե Այասում նոտարական գործակալների գրառած փաստաթղթերի շնորհիվ կարելի է ընդհանուր պատկերացում կազմել այդ քաղաքում գործունեություն ծավալած ջննովացիների մասին, ապա Տարսոնի, Մամեստիայի և

<sup>25</sup> Վ. Լանգլուան տալիս է fundum կամ fundicum անվանման վերլուծությունը՝ նույնացնելով այն իջևանատան հետ (**Langlois V.**, *Le Trésor des chartes d'Arménie*, p. 106, 162. **Balletto L.**, *Notai genovesi in Oltremare*, A. N 34, 79, 80, B. N 12, 19, 22, 30, 33, 55, 58, 59, 76, 116, 119).

<sup>26</sup> **Balletto L.**, *Notai genovesi in Oltremare*, A. N 47, 47a, 88, 91, 92.

<sup>27</sup> Նույն տեղում, B. N 68, 130, 131: **Desimoni C.**, *Actes passés à Famaguste de 1299 à 1301*, p. 84.

<sup>28</sup> **Balletto L.**, *Notai genovesi in Oltremare*, p. 198.

<sup>29</sup> **Jean XXII (1316-1334)**, *Lettres Communes*, p. 163.

Կիլիկյան այլ քաղաքների պարագայում թվային որոշակի տվյալներ ընդհանրապես հնարավոր չէ ստանալ: Ըստ հաշվումների՝ միայն երեք տարվա ընթացքում Այասում կազմված ջննովական նոտարական փաստաթղթերը պարունակում են 684<sup>30</sup> անձնանուն (1274 թ.՝ 340, 1277 թ.՝ 213 և 1279 թ.՝ 220): 684-ից 269-ի մեծ մասը թեև ունի արտահայտված իտալերեն հնչողությամբ անուններ, սակայն նրանց ծննդավայրը դժվար է որոշել: Բանն այն է, որ բացի այն, որ հաճախ անվանը կից, ոչ միայն չի հիշատակվում այն քաղաքը, որտեղից եկել է տվյալ անձը, այլև երբեմն բացակայում են նույնիսկ ազգանունները: Մնացյալ 415 անձանց գրեթե կեսը (49,1 %) թեև տվյալները չեն հիշատակել իրենց ծննդավայրը, սակայն մի շարք էինավոր փաստեր ցույց են տալիս, որ նրանք Ջննովայի և լիգուրական այլ քաղաքների ներկայացուցիչներն են եղել<sup>31</sup>: Այսպես, թե՛ Այասում, և թե՛ կիպրական քաղաքներում ջննովացի նոտարները պայմանագրերում մասնակիցների ծննդավայրն ընդգծել են միայն այն դեպքերում, երբ նրանք հանդես են եկել որպես վկաներ<sup>32</sup>: Չի բացառվում, որ ջննովացիներն Այասում հայրենակից նոտարների հնդիմակությանը կնքված գործարքներին կարող էին և մասնակցել առանց ներկայացնելու իրենց ծննդավայրը: Վերոնշյալ 415 անձանցից 102-ը ջննովական ազնվական ընտանիքների ներկայացուցիչներն են, որոնց անունները սխալված են Կիլիկյան Հայաստանին վերաբերող տարբեր սկզբնաղբյուրներում: Առավել շատ հանդիպում են Գրիմալդի, Տարտարո, դե Նիգրո, Դորիա, Լերկարի, Պանցանո, Գվիզուվո, Պիկամիլիո, Լոմելինի, Պինելլո, Տուրրո, Ռուբետու, Ուգո-

<sup>30</sup> Հարկ է նկատել, որ Ս. Կարավոլը, օգտագործելով բազմաթիվ սկզբնաղբյուրներ, դուրս է գրել XIII-XV դդ. Տրապիզոն այցելած ընդամենը 136 ջննովացու և լիգուրացու անուններ (**Карпов С.**, *Итальянские морские республики и Южное Причерноморье*, с. 262, 269).

<sup>31</sup> **Otten-Froux C.**, *L'Asie dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle*, p. 152. Նույնի՝ *La Cilicie arménienne dans le réseau commercial pisan en Méditerranée orientale*, p. 10. **Racine P.**, *L'Asie dans la seconde moitié du XIII<sup>e</sup> siècle*, p. 190.

<sup>32</sup> **Otten-Froux C.**, *L'Asie dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle*, p. 152. **Близнюк С.**, *Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре*, с. 126.

դիմարն, դն Մարի, դն Մուրտա, Յիկադա, Պելլավիչինո, Սպինուլա, Բնատանիո, Սրուարչիաֆիկո և այլ ընտանիքների անդամները<sup>33</sup>: Նոտարական ակտերում գրանցված է Հակոբոս Ռեքս անունով վաճառականը, որը չի վրիպվել նաև Ղ. Ալիշանի աչքից. «Այսս յիշնաբն ի ծանօթութեան՝ Յակոբ վաճառական փոխատու՝ (Rex) թագաւոր մականունանմալ, սուկական ոմն էր Գենուացի, յորոյ տոհմէ կան և այժմ համանուն սերունդք ի Գենուա քաղաքի»<sup>34</sup>: Անկասկած, Կիլիկյան Հայաստանում ջննովական համայնքի կառավարումը կենտրոնացած է եղել վերոնշյալ ազնվականների ձեռքում: Ընդ որում, շատ կարճ ժամանակամիջոցում գրառված նոտարական գործերում կարելի է հանդիպել մեկ ընտանիքը ներկայացնող 12 (Գվիզուլֆո), 11 (Լերկարի), 7 (Պանցանո), 5 (Պիկամիլիո, Տարտարո) և այլ քանակությամբ անձանց: Հայտնի է, որ հինգ տարբեր ընտանիքների ներկայացուցիչներ՝ Ջիակոմո Պելլավիչինոն, Գրեզորիո Օչելլոն, Ֆիլիպիո Տարտարոն, Բոնուսվասալիոն Լոմելինին ու Լեոնինուս դն Նիգրոն եղել են (համապատասխանաբար՝ 1270, 1273, 1274, 1277, 1279 թթ.) Ջննովայի հյուպատոսները Կիլիկյան Հայաստանում<sup>35</sup>: Ղ. Ալիշանը, հիմք ընդունելով 1288 թ. Լեոն Բ-ի կողմից ջննովացիներին տրված արտոնագիրը, նրանց թվին դատում է նաև վերոհիշյալ Բենեդետտո Զարարիային<sup>36</sup>: Ֆիլիպիո Տարտարոյի անվան կողքին նշված նրա տիտղոսը հուշում է, որ ջննովական հյուպատոսությունը 1274 թ. գտնվել է Այասում<sup>37</sup>: Այն, որ թվարկված բոլոր ընտանիքները ջննովական ծագում են ունեցել, ապացուցման կարիք

չունի<sup>38</sup>: Այդուհանդերձ, անձնանունների հետ նրանց հայրենիքը չի նշատակվում: Ս. Բլիզնյուկը փաստում է, որ արդեն XIV դ. ջննովացիները խիստ հազվադեպ էին նշում իրենց հայրենի քաղաքը, սակայն ևս ազնվականները, որոնք, հետազոտողի կարծիքով՝ ամենևին կարիք չունեին ընդգծելու ծագումով Ջննովայից լինելը<sup>39</sup>: Այս հասցամանքը մեկ անգամ ևս թույլ է տալիս պնդելու, որ Այասում նոտարների կազմած փաստաթղթերում գրանցված իտալական ծագմամբ հարյուրավոր ներկայացուցիչների գերակշիռ մեծամասնությունը ծագումով եղել է կամ Ջննովայից, կամ էլ Լիգուրիայից:

Հաջորդ կարևոր խնդիրն է պարզել, թե ջննովացիները որքան ժամանակով էին հանգրվանում Կիլիկյան քաղաքներում՝ հնարավորինս առանձնացնելով տևական բնակություն հաստատած անձանց: Մուրիակների մանրագնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանցից շատերին կարելի է հանդիպել ժամանակային բազմական մեծ տարբերությամբ (մի քանի ամսից մինչև մի քանի տարի) Կիլիկյան Հայաստանում կնքված տարբեր գործարքներում, ինչը վկայում է նրանց եթե ոչ մշտական, ապա նրկարատև բնակության մասին: 1277 թ. Այասում ձևակերպված նոտարական ակտերում գրանցված 213 անձնանունների (մեծ մասամբ՝ ջննովացիներ) 8,4 %-ը (18 անձինք) հանդիպում է նաև 1274 թ. փաստաթղթերում: Իսկ 1279 թ. անձնանունների շուրջ 29 %-ը (64 անձնանուն) նախապես հիշատակված է 1274 և 1277 թթ.<sup>40</sup>: Կրկին անդրադառնալով Ղ. Ալիշանի մեջբերած Հակոբոս Ռեքսին՝ նկատենք, որ Ջննովայից ժամանած այս առևտրականի անունն Այասում գրանցված է հինգ տարվա կտրվածքով, ընդ որում՝ տարբեր ամիսներին կնքված մե-

<sup>33</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, p. 185, 189, 192, 197, 199, 200, 383, 396, 401, 407, 420, 408, 411, 412, 413, 414, 416, 421. Նույնի՝ Nuovi documenti sui genovesi a Laiazzo, p. 43. Otten-Froux C., L'Als dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 152-153.

<sup>34</sup> Ալիշան Ղ., Միտումն, էջ 547:

<sup>35</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 14, 25, 34. B. N 16, 72, 80, 116. Otten-Froux C., L'Als dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 157.

<sup>36</sup> Ալիշան Ղ., Միտումն, էջ 362:

<sup>37</sup> ... Filipinum Tartaro, consulem et vicecomitem lanuensium Ayacii... Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 34.

<sup>38</sup> Canale M. G., նշվ. աշխ., հ. 2, էջ 670-683: Otten-Froux C., L'Als dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 153. Balletto L., Il commercio A meno-Italiano (secoli XIII-XV), p. 186. Свет Я., նշվ. աշխ., էջ 30:

<sup>39</sup> Бл изнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 126.

<sup>40</sup> Otten-Froux C., L'Als dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 152. Racine P., L'Als dans la seconde moitié du XIII<sup>e</sup> siècle, p. 190.

ծաքանակ գործարքներում<sup>41</sup>: Կարելի է փաստել, որ ջննովացի ազնվականներն Այասում ամիսներ և նույնիսկ տարիներ էին անցկացնում: Ընդամենը երեք տարվա նոտարական գործերում հաշվվում են Այասում կառուցված ավելի քան 40 տուն, որոնց մեծ մասում բնակվել կամ էլ ուղղակի սնվականատերեր են եղել հենց այդ ազնվականական ընտանիքների անդամները<sup>42</sup>: Անշուշտ, մասնագիտության բերումով, վաճառականներն իրենց ժամանակի մեծ մասն անցկացնում էին ճանապարհորդություններում: 1296-1310 թթ. կիպրական քաղաքներում գրառված ջննովական նոտարական գործերում գրանցված են շուրջ 4000 օտարերկրացի, որոնցից մոտ 2400-ը (60 %) իտալացիներ են<sup>43</sup>: Թեև դժվար է որոշել, թե նրանց որ մասն է ներգրավված եղել կիլիկյան քաղաքների հետ կատարվող առևտրում, սակայն այն, որ XIII դ. վերջին և XIV դ. առաջին կեսին կիլիկյան Հայաստանը կիպրոսի առևտրական ամենամեծ գործընկերն էր, կարող է հուշել, որ ոչ քիչ մասը<sup>44</sup>: Սա հաստատվում է Այասում և Ֆամագուստայում կազմված նոտարական սկզբնաղբյուրների զուգահեռ հետազոտությամբ<sup>45</sup>: Ուշագրավ է, որ XIII դ. վերջին և XIV դ. սկզբին կիպրոսից կիլիկիա ուղղված առևտրական ձեռնարկումների մասնակիցների մեջ հանդիպում են դեռևս 1270-ական թվականներին Այասի նոտարական գործերում հիշատակված ջնն-

ովացիները<sup>46</sup>: Արտահայտիչ է Բալիանո Գվիզուլֆոյի օրինակը, որի անունն առկա է Այասում 1277-1279 թթ. միմյանց հաջորդող տարեկան ամիսներին կնքված մի շարք գործարքներում: Ապա նա հայտնվում է նաև Ֆամագուստայում՝ արդեն 1296-1299 թթ. Լամբերտո դե Սամբուչետոյի գրառած փաստաթղթերում, որոնց մեծ մասն անցնում են կիլիկյան Հայաստանի հետ<sup>47</sup>: Նկատենք, որ ջննովացիներից շատերն ուղղակի եղել են կիլիկյան Հայաստանի մշտական բնակիչներ: Այդօրինակ հիշատակություններն առավել շատ հանդիպում են ոչ թեմ Այասում, այլ Ֆամագուստայում կազմված նոտարական ակտերում, ինչպես նաև Այասի, սակայն արդեն վենետիկի նոտարների գործերում: Այսպես, 1296 թ. դեկտեմբերի 27-ին Այասի habitator Նիկոլա դե Բալնոն իր կտակում ցանկություն էր հայտնել, որ եթե ինքը մահանար կիպրոսում, ապա իրեն հողին հանձնեին Ֆամագուստայի ջննովական Ս. Նիկոլա նկեղնու մոտ, իսկ Այասում մահանալու պարագայում՝ այդ քաղաքի ջննովական Ս. Լավրենտիոս նկեղնու մոտակայքում<sup>48</sup>: 1301 թ. մարտի 10-ին Ֆամագուստայի habitator ջննովացի Ջիովաննիի համար կազմվել էր կտակ, որտեղ նշված է, որ նա ապրել է նաև կիլիկյան Հայաստանում<sup>49</sup>: Ուղղիսն դե Բոնանիա անունով ևս մի վաճառական եղել է Տարսոն քաղաքի habitator<sup>50</sup>: 1301-1302 թթ. կիպրական քաղաքներում գրառված նոտարական գործերում բազմիցս հիշատակված են Այասի երկու ջննովացի habitator՝ մահուդի վաճառական Ստեֆանոն և Պեդրո Պապինսիսը<sup>51</sup>: Վենետիկցի նոտար Ֆելիչե դե Մերլիսի՝ Այասում 1317 թ. սեպտեմբերի 6-ին կազմած գործարքի մասնա-

<sup>41</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 70, 72, 73, 74. B. N 30, 40, 60.

<sup>42</sup> Domus Guisulfini de Guisulfo, domus qua habitat Conradus Picamilius, domus qua habitat Opecinus Tartaro, domus qua habitat Phlipona de Grimaldis...de Ayacium de A menia (Նույն տեղում, էջ 181-182, 403-405):

<sup>43</sup> Ближнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 126.

<sup>44</sup> Balard M., La place de Famagouste génoise dans le Royaume des Lusignan (1374-1464), p. 19.

<sup>45</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 3, 124, 142, p. 202. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., I N 22. II N 18, 55, 135. III N 4, 28. Polonio V., նշվ. աշխ., N 46, 56, 60, 67, 68, 139, 159, 188, 194, 370, 378: Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 7, 10, 16, 65, 80, 225, 228, 236. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 114, 146, 151, 172, 237.

<sup>46</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 26, 71, 85. Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 10, 49, 54, 58, 59, 60, 92, 130, 131, 132, 133, 134, 137, 138, 140, 141, 142, 152, 153.

<sup>47</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 51, 52, 86, 89, 90, 95, 104, 105, 106, 110, 111, 112, 116, 134, 135. Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 1, 3, 21, 101, 124, 125.

<sup>48</sup> Նույն տեղում, N 24:

<sup>49</sup> Polonio V., նշվ. աշխ., N 275:

<sup>50</sup> Pavoni R., Notai genovesi in Oltremare, B., N 13.

<sup>51</sup> Polonio V., նշվ. աշխ., N 185, 262, 401, 404: Pavoni R., Notai genovesi in Oltremare, B., N 217, 218, 219, 225, 226.

կից ջննովացի Ջիովաննի դե Նուլին ինչ որ ժամանակ եղել էր կիպրոսի *burgessius*, սակայն տվյալ ժամանակում՝ արդեն Այասի *habitor*<sup>52</sup>: 1327 թ. նոյեմբերի 15-ին կազմված մի փաստաթղթում հիշատակված է ջննովացի նավատեր Բալդո Սպինոլան, որն Այասի *habitor* էր<sup>53</sup>:

Ղ. Ալիշանն իտալական դիվաններից առանձնացրել է արժեքավոր մի շարք տեղեկություններ. «Գուշակի յասացելոցս՝ զի ոչ միայն բազում ազգաց լեզուք լսեին յԱյաս, այլ և խնամութիւնք և կենակցութիւնք լինէին Հայոց ընդ արևմտնայցո...»<sup>54</sup>: Եվ իրոք, սկզբնաղբյուրներում հանդիպում են հայ կանանց հետ ջննովացիների ամուսնության օրինակներ: Այսպես, 1274 թ. հունվարի 31-ին Այասում գրառված նոտարական գործից պարզ է դառնում, որ Յանուինո դե Դոմո անունով ջննովացին ամուսնացած է եղել Ալիս անունով հայուհու հետ: Այն, որ օժիտը տալու իրավական փաստաթղթի տեքստը գրվել է հայերեն, ոչ մի կասկած չի թողնում Ալիսի հայ լինելու վերաբերյալ<sup>55</sup>: Եվս մի օրինակում ջննովացի Գվիլելմո Լավորաբեմի կինը ոմն Աստեքսանան էր, որին Ղ. Ալիշանը ներկայացնում է հայկական Աշխեն կամ Աստեղանի անուններով: Հատկանշական է, որ 1279 թ. օգոստոսի 16-ին կազմվել է Գվիլելմոյի կտակը, որով կնոջը և որդուն ունեցվածքը կտակելուց բացի, նա ցանկացել էր, որ իր թաղման արարողությունները կատարվեն Այասի Ս. Լավրենտիոս եկեղեցում<sup>56</sup>: 1279 թ. մարտի 28-ի մի հանձնարարական-մուրհակում դե Մուրտա ջննովական ազնվականական տոհմից որպես ոմն Նիկոլոզոյի կին է հանդես եկել Ֆրանկա Դիզինան: Նույն օրվա օժիտի տրամադրմանը վերաբերող հաջորդ փաստաթղթում հիշատակված է Նիկոլոզոյի և Ֆրանկայի դուստր Ալասիան, որն ամուսնացած էր

<sup>52</sup> Bondi Sebellico A., նշվ. աշխ., հ. 1, N 83:

<sup>53</sup> Alishan L., L'A meno-Veneto, p. 197-198.

<sup>54</sup> Ալիշան Ղ., Միսուան, էջ 371:

<sup>55</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 14, 34, 34a, 60, 63, 65, 76, 84, 108. B. N 9, 25, 119, p. 384. Otten-Froux C., L'Als dans le demier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 148.

<sup>56</sup> Գվիլելմո Լավորաբեմը նույնպես Այասում սեփական տուն ուներ (Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 124. Ալիշան Ղ., Միսուան, էջ 371):

ջննովացի վաճառական Բենեդետտո Մալոչելոյի հետ<sup>57</sup>: 1279 թ. մարտի 31-ին Այասում ջննովացի Հակոբոս Պորկոյի և Կերասիա Կիլիկիացի անունով մի կնոջ միջև ստորագրվել էր արտամուսնական համաբնականության պայմանագիր<sup>58</sup>: Կերասիան խոստանում էր Պորկոյի հետ ապրել նրա տանը, բավարարվել իրեն տրվող սննդով, հագուստով ու կոշիկով և միաժամանակ լուծել տան հետ կապված կենցաղային զանազան խնդիրներ: Իր հերթին Հակոբոս Պորկոն պարտավորվում էր ապահովել նրա տարատեսակ կարիքները և վճարել 400 հ. ն. դ.<sup>59</sup>: Հակոբոս Պորկոյի անվանը կրկին հանդիպում ենք ավելի քան նրկու տասնամյակ անց՝ 1302 թ. օգոստոսի 8-ին, Ֆանագուստայում նրա համար կազմված կտակ-փաստաթղթում, որտեղ նա արդեն ներկայացված է որպես Կիպրոսի բնակիչ: Սակայն կտակում արձանագրված մի շարք փաստեր հուշում են, որ Պորկոն մինչ այդ բավական նրկար ժամանակ ապրել է Կիլիկյան Հայաստանում: Նախ նշվում է, որ Հակոբոսն արդեն ուներ օրինական կին՝ Ալիս անունով, որին նա կտակում էր Այասում գտնվող իր տունը: Ապա հիշատակված են այն անձինք, որոնց հանդեպ Պորկոն ուներ որոշակի պարտավորություններ. նրանց թվում հանդիպում են մի քանի ջննովացիներ, որոնք ևս Կիլիկյան Հայաստանի բնակիչներ էին<sup>60</sup>:

Բացառիկ տեղեկություն է պարունակում 1288 թ. ջննովացիներին շնորհված արտոնագիրը. «Եւ ճընովեզ, որ լինի յերկիրս բնակութեամբ իր կենալն, ու ստանայ հայրենիք, որ լինի ի կրնկան դեհաց կամ ի մեր թագաորութեննս տուրք, ու մեռնի անտիաթիկ ու անժառանգ, նայ իր ինչքն գարդ ի հայրեննստներոյն՝ դառնայ ի

<sup>57</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 102, 103.

<sup>58</sup> Լ. Բալլետտոն կարծում է, որ Կերասիան, ամենայն հավանականությամբ, հայ կամ հույն է եղել (Balletto L., Genovesi a Laiazzo: il caso di Cerasia Ciciliana (1279), p. 191, 193, 195):

<sup>59</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 108, 117. Epstein S. A., The Medieval Family: A Place of Refuge and Sorrow // Medieval Families: Perspectives on Marriage, Household, and Children, ed. Neel C., Toronto, 2004, p. 411-412.

<sup>60</sup> Pavoni R., Notai genovesi in Oltremare, B., N 281.

գումնին ձեռք, և հայրենիքն դառնայ ի պարոնությունն ի ձեռքն»<sup>61</sup>։ Այսինքն, եթե կիլիկյան Հայաստանում բնակություն հաստատած ջննովացին մահանար անժառանգ և անկտակ, ապա նրա ունեցվածքն անցնելու էր ջննովական հյուպատոսությանը, բացառությամբ այն մասի, որ նա ստացել էր իր կնոջից կամ էլ հայկական իշխանություններից, որոնք վերադարձվելու էին կիլիկյան պետությանը։ Անշուշտ, հողվածում նկատի է առնվել տեղացի կանանց հետ ամուսնության պարագան, այլապես նվրուպացի կնոջ դեպքում պայմանագրի վերոնշյալ կետը պարզապես ավելորդ կլիներ։ Այստեղ վաճառականների պատվերով ձևակերպված բազմաթիվ կտակ փաստաթղթերը կրկին հավաստում են կիլիկյան Հայաստանում մեծաքանակ ջննովացիների ներկայություն և նույնիսկ մշտական բնակության փաստը։ Հատկանշական է, որ բոլոր կտակարարները պատվիրել են, որ մահվան պարագայում իրենց հողին հանձնեն Ս. Լավրենտիոս եկեղեցուն կից գտնվող գերեզմանատանը<sup>62</sup>։

Սովորաբար, հետազոտողները ջննովական անդրծովյան համայնքների պատմության բնության շրջանակում ներառում են ինչպես Ջննովա քաղաքն ընդգրկող Լիգուրիայի, այնպես էլ վերջինիս սահմանակից Պիեմոնտ ներկայացված ժամանակաշրջանը<sup>63</sup>։ Այսպիսի 1274, 1277, 1279 թթ. նոտարական աղբյուրներից առանձնահատուկ են շուրջ 80 առևտրական, որոնց անձնանունների հետ նշված են իրենց հայրենի քաղաքները՝ Ռապալո, Նոլի, Սավոնա, Բիավարի, Վոլտրի, Պորտոֆինո, Ռեքո, Վենտիմիլիա, Վարացն, Սագոնա, Ալբարո, Կորոնատո, Արենցանո և այլն, որոնք գտնվում են Իտալիայում՝ Լիգուրական ծովի և Ջննովական ծոցի ա-

փնդի նրկայնքով<sup>64</sup>։ Լիգուրացիներն ակտիվորեն մասնակցել են նաև կիպրոս-կիլիկյան Հայաստան առևտրական կապերին<sup>65</sup>։ Նույն աղբյուրներում գրանցված են պիեմոնտական տարբեր քաղաքներից (Տորինո, Անդեգանո, Կաստելլո, Գավի և այլն) ժամանած մեկ առանյակից ավելի առևտրականներ<sup>66</sup>։ 1299 թ. ապրիլի 18-ին Ֆամագուստայում կազմված՝ օժիտին վերաբերող մի պայմանագրում նշված է, որ Պիեմոնտի Ալբա քաղաքից ժամանած Տիբալտո անունով վաճառականի կինը Ֆլանկա անունով մի հայուհի էր եղել։ Մ. Բալարդ, որն այդ պայմանագիրը ներառող նոտարական գործերի ժողովածուի խմբագիրն է եղել, լատիներեն բնօրինակում հայ կնոջը ներկայացնող «Flancha Armenia» արտահայտությունն իտալերեն անդամագրում թարգմանել է «Flancha, armena» այսինքն՝ «Ֆլանկա, հայ» ձևով<sup>67</sup>։ Կիպրոսի ջննովական այդ նույն նոտարական ժողովածուի փաստաթղթերում կիլիկյան Հայաստանը բացառապես հիշատակված է «Ermenia» ձևով<sup>68</sup>։ Ավելին, Ֆրանչեսկո Պեգոլոտտիի առևտրական ձեռնարկում ևս Հայկական թագավորությունը կրկին արտահայտված է ճիշտ նույն՝ «Ermenia» բառով<sup>69</sup>։ Չի բացառվում, որ վերոնշյալ նոտարական գործում ծագումով տվյալ ներկից լինելու պարագան ցույց տվող լատիներենի «de» նախդիրը բնօրինակ ձևագրում ջնջված է եղել, ինչը հատուկ է նմանօրինակ սկզբնաղբյուրներին։

*Վենետիկի Հանրապետության* դոժ Ընրիկո Դանդոլոյի (1192-1205) դեսպան Հակոբոս Բադուարիոն 1201 թ. դեկտեմբերին Լևոն

<sup>64</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 12, 15, 39, 44, 48, 62, 64, 66, 67, 68, 77, 89, 84, 91, 92, 93, 97. B. N 30, 34, 38, 39, 42, 46, 54, 58, 59, 63, 64, 66, 69, 71, 76, 79, 88, 108, 117, 121, 124, 128.

<sup>65</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, B., I N 22, 25. P. Polonio V., նշվ. աշխ., N 169, 179, 206, 220, 299, 332: Bondi Sebellio A., նշվ. աշխ., h. 1, N 83: Otten-Froux C., L'Als dans le demier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 153.

<sup>66</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 6, 13, 28, 38, 40, 45. B. N 57. Balard M., L'emigrazione monferrino-piemontese in Oriente (secc. XII-XV), p. 252. Velle S., նշվ. աշխ., էջ 79-116:

<sup>67</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 128.

<sup>68</sup> Նույն տեղում, N 2, 20, 22, 43, 47, 79, 88, 153:

<sup>69</sup> Pegolotti, p. 59.

<sup>61</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 158.

<sup>62</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 39. B. N 2, 3, 4, 25, 38, 45, 79, 124, 132, p. 384, 386, 388, 391. Otten-Froux C., L'Als dans le demier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 169.

<sup>63</sup> Balard M., L'emigrazione monferrino-piemontese in Oriente (secc. XII-XV), p. 249. Bliznjuk S., Genovesi e Piemontesi a Cipro dal XIII all'inizio del XV secolo, p. 307. Карпов С., Генуэзцы в городах Понта (XIII-XV вв.) // Византийские очерки, М., 1991, с. 143-144.

Ա-ից ստանում է առաջին արտոնագիրը: Վենետիկցի վաճառականներին հնարավորություն էր ընձեռվում առանց տարանցիկ մաքսավճարի առևտուր անել Հայոց թագավորության ամբողջ տարածքում՝ բացառությամբ Կիլիկիայից Ասորիք տանող Պորտուլա լեռնանցքը, որն անցնելիս նրանք պարտավոր էին վճարել այդ հարկատեսակը: Ի տարբերություն ջննտվացիների, որոնք հնարավորություն էին ստացել բնակություն հաստատելու Միս, Մամեստիա և Տարսոն քաղաքներում, վենետիկցիներին տարածքներ հատկացվել էին միայն Մամեստիայում, որտեղ նրանք կարող էին կառուցել իջևանատուն, տներ, եկեղեցի և այլ շինություններ: 1245 թ. մարտին Հեթում Ա-ը դոժ Հակոբոս Տիմարոյի (1229-1249) դեսպան Պեդրո Դանդուլոյին շնորհում է երկրորդ արտոնագիրը, որով վերահաստատվում էին նախորդում սահմանված պայմանները: Այստեղ առանձնանում է մի կետ, ըստ որի՝ Մամեստիայում մահացած վենետիկցու ունեցվածքը պետք է անցնի Կիլիկյան իշխանությունների պահպանությանը՝ մինչև տեղ հասնելը Արքայում նստող վենետիկյան պայլի նամակը, որով էլ պետք է լուծվեր հարստության ապագան: 1261 թ. նոյեմբերին Հեթում Ա-ը դոժ Ռանիների Ջենոյի (1252-1268) դեսպան Ջիովաննի Ջենոյին հանձնել է երրորդ արտոնագիրը, որով կրկին հաստատվում էին նախկինում երաշխավորված բոլոր պայմանները: Այս անգամ, բացի Մամեստիայից՝ վենետիկցիներին տարածքներ հատկացվում էին նաև մայրաքաղաք Միսում և Այասում<sup>70</sup>: Այդուհանդերձ, վերոնշյալ արտոնագրերում խոսք չկա Կիլիկյան Հայաստանում վենետիկյան պետական ներկայացուցչի, այն է՝ հյուպատոսի կամ պայլի գոյության մասին: Ավելին, նրեք պայմանագրերն էլ հստակորեն ակնարկում են, որ Կիլիկյան Հայաստանում հանգրվանած վենետիկցիները ենթարկվում էին Արքայում նստող վենետիկի պայլին:

<sup>70</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Aménie, p. 109-112, 143-146. Sopracasa A., նշվ. աշխ., էջ 20-46: Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 28-34: Сокоп ов Н., Торговые взаимоотношения Венеции и Киликийской Армении в XII-XIV вв. // Страны Средиземноморья в эпоху феодализма, Вып. 1, Горький, 1973, с. 10-13.

Մամլուքների կողմից 1268 թ. Անտիոքի գրավումից հետո այնտեղ հաստատված եվրոպական վաճառականական բնակչության մի մասը հանգրվանեց Կիպրոսում և Կիլիկյան Հայաստանում<sup>71</sup>: Պատահական չէ, որ Լևոն Բ-ի գահակալման անմիջապես սկզբից վենետիկի դոժ Լորենցո Տիմարոն (1268-1275) դեսպանություն էր ուղարկել Կիլիկիայի արքունիք՝ հնարավորինս շտապ առևտրական նոր արտոնագիր կնքելու ակնկալիքով: Հատուկ Կիլիկյան Հայաստանի համար վենետիկի պայլ նշանակվել է 1272 թ. հունվարին<sup>72</sup> վենետիկցի վաճառականներին Լևոն Բ-ի շնորհած արտոնագրով: Հայոց արքայի հրամանով նրանց համար Այասում նույնպես տարածքներ էին տրվում՝ եկեղեցու, տների և անհրաժեշտ այլ շինությունների կառուցման նպատակով<sup>73</sup>: Ի դեպ, 1270-1272 թվականների միջակայքում թվագրվող Լևոն Բ-ի՝ դոժին ուղղած նամակում նշված է, որ վենետիկյան համայնքային կենտրոնը հաստատվելու էր Այասում, որտեղ էլ պետք է լիներ պայլի նստավայրը: Ուշագրավ է, որ Կիլիկյան քաղաքներում ապրող վենետիկցիների մկրտության, ամուսնության, թաղման և եկեղեցական այլ արարողությունների հետ կապված պարտականությունները հանձնարարվում էին կամ Անտիոքում կաթոլիկ եկեղեցու առաջնորդական տեղապահին, կամ էլ Մամեստիայի արքեպիսկոպոսին<sup>74</sup>: Պայմանագրում վերոնշյալ հոդվածների սահմանումից կարելի է ենթադրել, որ այդ ժամանակամիջոցում Կիլիկյան քաղաքներում վենետիկցի բավական մեծաքանակ բնակչություն էր կուտակվել, ինչն արդեն պահանջում էր Հայոց թագավորությունում ավելի արդյունավետ կազմակերպչական գործառույթներ իրականացնող հաստատություններ հիմնել:

<sup>71</sup> Coureas N., Economy, p. 128-129.

<sup>72</sup> Բանի որ Ա. Սուպրակասան տոմարային վերլուծության է ենթարկել վենետիկցիներին հայ արքաների շնորհած բոլոր արտոնագրերի կնքման ժամանակագրությունը, նրա ստացած թվագրությունը փոքր ինչ տարբերվում է Վ. Լանգլուայի և Ղ. Ալի շանի բերած տվյալներից (Sopracasa A., նշվ. աշխ., էջ 57):

<sup>73</sup> Sopracasa A., նշվ. աշխ., էջ 57-60: Langlois V., Le Trésor des chartes d'Aménie, p. 151-154.

<sup>74</sup> Sopracasa A., նշվ. աշխ., էջ 53-56:

վննտիկցիների հետ հերթական պայմանագրի կնքման հատուցումը պետք է նախ և առաջ պայմանավորել 1304 թ. պայլ Անդրեա Սանտուոյի գլխավորությամբ Այասի բերդի վրա իրականացված հարձակմանը, որի հետևանքով տուժողների ցուցակում հայտնվել էին ոչ միայն առևտրականներ, այլև թալանվել էին նույնիսկ Կիլիկյան Հայաստանի պետական գանձարանին պատկանող թանկարժեք ապրանքներ, ինչպես նաև բերդում գտնվող թագավորական զինանոցը: Այս դեպքից հետո, որպես պատիժ՝ վննտիկցիների համար սահմանվեց աննախադեպ՝ 4 % տարանցիկ մաքսատուրք: Այդուհանդերձ, բանակցությունների շնորհիվ Միսում 1307 թ. մայիսի 25-ին Կիլիկյան Հայաստանի գունդստաբլ Թորոսը Հայոց արքա Լևոն Գ-ի անունից շնորհել է թվով հինգերորդ արտոնագիրը: Պայմանագիրը փաստում է, որ վննտիկցիներն արդեն հաստատվել էին նաև Տարսուճում և Ադանայում<sup>75</sup>: 1321 թ. մարտի 19-ին Լևոն Դ-ի և վննտիկյան պատվիրակության ղեկավար Միկելե Ջուստինիանի միջև կնքվում է առևտրական նոր պայմանագիր<sup>76</sup>: Պայլ Պեղոն Բրագադինը 1332 թ. (կամ 1333 թ.) վննտիկի դոժին հաշվետվություն-նամակ էր ուղարկել Կիլիկյան Հայաստանում վննտիկցի վաճառականների դրության մասին, որտեղ գանգատվում էր, որ իր հայրենակիցները գրկանքների էին ենթարկվում հայերի կողմից, ինչը դրսևորվում էր կողոպուտների, սպանությունների, չափազանց բարձր հարկահանության և այլ անօրինություններով<sup>77</sup>: Վննտիկի Սենատը 1333 թ. հունիսի 17-ին որոշում է պատվիրակություն ուղարկել Միս՝ բանակցելու Հայոց արքայի հետ, որպեսզի նա վերահաստատեր Կիլիկիայի նախորդ միապետների շնորհած արտոնույթ-

<sup>75</sup> Sopracasa A., նշվ. աճԷ., էջ 69-77: Langlois V., Le Trésor des chartes d'Aménie, p. 166-178. Ալիշան Ղ., Հայ-վննտ, էջ 92-93: Сокоп ов Н., Торговые взаимоотношения Венеции и Киликийской Армении в XII-XV вв., с. 12-13.

<sup>76</sup> Sopracasa A., նշվ. աշխ., էջ 89-93: Langlois V., Le Trésor des chartes d'Aménie, p. 179-184.

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 191-192: Ալիշան Ղ., Հայ-վննտ, էջ 78-79:

թյունները<sup>78</sup>: Նույն թվականի նոյեմբերի 10-ին Լևոն Դ-ը ստորագրում է երկար սպասված պայմանագիրը, որը Կիլիկյան Հայաստանում վննտիկցիներին տրված վերջին արտոնագիրն էր: Դրանում ամրագրվում էին նրանց անվտանգությանը վերաբերող խնդիրները. «Եթե վննտիկցիներու ապրանքը գողցուի եւ գողը բռնուի, գողը դատարան պիտի քաշուի եւ պատժուի եւ բոլոր ապրանքները պիտի վերադարձուին տիրոջ, իսկ գողը պիտի կրէ դատարանի որոշած պատիժը: Եթե մեր հպատակները պարտական ըլլան վննտիկցիներուն, անոնք պիտի ստիպուին իրենց պարտքը վճարելու, նրբ կարելի ըլլայ»<sup>79</sup>:

Պայմանագրերում տեղ գտած շատ կետերի, որոնք վերաբերում են ապրանքների առք ու վաճառքի, նավագնացության և այլ խնդիրների կարգավորմանը, կանդրադառնանք սույն աշխատության համապատասխան բաժիններում:

Չնայած Կիլիկյան Հայաստանում պայլեր սկսեցին նշանակվել 1271 թ. սկսած, մինչև 1282 թ. նրանց անունները սկզբնաղբյուրներում հիշատակված չեն: Ղ. Ալիշանը վննտիկի դիվաններում հայտնաբերած և իր իսկ կողմից հրատարակված փաստաթղթերից դուրս է գրել 1282-1334 թթ. պայլերի ցուցակը՝ Մարինո Բադոներո (1282-1283), Լեոնարդո Ջիզի (1285), Մարկո Սինիոլո (1286), Ջիովաննի դե Կանալ (128?), Պանկրացո Ջուստինիանո (1290), Էնրիկո Դելֆինո (1293), Մարինո Սինիոլո (1296-1299), Պատլո Կվիրինո (1300), Անդրեա Սանտո (1302-1303), Ջիովաննի Պրեմարինո (1304), Նիկոլո Մորոզինո (1306-1309), Գրիգորիո Դուֆին (1310-1312), Ջուստինո Ջուստինիանի (1313-1316), Ֆիլիպո Բարբարիզո (1317-1318), Բելետտո Դանդալո (1318-1319), Ջիովաննի Կարոզո (1320-1322), Բիաջո Մալիպիերո (1326), Մարկո Էրիցցո (1327), Պեղոն Բրագադին (1328-1330, 1333) և Մարինո Գրիմանի (1333-

<sup>78</sup> Sopracasa A., նշվ. աշխ., էջ 102-108:

<sup>79</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Aménie, p. 193-194. Պաուլեան Ջ., Կիլիկյան Հայաստանի վաճառականությունը, էջ 748-750:

1334)<sup>80</sup>: Այս բոլոր անձինք XIII-XIV դդ. վենետիկի ամենահայտնի ազնվական տոհմերի սերունդներից էին, որոնք գերակա դիրքերում էին Ս. Մարկոսի Հանրապետության միջազգային ամերկայական գործունեության մեջ: 1282 թ. հուլիսի 30-ին Սենատի որոշումով Կիլիկյան Հայաստանում և Աքքայում նշանակված վենետիկյան պալլերի համար սահմանվել էր հավասար աշխատավարձ՝ 400 բյուզանդի<sup>81</sup> չափով: Արդեն 1290 թ. հուլիսի 25-ին վենետիկյան իշխանությունները Կիլիկիայում իրենց պալլ Պանկրացո Ջուստինիանոյի համար սահմանել էին 600 բյուզանդ աշխատավարձ: Իսկ 1301 թ. սեպտեմբերի 14-ի Սենատի հրամանագրով պալլին հնարավորություն էր ընձեռվում Կիլիկիա ապրանքներ ներմուծող վենետիկցի վաճառականներից 1 % մաքսատուրք գանձել, որի չափը հետագայում փոփոխվել է՝ 1,5-2 %, իսկ երբևէն էլ ընդհանրապես հանվել: Սակայն պարզ չէ, թե այդ գումարի որ մասն է եղել պալլի բաժինը: Ի դեպ, հնարավոր է, որ նրան հասանելիք թռչակը հաշվարկվել է հենց այդ գանձումից: Հաճախ վենետիկի իշխանությունները Կիլիկիայի իրենց պալլերին գումարներ էին հատկացնում տների գնման, ինչպես նաև եկեղեցիների վերանորոգման համար: Արժեքավոր հիշատակություն է պարունակում մի փաստաթուղթ, որի համաձայն վենետիկի Սենատը 1299 թ. սեպտեմբերի 1-ին պալլ Մարինո Սինիոլոյին 500 բյուզանդ գումար էր տրամադրել, որպեսզի նա օգտագոր-

<sup>80</sup> Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 78-79: Krekić B., Alcune note sulla famiglia Querini a Ragusa nel Duecento e nel Trecento // Unequal Rivals, Essays on Relations between Dubrovnik and Venice in the XIII-XIV Centuries, Zagreb-Dubrovnik, 2007, p. 148-149. Stöckly D., Aspects de la "colonisation vénitienne": Commerce d'État et mobilité sociale au XI<sup>e</sup> siècle // Le partage du monde, échanges et colonisation dans la Méditerranée médiévale, Paris, 1998, p. 52-58.

<sup>81</sup> Ղ. Ալիշանը հղում է կատարում, որ սկզբնաղբյուրում բյուզանդի տեսակը նշված չէ, սակայն նա ենթադրում է, որ խոսքը կիպրական սպիտակ բյուզանդի մասին է 1283 թ. հուլիսի 22-ին վենետիկի Սենատի որոշումով Այասում հիմնված ընկերությունում որպես նվազագույն ներդրում սահմանվել էր 200 բյուզանդ գումարը, սակայն այստեղ նույնպես հիշատակված չէ դրամական այդ միավորի տեսակը: Մ. Մացցատին նշյալ 200 բյուզանդը հավասարեցնում է 100 ոսկե դոլկատի: Ստացվում է, որ պալլին տրվող թռչակը համարժեք էր 200 դոլկատի (Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 35, 38-39, 60-61: Mazzaoui M., նշվ. աշխ., էջ 40):

ծեր այն Կիլիկյան Հայաստանում իրենց համայնքին անհրաժեշտ տարբեր ծախսերի համար<sup>82</sup>:

Որքան էլ որ իտալացի նոտարների գրառած տարաբնույթ փաստաթղթերը սույն հետազոտության գլխավոր սկզբնաղբյուրներն են, սակայն նույնիսկ դրանց հիման վրա դժվար է ամբողջական արդյունքներ ստանալ Կիլիկյան Հայաստան այցելած, առավել ևս այնտեղ բնակություն հաստատած վենետիկցի վաճառականական բնակչության ճշգրիտ թվաքանակի և հարակից այլ խնդիրների մասին: Այդուհանդերձ, դրանց հաղորդած բազմակողմանի տեղեկություններից կարելի է հաստատապես եզրակացնել, որ առնվազն XIII դ. երկրորդ կեսից մինչև XIV դ. 30-ական թվականների վերջն ընկած ժամանակամիջոցում Կիլիկյան քաղաքներում վենետիկցի մեծաքանակ բնակչություն է եղել: Այսպես, նոտարական գործակալ Ֆելիչե դե Մերլիսի՝ Կիլիկյան Հայաստանում ձևակերպած փաստաթղթերում գրանցված են Այասի burgesius կարգավիճակ ունեցող բազմաթիվ վենետիկցիներ: Օրինակ, 1316 թ. հոկտեմբերի 22-ի մի գործարքին մասնակցել է Այասի burgesius Թոմազո դե լա Բեյան: Նույն թվականի նոյեմբերի 29-ին Այասի մի այլ burgesius Թոմազո Վասալոն գործարքի մեջ էր մտել Բիաջո Մալիպիերոյի հետ, որին հետագայում՝ 1326 թ., շնորհվելու էր Կիլիկյան Հայաստանում վենետիկյան պալլի պաշտոնը: 1318 թ. ապրիլի 10-ին կրկին Այասի burgesius Ռեմոնդինո Յուբալը առևտուր էր անում մի ջենովացու հետ: 1318 թ. մայիսի 17-ի և օգոստոսի 15-ի Այասում կազմված գործերում հիշատակված են Պերցեո և Ադամո անուններով վենետիկցիները, որոնք ունեին Այասի habitator-ի կարգավիճակ. ի դեպ, Ադամոն Այասում ամուսնացած էր Մարգարիտ անունով կնոջ հետ, որի ազգային պատկանելությունը նշված չէ: Նույն թվականի սեպտեմբերի 23-ին Այասում ունե Բերտուչիո Բոնոն իր կնոջը՝ Իզաբելին, որոշակի գումար է կտակում: Թեև այստեղ նույնպես կնոջ ազգային ծագումը չի հիշատակվում, սակայն նշված է, որ նա Այասի բնակ-

<sup>82</sup> Alishan L., L'A meno-Veneto, p. 46, 50, 53, 68, 72, 77, 78, 103, 163. Նույնի՝ Հայ-վենետ, էջ 35, 38-39, 60-61:

չուի էր<sup>83</sup>: Ամենայն հավանականությամբ, այդ կանայք հայուհիներ էին: Նկատման, որ նրանց անձնանունները լայնորեն տարածված էին Կիլիկիայի հայկական միջավայրում: *Burgesius* կարգավիճակ ունեին ոչ միայն Այասում, այլ նաև Սսում և Ադանայում հաստատված վենետիկցիները: Նոտարական գործերից առանձնանում են բազմաթիվ կտակ-փաստաթղթեր, որոնք կազմվել են Այասում մահացած վենետիկցիների համար: Օրինակ, 1315 թ. հոկտեմբերի 1-ին ոմն Ջիովաննի Ռուծինին իր ունեցվածքը որդուն կտակելուց բացի, ցանկացել էր, որ իրեն հողին հանձնեն Այասի վենետիկյան Ս. Մարկոս եկեղեցուն կից գտնվող գերեզմանատանը: Նման օրինակները բավական շատ են<sup>84</sup>: Ի դեպ, *habitor*-ի կամ *burgesium*-ի կարգավիճակ չունենալը դեռևս չէր նշանակում, որ վենետիկցին Կիլիկյան Հայաստանում տեղական ժամանակով չէր հանգրվանում: Մասնավորապես ազնվականի ծագում ունեցող բոլոր վենետիկցիներն Այասի նոտարական գործերում չեն ներկայացել վերոնշյալ նրկու կարգավիճակներից որևիցե մեկով: Մինչդեռ, նրանց անունները գրանցված են ամիսների և նույնիսկ տարիների կտրվածքում կազմված փաստաթղթերում: Ընդ որում, այդ ազնվականներից շատերն Այասում տարբեր ժամանակներում պայլեր են եղել<sup>85</sup>:

Կիլիկյան քաղաքներում հարուստ վաճառականների հետ միասին ապրում էին հասարակ խավի մեծաքանակ ներկայացուցիչներ: Մասնավորապես վենետիկցի ցվախագործների թիվն այնքան շատ է եղել, որ նրանք հաճախակի ճնշումների են ենթարկվել հայերի կողմից<sup>86</sup>: Պայլ Պեդրո Բրագադինոն 1332 թ. դժին ուղղած նամակում - տարբեր գանգատների հետ շեշտում էր, որ ցվախ գործող վենետիկցի արհեստավորների համար Կիլիկիայում չափազանց բարձր հարկեր

էին սահմանվել<sup>87</sup>: 1333 թ. Լևոն Դ-ի հրամանով նրանց իրավունքները վերականգնվում են. «Այն վենետիկցի կամ անուն սերունդը որ կը շինեն հագստեղեն ուղտի բուրդէն, և կը բնակին մեր նրկրին մէջ, ազատ պիտի ըլլան որևէ թագաւորական օրէնքներէ, որ կը վերաբերի իրենց արհեստին և արտադրածին»<sup>88</sup>: Հավանական է, որ նման սահմանափակումներով Կիլիկյան իշխանությունները ձգտել են ապահովել հայ արհեստավորների արտադրած բոլոր կտորեղենի սպառումը:

1333 թ. արտոնագրում սահմանվել էր հետևյալ հոդվածը. «Վենետիկցիք և իրենց սերունդը՝ եկած վենետիկի հողերէն, ինչպես Կրետէ կղզիէն, Սև Օղակէն, Քորոնէն, Մոտոնէն և ուրիշ տեղերէն պիտի վերաբերուին մեր տուած իրաւունքներուն և առանձնաշնորհումներուն համեմատ»<sup>89</sup>: Նշյալ վայրերը Միջերկրական և Սև ծովերում գտնվող վենետիկյան առևտրի հիմնական հենակետերն էին: Այասում կազմված նոտարական գործերում մեծ թիվ են կազմում - Կրետեի նավահանգիստ կանդիայից Կիլիկյան Հայաստան ժամանած վենետիկցիները: Նրանց զգալի մասը եղել են այդ քաղաքի *habitor* կամ *burgesium*<sup>90</sup>: Քիչ չեն նաև Բյուզանդիայի, Կիարոսի և Դուբրովնիկի բնակիչներ հանդես եկած վենետիկցիները<sup>91</sup>:

Կիլիկյան Հայաստանում հանգրվանած իտալական վաճառականության հաջորդ մեծաքանակ խումբը ներկայացնում էին *Spulcani* նրկրամասի քաղաքները, որոնց մեջ առանձնանում էր Պիզան: Չնայած Կիլիկյան Հայաստանում պիզացի վաճառականության բավական ծանրակշիռ ներկայությանը՝ Պիզայի հետ կնքված առևտրական որևէ պայմանագիր չի պահպանվել: Այնուամենայնիվ, Կ. Օթեն-Ֆրոնս պնդում է, որ պիզացիներն ամենայն հավանա-

<sup>83</sup> Bondi Sebellico A., նշլ. աշխ., հ. 1, N 72, 75, 77, 78, 84, 88, 99, հ. 2, N 1304, 1308, 1310, 1320, 1321:

<sup>84</sup> Alishan L., L'A meno-Veneto, p. 181, 196, 202, 203, 209. Նույնի՝ Հայ-վենետ, էջ 70-72:

<sup>85</sup> Bondi Sebellico A., նշլ. աշխ., հ. 1, N 72, 73, 75, 77, 78, 80, 81, 82, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 99, հ. 2, N 1304, 1308, 1310, 1320, 1321:

<sup>86</sup> Michel F., նշլ. աշխ., էջ 43-44:

<sup>87</sup> Langlois V., Le Trésor des chartes d'A ménie, p. 191.

<sup>88</sup> Պտուկեան Զ., Կիլիկյան Հայաստանի դրամները, էջ 41:

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 748-750:

<sup>90</sup> Bondi Sebellico A., նշլ. աշխ., հ. 1, N 79, 80, 86, 87, 92, 93, 94, 95, 96, 97, հ. 2, N 1319, 1321: Alishan L., L'A meno-Veneto, p. 180-181.

<sup>91</sup> Bondi Sebellico A., նշլ. աշխ., հ. 1, N 79, 81, 82, 83, 89, հ. 2, N 1314, 1316:

կանությանը կիլիկյան Հայաստանում ստացել են արտոնագիր, որը նրա կարծիքով շնորհվել է մինչ 1264 թ.: Այս փաստը նա հիմնավորում է Այասում 1264 թ. կնքված նոտարական մի փաստաթղթով, որտեղ որպես վկա հանդես եկած ունի Ջիակոմո դե Մորելլան ներկայացված է իբրև կիլիկյան Հայաստանում Պիզայի հյուպատոս Միջնադարագետը նույնիսկ կարծիք է հայտնում, որ պիզացիների հետ պայմանագիրը կնքվել է այն նույն ժամանակամիջոցում, երբ Լևոն Ա-ն առաջին արտոնագրերն էր շնորհում վենետիկին ու Ջենովային<sup>92</sup>: Ուշագրավ է, որ Անտիոքի դքսության թագաժառանգ Ռուբեն-Ռայմոնդը (1216-1219), որը մինչ այդ գահակից-թագավոր (1211-1216) էր եղել կիլիկյան Հայաստանում, 1216 թ. ապրիլի 7-ի հրովարտակով վերահաստատել էր Անտիոքում բնակվող պիզացիների իրավունքները<sup>93</sup>: Այդուհանդերձ, կիլիկյան Հայաստանի և Պիզայի միջև պայմանագիրը կնքելու ճշգրիտ ժամանակը չի պարզվում նույնիսկ 1278 թ. պիզայական վաճառականական մի հայտնի ձեռնարկի բովանդակությունից<sup>94</sup>: 1330-ական թվականներին կիլիկյան Հայաստան այցելած Պեգոլոտտին վկայում է, որ պիզացիներն այնտեղ վճարում էին 2 % տարանցիկ մաքսատուրք: Դա թեև բավական ցածր էր, սակայն, պիզացիներին կարելի է դասել միայն միջին մակարդակի արտոնյալ կարգավիճակ ունեցող համայնքների շարքում, քանի որ այդ նույն ժամանակ վենետիկցիներն ու ջենովացիներն ազատված էին այդ հարկատեսակից<sup>95</sup>: կիլիկյան Հայաստանում Պիզայի ևս մի հյուպատոսի մասին հիշատակություն կա 1299 թ. մարտի 16-ին Ֆամագուստայում արձանագրված գործարքում, որտեղ, սակայն, նրա անունը նշված չէ<sup>96</sup>: Իրականում նա Բինդոն Սեկամարենդան (կամ Սեկամենջի) էր, որը մինչ այդ հայտնվել

էր 1297 թ. (այլ տվյալներով՝ 1299 թ.), վենետիկցիների կողմից Այասում ջենովացիներին պատկանող շուկայի ավերումից տուժած մի խումբ անձանց ցուցակում: Միայն 1304 թ. հունիսի 10-ին կազմված իրավական փաստաթղթով Այասում նստող վենետիկի պալլ Ջիակոմոնի Պրեմարինոն 1214 հ. ն. դ.-ի չափով փոխհատուցում էր վճարել կիլիկյան Հայաստանի գունդատարլ թորոսին, որն այդ գումարը պետք է փոխանցեր նույն Սեկամարենդային<sup>97</sup>: Ֆամագուստայում 1300 թ. հունվարի 28-ին կազմված գործարքում նա կրկին հանդես է եկել որպես Այասում պիզացիների հյուպատոս: Սակայն 1301 թ. մարտին և օգոստոսին, ինչպես նաև 1302 թ. հուլիսին նորից կիպրական նոտարական գործերում զարմանալիորեն հայտնվում է ևս մի Բինդոն Սեկամարենդա, որը նույնպես ներկայացված է իբրև պիզացի՝ միաժամանակ հիշատակվելով ցենզարիուս<sup>98</sup> մասնագիտությամբ<sup>99</sup>: Արդյո՞ք այս բոլոր աղբյուրներում խոսքը միևնույն անձի մասին է: Եթե այո, ինչն ավելի հավանական է, ապա ինչպե՞ս է, որ 1300 թ. Ֆամագուստայում և 1304 թ. Այասում Պիզայի հյուպատոս ներկայացված Սեկամարենդան այդ տարիների միջակայքում կիպրոսում եղել է ցենզարիուս: Կարելի է միայն ենթադրել, որ նա կամ համատեղել է այդ երկու պաշտոնները, կամ էլ կիլիկյան Հայաստանում հյուպատոսի աթոռը զբաղեցրել է ընդմիջումներով: Սկզբնաղբյուրներում կիլիկիայում Պիզայի այլ հյուպատոսների մասին հիշատակություններ չեն հանդիպում:

\*Կարևոր տեղեկություն է պարունակում Հռոմի պապ Հովհաննես XXII-ի հրամանների և տարաբնույթ այլ փաստաթղթերի ժողովածուներից մեկը. 1321 թ. գրառված մի ուղերձով պապը Պիզայի իշխա-

<sup>92</sup> Otten-Froux C., La Cilicie arménienne dans le réseau commercial pisan en Méditerranée orientale, p. 7.

<sup>93</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 138-139.

<sup>94</sup> Otten-Froux C., La Cilicie arménienne dans le réseau commercial pisan en Méditerranée orientale, p. 7.

<sup>95</sup> Pegolotti, p. 60.

<sup>96</sup> Balar d M., Notai genovesi in Oltremare, A., N 109.

<sup>97</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 165-166. Барсегов Ю., Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, с. 81.

<sup>98</sup> Censsarius - Այսպես էին կոչվում առևտրական միջնորդները (Otten-Froux C., L'Als dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 157).

<sup>99</sup> Desimoni C., Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 21. Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 30. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 251. Polonio V., նշվ. աշխ., N 272: Otten-Froux C., La Cilicie arménienne dans le réseau commercial pisan en Méditerranée orientale, p. 7.

նություններին կոչ էր անում Կիպրոսում, Կիլիկյան Հայաստանում, Ասորիքում, Բյուզանդական կայսրությունում և Արևելքի այլ նրկրներում եկեղեցիներ կառուցել, ինչը պետք է իրականացվեր նշված պետություններում հաստատված պիզացի վաճառականների ուժերով<sup>100</sup>:

Երևր տարվա ընթացքում Կիլիկյան Հայաստանում ձևակերպված նոտարական փաստաթղթերում հաճախորդ տոսկանացիների զերակշիռ մեծամասնությունը (63-ից 57-ը) պիզացիներն են<sup>101</sup>: Նրանցից ոմանք գրանցված են որպես Այասի habitator-ներ<sup>102</sup>: Բացի վաճառականներից, հիշատակված են նաև մեկական նոտար ու դատական կատարածու և նրկու նավագործ հյուսն<sup>103</sup>: Պիզացի առևտրականների գործունեության հիմնական ոլորտը Կիլիկյան Հայաստանից ռազմամթերքի արտահանումն էր դեպի Եգիպտոսի սուլթանության նավահանգիստներ՝ Դամիետտա և Ալեքսանդրիա<sup>104</sup>:

Այսպի նոտարական գործերում հանդես են գալիս նաև Պիզային մոտակա տոսկանական մի շարք այլ քաղաքների ներկայացուցիչներ՝ մասնավորապես Արևցոյից, Լուկայից, Սիենայից և Վոլտերրայից ժամանած մոտ մեկ տասնյակ անձինք: Նրանք գրանցված են այն նույն պայմանագրերում, որոնց մասնակցել են նաև պիզացի առևտրականները<sup>105</sup>: Այդ գործարքների մեծ մասը վերաբերում է Եգիպտոսի սուլթանության հետ նդած առևտրական կապերին, ինչը թույլ է տալիս կարծելու, որ, ամենայն հավանականությամբ, այդ

<sup>100</sup> Jean XXII (1316-1334), Lettres Communes, p. 7.

<sup>101</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 2, 3, 11, 21, 22, 25, 27, 28, 29, 32, 33, 36, 50, 58, 60, 61, 63, 65, 71, 85, 86, 87, 88, 94, 95, 96, 96a, 97, 98, 99, 101, 104, 106. B. N 33, 35, 36, 65, 72, 75, 84, 87, 88, 107, 109, 113, 114, 121, 133.

<sup>102</sup> Նույն տեղում, A. N 33, 60, 61:

<sup>103</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 3, 94, 97, 98, 99, 101, 104, B. N 33, 68, 109. Heyd W., նշլ. աշխ., հ. II, էջ 87:

<sup>104</sup> Otten-Froux C., La Cilicie arménienne dans le réseau commercial pisan en Méditerranée orientale, p. 11. Նույնի՝ Le commerce cilicien du XII<sup>e</sup> au XIV<sup>e</sup> siècle, p. 136.

<sup>105</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 3, 9, 11, 16, 27, 28, 48, 48a, 56, 57, 58, 63, 64, 65, 68, 105, 106.

քաղաքների վաճառականները Կիլիկյան Հայաստանում գործել են Պիզայի հովանու ներքո:

XIV դ. սկզբից և հատկապես 1320-ական թվականներից սկսած՝ տոսկանական մեկ այլ նշանավոր քաղաքի՝ Ֆլորենցիայի, Բարդի և Պերուցցի բանկային խոշոր տները հիմնավորապես հաստատվել էին Կիպրոսի թագավորությունում՝ կղզին դարձնելով Արևմուտքում իրենց առևտրատնտեսական գործունեության մեկնարկաքին հենակետերից մեկը<sup>106</sup>: Բարդին և Պերուցցին քարձր մակարդակի հարաբերություններ էին հաստատել նաև Կիլիկյան Հայաստանի հետ: 1336 թ.<sup>107</sup> Լեոն Դ-ի և Բարդիի ներկայացուցիչ Ֆրանչեսկո Բալդուչի Պեգոլոտտիի միջև կնքված պայմանագրով ընկերության գործակալներին բացառիկ իրավունք էր ընձեռվում Հայոց թագավորությունում առևտուր իրականացնել առանց տարանցիկ մաքսատուրքի: Այս մասին անմիջական վկայություններ է հաղորդում ինքը՝ Պեգոլոտտին: Նա անդրադառնում է նաև Պերուցցի ընկերությանը, որի համար Կիլիկիայում սահմանվել էր 2 % մաքսատուրք ապրանքների թե՛ ներմուծման, և թե՛ արտահանման դեպքում<sup>108</sup>: Սակայն, այդ ամենով հանդերձ, Պեգոլոտտին Կիլիկյան քաղաքներում հաստատված ֆլորենտական համայնքի մասին որևէ հիշատակություն չունի: Մինչդեռ Պերուցցի և Բարդի ընտանիքների անդամների անունները բազմիցս հիշատակվում են Ֆամագուստայի ջենովական սկզբնաղբյուրներում, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ ֆլորենտական վաճառականության կուտակման գլխավոր կենտ-

<sup>106</sup> Ругенбург В., նշլ. աշխ., էջ 51-92, 102-104: Дживелегов А., նշլ. աշխ., էջ 162: Луццатто Дж., նշլ. աշխ., էջ 286: Hunt E., The Medieval Super-companies. A Study of the Peruzzi Company of Florence, Cambridge, 1994, p. 127-156.

<sup>107</sup> Թե՛ն Պեգոլոտտին հայտնում է, որ պայմանագիրը կնքվել է 1335 թ. հունվարի 10-ին, սակայն Ռոստենբերգը, հաշվի առնելով, որ վերջինս առաջնորդվել է ըստ ֆլորենտական օրացույցի, նշում է 1336 թվականը (Ругенбург В., նշլ. աշխ., էջ 108):

<sup>108</sup> Pegolotti, p. 60. Peruzzi S. L., Storia del commercio e dei banchieri di Firenze in tutto il mondo conosciuto dal 1200 al 1345, Firenze, 1868, p. 131-132.

րոնը կիարոսն էր և ոչ թե կիլիկիան<sup>109</sup>:

Թեև հիշյալ բանկային տները կիլիկյան Հայաստանում արտոնյալ կարգավիճակ ստացան բավական ուշացումով, սակայն նրանց հետ առևտրական շփումները հայտնի էին դեռևս XIV դ. սկզբից<sup>110</sup>: Ֆլորենտացի վաճառականներն Այասից ձեռք բերված բաւբակը վաճառում էին Իտալիայի տարբեր շրջաններում գործող տնքաստիլ ձեռնարկություններին<sup>111</sup>: Միևնույն ժամանակ Բարդիի գործակալներն Ապուլիայի հացահատիկի ավելցուկ բերքի մի մասն իրացնում էին կիլիկյան Հայաստանում<sup>112</sup>:

Իտալիայի ծովափնյա շրջաններից բավական հեռու գտնվող Պիաչենցա քաղաքի վաճառականությունը միջազգային առևտրում առավելապես գործում էր Ջենովայի Հանրապետության հովանու ներքո: Ահա թե ինչու պիաչենցացիների կուտակումներն առկա էին անդրծովյան բոլոր այն նրկրներում, ուր հաստատվել էին ջենովական համայնքներ<sup>113</sup>: Ուշագրավ է, որ դեռևս 1201 թ. Լևոն Ա-ի ջենովացիներին շնորհած արտոնագրի լատիներեն տեքստը կազմել էր ջենովական կողմից հանդես եկած պիաչենցացի մի նոտար<sup>114</sup>: Ի թիվս կիլիկյան Հայաստանում հաստատված իտալացի վաճառականության՝ պիաչենցական համայնքը մեծաքանակներից էր: Ա-

յառում 1274, 1277 և 1279 թթ. գրասված նոտարական ակտերից կարելի է դուրս գրել 35 պիաչենցացու անուն. ընդ որում, եթե 1274 թ. նրանք ընդամենը երեքն են, ապա 1277 և 1279 թթ. արդեն հանդիպում են 32-ը<sup>115</sup>: Դատելով գործարքների կնքման ժամանակային հաջորդականությունից՝ նրանցից շատերը կիլիկյան Հայաստանում ամիսներ և նույնիսկ տարիներ էին անցկացնում: Մասնավորապես Մանֆրեդո Նապակո անունով պիաչենցացի վաճառականը գրանցված է 1277 թ. հոկտեմբերից մինչև 1279 նոյեմբերն ընկած ժամանակամիջոցում կնքված տարբեր գործարքներում<sup>116</sup>: Հիշյալ փաստաթղթերում հանդիպում ենք ևս մի պիաչենցացու՝ Գվիլլիմո Վիչլոդուինուսի անվանը, որը բնակվում էր Այասում<sup>117</sup>: Իսկ արդեն 1296 թ. հոկտեմբերի 15-ին Ֆամագուստայում արձանագրված մի պայմանագրում Ուզեզոնուս անունով պիաչենցացին ներկայացված է որպես Տարսոնի habitator<sup>118</sup>: կիլիկյան քաղաքներում հանգրվանել էին Պիաչենցայում հայտնի մի շարք ընտանիքների անդամներ: Մասնավորապես առևտրական աշխույժ գործունեություն էին ծավալել այդ քաղաքի խոշորագույն Բազարոտտի, Սկոտտի, Բորիսի, Տայո, Գուանիաբենն, Տադի, Ռուտտիզացցի և այլ ֆինանսական տների գործակալները<sup>119</sup>: Պիաչենցացիները ևս Այասում ունեին «Լոջիա» անվանումով համայնքային գլխավոր շինություն, որն ամենայն հավանականությամբ կառուցվել է 1278 կամ 1279 թթ., քանի որ այդ մասին ավելի վաղ հիշատակություններ չեն հանդիպում: Նկատենք, որ կիլիկյան Հայաստանի իտալացիների թվում համայնքային նման կառույցներ ունեին միայն վենետիկցիներն ու

<sup>109</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 10, 111. Polonio V., նշվ. աշխ., N 51, 60, 76, 126, 178, 262, 263, 343: Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 94. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 13, 87, 88, 238. Бл изнюк С., Торгово-экономические отношения Кипра с государствами Средиземноморья в 1192–1373 гг., с. 58.

<sup>110</sup> Desimoni C., Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 60-61. 119. Polonio V նշվ. աշխ., N 60, 76, 282, էջ 521:

<sup>111</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 43. Hunt E., The Medieval Super-companies, p. 57.

<sup>112</sup> Renouard Y., նշվ. աշխ., էջ 793-824: A bulafia D., Southern Italy and the Florentine Economy, 1265-1370 // Italy, Sicily and the Mediterranean, 1100-1400, Variorum Reprints, London, 1987, VI, p. 385-386. Coureas N., Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia, p. 326-327.

<sup>113</sup> Racine P., Marchands placentins a l'A las a la fin du XIII<sup>e</sup> siècle, p. 201-202. Նույնի՝ De la plaine a la mer. Les gouvernements communaux et les problèmes d'émigration outre-mer // Le partage du monde, échanges et colonisation dans la Méditerranée médiévale, Paris, 1998, p. 10-21.

<sup>114</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 107.

<sup>115</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 18, 53. B. N 10, 18, 23, 29, 30, 47, 50, 56, 57, 62, 85, 90, 96, 113, 136, 138. Otten-Froux C., L'A las dans le demier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 154, 168.

<sup>116</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 29, 30, 47, 50, 96, 136, 138.

<sup>117</sup> Նույն տեղում, B. N 47, 50, 56, 62, 113:

<sup>118</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 4.

<sup>119</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, p. 419. Balard M., Notai genovesi in Oltremare, B., III N 30. Polonio V., նշվ. աշխ., N 101: Racine P., Marchands placentins a l'A las a la fin du XIII<sup>e</sup> siècle, p. 200-201. Նույնի՝ L'A las dans la seconde moitié du XIII<sup>e</sup> siècle, p. 194.

ջնոՎացիները<sup>120</sup>: Պիաչենցայի տնտեսական պատմության ամենահայտնի հետազոտողներից Պ. Ռասինը փաստում է, որ XIII դ. վերջին ամբողջ Լևանտում պիաչենտական կազմակերպված վաճառականական համայնքներ ունեին միայն Այասն ու Աքքան<sup>121</sup>: Կիլիկիայում Պիաչենցայի հյուպատոսի գոյության մասին եղած միակ վկայությունը 1295 թ. սեպտեմբերի 2-ին Այասում գրառված իրավական փաստաթուղթն է, որը վենետիկցիների կողմից թալանված մարսելցի նավատիրոջը պատճառված վնասների հատուցման մասին է: Այստեղ որպես գլխավոր վկա ներկայացած Հովհան Բորդին եղել է Պիաչենցայի հյուպատոսը Կիլիկյան Հայաստանում<sup>122</sup>: Ծարունակելով հայրենի քաղաքի տնքստիլ արտադրության հարուստ ավանդությունը՝ պիաչենտացի վաճառականները Կիլիկյան Հայաստան էին ներմուծում եվրոպական տարատեսակ կտորեղեն: Մասնավորապես մահուդի առք ու վաճառքին վերաբերող Այասում ձևակերպված 11 գործարքից 6-ը կնքված են նրանց մասնակցությամբ<sup>123</sup>:

Կիլիկյան Հայաստանում գրառված սկզբնաղբյուրներում գրանցված են նաև Պիաչենցան ընդգրկող Իտալիայի Էմիլիա-Ռոմանիա (Պարմա, Մոնտեբարանցոնե, Գուալտերի, Վինիոլո, Կվարտո), ինչպես նաև սահմանակից Լոմբարդիա (Վոզերա, Բերգամո, Պավիա, Կրեմոնա, Մանտուա) նրկամասերի քաղաքներից ժամանած մեկ տասնյակից ավելի ներկայացուցիչներ<sup>124</sup>: Այասի նոտարական ակտերում հանդիպում են նաև անկոնացիներ, որոնց զգալի մասը ներկայացված է որպես խաճուխաբաններ<sup>125</sup>: 1328 թ. փետր-

վարի 28-ի մի փաստաթղթում հիշատակված են Այասի մի քանի անկոնացի *habitor*<sup>126</sup>: XIV դ. սկզբին Ֆամագուստայում արձանագրված ջնոՎական սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ պարզվում է, որ նրանց գործունեության հիմնական ոլորտն Անկոնային սահմանակից Ապուլիայից ցորենի ներկրումն էր Կիպրոս, իսկ այնտեղից էլ Կիլիկյան Հայաստան<sup>127</sup>:

Առանձնահատուկ հիշատակության են արժանի Կիլիկյան Հայաստանի և *Սիկիլիայի թագավորության* հարաբերությունները: Միջերկրածովյան առևտրում վերջինիս գլխավոր դերակատարը Մեսինա քաղաքն էր, որի վաճառականները դեռ 1270-ական թվականներից Կիլիկյան Հայաստան ժամանում էին ինչպես սեփական, այնպես էլ վարձակալված նավերով: Հայկական նավահանգիստներում նրանց կնքած գործարքներում հիշատակված են բամբակ, մետաղե արտադրանքներ և այլ ապրանքներ<sup>128</sup>: Լևոն Դ-ի և Սիկիլիայի թագավոր Ֆրեդերիկ III Արագոնցու (1296-1337)<sup>129</sup> դատեր՝ Կոնստանսի ամուսնությունից (1330 թ.) մեկ տարի անց երկու թագավորությունների միջև կնքվում է առևտրական պայմանագիր: Այն

<sup>126</sup> Alishan L., L'A meno-Veneto, p. 198.

<sup>127</sup> Polonio V., նշվ. աշխ., N 225, 368: Abulafia D., The Anconitan Privileges in the Kingdom of Jerusalem and the Levant Trade of Ancona, p. 548, 556. Renouard Y., նշվ. աշխ., էջ 793-824:

<sup>128</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 37, 39, 39a, 96, 96a, 115. B. N 3, 31, 44. Abulafia D., The Merchants of Messina, p. 209.

<sup>129</sup> 1282 թ. Արագոնի թագավոր Պետրոս III-ը (1276-1285) ներխուժում է Սիկիլիայի թագավորություն, որտեղ իշխում էին Ֆրանսիայի կապետինգյան արքայատոհմին ազգակից Անժոյի թագավորական տան ներկայացուցիչները: Սիկիլիայի թագավորությունը տրոհվում է երկու մասի. բուն Սիկիլիա կղզին ընդգրկող տարածքում, որն անցնում է Արագոնի թագավորության հովանու տակ, ձևավորվում մի նոր Սիկիլիայի թագավորություն, որը հայտնի է Տրինակրիայի թագավորություն անվամբ. մյուս՝ մայրցամաքային հատվածում, պահպանվում է ֆրանսիական ժազման թագավորների իշխանությունը, որտեղ առաջացած միավետությունը թեև նույնպես հանդես է գալիս որպես Սիկիլիայի թագավորություն, սակայն պատմության մեջ հայտնի է Նմապոլիտանական թագավորություն անվանումով: Ի դեպ, Ֆրեդերիկ III-ը վերոնշյալ Պետրոս III Արագոնցու որդին էր (Runciman S., The Sicilian Vespers: A History of the Mediterranean World in the Later Thirteenth century, Cambridge, 1992, p. 242-280).

<sup>120</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 62, 136, 138.

<sup>121</sup> Racine P., Les debuts des consulats italiens outre-mer, p. 273.

<sup>122</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Aménie, p. 164-165. Racine P., Marchands placentins a l'Als a la fin du XIII<sup>e</sup> siècle, p. 199.

<sup>123</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 29, 30, 47, 50, 136, 138.

<sup>124</sup> Նույն տեղում, A. N 5, 15, 44, 76, 94, 96, 97, 98, 100. B. N 4, 12, 15, 31, 72, 73, 79, 85, 91, 92: Ալիշան Ղ., Հայ-Վենետ, էջ 53. Otten-Froux C., L'Als dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle, p. 154.

<sup>125</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 39, 39a, 59, 63, 99, 101. B. N 89.

ներառում էր իրավական կետեր, որոնք պետք է ապահովեին վաճառականների անվտանգությունը. «Ի պաման՝ որ ատար նա կամ ատար գեմնի մարդ կամ ըրզակ չառնուն հետ իրենանցն որպէս Սիծիլիան՝ խլրսնն. ու թէ գտնվի ով անէ այսպէս, նայ կորցրնէ զիր ազատուտիւնն յախտնանա»<sup>130</sup>: Լատիներեն-հայերեն այս նրկվզու պայմանագիրը պահպանվել է Սևիլիայի արխիվում: Թեև արտոնագրում նշված է, որ սիկիլացի վաճառականները պետք է վճարեն 2 % տարանցիկ մաքսատուրք, սակայն Պենոլտտին հայտնում է, որ արդեն 1335 թ. նրանք ազատված էին այդ հարկատեսակից<sup>131</sup>:

Կիլիկյան Հայաստանում իտալական բնակչությունը բավական շերտավորված սոցիալական կազմ ուներ: Անկասկած, համայնքների կառավարման բոլոր լծակները տնօրինում էր ազնվականներից կազմված վերնախավը: Նրանց բաժին էր ընկնում նաև կիլիկյան քաղաքներում եվրոպացիների ներդրումների զգալի մասը: Հասարակ վաճառականների հետ միասին սկզբնաղբյուրներից զանազանվում են բազմաթիվ մասնագիտությունների տեր անձինք՝ նոտարներ (notarius, 20), քարտուղարներ (cancellerius, 2), շգրագիրներ (scriba, 2), առևտրական միջնորդներ (censsarius, 7), բանկիրներ (bancherius, 4), ուսուցիչներ (magister, doctor gramaticae, 7), բժիշկներ (magister medicus, 2), դեղագործներ (speciarius, 3), վարսավիրներ (barberius, 5), նավածեփներ (calafato, 3), մոմագործներ (candelarius, 1), դարբիններ (ferrarius, 2), հյուսներ (magister axie, 8), դանակներ և սրեր պատրաստող վարպետ (custurerius, 1), թել մանողներ (filatori, 2), մահուդի վաճառականներ (draperius, 3), մորթնգործներ (pelliparius, 5), դերձակներ (sartor, taliator, 6), բուրդ խուզողներ (accimator, 1), կոշկակարներ (calegarius, 1), հացթուփաներ (panerius, 1), խանութպաններ (tabernarius, 11), արբավտահարներ

(balistarius, 1) և այլն<sup>132</sup>: Հետաքրքրական է, որ կիլիկյան քաղաքներում վենետիկյան նոտարի աշխատանքը սովորաբար համատեղում էին հոգևորականները՝ մեծ մասամբ քահանաները<sup>133</sup>: Մասնավորապես Ֆելիչե դե Մերլիսը սկզբնաղբյուրներում ներկայացնել է և՛ որպես քահանա, և նոտարական գործակալ<sup>134</sup>: Մասնագիտությունների նման բազմաթիվ տեսականին փայլուն վկայություն է կիլիկյան Հայաստանում հաստատված օտարներկրյա բնակչության կազմակերպված համայնքային կյանքի մասին: Քիչ չեն դեպքերը, երբ իտալացիները ծառայության էին անցնում կիլիկիայի արքունիքում: 1274 թ. փետրվարի 17-ի փաստաթղթում հիշատակված քերականության ուսուցիչ ջննդագի Ֆիլիպո Սոլդանոն ապրել է Այասում գտնվող կիլիկիայի Հայոց թագավորի տանը, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ նա այնտեղ զբաղվել է լեզվի (ամենայն հավանականությամբ՝ իտալերենի կամ լատիներենի) դասավանդմամբ: Նույն թվականի մարտի 12-ին կնքված մի պայմանագրում հիշատակված է նաև Գվիլելմոս, որը եղել էր կիլիկիայի արքունական քարտուղարը<sup>135</sup>:

Կիլիկյան Հայաստանում առևտրական ակտիվ գործունեություն ծավալած եվրոպացիների թվում հարկ է հատուկ անդրադառնալ *հարավֆրանսիական* քաղաքներից ժամանած վաճառականներին: Վերջիններս ներկայացնում էին գլխավորապես Ֆրանսիայի Պրովանս և Լանգեդոկ-Ռուսիլիոն ներկրամասերի խոշորագույն քաղաքները՝ Մոնպելիեն, Մարսելը, Նիմը և Նարբոննան<sup>136</sup>: Թեև

<sup>132</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, p. 173, 176, 177, 179, 180, 181, 182, 183, 189, 192, 193, 198, 199, 398, 401, 405, 406, 412, 414, 415, 419, 420. Այլշան Ղ., Սիսուան, էջ 371:

<sup>133</sup> Այլշան Ղ., Հայ-վենետ, էջ 68:

<sup>134</sup> Bondi Sebellico A., նշվ. աշխ., հ. 1, N 68:

<sup>135</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 21, 43.

<sup>136</sup> 1213 թվականից Մոնպելիեն քաղաքը պատկանում էր Արագոնի թագավորությանը: 1276 թ. Արագոնի արքա Լույսյան (Հակոբ) I Նվաճողը (1213-1276), իր թագավորությունից առանձնացնելով Բալնարյան կղզիները և հարավֆրանսիական մի շարք տարածքներ, ստեղծում է Մալորկայի թագավորությունը՝ կտակելով այն կրտսեր որդուն՝ Լույսյան II-ին (1276-1311): Մոնպելիեն դառնում է Մալորկայի քաղաքական կենտրոնը: Էվ միայն 1349 թ.

<sup>130</sup> Լեմոն Ե նւ իր հրովարտակը, «Բագմավէպ», 1847, էջ 92: Mutafian C., La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles), p. 115.

<sup>131</sup> Pegolotti, p. 60.

Նարբոննան, Մոնպելիեն և Մարսելը XIII-XIV դդ. տարբեր պետությունների կազմում էին, սակայն նրանց վաճառականները միջազգային առևտրում միայնաց հետ լայնորեն համագործակցում էին<sup>137</sup>: Ուշագրավ է, որ Զիբալդոնն դա կանալի ձեռնարկի՝ Կիլիկյան Հայաստանին նվիրված մասում Մարսելը և Մոնպելիեն ներկայացված են առանձին բաժիններով<sup>138</sup>: Իսկ Պեգոլոտտին նվրապացի վաճառականների համար Կիլիկյան Հայաստանում սահմանված տարանցիկ մաքսատուրքի չափերը թվելիս հարավֆրանսիացիներին թեև նախապես ընդգրկել է ընդհանուր պրովանսցիներ խմբում, սակայն հաջորդ բաժնում առանձին ներկայացրել է Նիմը, Մոնպելիեն և նույնիսկ՝ Մայորկան<sup>139</sup>: Արդեն 1270-ական թվականներից սկսած՝ Այասում գրառված նոտարական սկզբնաղբյուրներում վկայություններ կան Կիլիկյան Հայաստանում հարավֆրանսիացի առևտրականների գործունեության մասին: Այսպես, 1274 թ. փետրվարի 9-ին Այասում նարբոննացի Պեդրո Զիմատալիսն իր հայրենակից Բեռնարդո դե Օրեյից կոմսենդայի ներդրում ստացած անագը պետք է վաճառեր Ալեքսանդրիայում և ապա վերադառնար Նարբոննա: Ի դեպ, այս գործարքում որպես վկա հանդես է եկել Զիբարդո կոմսն անունով մի մարսելցի: 1279 թ. մարտի 4-ին Այասում կֆրված գործարքի մասնակիցների թվում հիշատակված են պրո վանսցի Զիովաննի Բուքսոնոն և նրա բարեկամ Բելտրամն Ֆալիզնը, որը ծագումով կենտրոնական Ֆրանսիայի Ֆիզնակ քաղաքից

Մայորկայի թագավոր Խայն III-ը (1324-1349) քաղաքը վաճառում է Ֆրանսիայի միապետ Ֆիլիպ V-ին (1328-1350): Միևնույն ժամանակ Նարբոննան Ֆրանսիայի թագավորության կազմում էր, իսկ Մարսելը Ֆրանսիական Անժու արքայատոհմի տիրապետության տակ էր (A bulafia D., The Levant Trade of the Minor Cities, p. 185. English E. D., Encyclopedia of the Medieval World, New York, 2005, p. 466, 501).

<sup>137</sup> Levasseur E., Histoire du commerce de la France, T. I, Paris, 1911, p. 156-160. Pigeonneau H., Histoire du commerce de la France, T. I, Paris, 1885, p. 133, 222, 327. Germain A., Histoire du commerce de Montpellier, T. II, Montpellier, 1861, p. 3. A bulafia D., The Levant Trade of the Minor Cities, p. 185. Reyerson K., The Art of the Deal, p. 40-41.

<sup>138</sup> Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 162.

<sup>139</sup> Pegolotti, p. 60-62.

էր<sup>140</sup>: Մոնպելիենում 1301 թ. կազմված կոմսենդայի պայմանագրով մոնպելիեցի վաճառական Բերտրանդո դե Օրլաքոն իր քույրերից ձեռք էր բերել գումար, որով գնված ֆրանսիական հագուստը պետք է վաճառեր Կիպրոսում և Կիլիկյան Հայաստանում<sup>141</sup>: Այստի ափերի մոտ 1295 թ. վենետիկյան 4 գալեր՝ Մարկո Բազիլիոյի հրամանատարությամբ, գավթել և թալանել էին մարսելցի վաճառական Պեդրո կատրոլինգին պատկանող «Բոնդիմիր» անունով նավը, որն աղտորվում էր Բյուզանդիա: Նավի վրա եղել էին ինչպես նվրապական արտադրության, այնպես էլ Կիլիկյան Հայաստանում ձեռք բերված տարբեր ապրանքներ (թրոյա կտորեղեն, հայելիներ, ածելիներ, փարիզյան գոտիներ, սփռոցներ, անձեռոցիկներ, մոմ, օճառ, կոռիկոսյան գորգեր, բամբակ և այլն): Զանի որ ծովահենային գործողությունն իրականացվել էր Կիլիկյան Հայաստանի ջրային տարածքներում, ուստի մարսելցուն պատճառված վնասների հատուցման նպատակով նույն թվականի սեպտեմբերի 2-ին կազմվել էր իրավական գործ: Ի դեպ, այս փաստաթղթում հիշատակված է նաև փի գրագիր նարբոննացի Պեդրո Դանիելիսը<sup>142</sup>: Մոնպելիեի առևտրի պատմության հետազոտող Կ. Ռեյերսոնը, ուսումնասիրելով այդ քաղաքում գրառված նոտարական գործերը, փաստում է, որ Կիլիկյան Հայաստանը և Այասը մոնպելիեցի վաճառականների առևտրական գործունեության իրականացման կարևոր նպատակավայրերից էին: Մասնավորապես միայն 1330-1344 թթ. Մոնպելիենում վաճառականներն ամենից շատ ներդրումներն արել են դեպի Ալեքսանդրիա, Կիպրոս, Ռոմանիա և Կիլիկյան Հայաստան ուղղված առևտրական ձեռնարկումներում<sup>143</sup>:

<sup>140</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 19, 64. B. N 80, 92.

<sup>141</sup> Reyerson K., The Art of the Deal, p. 40-41. Pryor J., Business Contracts of Medieval Provence, p. 77.

<sup>142</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 164-165. Барсегов Ю., Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, с. 79-80.

<sup>143</sup> Reyerson K., The Art of the Deal, p. 38, 40-41. Նույնի՝ Business, Banking, and Finance in Medieval Montpellier, p. 14.

1296-1310 թթ. Կիպրոսում գրառված նոտարական հարյուրավոր գործերից առանձացրել ենք որպես Նարբոննայի և Մարսելի հյուպատոսներ հանդես եկած բոլոր անձանց: Այսպես, որպես Նարբոննայի հյուպատոսներ ներկայացել են Բեռնարդո Ֆայդիրը (1299 թ. մարտի 6), Բեռնարդո Կապոդուան (1299 մայիսի 23) և Բեռնարդո Ֆարսիտը (1300 թ. հոկտեմբերի 14): Ընդ որում, առաջին ներկուսի տիտղոսների շարադրանքներում նշված չէ աշխարհագրական որևէ ցուցիչ, այլ պարզապես գրված է «Նարբոննայի հյուպատոս» արտահայտությամբ: Եվ միայն Ֆարսիտի դեպքում է ընդգծված, որ նա Նարբոննայի հյուպատոսն է եղել Ֆամագուստայում: Հարյուրավոր փաստաթղթերում որպես Մարսելի հյուպատոս գրանցված է միայն մեկ անձ՝ Ուգո Ռայմոնդուրը<sup>144</sup>: Քիչ չեն դեպքերը, երբ հարավեվրոպական քաղաքներն Արևելքում Կիպրոսի, Կիլիկյան Հայաստանի, իսկ նրբումն էլ խաչակրաց նավահանգիստների համար ունենում էին մեկ ընդհանուր հյուպատոս: Ուստի չենք բացառում, որ Կիպրոսում հանգրվանած վերոնշյալ պաշտոնյաները կարգավորում էին նաև Կիլիկյան Հայաստան այցելող իրենց հայրենակիցների հետ ծագած զանազան խնդիրները: Այս տեսակետը կարելի է որոշ չափով հիմնավորել՝ ուսումնասիրելով Կիպրոսում ջննդվացի նոտար Լամբերտո դե Սամբուչետոյի կազմած արժեքավոր տեղեկություններով հարուստ մի քանի գործեր: 1300 թ. հուլիսի 30-ին Ֆամագուստայում վերոհիշյալ Նարբոննայի հյուպատոս Բեռնարդո Ֆարսիտը մի խումբ նարբոննացիների հետ մասնակցում էր մի առևտրական ձեռնարկման, որը պետք է իրականացվեր Այասում<sup>145</sup>: Կրկին Ֆամագուստայում 1301 թ. մայիսի 30-ին ձևակերպված մի պայմանագրում ասվում է, որ արդեն հանգուցյալ Բեռնարդո Ֆարսիտի գործընկեր և անդրծովյան ներկրներում նրա ունեցվածքի հավաքագրող նշանակված Բեռնարդո Ինարդուսը հանձնարարում էր ներկու նարբոննացիների՝ Գվիլելմո Ռեբոլլուսին և Ջիովաննի Ջիբերտուսին,

<sup>144</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 103, 104, 105, 146. Polonio V., նշվ. աշխ., N 50:

<sup>145</sup> Desimoni C., Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 105-106.

զանձել Ֆարսիտի կողմից նախկինում պարտք տրված 2797 հ. ն. դ. գումարը, որի պարտապանը ոչ այլ որ, քան Հայոց արքա Հնթում Բ-ն<sup>146</sup> էր եղել<sup>147</sup>: Մի քանի ամիս անց՝ հոկտեմբերի 2-ին, Ինարդուսը, նարբոննացի 4 այլ պրոկուրատորների միջոցով ստացել էր 2797 հ. ն. դ.-ին համարժեք 754 ս. բ. գումարը, որը Կիլիկյան Հայաստանի արքայի անունից նրանց փոխանցել էր Լորենցո Դեուսայուդա անունով ևս մի նարբոննացի: Այդ նույն օրը Բեռնարդո Ինարդուսը խոստանում էր կրկին Լորենցո Դեուսայուդայի միջոցով Հնթում Բ-ին հատուցել Բեռնարդո Ֆարսիտի վերցրած 600 հ. ն. դ.-ի պարտքը<sup>148</sup>: Դ. Աբուլաֆիան նույնիսկ կարծիք է հայտնում, որ Ֆարսիտը հավանաբար մահացել էր Կիլիկյան Հայաստանում<sup>149</sup>: Վերոնշյալ փաստներից կարելի է միայն նկատել, որ Նարբոննայի վաճառականներն ակտիվ առևտուր են արել Կիլիկյան քաղաքներում: Վկայություններ կան նույնիսկ Կիլիկյան Հայաստանում քնակություն հաստատած նարբոննացիների մասին. 1299 թ. մայիսի 23-ին Ֆամագուստայում ձևակերպված հանձնարարականում հիշատակված են նարբոննացիներ Պոնսիուս դե Տրինյակոն և նրա վստահված անձ, Կիլիկյան Հայաստանի habitator Գվիլելմո դե Վադելը<sup>150</sup>:

Կիլիկիայի հարավային հրվանդան Ջեֆարիոնից (Ջեֆիտիոն) դեպի հյուսիս-արևելք տեղադրված մի կղզյակի դեռևս միջնադարից անվանել են Պրովնցալ. «կայանս և նաւամատոյցս եղևալ առ պայազատութեամբ մերայոցս՝ վաճառականացն Մոնթելիևի և այլոց Փռանկաց Բրովանս նահանգի նոցին»<sup>151</sup>: Ծատ ավելի արտոնյալ

<sup>146</sup> Սկզբնաղբյուրում նշված չէ թե՛ խոսքը որ արքայի մասին է սակայն հայտնի է, որ 1301 թ. Հնթում Բ-ն արդեն վերահաստատվել էր Հայոց գահին: Թե՛ն նույն 1301 թ. Հնթում Բ-ը գահակից-թագավոր էր հռչակել Լևոն Գ-ին, սակայն վերջինս այդ ժամանակ ընդամենը 11 կամ 12 տարեկան էր, ուստի կարծում ենք, որ նա չի կարող նման առևտրական գործարքների մեջ մտնել օտարերկրյա վաճառականների հետ (Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 360-366):

<sup>147</sup> Polonio V., նշվ. աշխ., N 389:

<sup>148</sup> Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 178, 179.

<sup>149</sup> A bulaffa D., Narbonne, the Lands of the Crown of Aragon, p. 192-193.

<sup>150</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 146.

<sup>151</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 325: Rey E., Les périple des cotes de Syrie et de la Petite Arménie, p. 353.

կարգավիճակ ունեին Մոնպելիեի վաճառականները: Ֆամագուստայում 1299 թ. հունիսի 23-ին գրառված նրկու գործարքում հիշատակված է Պեդրո դե Պոդիոն, որը նրկել էր մոնպելիեցի առևտրականների հյուպատոսը Կիպրոսում և Կիլիկյան Հայաստանում<sup>152</sup>: Սա միակ հիշատակությունն է ոչ միայն Կիլիկյան Հայաստանում, այլև Կիպրոսում Մոնպելիեի հյուպատոսի մասին: Երկու սկզբնաղբյուրում էլ դե Պոդիոյի իրականացրած առևտրական գործողություններն առնչվում են Կիլիկյան Հայաստանի հետ: Վ. Լանգլուան Մոնպելիեի քաղաքային արխիվից նրևան է հանել հույժ կարևորություն ունեցող նրկու փաստաթուղթ, որոնք 1314 և 1321 թթ., համապատասխանաբար Օշին և Լևոն Դ արքաների՝ մոնպելիեցի վաճառականներին շնորհած նրկու արտոնագրերն են: Ընդ որում, պահպանվել են թե՛ հայերենով, և թե՛ հին ֆրանսերենով կնքված օրինակները: Արտոնագրերի բովանդակությունը գրեթե նույնն է. առաջինի տեքստի մեծ մասը վերաբերում է Օշին արքայի հրամանին՝ ուղղված Կիլիկյան Հայաստանի պոռքսիմոս Օշին Եհաննեսին, որով մոնպելիեցի վաճառականների համար սահմանվում էր 2 % տարանցիկ մաքսատուրք. «Ի թագաւորական բարձր հրամանաց՝ գիտացի՛ր պարոն Աւշին Եհաննես պո[ռքսիմ]ոս, որ կու համենք որ Մոնբուգլերցի վաճառականք, գոր կան ի մեր աշխարքս ի յԱյաս ու գոր ի յայտի ի հետ գան ու գնան ի վաճառականութիւն ի մեր աստուածապահ աշխարքս ի յԱյաս, նայ զիրենք այս կերպովս տաս խալսել ի յԱյասոյ բայժտունն, որ ի ծախելն և ի գնելն ի հարոյրն նրկուք մէն տան»: Մյուս շնորհագրով Լևոն Դ-ը պարզապէս վերահաստատել էր իր հոր կողմից տրված արտոնությունները. «... Մոնբուգլերցի վաճառականք բերին առ մեզ գայն համանքն, որ մեր ի Քրիստոս հանկուցեալ հայրն է պարզելն իրենց, որ տնաք. որ իրենք գոր կան ի յԱյաս ու գոր այլ գան իր հետ ու ի հետ մեր աստուածապահ աշ-

<sup>152</sup> Balar d M., Notai genovesi in Oltremare, A., N 159, 160.

խարքս...»<sup>153</sup>: Ուշագրավ են նրկու արտոնագրերում շեշտված հետևյալ հատվածները՝ «...գոր կան ի մեր աշխարքս ի յԱյաս ու գոր ի յայտի ի հետ գան ու գնան...»: Այսինքն, ստացվում է, որ բացի Կիլիկիա առևտրական ուղևորություններ կատարող վաճառականներից, Այասում մոնպելիեցիները նաև տևական բնակություն էին հաստատում: 1335 թ. (կամ 1336 թ.) Կիլիկյան Հայաստան այցելած Պեգոլոտտին վկայում է, որ պրովանսցիներն ապրանքների ներմուծման և արտահանման համար այնտեղ վճարում էին 2 % մաքսատուրք<sup>154</sup>: Եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակամիջոցում Մոնպելիեն Մայորկայի թագավորության կազմում էր և, ավելին, այն պրովանսյան քաղաքներից չէր, այլ գտնվում էր Լանգեդոկ նրկամասի սահմաններում, ապա կարելի է ներկայացնել, որ Պեգոլոտտին նկատի է ունեցել ընդհանրապես հարավֆրանսիացի վաճառականներին: Հ. Ֆինկեի հրատարակած Արագոնի թագավորությանը վերաբերող սկզբնաղբյուրների հավաքածուում հանդիպում ենք Օշին արքայի մի հրամանին, որով Կիլիկյան Հայաստան այցելող կատալոնացիներին նրաշխատորվում էին այն նույն արտոնությունները, որ այնտեղ ունեին պրովանսցիներն ու նարբոնացիները<sup>155</sup>: Անշուշտ, այդ արտոնություններից ամենակարևորը տարանցիկ մաքսատուրքի նվազեցումն էր: Ուստի կարելի է ենթադրել, որ առնվազն Օշին արքայի գահակալության շրջանում թե՛ նարբոնացիների, և թե՛ պրովանսցիների համար սահմանվել էր 2 % մաքսատուրք: Ըստ վերը բերված սկզբնաղբյուրների՝ Կիլիկյան քաղաքներում Հարավային Ֆրանսիայից ժամանած վաճառականները գնում կամ վաճառում էին թանկարժեք մետաղներ և քարեր, մետաքս, համեմունքներ, բամբակ, ինչպես նաև նվրոպական բազմատեսակ ապրանքներ:

<sup>153</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Armenie, p. 178-179, 185-186. Микаелян Г., նշլ. աշխ., էջ 392-393: Germain A., նշլ. աշխ., էջ 10-11: A bulafia D., A Mediterranean Emportium: The Catalan Kingdom of Majorca, p. 182, 201.

<sup>154</sup> Pegolotti, p. 60.

<sup>155</sup> Finke H., նշլ. աշխ., էջ 741-742:

Թեև XIII դ. և XIV դ. առաջին կեսին Մոնպելիեն և Բալեարյան կղզիներն *Արագոնի թագավորության* տիրապետության տակ էին, սակայն Կիլիկյան Հայաստանի հետ վերջինիս առևտրական կապերին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ առանձին: Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական հարաբերությունների հաստատմամբ Արագոնի թագավորությունը սկսեց առավել հետաքրքրվել 1270-ական թվականներին, երբ պապը 1274 թ. Լիոնի եկեղեցական ժողովում որոշակի արգելքներ դրեց Եգիպտոսի սուլթանության հետ նրա տնտեսական հարաբերությունների վրա<sup>156</sup>: Պատահական չէ, որ այդ ժամանակամիջոցում Այասում գրառված նոտարական գործերում գրանցված են մի խումբ բարսելոնցիներ: Այստում 1274 թ. փետրվարի 27-ին կազմված պայմանագրի համաձայն՝ բարսելոնացիներ Պեդրո Մայոլին, Բեռնարդո Դատուրատիսն ու Պեդրո Ռայմոնդին կիլիկյան Պալո նավահանգստում խարխիս գցած իրենց «Մանտա Լուչիա» նավը վարձավճարով տրամադրում էին Պեդրո Թոմեյին և Գվիլելմո Լիդոնեյին (կրկին բարսելոնցիներ), որպեսզի նրանք Բարսելոնա տեղափոխվեին իրենց ապրանքները, որոնց թվում նշված են 90 պարկ բամբակ և որոշ քանակությամբ պաղլնդ ու պղպնդ: Նույն թվականի մարտի 9-ին Այասում ձևակերպված մի հանձնարարականում վերոնշյալ կատալոնացիների հետ ի հայտ են գալիս ևս երկուսը: Հանդիպում է նույնիսկ նավարացի մեկ առևտրական՝ Մարտինուս անունով<sup>157</sup>: Կատալոնական նավահանգիստներից դեպի Կիլիկյան Հայաստան առևտրական կանոնավոր նավագնացությունը հավաստող վկայություններ կան «Մովային կոնսուլատի» փաստաթղթերի ժողովածուում, ինչպես նաև Բարսելոնայում կնքված կոմմենդայի և այլ տնտեսի գործարք-

<sup>156</sup> **Mutafian C.**, La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles), p. 107-108. **Capmany y de Montpalau A. de**, Memorias históricas sobre la marina, V. II, Barcelona, 1963, p. 889. **Feliu G.**, El comercio catalán con Oriente // Revista de Historia Económica, V. 4, N 3, Madrid, 1988, p. 697-699. **Abadia J.**, La corona de Aragón en el Mediterraneo medieval (1229-1479), Zaragoza, 1979, p. 37, 41.

<sup>157</sup> **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 1, 35, 41.

ների ժողովածուներում<sup>158</sup>: Այն, որ կատալոնացի վաճառականները Կիլիկյան Հայաստանում առևտրական արտոնագիր ստացել են՝ անտարակույս է: Թեև պայմանագիրը չի պահպանվել, սակայն մի շարք սկզբնաղբյուրներում բավարար քանակությամբ վկայություններ կան, որոնք անհերքելիորեն ապացուցում են դրա եղելությունը: Այսպես, Կ. Մութաֆյանը, հիմք ընդունելով Արագոնի Թագավորական արխիվում պահպանված մի փաստաթուղթ՝ գտնում է, որ արտոնագիրը կատալոնացիներին շնորհել է Լևոն Բ-ը, սակայն դրա կնքման ճշգրիտ ժամանակը մնում է անհայտ<sup>159</sup>: Միայն այն փաստը, որ 1297 թ. հուլիսի 23-ին գրված նամակով Արագոնի արքա Խայմե II-ը (Հակոբ) (1291-1327) Հնթում Բ-ին խնդրում էր հարգել նրա հոր՝ Լևոն Բ-ի կողմից կատալոնացի առևտրականներին տրված արտոնագրի պայմանները, բացառում է որևէ կասկած՝ կապված այդ շնորհագրի հավաստիության հետ<sup>160</sup>: Վ. Լանգլուան, Վ. Հնյոը և Գր. Միքայելյանը հայ-կատալոնական առևտրական պայմանագիրը գլխավորապես կապել են 1293 թ. Խայմե II-ի՝ Կիպրոս, Կիլիկյան Հայաստան ու Իլյսանության արքունիք ուղարկած պատվիրակության հետ<sup>161</sup>: Կ. Մութաֆյանը նկատում է, որ այս դեպքում ուղարկման ժամանակի վերոնշյալ թվագրումը հավանական չէ, քանի որ նույն 1293 թ. Եգիպտոսի սուլթանի հետ պայմանագիր կնքած Խայմե II-ը դժվար թե միաժամանակ դաշինքի առա-

<sup>158</sup> **Capmany y de Montpalau A. de**, Libro del Consulado del Mar, p. 219, 300-301. **Pardessus J. M.**, նշվ. աշխ., էջ 80, 301: **Otten-Froux C.**, Chypre, un des centres du commerce catalan en Orient, p. 133-137. **Maltezeou Ch.**, նշվ. աշխ., էջ 118:

<sup>159</sup> **Mutafian C.**, La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles), p. 108.

<sup>160</sup> Հայտնի է որ նամակը Հայոց արքային հանձնող պատվիրակությունը կազմված էր բարսելոնցի մի խումբ առևտրականներից, որոնց գլխավորել էր ոմն Գիյոմ Պեր դե Ֆոնտրոնը (**Mutafian C.**, La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles), p. 108. **Otten-Froux C.**, Chypre, un des centres du commerce catalan en Orient, p. 135).

<sup>161</sup> **Finke H.**, նշվ. աշխ., էջ 743: **Langlois V.**, Le Trésor des chartes d'Arménie, p. 163. **Heyd W.**, նշվ. աշխ., հ. II, էջ 88: **Микаелян Г.**, նշվ. աշխ., էջ 392:

ջարկ աներ Հուլիանյաններին և ավելացնում, որ արագոնյան պատվիրակությունն Իլխանության արքունիք հավանաբար կազմակերպվել է ի պատասխան 1305 թ. Օլջեյթու իլխանի (1304-1317)՝ Արևմուտք ուղարկած նամակի<sup>162</sup>: Նա նշում է նաև, որ սխալի հնդինակը Մ. դե Նավարենտն է նդել<sup>163</sup>: Մինչդեռ, վերջինիս տվյալների վրա են հիմնվել թե՛ Վ. Լանգուան, և թե՛ Վ. Հեյդը, իսկ Գր. Միքայելյանն իր հենրթին հղում է կատարել Վ. Լանգուային: Կ. Մութաֆյանի տեսակետն ավելի համոզիչ կդառնա, եթե կրկին անդրադառնանք Հ. Ֆինկեի ժողովածուում տեղ գտած Օշին արքայի հրամանին, որով, ինչպես արդեն նշվեց, կատալոնացի առևտրականները նոր արտոնություններ էին ստանում: Անշուշտ, այս հրամանը կարող էր լինել հենց այն պատասխանը, որն Օշինից ակնկալել էր Խայմե II-ը<sup>164</sup>: Ինչևհետև նշենք, որ պատվիրակությունը գլխավորել էր կատալոնացի Պիեռ Դեսպորտենը, որի առաքնությունը ներկայացվում էր որպես առավելագույն քաղաքական, այն է՝ ամրապնդել Արևմուտքի և Իլխանության դաշինքը և, ավելին, կազմակերպել խաչակրաց նոր արշավանք մամլուքների դեմ: Մակայն դեսպանն իր միապետի անունից առևտրական արտոնությունների տրամադրման վերաբերյալ բազմաթիվ խնդրանքներ էր ներկայացրել Կիպրոսում և Կիլիկյան Հայաստանում: Ամենայն հավանականությամբ, արտոնությունների թվում նդել են Կիլիկյան Հայաստանում առևտրականի տրամադրումն ու նախկինում վճարված 4 % տարանցիկ մաքսատուրքի նվազեցումը: Պատահական չէ, որ Պեգոլոտտի վկայությամբ կատալոնացիների համար Կիլիկյան Հայաս-

<sup>162</sup> **Mutafian C.**, La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles), p. 112. **Coulon D.**, նշվ. աշխ., էջ 44:

<sup>163</sup> **Navarrete M. F.**, Disertacion historica sobre la parte que tuvieron los españoles en las guerras de ultramar // Memorias de la Real Academia de la Historia, T. V, Madrid, 1817, p. 175-178. **Mutafian C.**, La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles), p. 112. **Coulon D.**, նշվ. աշխ., էջ 44:

<sup>164</sup> **Finke H.**, նշվ. աշխ., էջ 741-742: **Mutafian C.**, La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles), p. 112. **Hillgarth J. N.**, նշվ. աշխ., էջ 176:

տանում սահմանված էր 2 % մաքսավճար, ինչն արտոնյալ կարգավիճակի ցուցիչ էր<sup>165</sup>: Թեև առաջին արտոնագրի շնորհման ժամանակամիջոցը վերաբերում է XIII դ. 70-80-ական թվականներին, սակայն Կիլիկյան Հայաստանի համար նախատեսված կատալոնյան հյուպատոսության մասին վկայություններն ավելի ուշ ժամանակաշրջանից են: Այսպես, XIV դ. ստեղծված կատալոնյան բոլոր հյուպատոսությունների ամբողջական ցանկում հիշատակված է նաև Կիլիկյան Հայաստանը: Այստեղ սսվում է, որ կատալոնյան հյուպատոսությունը հիմնվել էր 1347 թ. հոկտեմբերի 15-ին և ծառայելու էր ոչ միայն Կիլիկյան Հայաստանի, այլև Կիպրոսի համար: Միաժամանակ նշված է, որ առևտրական գործունեություն ծավալելու համար կատալոնացիներն օգտվելու էին Տարսոն և Ալեքսանդրետ քաղաքներից, ինչը բացատրելի է, քանզի 1347 թ. Այասն ընկել էր մամլուքների տիրապետության տակ<sup>166</sup>: Այդուհանդերձ, Բարսելոնայի առևտրի պատմության հայտնի մասնագետ Դ. Լուլոնը գտնում է, որ XIV դ. Մերձավոր Արևելքում գործել է միայն մեկ հյուպատոսություն՝ նախատեսված Կիլիկյան Հայաստանի և ասորական նավահանգիստների համար և ժխտում այն տեսակետը, որ կատալոնացիները 4 առանձին հյուպատոսություններ են ունեցել Այասում, Տյուրոսում, Բնյրոսում և Դամասկոսում (ի դեպ, նա չի խոսում Կիպրոսի մասին)<sup>167</sup>: Չի բացառվում, որ 1347 թ. Կիպրոսում և Կիլիկյան Հայաստանում ոչ թե ստեղծվել է նոր հյուպատոսություն, այլ վերաբացվել է նախկինում նդածը: Մակայն այս խնդրին առնչվող հավելյալ նյութեր չեն հանդիպում: Նոտարական սկզբնաղբյուրների համաձայն՝ Արագոնի թագավորությունից Կիլիկյան Հայաստան առավել հաճախ այցելում էին բարսելոնցի առևտրականները, որոնց հի-

<sup>165</sup> **Pegolotti**, p. 60.

<sup>166</sup> **Capmany y de Montpalau A. de**, Memorias históricas sobre la marina, V. I, p. 257, 380, V. II, p. 859.

<sup>167</sup> **Coulon D.**, նշվ. աշխ., էջ 66-67:

շատակամ ապրանքների թվում հանդիպում են բամբակ, համեմունքներ, հացահատիկ և այլն<sup>168</sup>:

Խաչակրաց իշխանություններից Կիլիկյան Հայաստան ժամանած վաճառականներին պայմանավորեցին անվանում ենք «լատիններ», սակայն նրանք Աքքայում, Անտիոքում, Բնյրություն, Տրիպոլիում, Սիդոնում և այլ քաղաքներում հաստատված նույն ջննովացի, վննտիկցի, պիզացի և նվրոպական այլ ծագման անձինք էին: Մոնղոլների և մավրյանների միջև ռազմական յուրաքանչյուր բախումից հետո այդ քաղաքներից փախստականների առաջին հանգրվանները Կիպրոսն ու Կիլիկյան Հայաստանն էին: Առաջին նկատելի հոսքը տեղի ունեցավ 1268 թ. Անտիոքի գրավումից հետո, ինչն արտահայտված է նաև 1274, 1277 և 1279 թթ. Այասի ջննովական նոտարական գործերում: Հաջորդ առավել մեծ ներգաղթը սկսվեց 1291 թ. խաչակիրների վերջին տիրույթների անկումից հետո<sup>169</sup>: 1317 թ. փետրվարի 17-ին Այասում վննտիկցի նոտար Ֆնիչն դե Մերլիսի կազմած գործարքին մասնակցել է ուն Հովհաննես (Ջիովաննի) դե Սանկտո Յուլիանոն, որը ներկայացված է որպես Այասի և Աքքայի burgesius: Դատելով անվան հնչողությունից՝ Հովհաննեսը, նթն ոչ իտալական, ապա, ամենայն հավանականությամբ, նվրոպական ծագում է ունեցել: Կարելի է կարծել նաև, որ Աքքան նրա նախկին բնակավայրն է եղել և հավանաբար Այաս տեղափոխվել է խաչակրաց քաղաքի անկումից հետո: Վերոնշյալ պայմանագրի կնքումից ուղիղ տասը տարի անց՝ 1327 թ. փետրվարի 25-ին, նույն նոտարի կազմած գործարքում նշված է, որ Հովհաննեսն այդ ժամանակամիջոցում ևս գտնվել է Կիլիկյան Հայաստանում<sup>170</sup>: Հարկ է նշել, որ «լատին» բնակչության գաղթն առավելապես ուղ-

<sup>168</sup> Desimoni C., Actes passés à Famaguste de 1299 à 1301, p. 60-61. Polonio V., նշվ. աշխ., N 257: Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 80.

<sup>169</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 6, 39, 39a, 43, 43a, 45, 47, 47a, 69, 95, 105, 108. B. N 4, 5, 10, 25, 55, 71, 77, 122, 123. Coureas N., Economy, p. 128-129. Otten-Froux C., L'Asie dans la seconde moitié du XIII<sup>e</sup> siècle, p. 154. Racine P., L'Asie dans la seconde moitié du XIII<sup>e</sup> siècle, p. 196-197.

<sup>170</sup> Bondi Sebellico A., նշվ. աշխ., h. 1, N 76, h. 2, N 1189:

ղված է եղել դեպի կիպրական քաղաքներ, ինչը տրամաբանական է, քանի որ Կիպրոսի թագավորությունն ինքը խաչակիրների իշխանության տակ էր գտնվում: Ի դեպ, Ս. Բլիզյուկը գտնում է, որ 1347 թ. Այասի կորստից հետո Կիլիկյան Հայաստանից նվրոպացի բնակչության զանգվածային հոսքը դեպի Կիպրոս ավելի մեծ է եղել, քան հիշյալ 1291 թ. միգրացիոն ալիքը<sup>171</sup>:

Բազմաթիվ փաստեր վկայում են Կիլիկիայի Հայկական թագավորության և Արևելքում հաստատված նվրոպական *հոգևոր-ապետական միաբանությունների* առևտրատնտեսական սերտ շփումների մասին: Դրանց թվում ընդգրկված էին նրեք ամենահայտնի՝ Երուսաղեմի Հիվանդախնամ կամ Հյուրընկալների, Տաճարականների և Տևտոնական միաբանությունները: Դեռևս XII դ. կեսերից Տաճարականների միաբանությունը կարողացել էր Ամանոսում հաստատել բերդամրոցների ցանց, ապա ծավալվել դեպի Ալեքսանդրեոսի ծոցի ափերը՝ տիրանալով Բոննել նավահանգրտին, որը գտնվում էր Կիլիկյան Հայաստանի և Ատրիքի սահմանագծում<sup>172</sup>: Կիլիկիայում այդ միաբանություններին տրված տարածքային շնորհումներին հանգամանորեն անդրադարձել են Վ. Լանգլուան, Ս. Բոռնազյանը, Ջ. Ռիլի-Սմիթը, Մ. Շևալիեն և այլոք, ուստի կփորձենք առավելապես կենտրոնանալ նրանց ստացած առևտրական արտոնությունների վրա<sup>173</sup>: Այսպես, Լևոն Ա-ի հրամանով 1210 թ. ապրիլ և օգոստոս ամիսներին Հյուրընկալներին էին տրա-

<sup>171</sup> Бл изнюк С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 143-144. Polonio V., նշվ. աշխ., N 39, 83, 89, 96, 228, 368: Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 80.

<sup>172</sup> Dedeyan G., նշվ. աշխ., h. 2, էջ 795-797, 821-822: Շևալիե Մ., Կիլիկյան Հայաստանի և հոգևոր-ապետական միաբանությունների փոխարարությունների պատմությունից, Ե., 2007, էջ 83-84: Balletto L., Il commercio A meno-Italiano (secoli XIII-XV), p. 187.

<sup>173</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 74-82. Բոռնազյան Ս., Խաչակիր օրդենների և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական առևտրությունների պատմությունից, «Պատմա-քաղաքական հանդես», 1963, N 3, էջ 175-184: Riley-Smith J., The Templars and the Teutonic Knights // The Cilician Kingdom of Armenia, ed. Boase T., Edinburgh & London, 1978, p. 107-115. Շևալիե Մ., նշվ. աշխ., էջ 82-91:

մադրվել Մելիկիա քաղաքը և մի շարք ամրոցներ<sup>174</sup>: 1212 թ. ապրիլին կրկին Լևոն Ա-ն արտոնագիր էր շնորհել Տևտոնական միաբանության անդամներին, որով նրանց բացառիկ իրավունք էր վերապահվում առանց տարանցիկ մաքսատուրքի առևտուր անել կիլիկյան Հայաստանի ամբողջ տարածքում, այդ թվում՝ ծովային տարածություններում<sup>175</sup>: Հայոց նույն արքան 1214 թ. ապրիլի 23-ին կիլիկիայի 10 բնակավայր, այդ թվում նաև Կանամելլա նավահանգիստը նրկու տարով վարձավճարով հանձնել էր Հյուրընկալներին, որոնց հնարավորություն էր ընձեռվում հավաքել բոլոր տեսակի հարկերը<sup>176</sup>: 1236 թ. հունվարի 22-ին Հնթում Ա-ն և Ջաբել թագուհին Տևտոնականներին տրամադրել էին Հարունիա ամրոցը՝ միաժամանակ նրանց արտոնելով առանց տարանցիկ մաքսավճարի առևտուր անել կիլիկիայի տարածքում<sup>177</sup>: Եվ վերջապես, կրկին Տևտոնական միաբանությունը 1271 թ. Սարվանդիքարի տեր Կոստանդինից բաժտուն հիմնելու իրավունք էր ձեռք բերել<sup>178</sup>: Դատելով շտայոբն տրված արտոնություններից՝ կարելի է եզրակացնել, որ կիլիկիայի արքունիքը մեծ եկամուտներ է ստացել միաբանություններից: Ջ. Ռիլ-Սմիթը գտնում է, որ Տաճարականները, ամենայն հավանականությամբ, Լևոն Ա-ին հարկեր էին վճարում Բոննել<sup>179</sup> բնակավայրից օգտվելու դիմաց<sup>180</sup>: Նկատենք, որ միաբանությունների վարձակալած տարածքները կամ նավահանգիստներ էին, կամ էլ առևտրական ճանապարհների հանգուցակետեր: Տևտոնա-

կաններին 1236 և 1271 թթ. շնորհագրերով տրամադրված Հարունիա և Սարվանդիքար<sup>181</sup> բնակավայրերը միմյանցից ընդամենը մի քանի կմ հեռավորության վրա էին գտնվում, ինչը հուշում է այդ վայրերում միաբանության անդամների կուտակման մասին: Իտալական նոտարական գործերում ևս հիշատակություններ են պահպանվել միաբանությունների առևտրական գործունեության վերաբերյալ<sup>182</sup>: Օրինակ, 1279 թ. փետրվարի 11-ին Այասում պրովանսցի Գվիլելմո Ռայմոնդոն մոտ 442 հ. ն. դ.-ի փայտանյութ էր վաճառել ամն Անդրեա Ռասպերիոյին. ապրանքը Գվիլելմոն պետք է ծովով տեղափոխեր նավերի բեռնաթափման համար նախատեսված ինչ որ վայր, որը պատկանում էր Տաճարականներին<sup>183</sup>: Ղ. Ալիշանը գտնում է, որ սապետներին հատկացված այդ նամավամատույցը եղել է Այասում<sup>184</sup>: Հարկ է նկատել, որ XIII դ. վերջին և XIV դ. սկզբին կիպրական քաղաքներում հաստատված միաբանությունների անդամներն իրենց գործարքներում սովորաբար շրջանցել են կիլիկյան Հայաստանը<sup>185</sup>:

Կիլիկյան Հայաստան այցելում էին նաև *մահմեդական* վաճառականներ: Դրանք թե՛ Բաղդադի վաճառականներն էին, որոնք Պարսից ծոցով ստացվող ապրանքներն Այաս-Թավրիզ մայրուղով բերում էին կիլիկյան Հայաստան, և թե՛ Եգիպտոսի սուլթանությունից ու Ասորիքից ժամանած առևտրականները<sup>186</sup>: 1285 թ. մայիսի 7-

<sup>174</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 115-116.  
<sup>175</sup> Նույն տեղում, էջ 117-120:  
<sup>176</sup> Նույն տեղում, էջ 124-125:  
<sup>177</sup> Նույն տեղում, էջ 141-143:  
<sup>178</sup> 1271-ին Սարվանդիքարի սենյոր Կոստանդինի կողմից Տևտոնական օրդենին տրված բաժտուն ունենալու արտոնագիրը, «Ազգամովեպ», 1873, էջ 108-112: Morton N., The Teutonic Knights during the Ibelin-Lombard Conflicts // The Military Orders, V. 4, On Land and by Sea, ed. Judi Upton-Ward, Ashgate, 2008, p. 141.  
<sup>179</sup> Բոննել նավահանգիստը գտնվում էր Ալեքսանդրետի ծոցի ափին՝ Ասորիքի և կիլիկյան Հայաստանի սահմանին. ժամանակ առ ժամանակ քաղաքը եղել է կիլիկյան Հայաստանի տիրույթներում, սակայն 1268 թ. այն գրավվում է Եգիպտոսի մամլուքյան սուլթանության կողմից (Ալիշան Ղ., Սիսուան, էջ 423):  
<sup>180</sup> Riley-Smith J., նշվ. աշխ., էջ 107-108:

<sup>181</sup> Սարվանդիքար և Հարունիա ամրոցները գտնվում էին կիլիկյան Հայաստանի արևելքում՝ բավական հեռու ծովափնյա շրջաններից: Դրանք կառուցվել էին Ասորիքից կիլիկյան Հայաստանով դեպի հյուսիս ձգվող ճանապարհի մոտ (Հայաստանի պատմության ատլաս, էջ 76-77):  
<sup>182</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 92, 106. Շևալիե Մ., նշվ. աշխ., էջ 93-95:  
<sup>183</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 64.  
<sup>184</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 366: Ճևախյան Մ., Այաս նավահանգիստ-քաղաքը կիլիկիայում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 3, էջ 105:  
<sup>185</sup> Balard M., Notai genovesi in Oltremare, A., N 10, 111. Pavoni R., Notai genovesi in Oltremare, A., N 6, 22, 46, 231. Նույնի՝ Notai genovesi in Oltremare, B., N 109, 150, 155, 166a, 167. Polonio V., նշվ. աշխ., N 108, 218, 245, 308:  
<sup>186</sup> Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 13, 15. Alishan L., L'Armeno-Veneto, p. 117-118. Ashtor E., Levant Trade in the Later Middle

ին Լևոն Բ-ի և Եգիպտոսի սուլթան Կալաունի միջև կնքված հաշտության պայմանագրում ամրագրվել էր. «Լևոն թագաւոր կը խստանայ արձակել իր բանտերուն մէջ գտնուած միալիման վաճառականները, ինչ ցնդի և ինչ ազգի ալ պատկանին, և անոնց վերադարձնել իրենց ինչքերը, ապրանքները, այր կամ կին ստրուկները, ձիերը, ջորիները...», ապա շարունակվում է. «Ռումի նրկրէն և Արևելքի ու Արևմտքի աշխարհներէն, Իրազէն, Պաղտատէն, Պարսկաստանէն և այլ տէրութիւններէ եկող ո՛ր և է վաճառական, հպատակ (ռայա), ճամբորդ և ամեն դատակարգի մարդ որ մտնէ Հայոց նրկիրը, այն տնդէն Սուլթանին տէրութեան սահմանն անցնելու համար, թագաւորն անոր պիտի ընծայէ կատարնալ թոյլտութիւն իր ճամբան լրացնելու...», «Եթէ մահմետական վաճառական մը Լևոն թագաւորի տիրապետութեան մէջ մննի՝ խնամքով պիտի պահուին անոր ինչքերը, որոնք պիտի յանձնուին մեր տիրոջ Սուլթան Մելիք Մանսուրի տնդակալներուն...»<sup>187</sup>: Մի արաբ պատմիչի վկայությամբ, երբ մամլուքները 1335 թ. ներխուժել էին Կիլիկիա, Այասում Բաղդադից և այլ վայրերից ժամանած մոտ 2000 մահմեդական վաճառական էր եղել<sup>188</sup>:

Եվ այսպես, Կիլիկյան Հայաստանում օտարները վաճառականական համայնքների ձևավորումը սկսեց նախանշվել արդեն XIII դ. սկզբից, այն ժամանակ, երբ պնտությունը դեռ նոր էր ընդգրկվում միջազգային առևտրական հարաբերություններում: Ի սկզբանե հայ արքաների տված բազմաթիվ շնորհագրերը բացառիկ արտոնյալ պայմաններ էին նրաշխավորում լ՛եննտիկից, Ջննուվայից, Պիզայից, Արագոնի թագավորությունից և եվրոպական այլ պնտություններից ու քաղաքներից ժամանած վաճառականներին: Կիլիկյան

Հայաստան այցելած, ինչպես և այնտեղ բնակություն հաստատած վաճառականությունն աչքի է ընկել բազմազգ և սոցիալական բազմակերպ շնորավորված կազմով: Բացի արհեստավարժ առևտրականներից՝ հանդիպում են բազմատեսակ մասնագիտությունների տեր անձինք, որոնք, անշուշտ, Կիլիկյան Հայաստան էին գալիս սպասարկելու այնտեղ հաստատված իրենց մեծաթիվ հայրենակիցներին: Հայ կանանց հետ եվրոպացիների ամուսնության օրինակները, նրանց բազմաթիվ կտակ-փաստաթղթերը վկայում են, որ XIII դ. մինչև XIV դ. 30-ական թվականների վերջն օտարազգի վաճառականների մի մեծ խումբ Կիլիկյան Հայաստանում մշտական բնակություն է հաստատել:

Agés, p. 56. De Mas Latrie L., Histoire de l'île de Chypre sous le règne des princes de la maison de Lusignan, p. 74. Fleet K., նշվ. աշխ., էջ 24:

<sup>187</sup> Բակուրյան, Դաճազիր խաղաղութեան, էջ 75-76: Սուրիսյան Ա., նշվ. աշխ., էջ 220-221:

<sup>188</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 56. 'Նույնի' Observations on Venetian Trade in the Levant in the XMth Century // Journal of European Economic History, N 5, Rome, 1976, p. 535-536.

Միջազգային առևտուրն առաջնային նշանակություն ուներ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության համար: Լայն սպառում ապահովելով բազմատեսակ ապրանքների համար՝ այն խթանում էր նրկրի արհեստների ու գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև մեծ նկատուտներ բերում պետական գանձարան: Արդեն XIII դ. սկզբից Կիլիկյան Հայաստանն առևտրական կապեր հաստատեց միջերկրածովյան նրկրների՝ մասնավորապես Վենետիկի և Ջենովայի Հանրապետությունների հետ, որոնք անմիջապես սկսեցին մրցակցել Հայոց թագավորությունում ամուր դիրքեր գրավելու համար: Գրեթե հարյուր քառասուն տարի Հայկական Կիլիկիան կարևոր դերակատարում էր պահպանում միջերկրածովյան առևտրում, ինչը չէր կարող չանդրադառնալ պետության արտաքին քաղաքականության վրա: Սույն գլխում փորձելու ենք վերհանել միջազգային առևտրի ազդեցության աստիճանը Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների վրա:

1096-1270 թթ. տեղի ունեցած խաչակրաց արշավանքներն իրականություն չէին դառնա, եթե չլինեին Վենետիկի, Ջենովայի, Պիզայի և իտալական այլ հանրապետությունների ու քաղաքների տրամադրած մեծաքանակ նավերը, որոնց դիմաց նրանք արտոնություններ էին ստանում գրավված տարածքներում: Իտալական հանրապետությունները, հաճախ լուրջ ազդեցություն գործելով նույնիսկ պապական դիվանագիտության վրա, ծանրակշիռ դիրքեր ունեին Եվրոպայի քաղաքական կյանքում: Միաժամանակ լինելով միջազգային առևտրի նախաձեռնող գլխավոր կողմը՝ նրանք մեծ նկատուտներ էին ապահովում Արևելքի գերտերություններին՝ հատկապես Եգիպտոսի մամլուքյան սուլթանությանն ու մոնղոլական պետություններին, ինչը վերջիններիս վրա քաղաքական ազդեցությո-

ւյն ունենալու բավական լայն հնարավորություններ էր ընձևում: Ի տարբերություն XIII-XIV դդ. Մերձավոր Արևելքում խորացող տնտեսական ճգնաժամի՝ Արևմտյան Եվրոպայում այդ նույն ժամանակամիջոցում տեղի էին ունենում ֆինանսատնտեսական խորքային ձևավոխումներ: Դրանց շնորհիվ տնտեսական շահն ավելի կատարելագործված և արդյունավետ էր սկսում ներագդել քաղաքական գործընթացների վրա: Այդ փոխազդեցությունն ամենից ցայտուն արտահայտվում էր միջազգային առևտրի պարագայում: Եվրոպայում ֆինանսադրամական հարաբերություններում հեղափոխական փոփոխությունների բնութագրիչ օրինակներից էր բանկային համակարգի ձևավորումն ու զարգացումը: Դեռևս XII դարում եվրոպական բանկային գործի գլխավոր կենտրոնի համարում ունեցող տոսկանական Սինա քաղաքի ընկերություններից վերցնելով ժամանակի ֆինանսական գործառնությունների իրականացման հարուստ ավանդույթները՝ արագ հզորացող ֆլորենտական բանկերը սկսած XIII դ. վերջից աստիճանաբար դուրս են մղում այդ նույն սինական ֆինանսական տներին: Ֆլորենցիայի մեծահարուստ ընտանիքներին պատկանող ու նրանց իսկ ազգանուններով անվանված Բարդի, Պերուցցի, Ալիպոլի, Մոցցի և մի շարք այլ բանկերն իրենց մասնաճյուղներն էին հիմնել Արևմտյան Եվրոպայի մեծ քաղաքներում: Դրանցից առավել հզոր Բարդի և Պերուցցի տները կարճ ժամանակամիջոցում սկսեցին ոչ միայն ներգրավվել միջազգային առևտրում, այլ իրենց ֆինանսների միջոցով կարողանում էին ներթափանցել նաև Եվրոպայի քաղաքական կյանք: Բանկերը հաճախ միջնորդի դեր էին կատարում պապական գանձարան ուղղվող տարբեր հարկերի և դրամական այլ մուտքերի համար: Հայտնի է, որ նրանք ներկայացուցչություն ունեին Ավինյոնում, որը Բարդիի ու Պերուցցիի ծաղկման ժամանակաշրջանում (1309-1343) Պապության նստավայրն էր: Միևնույն ժամանակ նրանք մեծ ֆինանսներ էին տրամադրում արևմտամիջրդարական շատ միավետների: Բավական է միայն հիշատակել, որ Ֆրանսիայի հետ Հարյուրամյա պատերազմի (1337-1453) մեջ գտնվող Անգլիայի թագավոր Էդուարդ

III-ը (1312-1377) 1339 թ. Բարդի և Պերուցցի բանկերին 1355000 ֆլորին<sup>1</sup> պարտք ունեւ, որն առեւելի գումար էր: Հենց այդ պարտքերն էլ 1340-ական թվականներին ֆլորենտական բանկերի սնանկացման գլխավոր պատճառ դարձան<sup>2</sup>:

Դեռևս XI դ. երկրորդ կեսին սելջուկների ավերիչ արշավանքների և միաժամանակ կենտրոնական Ասիայում ստեղծված անկայուն իրավիճակի հետևանքով Չինաստանից և Հնդկաստանից Արևմուտք ձգվող առևտրական մայրուղիները, որոնք անցնում էին Իրանով ու Փոքր Ասիայով գրեթե արգելափակվել էին: Սակայն իրավիճակն ամբողջովին ձևափոխվեց Մերձավոր Արևելքում տեղի ունեցած քաղաքական մի շարք կարևոր իրադարձություններից հետո, որոնք, ըստ Վ. Տեր-Ղևոնդյանի՝ հետևյալն էին. նախ՝ վերագրվեց Ասորիքի և Վերին Միջագետքի քաղաքական մասնատվածությունը, երբ, հատկապես Սալահ ադ-Դինի (Այյուբյան սուլթանության տիրակալ՝ 1171-1193) օրոք, Մերձավոր Արևելքում մի հսկա տարածք միավորվեց մեկ պետության կազմում: Երկրորդ՝ Արևելյան Միջերկրականի բոլոր պետությունները սկսեցին առևտրական պայմանագրեր կնքել Վենետիկի, Ջենովայի և եվրոպական այլ երկրների ու քաղաքների հետ: Վերջապես երրորդ իրադարձությունը կիլիկիայի հայկական թագավորության հաստատումն էր<sup>3</sup>: Նկատենք, որ XI-XII դդ. ընթացքում Բյուզանդիայի և Վենետիկի ու Ջենովայի միջև կնքված պայմանագրերում կիլիկյան նավահանգիստները ներկայացվել են որպես բյուզանդական տարածքներ<sup>4</sup>:

XII դ. վերջին խաչակրաց պետություններին Սալահ ադ-Դինի հասցրած ռազմական ծանր հարվածները սասանում էին նաև դրանցում ամրացած Ջենովայի, Վենետիկի և Պիզայի դիրքերը, ինչը

<sup>1</sup> Ֆլորին ոսկե դրամը սկսել է հատվել 1252 թվականից Զորենցիայում և կռել է 3,5 գր (Луццатто Дж., նշվ. աշխ., էջ 411: Ալիշան Ղ., Սիսուան, էջ 379):

<sup>2</sup> Ругенбург В., նշվ. աշխ., էջ 51-92, 102-104: Дживелеров А., նշվ. աշխ., էջ 162: Hunt E., The Medieval Super-companies, p. 127-156.

<sup>3</sup> Տեր-Ղևոնդյան Վ., նշվ. աշխ., էջ 139-140:

<sup>4</sup> Dedeyan G., նշվ. աշխ., հ. 1, էջ 60, 175, 211: Բոզոյան Ա., կիլիկյան Հայաստանի պատմությունը Միջերկրական ծովի պետությունների արևմտյանում, էջ 10-12:

չէր կարող նրանց չստիպել փնտրելու նոր, այլընտրանքային առևտրական հենակետեր: Այդ դերում, անշուշտ, հզորացող կիլիկյան Հայաստանն անփոխարինելի էր: Եվ արդեն 1201 թ. մի քանի ամրափա տարբերությամբ Ջենովայի և Վենետիկի Հանրապետությունները պայմանագրեր են կնքում Հայոց արքա Լևոն Ա Մեծագործի հետ: Ուշագրավ է, որ ջենովացիներն ավելի վաղ էին սկսել քանակ-ցությունները և, ամենայն հավանականությամբ, իրենց իսկ խնդրանքով հայկական կողմից հնարավորություն ստացել նույնիսկ քնակվել Սիսուան, Մամեստիայում և Տարսոնում, մինչդեռ վենետիկցիներին կիլիկյան Հայաստանն այդ ժամանակամիջոցում առավելապես հետաքրքրում էր որպես տարանցիկ երկիր<sup>5</sup>:

Քաղաքական հետագա զարգացումները ցույց տվեցին, որ դրանք նախապատրաստական, ռազմավարական քայլեր էին: Այսպես, նույն 1201 թ. Վենետիկի և 1199 թ. մեկնարկած խաչակրաց IV արշավանքի առաջնորդների միջև կնքվում է պայմանագիր, որով վերջիններին տրամադրվելու էին բավարար քանակությամբ նավեր՝ 33500 զինվորների, 9000 ձիերի և անհրաժեշտ բոլոր սպառազինությունների տեղափոխման համար: Ի դեպ, արշավանքին մասնակցելու էին նաև վենետիկյան զինված ուժերը՝ 94-ամյա դոժ Էնրիկո Դանդոլոյի գլխավորությամբ: Սակայն, Սուրբ Երկիր ուղղվելու փոխարեն խաչակիրները 1204 թ. գրավելով Կոստանդնուպոլիսը՝ հիմնում են Լատինական կայսրությունը<sup>6</sup>: Դրանում Վենետիկի դերն այնքան մեծ է եղել, որ նույնիսկ XIV դ. ստեղծագործած Հելթում Նոլիբրգին այդ իրադարձությունների մասին գրում է հետևյալ տողերը. «Ի թվին ՈՄԳ (1204) գունդ լ-Ֆլանդրն եւ տուկն Վէնետկաց առին զԿոստանդնուպոլիս ի Յունաց, եւ եղև կայսր Կոստանդնուպոլիսի Պաղտինն»<sup>7</sup>:

<sup>5</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Aménie, p. 105-112.

<sup>6</sup> Բարթիկյան Հ., Նյույթեր Լրենտի հայկական գաղութի վերաբերյալ, էջ 493: Commandant B., Histoire des Républiques Maritimes Italiennes, Venise, Amalfi, Pise, Genes, Paris, 1955, p. 71-76.

<sup>7</sup> Գունդ լ-Ֆլանդրն՝ Ֆլանդրիայի կոմս. այստեղ խոսքը վերաբերում է Ֆլանդրիայի կոմս և Լատինական կայսրության առաջին կայսր Բալդուին I-ին

Վենետիկը ոչ միայն արտոնյալ կարգավիճակ ստացավ սևծովյան առևտրում, այլև մեծ թափով սկսեց ընդարձակվել Արևելյան Միջերկրականում: Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական պայմանագրի ստորագրմանը հետևեց Կրնտի գաղութացումը: 1207 թ. գրավելով այդ կղզու գլխավոր նավահանգիստ Կանդիան՝ վենետիկցիներն այն վերածեցին առևտրական կարևոր հանգրվանի, որը նրանց իշխանության տակ մնաց մինչև 1669 թ.<sup>8</sup>: Ջենովային գրեթե դուրս մղելով Սև ծովից՝ Ս. Մարկոսի Հանրապետությունը փորձում էր գերակայություն հաստատել նաև Միջերկրական ծովում՝ այդ թվում մահմեդական պետությունների հետ տարվող առևտրական շփումներում: Հենց վերոնշյալ գործընթացներն էին, որ Իկոնիայի սուլթանությանը մղեցին անցնելու վճռական քայլերի: Փոքր Ասիայում սելջուկների արշավանքների գլխավոր թիրախները դարձան կարևոր նավահանգիստներն ու ճանապարհային հանգուցակետերը: Գր. Միքայելյանն իրավացիորեն նկատել է, որ XIII դ. սկզբին միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի դերակատարության բարձրացումը հարևան պետությունների՝ առաջին հերթին Անտիոքի դքսության և Իկոնիայի սուլթանության հետ հարաբերությունների սրացման հիմնական շարժառիթներից էր<sup>9</sup>: Անտիոքի դքսությունը դեռևս 1193 թ. Կիլիկյան Հայաստանին զիջել էր Պորտուլայից մինչև Այաս ընկած տարածքները: 1205 թ. ձայնողելով Տրապիզոնի գրավումը՝ սելջուկները 1207 և 1214 թթ. կարողացան գրավել Ատտալիա (Անտալիա) ու Սինոպ քաղաքները՝ դուրս գալով Միջերկրական և Սև ծովեր: Ատտալիան 1209-1219 թթ. ընթացքում թեև նրկու անգամ անցել էր Բյուզանդիայի մասնատումից ձևավորված Նիկեայի կայսրությանը, սակայն սուլթան Քեյ Կուբադի (1219-

(1204-1206): Տուվն Վենետիկաց՝ խոսքը վենետիկի դոժ Էնրիկո Դանդուլոյի մասին է (Հնթում Նոյիցի, նշվ. աշխ., էջ 539):

<sup>8</sup> Բարթիլյան Հ., Նյութեր Կրնտի հայկական գաղութի վերաբերյալ, էջ 493: Jacoby D., La colonisation militaire vénitienne de la Crète au XIIIe siècle: Une nouvelle approche // Le partage du monde, échanges et colonisation dans la Méditerranée médiévale, Paris, 1998, p. 298-299.

<sup>9</sup> Микаелян Г., նշվ. աշխ., էջ 191:

1236) օրոք սելջուկները հիմնավորապես հաստատվում են այնտեղ: Ապա 1221 թ. Իկոնիայի սուլթանությունը Կիլիկյան Հայաստանից գրավեց կարևոր նավահանգիստ Կալոնոքոսը, որը վերանվանվեց Ակայաի<sup>10</sup>: Նկատմանք, որ 1205-1210 թթ. միջակայքում Վենետիկի և սուլթան Քեյ-Սուրուվ I-ի (1204-1210) միջև կնքվել էր առևտրական - պայմանագիր<sup>11</sup>: Հետաքրքրական է, որ Կիլիկիայից առևտրական կապ էր պաշտպանվում թե՛ Սինոպի, և թե՛ Ատտալիայի հետ: Ասորիքից Սինոպ ապրանքների տնդավոխման գլխավոր ուղիներից մեկն անցնում էր Կիլիկյան Հայաստանով<sup>12</sup>: Պատահական չէ, որ 1201 թ. Լևոն Ա-ն իր արտոնագրով վենետիկցիներին հնարավորություն էր ընձեռել առանց տարանցիկ մաքսատուրքի առևտուր անել Հայոց թագավորության ամբողջ տարածքում՝ բացառությամբ Կիլիկիան և Ասորիքը միմյանց հետ կապող Պորտուլա լեռնանցքի, որն անցնելիս նրանք պարտավոր էին վճարել այդ հարկատեսակը<sup>13</sup>: Ավելացնենք, որ Վենետիկի և Եգիպտոսի Այյուբյանների միջև առաջին պայմանագիրը կնքվել էր 1208 թ.: Նրանց միջև 1238 թ. ստորագրվեց նոր պայմանագիր, որը վերահաստատվեց 1244 թ.: Հատկանշական է, որ Հալեպի Այյուբյաններից ևս վենետիկցիները 1225 և 1229 թթ. ստացել էին նման արտոնագրեր<sup>14</sup>:

Փորձելով կասեցնել Վենետիկի առաջխաղացումը՝ Ջենովան 1215 թ. Կիլիկյան Հայաստանից, իսկ 1218 թ. Կիպրոսի թագավորությունից ձեռք բերեց նոր արտոնագրեր<sup>15</sup>: Սակայն շատ չանցած՝ 1219 թ., Նիկեայի կայսրությունից, իսկ 1220 թ. կրկին Իկոնիայի սուլթանությունից Վենետիկի Հանրապետությունը ստացավ իր հեր-

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 191-196: Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 67: Heyd W., նշվ. աշխ., հ. I, էջ 301-304, 366:

<sup>11</sup> Heyd W., նշվ. աշխ., հ. I, էջ 301-304:

<sup>12</sup> Տեր-Ղևոնդյան Վ., նշվ. աշխ., էջ 136-137:

<sup>13</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 110. Микаелян Г., նշվ. աշխ., էջ 192:

<sup>14</sup> S opracasa A., նշվ. աշխ., էջ 33: Heyd W., նշվ. աշխ., հ. I, էջ 402-406:

<sup>15</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 126. Otten-Froux C., Les «Italiens» à Chypre (fin XIIIe-XVe siècles) // Identités croisées en un milieu méditerranéen: le cas de Chypre (Antiquité-Moyen âge), Mont-Saint-Aignan, 2006, p. 281.

թական առևտրական շնորհագրերը: Հնուաքրքրական է, որ Նիկեայի կայսր Թեոֆորոս I Լասկարիսի (1208-1222) հետ կնքած հիշյալ պայմանագրով Վենետիկն էր, որ հույն վաճառականներին թույլ էր տալու առևտուր անել Կոստանդնուպոլսում, նրան նրանք վճարեին պահանջվող տարանցիկ մաքսատուրքը<sup>16</sup>:

1243 թ. Քյոսեմ-դաղի ճակատամարտում Իկոնիայի սուլթանությունը ջախջախիչ պարտություն է կրում մոնղոլական զորքերից, ինչը վերջ է դնում նրա գերիշխանությանը Փոքր Ասիայում: Դրանով սելջուկները զրկվում էին նաև առևտրական կարևոր ճանապարհների տնօրինումից: Նույն թվականին Լյուսարիայում Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների միջև կնքվում է համաձայնագիր<sup>17</sup>: Երկու տարի անց՝ 1245 թ., Հնթում Ա-ը վերահաստատում է Վենետիկին շնորհած արտոնագրերը<sup>18</sup>:

Անկասելի արագությամբ առաջ շարժվող մոնղոլական ռազմական մեքենան, այնուամենայնիվ, շրջանցում է Հայկական Կիլիկիան և Տրապիզոնի կայսրությունը: Այս երկու պետությունները Միջերկրական և Սև ծովեր դուրս եկող լավագույն դարպասներն էին, իսկ դրանց ասպատակումը կնշանակեր վերջնականապես խաթարել տարածաշրջանում ձևավորված առևտրական կապերի համակարգը, ինչը հետագայում մեծ եկամուտներ էր ապահովելու մոնղոլներին: Իսկ Կիլիկյան Հայաստանն իր հերթին կարողացավ կողմնորոշվել ձևավորված աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում և զգալիորեն փոխեց Մերձավոր Արևելքում մոնղոլական հետագա նվաճումների ռազմավարությունը:

1245 թ. Լիոնի տիեզերական ժողովում Պապությունը որոշում է պատվիրակություն ուղարկել Արևելք, որի գերնպատակն էր բանակցել մոնղոլների հետ: Այս և հետագայում իրականացված բոլոր առաքելությունների գլխավոր դերակատարները Դոմինիկյան և

Ֆրանցիսկյան միաբանությունների անդամներն էին: Պլանո Կարպինիի, Անդրե դե Լոնժյուսի, Ասցելիսի և Խաչակրաց VII արշավանքի (1248-1254) առաջնորդ՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի (1226-1270) կողմից ուղարկված ֆրանցիսկյան միաբան Վիլհելմ Ռուբրուքի պատվիրակությունները մոնղոլների հետ բանակցություններում մեծ հաջողությունների չհասան<sup>19</sup>: Մինչդեռ Հնթում Ա-ն, որին կարելի է դասել իր ժամանակի խոշորագույն առաջնորդների շարքը, կարողացավ առաջ անցնել եվրոպացիներից՝ մոնղոլների հետ արդյունավետ բանակցություններ արձանագրելու մեջ և 1254 թ. կարակորումում բացառիկ պայմանավորվածություններ ձևառ բերեց Մանգու խանի (1251-1259) հետ<sup>20</sup>:

Ամենևին չի բացառվում, որ Հնթում Ա-ը մոնղոլական արքունիքում, ի թիվս շատ հարցների, շոշափել է նաև միջազգային առևտրին առնչվող որոշակի խնդիրներ, ինչպիսիք կարող էին լինել, օրինակ, հեռավոր Չինաստանից ձգվող Մետաքսի ճանապարհի՝ Մերձավոր Արևելք մտնող ճյուղավորումների ճշգրտումը, ինչպես նաև իտալական ծովային հանրապետությունների՝ Վենետիկի և Ջենովայի հետ առևտրական կապերի հաստատումը, որտեղ Կիլիկյան Հայաստանը միջնորդական կարևոր դեր ստանձնելու մեծ հնարավորություններ ուներ: Առավել ևս, որ Հայոց թագավորությունն իտալացիների հետ առևտրական սերտ փոխհարաբերությունների արդեն հիսուն տարվա ավանդույթներ ուներ:

Մանգու խանի հրամանով Չինգիզ խանի ևս մի թոռ՝ Հուլավուն, 1256 թ. հաստատվելով Իրանում, հիմնում է մոնղոլական տերության ուլուսներից մեկը՝ Իլխանությունը (1256-1353), որը 1261 թ. մեծ խան Խուբիլայի (1259-1294) կողմից ճանաչվեց որպես ինքնուրույն

<sup>16</sup> Heyd W., նշվ. աշխ., հ. I, էջ 301-306: Соколов Н., Колониальная политика Венеции в XIII в. // Средние века, Вып. 5, М., 1954, с. 176.

<sup>17</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 282: Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, N 1, էջ 96-100:

<sup>18</sup> Langlois V., Le Trésor des chartes d'A ménéie, p. 143-145.

<sup>19</sup> Նշենք, որ Արևելքում եվրոպական առևտրական հենակետերը գրեթե մշտապես համընկնում էին միաբանությունների քարոզչական օջախների հետ, ինչը վկայում է նրանց սերտ համագործակցության մասին (Свет Я., նշվ. աշխ., էջ 13-26, 56-57):

<sup>20</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 367: Richard J., La Papauté et les missions d'Orient au moyen âge (XIII<sup>e</sup>-XV<sup>e</sup> siècles), Ecole Française de Rome, Paris, Rome, 1998, p. 70-81.

պետություն: 1258 թ. Հուլիսին գրավեց Բաղդադը և կործանեց Արքայան խալիֆայությունը: Այս իրադարձությունը շրջադարձային նշանակություն ունեցավ Մերձավոր Արևելքի ոչ միայն քաղաքական իրավիճակի համար, այլև դեռ մեծ փոփոխություններ պետք է առաջացնեն նաև տարածաշրջանի տնտեսական կյանքում: Այսպես, եթե մինչ այդ Հնդկաստանից և Չինաստանից ապրանքները Պարսից ծոցով բերվում էին Բաղդադ, որտեղից դրանք քարավանային ճանապարհներով ուղղվում էին խաչակրաց նավահանգիստներ, ապա Հուլիսյանները ճանապարհային գլխավոր հանգուցակետը տեղափոխում էին դեպի հյուսիս՝ իրենց մայրաքաղաք Թավրիզ<sup>21</sup>: Պարզ է, որ նախկին բոլոր ճանապարհները կորցնելու էին երբևիցե նշանակությունը և արդեն անհրաժեշտ էր փնտրել առևտրական նոր մայրուղի, որը պետք է դուրս գար մի կողմից Միջերկրական, իսկ մյուս կողմից էլ՝ Սև ծովեր: Հենց Այաս-Թավրիզ ճանապարհն էլ դառնում է այդ ռազմավարական ծրագրերի արդյունքը: Ուղու միջնամասում այն ճյուղավորվում և ուղղվում էր Տրապիզոնի կայսրություն: Բացի այն, որ մոնղոլներն այդպիսով հեշտությամբ կապվում էին ամբողջ սևծովյան ավազանի հետ, Թավրիզը շատ ավելի հարմար կետ էր կոմպասով հյուսիսի հետ առևտրական կապ պաշտպանելու համար: Հուլիսյան թույլ է տալիս իտալացի վաճառականներին առևտրական գործունեություն ծավալել իր տերության սահմաններում, ուր վերջիններս առավելապես թափանցում էին կիլիկիայի տարածքով: Պատահական չէ, որ ջննդական նոտարական սկզբնաղբյուրներում Այասի մասին առաջին վկայությունները թվագրվում են 1257, 1259 և 1266 թթ.<sup>22</sup>:

Ռազմաքաղաքական այս նշանակալից փոփոխություններն էլ ավելի են սրում Վենետիկի, Ջենովայի և Պիզայի Հանրապետությունների միջև անզիջում պայքարը միջազգային առևտրում գերակայություն հաստատելու համար: Այդ հակամարտությունն էլ վերջո վերածում է պատերազմի: 1256 թ. սկսվում է ջննդավա-վենետիկյան

առաջին պատերազմը (1256-1270), որը պատմության մեջ հայտնի է Սուրբ Սաբա անվամբ: 1258 թ. հունիսին Աքքայի ափերի մոտ նրանց միջև տեղի է ունենում խոշոր ծովամարտ: Չնայած նավերի թվային գերակշռությանը՝ ջննդական կողմը ջախջախիչ պարտություն է կրում: Դրա հետևանքով Ջենովան ստիպված էր Արևելյան Միջերկրականում իր գլխավոր հենակետն Աքքայից տեղափոխել Տյուրոս, իսկ Վենետիկն իր հերթին՝ Տյուրոսից Աքքա<sup>23</sup>: Հատկանշական է, որ այս իրադարձություններին հանգամանորեն անդրադարձել է Հեթում Պատմիչը, որի հիշատակած թվային տվյալները ճշտորեն համընկնում են եվրոպացի ուսումնասիրողների ներկայացրած համապատասխան թվերին. «Եւ նկին ի Յաքա Ճնովէզացն Ծ (50) դալէ և Դ (4) բերդանաւ, որոց գլխատը Ըռուս տ Լադոյրքն, և խանգրունեցան ի Վնիցիան դալեացն. և բռնուցան ի մէջ ընդ Աքա և ընդ Կայֆասն ԻԴ (24) դալէ Ճնուէգ. և կորուսին Ճնուէգքն ընդ սպանած և ընդ բռնած մինչև ի ՌՉ (1700): Եվ վարունցան Ճնուէգքն ի Յաքայո և փլուցին զիրենց պուրճն և գնացին Ճնուէգքն բնակեցան ի Սուր (Տյուրոս - Ջ. Գ.)»<sup>24</sup>:

Նիկեայի կայսրությունը, դաշնակցելով Ջենովայի հետ, 1261 թ. ազատագրում է կոստանդնուպոլիսը և վերականգնում Բյուզանդիայի կայսրությունը: Թեև ջննդագիտների կողմից իրականում որևէ օժանդակություն չէր ցուցաբերվել, սակայն պետության տնտեսական ծանր կացությունը որևէ կերպ շտկելու, ինչպես նաև վենետիկցիների դեմ պայքարն ավելի արդյունավետ կազմակերպելու համար, բյուզանդական նոր՝ Պալեոլոգոսների արքայատոհմի հիմնադիր և Լատինական կայսրության դեմ ապստամբության առաջնորդ Միքայել VIII Պալեոլոգոսը (1261-1282) 1261 թ. մարտի 13-ին Նիմֆն քաղաքում Ջենովայի հետ կնքում է պայմանագիր: Վերջինս իրավունք էր ստանում առանց մաքսատուրքի առևտուր անել կոս-

<sup>21</sup> Микаел ян Г., նշվ. աշխ., էջ 352:

<sup>22</sup> Racine P., L'Asie dans la seconde moitié du XIIIe siècle, p. 181-183.

<sup>23</sup> Sopracasa A., նշվ. աշխ., էջ 41-42; Lane F., Venice. A Maritime Republic, p. 74-77; Dotson J. E., Venice, Genoa and the Control of the Seas in the Thirteenth and Fourteenth Centuries // War at Sea in the Middle Ages and Renaissance, New York, 2003, p. 120.

<sup>24</sup> Հեթում Պատմիչի ժամանակագրությունը, էջ 70:

տանդնուարյան, Ջոյունիայում և Սալոնիկում: Սևծովյան բոլոր նեղուցներն այդուհետև համարվում էին փակված բոլոր՝ ոչ ջննվական և ոչ բյուզանդական նավերի համար: Կոստանդնուպոլսից քիչ հեռու գտնվող Պերա բնակավայրը դառնում է ջննվագիների գլխավոր հենակետը, որից հետո նրանք մեկը մյուսի ետևից սկսում են առևտրական գերակայություն հաստատել սևծովյան գրեթե բոլոր կարևոր նավահանգիստներում<sup>25</sup>:

Մինչ այդ՝ դեռևս 1250 թ., Եգիպտոսում իշխանության էին եկել մամլուքները: Իսկ 1260 թ. Հուլավուն արշավում է Ասորիք և գրավում Հալեպը, սակայն այնտեղ լսելով Մանգուի մահվան լուրը՝ վերադառնում է: Մանգու մեծ խանի մահից հետո Մոնղոլական հսկայածավալ կայսրությունը մասնատվում է: Անմիջապես 1261 թ. Ոսկե Հորդայի խան Բերքեն փորձում է գավթել Իլխանության տիրապետության տակ գտնվող Կովկասի հարավը, որտեղով անցնում էր Մերձավոր Արևելք տանող կարևոր մայրուղին: Բերքեն, որն արդեն ընդունել էր մահմեդականություն, ընդդեմ Հուլավուի, դաշինքի առաջարկ է անում նույնիսկ մամլուքյան Եգիպտոսի սուլթան Բայբարսին (1260-1277)<sup>26</sup>:

Պատահական չէ, որ աշխարհաքաղաքական այս վճռորոշ գործընթացների պայմաններում, Նիմֆեյան պայմանագրի ստորագրումից մի քանի ամիս անց՝ 1261 թ. նոյեմբերին, Հեթում Ա-ը վենետիկյան պատվիրակությանը հանձնում է հերթական արտոնագիրը: Այստեղ արդեն վենետիկցիները շատ ավելի մեծ շահագրգռվածություն էին ցուցաբերել Կիլիկիայի հետ առևտրական կապերի զարգացման համար, քանի որ իրենց իսկ ցանկությամբ նրանց տարածքներ էին հատկացվելու Միսում և, իհարկե՝ Այասում<sup>27</sup>:

Օգտվելով Իլխանության՝ Ոսկե Հորդայի և Չաղաթայի ուլուսի միջև սուր հակամարտությունից՝ 1266 թ. մամլուքյան բանակը Բայ-

բարսի գլխավորությամբ ներխուժում է Կիլիկյան Հայաստան: Մաթի բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական զորքերը, որոնց առաջնորդում էին Հեթում Ա-ի որդիներ Լևոնը և Թորոսը, պարտվում են: Ավերի ու թալանի են ենթարկվում Այասը, Մամեստիան, Տարսուսն ու Ադանան, Սսում հրի է մատնվում Մայր տաճարը և թալանվում արքունական ամբողջ գանձարանը: Երկու տարի անց՝ 1268 թ., Բայբարսը գրավում է Անտիոքի դքսությունը<sup>28</sup>: Սա ծանր հարված էր խաչակիրների մյուս տիրույթներին, որոնք, փաստորեն, գրկվեցին Կիլիկյան Հայաստանի հետ ցամաքային տնտեսական կապից, որն ապահովվում էր Պորտնիլայով: Անտիոքում մամլուքների իրականացրած ավերի ու կոտորածի մասին արժեքավոր վկայություն է թողել Հեթում Պատմիչը. «Եւ սպաննաւ ի ներքսէ քաղաքին ԺԷՌԸԸ (17800) քրիստոնէ և առաւ գերի առաւ թանգ ճՌ (100000) քրիստոնէ»<sup>29</sup>: Անշուշտ, հիշատակված քրիստոնյաների մեջ կարող էին լինել ինչպես հայեր, հույներ կամ ասորիներ, այնպես էլ Անտիոքի եվրոպական ծագում ունեցող բնակիչներ: Դժվար չէր կանխատեսել, որ մամլուքյան կործանարար ուժն ի վերջո հասնելու էր Արևելքում խաչակիրների տիրապետության տակ գտնվող մյուս տարածքներին ևս, ինչն ահագանգ էր նաև դրանցում հանգրվանած իտալական հանրապետությունների համար, ուստի վերջիններս պետք է էլ ավելի ամրացնեին իրենց դիրքերը թե՛ Կիլիկյան Հայաստանում, և թե՛ Կիպրոսի թագավորությունում: Առավել ևս, որ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի՝ 1270 թ. առաջնորդած խաչակրաց VIII արշավանքը ձախողվել էր: Եվ ահա, ջննվա-վենետիկյան առաջին պատերազմի ավարտվելուն պես, Լևոն Բ-ն վենետիկի դեսպան Տոմազո Բոնդուսիներին հանձնել էր բազմաթիվ արտոնությունների խոստումներ պարունակող նամակ՝ ուղղված դոժ Լորենցո Տինպոլոյին: Նամակը թվագրվում է 1270-1272 թթ. միջակայքով:

<sup>25</sup> Lane F., Venice. A Maritime Republic, p. 74-77. **Commandant B.**, նշվ. աշխ., էջ 91-93: **Свет Я.**, նշվ. աշխ., էջ 39-42:

<sup>26</sup> **Микаел ян Г.**, նշվ. աշխ., էջ 327-331: **Закиров С.**, Дипломатические отношения Золотой Орды с Египтом, М., 1966, с. 43.

<sup>27</sup> **Sopracas A.**, նշվ. աշխ., էջ 43-46:

<sup>28</sup> Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 71-72:

<sup>29</sup> Հեթում Պատմիչի ժամանակագրությունը, էջ 74:

Իսկ արդեն 1272 թ. (ըստ Վ. Լանգլուայի՝ 1271 թ.) հունվարին Հայոց արքան վնննտիկցիներին շնորհում է հերթական արտոնագիրը<sup>30</sup>:

Քննց 1271 թ. Կիլիկյան Հայաստանում էր գտնվում Հռոմի պապի կողմից մեծ խան խուբիլայի արքունիք ուղարկված Մարկո Պոլոն: Վերջինս և նրա հետ ճանապարհորդող հայրն ու հորեղբայրը չէին պատկանում ո՛չ Դոմինիկյան, և ո՛չ էլ Ֆրանցիսկյան միաբանություններին: Մարկո Պոլոն ուղղակի հիացմունքով է խոսում Այասի մասին. «... Նրանք ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայաս<sup>31</sup>, որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում: Որովհետև դուք պետք է իմանաք, թե բոլոր համեմտեղները և մետաքսյա ու արծաթյա կերպատները և ուրիշ արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը: Եվ Վննտիկի, Ջննովայի և ուրիշ նրկրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները և կամ զննելու՝ ինչ որ իրենք պետք ունեն: Եվ որևէ անձնավորություն, վաճառական կամ ուրիշ, որ պիտի ճամփորդի Արևելքի ներսերը, իր ճամփորդությունը սկսում է այս Լայաս քաղաքից»<sup>32</sup>: Մեծ ճանապարհորդի արժեքավոր վկայությունը թույլ է տալիս փաստելու, որ արդեն 1270-ական թվականներին Այասն Արևելյան Միջերկրականի խոշորագույն նավահանգիստներից էր:

Ինչպես արդեն նշել ենք, Կիլիկյան Հայաստանում վնննտիկյան և ջննովական հյուպատոսությունների մասին առաջին վկայությունները վերաբերում են հենց 1270-ական թվականների առաջին կեսին: Պարզ է, որ Ջննովան Նիմֆեյան պայմանագրից հետո ամբողջովին տարված էր սևծովյան նավահանգիստների յուրացմամբ և Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական նոր պայմանագրի կնքման ան-

<sup>30</sup> **Sopracasa A.**, նշվ. աշխ., էջ 48-60: **Langlois V.**, *Le Trésor des chartes d'Arménie*, p. 151-153.

<sup>31</sup> Լայասը Կիլիկյան Հայաստանի գլխավոր նավահանգիստ-քաղաք Այասն էր, որը նվորական աղբյուրներում հիշատակված է *Ayacio, Aiazzo, Giazza, Glaza, Laiazzo, Lajazzo* և *Layas* անվանումներով:

<sup>32</sup> Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Ա, (1253-1582), Ե., 1932, էջ 44-45: **Марко Поло**, с. 49.

հրաժնշտություն դեռևս չուներ: Սակայն կիլիկյան քաղաքներում 1270-ական թվականներին ջննովացիների աշխույժ գործունեությունը վկայում է, որ Հայոց թագավորությունը նրանց համար կարևոր նշանակություն ուներ:

1275 թ. մամլուքները կրկին ներխուժում են Կիլիկյան Հայաստան՝ ավերելով ու թալանելով Այասը, Մամեստիան և Տարսուը: Թեև, ինչպես կարծում է Գր. Միքայելյանը, այս ասպատակություններով Եգիպտոսի սուլթանությունը նախապատրաստվում էր 1277 թ. Կիլիկիայի տարածքով Իկոնիա կատարվելիք իր արշավանքին<sup>33</sup>, պարզ է նաև, որ միաժամանակ մամլուքները խաթարում էին Հայկական պետության տնտեսության կայունացման ընթացքը: 1277 թ. սուլթան Բայբարսի մահից հետո հաստատվում է խաղաղության կարճատև շրջան: Սակայն 1281 թ. հոկտեմբերի 30-ին մոնղոլական զորքերը հայկական, վրացական և դաշնակից այլ ուժերի հետ միասին, Ասորիքի հոմս քաղաքի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտություն են կրում մամլուքներից: Վերջիններս 1282 և 1283 թթ. կրկին թալանում ու հրի են մատնում Այասը: Ի վերջո, 1285 թ. մայիսի 7-ին Տաճարական ասպետների միջնորդությամբ Լևոն Բ-ի և սուլթան Կալաունի (1280-1290) միջև կնքվում է խաղաղության պայմանագիր: Այն ուներ խորհրդանշական 10 տարի, 10 ամիս և 10 օր ժամկետի ուժ: Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էր տարեկան 500000 թագվորին վճարել մամլուքներին, ինչպես նաև ուղարկել ձիեր, ջորիներ և մեծ քանակությամբ նրկաթ<sup>34</sup>: Պայմանագրում ներառվել էին նրկու նրկրների առևտրական կապերի կարգավորմանը նվիրված բազմաթիվ կետեր: Այն, որ Լալաունը խիստ շահագրգռված է եղել Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական շփումների ավելի ամրապնդմամբ, կարելի է հիմնավորել մի շարք փաստարկներով: Հայտնի է, որ մամլուքներն առաջնային նշանակության պարենամթերքի՝ հատկապես հացահատի-

<sup>33</sup> **Микаел ян Г.**, նշվ. աշխ., էջ 408-409:

<sup>34</sup> Բակուրյան, Դաշնագիր խաղաղության, էջ 69-79: **Микаел ян Г.**, նշվ. աշխ., էջ 414:

կի, ինչպես նաև ռազմամթերքի, այն է՝ փայտանյութի ու մետաղի և, իհարկև, ստրուկների մեծ կարիք ունեին: Դեռևս Հեթում Ա-ը քաջ գիտակցելով, որ Եգիպտոսի սուլթանությանը ճնշելու միակ հնարավորությունը տնտեսական շրջափակումն էր, իր քաղաքացիներին խստորեն արգելել էր մամլուքների հետ փայտի և նրկաթի առևտուր անել<sup>35</sup>: Հատկանշական է, որ 1260-ական թթ. կեսին Բայբարսն իր տնրությունում տիրող սովը<sup>36</sup> մեղմելու նպատակով՝ 1266 թ. կիլիկիայի դեմ ձեռնարկած արշավանքից հետո Հեթում Ա-ից պահանջել էր հացահատիկ ներկրել Եգիպտոսի սուլթանություն հայկական նավահանգիստներով<sup>37</sup>: 1285 թ. պայմանագրում տեղ գտած կնտերից մեկը հուշում է, որ Հեթում Ա-ի՝ ռազմամթերքի առևտրի վրա սահմանած արգելքը դեռ գործում էր և զարմանալիորեն այն այստեղ էլ էր մնում անփոփոխ. «Արգիլեալ առարկայք, գէնք, ռազմամթերք են., որոնց՝ Սուլթանի նրկիրը մտնելն արգիլուած էր, միևնոյն արգելգին ենթարկուած պիտի մնան»<sup>38</sup>: Սակայն. «Լեւոն թագաւոր չպիտի արգիլէ զանոնք, վաճառական լինին կամ ուրիշ (որ այր կամ կին ստրուկի, ծիու, ջորիի, եւ ամեն տեսակ համեմներու առևտուր կը կատարեն), իրենց վաճառքները Սուլթանին նրկիրը տանելէ. զանոնք չպիտի կալանէ նրքէք եւ թոյր չպիտի տայ ո՛ր եւ է մէկու որ կալանեն: Անոնց առջեւ անցքերը բաց պիտի թողու, որպէսզի կարենան իրենց նպատակակէտին հասցնել գերիները եւ գերուիները, ապրանքները, ձիերը, ջորիները եւ բոլոր ուրիշ առարկաները, եւ ամեն կարգէ եւ ամեն ազգէ այր եւ կին ստրուկները, առանց անոնցմէ բան մը վար դնելու»<sup>39</sup>: Թե՛ հայ, և թե՛ մահմեդական վաճառականներին նրկու նրկրներում ազատ և ապահով առևտուր անելու իրավունք էր նրաշխարհում:

<sup>35</sup> Գրում Ռ., Պատմություն խաչակրաց և Երուսաղեմի ֆրանկ թագավորության, Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 319:

<sup>36</sup> Lane-Poole S., A History of Egypt in the Middle Ages, London, 1901, p. 273.

<sup>37</sup> Յովհան Դարդել, էջ կէ:

<sup>38</sup> Բակուրան, Դաճագիր խաղաղութան, էջ 75-77: Սուրխայան Ա., նշվ. աշխ., էջ 220-222:

<sup>39</sup> Բակուրան, Դաճագիր խաղաղութան, էջ 75-77:

Եթե մինչ այդ Եգիպտոսի սուլթանությունը վերոնշյալ ապրանքները կարող էր ստանալ նաև խաչակրաց նավահանգիստներով, ապա դրանում նրանց դերը, Այսա-Թավրիզ մայրուղու ձևավորման հետ, կտրուկ նվազում էր: Ավելին, գրավելով Անտիոքը՝ մամլուքները խաչակիրների տիրությունները կտրեցին կիլիկյան Հայաստանից, որը նրանց համար տարատեսակ ապրանքների ձեռք բերման կարևոր աղբյուր էր դարձել: Ուստի պատահական չէ, որ կիլիկիայի հետ պայմանագրի կնքումից անմիջապես հետո Եգիպտոսի սուլթանությունն անցնում է վճռական քայլերի: Նույն 1285 թ., նրբ Լևոն Բ-ի պատվիրակությունը կիլիկյան Հայաստանի Տաճարականների առաջնորդի ուղեկցությամբ հաշտություն կնքելու նպատակով ուղևորվել էին Կալատունի մոտ՝ վերջինս գտնվում էր Ասորիքում և զբաղված էր Տրիպոլիի կոմսության հյուսիսում գտնվող Մարկաբ բերդի գրավմամբ: 1287 թ. մամլուքները գրավում են Լաթաքիա նավահանգիստը, իսկ արդեն 1289 թ. ապրիլի 24-ին Տրիպոլին՝ կոտորելով քաղաքի բնակչությանը: 1291 թ. մամլուքներն իրենց հարվածն ուղղում են Երուսաղեմի թագավորության դեմ՝ մեկը մյուսի հետևից գրավելով նշանավոր նավահանգիստներ Աքքան, Տյուրոսը, Սիդոնը, Բեյրութը և ծովափնյա մյուս քաղաքներն ու բերդերը<sup>40</sup>:

Այս իրադարձությունների բովում Ջենովայի Հանրապետությունն իր հռչակավոր ծովակալ Բենեդեկտո Զաքարիային ուղարկում է Արևելք, որտեղ նա 1288 թ. սեպտեմբերի 21-ին կիպրոսի թագավոր Հենրի II-ի (1285-1324)<sup>41</sup>, իսկ նույն թվականի դեկտեմբերի 23-ին կիլիկիայի արքա Լևոն Բ-ի հետ<sup>42</sup> կնքում է բովանդակալից առևտրական պայմանագրեր: Ի դեպ, 1289 թ.՝ իր թագադրման առաջին տարում, Հեթում Բ-ը ջենովացիներին շնորհում է ևս մի արտոնա-

<sup>40</sup> Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 98, 112-113: Stewart A. D., նշվ. աշխ., էջ 56-57:

<sup>41</sup> Бл изинок С., Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 34-35.

<sup>42</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 154.

գիր<sup>43</sup>: Փաստորեն՝ Արևելյան Միջերկրականում եվրոպացիների համար որպես հենակետեր մնում էին միայն Կիլիկյան Հայաստանը և Կիպրոսը:

Բնենդևտո Ջաբարիան խաչակիրներին օժանդակություն ցուցաբերելու համար իր գալերներով հարձակումներ է գործում մամլուքների նավերի վրա, ինչին ի պատասխան՝ վերջիններս բռնագրավում են եգիպտական քաղաքներում գտնվող ջնմովացի բոլոր վաճառականների ունեցվածքը<sup>44</sup>: Մինչ այդ Ջենովան հակամամլուքյան ակտիվ գործունեություն էր ծավալել: 1280-ական թվականներին Իլխանությունում՝ Տիգրիս գետի վրա, նա տնդակայել էր գաղտնի նավակազմ: Արդուն խանի (1284-1291) կարգադրությամբ 1288 թ. Բաղդադ էին ժամանել ջնմովացի նավաշինարարներ և ծովայիններ՝ գալերներ կառուցելու համար: Դրանց միջոցով Իլխանությունն ու Ջենովան նպատակ էին հետապնդում խաթարել Հնդկաստանի հետ Եգիպտոսի համար կենսական նշանակություն ունեցող առևտրական կապը: Գալերները պետք է կանգնեին Ադենի (Եմեն) մոտ և արգելափակեին նավերի մուտքը կարմիր ծով, ինչն ամբողջովին կկանգնեցներ համեմունքների ներկրումն Ալեքսանդրիա: Դա սուր ճգնաժամի կհասցներ Եգիպտոսի սուլթանության նավահանգիստները, քանի որ համեմունքները նրանց ապրանքաշրջանառության առանցքային ապրանքներն էին: Սակայն Ջենովայում ներքին նրկաառևտրությունների պատճառով այս նախագիծն այդպես էլ կյանքի չկոչվեց<sup>45</sup>:

Տրիպոլիի անկումից շատ չանցած՝ 1289 թ. դեկտեմբերի 28-ին, Հռոմի պապ Նիկողայոս IV-ը (1288-1292) արգելքներ սահմանեց Եգիպտոսի սուլթանության հետ ռազմամթերքի (նրկաթ, փայտանյութ), ձիերի, ինչպես նաև պարենամթերքի առևտրի վրա: Իսկ արդեն 1291 թ. օգոստոսի 23-ին Աքրայի և Տյուրոսի անկումից անմի-

ջապես հետո Պապությունը տասը տարով արգելեց մամլուքների տներության նավահանգիստների հետ առևտրական բոլոր տեսակի շփումները: Օրինալախտները խստորեն պատժվելու էին: Նրանց նույնիսկ թույլ չէր տրվելու իրենց ունեցվածքը կտակել որևէ մեկին, իսկ ապրանքները բռնագրավվելու էին: 1290-ական թվականների սկզբին Նիկողայոս IV-ը սկսում է ակտիվ բանակցություններ վարել Արևելքի քրիստոնյա շատ պետությունների, այդ թվում՝ Կիլիկյան Հայաստանի հետ: Նա 1292 թ. հունվարի 23-ի վճռով Տաճարականներին հրամայում է իրենց գալերներով Հայոց թագավորությանը պաշտպանել մահմեդականների հարձակումներից<sup>46</sup>: 20 գալերից կազմված մի նավակազմ տրամադրվելու էր Տաճարականների և Տյուրքակալների միաբանությունների ասպետներին, որոնք տնդակայվելու էին Կիլիկյան Հայաստանում ու Կիպրոսում: Բացի եգիպտական նավերի վրա հարձակումներ գործելուց, նրանց հանձնառարվել էր նաև արգելափակել մամլուքների հետ առևտուր անող բոլոր մաքսանենգների գործունեությունը: Սակայն հետագայում Բոնիֆացիոս VIII (1294-1303) և Բենեդիկտոս XI (1303-1304) պապերի հռչակած արգելքները կրկին սահմանափակվեցին ռազմամթերքի, ինչպես նաև ստրուկների առևտրով, որոնցով, ի դեպ, համալրվում էր Եգիպտոսի սուլթանության բանակը: Ծատ հաճախ պապերն արգելքների քաղաքականությունը պարզապես օգտագործում էին սեփական գանձարան նկատուներ ուղղելու նպատակով: Մեծ գումարների դիմաց նրանք հատուկ թույլտվություններ էին շնորհում նրանց, ովքեր ցանկանում էին արգելված ապրանքներ վաճառել Եգիպտոսի վաճառականներին: Իրենց հերթին Եվրոպայի ծովային գերտերությունները՝ Վենետիկի, Ջենովայի Հանրապետությունները և Արագոնի թագավորությունն ամենևին մտադիր չէին դադարեցնելու իրենց առևտրական սնրտ շփումները մամլուքների հետ: Տրիպոլիի անկման տարում՝ 1289 թ., Վենետիկը, իսկ 1290 թ. Ջենովան պայմանագրեր են ստորագրում Եգիպտոսի սուլթանության հետ, որոնց

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>44</sup> Crawford P., The 'Templar of Tyre': Crusade Texts in Translation, Part III of the 'Deeds of the Cypriots, Burlington, 2003, p. 95-99. Epstein S. A., Genoa and the Genoese, 958-1528, p. 179-180.

<sup>45</sup> Микаелян Г., նշվ. աշխ., էջ 370-371: Свет Я., նշվ. աշխ., էջ 55-56:

<sup>46</sup> Les registres de Nicolas IV, p. 445, 901-905, 913-914.

հետևում է նաև Արագոնի թագավորությունը (1292 թ.)<sup>47</sup>: XIII դ. 80-90-ական թվականներին ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակն էլ ավելի է սրում իտալական ծովային հանրապետությունների միջև պայքարը: Տիրմենյան ծովում՝ Մելիորիա կղզու մոտակայքում 1284 թ. օգոստոսի 5-6-ին տեղի ունեցած վճռական ծովամարտում պարտության մատնելով Պիզային՝ Ջենովան, կարելի է ասել, ասպարեզից հեռացրեց իր գլխավոր հակառակորդներից մեկին<sup>48</sup>:

Արևելքում խաչակիրների անկումը, ի թիվս աշխարհաքաղաքական վերջ թվարկյալ մյուս խոշոր իրադարձությունների, ամենաշրջադարձային նշանակությունն ունեցավ միջագոյային առևտրում կիլիկյան Հայաստանի դերի բարձրացման համար: Այսպես, պապական արգելքների սահմանման արդյունքում կիլիկյան Հայաստանը, Կիպրոսի թագավորությունը, ինչպես նաև Կրետեն վերածվեցին գլխավոր միջնորդների՝ Եգիպտոսի սուլթանության և նվրոպացիների միջև ընթացող առևտրական կապերում: Ընդ որում, դրանցում Հայկական կիլիկիայի դերակատարությունն էլ ավելի առանցքային էր, քանի որ Եգիպտոսի սուլթանություն ներմուծվող ռազմամթերքի և ստրուկների զգալի մասը կուտակվում էր կիլիկյան նավահանգիստներում: Է. Աշթորը նշում է, որ մահմեդական Լևանտի (Եգիպտոս և Ասորիք) և Հարավային Եվրոպայի միջև առևտրական փոխհարաբերություններում Հայոց թագավորության դերն ավելի մեծ է եղել, քան Կրետեի և Կիպրոսի<sup>49</sup>: Գ. Բրատիանուն գտնում է, որ Այասն իր ծաղկման ժամանակաշրջանում գերազանցել

է նույնիսկ Պերային, որը փաստորեն այդ ընթացքում սևծովյան առևտրի գլխավոր դարպասն էր<sup>50</sup>: Պատահական չէ, որ Ջենովայի և Վենետիկի Հանրապետությունների միջև տեղի ունեցած երկրորդ պատերազմի (1294-1299) սկզբից ևեթ կիլիկյան ծովափը հայտնվեց իրադարձությունների կիզակետում: Ինչպես նկատում է Ֆ. Լեյնը՝ Աքքայի անկումից հետո Այասը դարձավ իտալական հանրապետությունների հակամարտության կենտրոնը<sup>51</sup>: Այդ անգլերի մասին մանրամասն նկարագրություններ կան «Գործք կիպրացվոց»-ի՝ Տյուրոսի Տաճարական ասպետներին վերաբերվող սկզբնաղբյուրների հավաքածուում: Դրանցից տեղեկանում ենք, որ 1293 թ. վենետիկյան զավերները ժամանել էին Այաս և այնտեղ բռնագրավել ջնուովական առևտրական մի նավ: Ապա վենետիկցիներն իջել էին ափ, ինչը ստիպել էր Այասի ջնուովացի բնակիչներին փախչել գյուղեր՝ ավերի ու թալանի թողնելով քաղաքում գտնվող իրենց առևտրավանդ<sup>52</sup>: Ի վերջո, Այասի ավերի մոտ վենետիկյան և ջնուովական նավատորմների միջև տեղի է ունենում ծովային խոշոր ճակատամարտ, որն այնպիսի համբավ էր ձեռք բերել միջնադարյան աշխարհում, որ նույն ժամանակամիջոցում ստեղծագործած ջնուովացի Անանուն մի բանաստեղծ դրան մի ամբողջ պոեմ է նվիրել<sup>53</sup>: Ուշագրավ է, որ Յու. Բարսեղովը գտնում է, որ Այասի ավերի մոտ ոչ թե մեկ, այլ երկու ծովամարտ է եղել: Նա իր հղած սկզբնաղբյուրը պիսվամաթ վերագրել է Հեթում Պատմիչին, այնինչ, իրականում, վ. Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրությունների» ժողովածուի առաջին հատորում տեղ գտած խնդրո առարկա տողերը պատկանում են Հեթում Բ-ի «Տարեգրությանը»: Չնայած որ Հեթում

<sup>47</sup> **Микаел ян Г.**, նշվ. աշխ., էջ 425: Մութաֆյան Կ., կիլիկյան կայսրությունների խաչմերուկում, էջ 453: **Ashtor E.**, *Levant Trade in the Later Middle Ages*, p. 5, 17-21. **S opracasa A.**, նշվ. աշխ., էջ 64-65: **Richard J.**, *Le Royaume de Chypre et l'embargo sur le commerce avec l'Egypte (fin XIIIe – début XVe siècle)* // Académie des Inscriptions & Belles – Lettres, Comptes rendus des séances de l'Année, Janvier – Mars, Paris, 1984, p. 120-123.

<sup>48</sup> **Pistarino G.**, *L'apogeo della Meloria // La capitale del Mediterraneo: Genova nel Medioevo*, Collana Storica di Fonti e Studi Italo-ellenica, dir. da Pistarino G., Mazarakis A., Genova, 1993, p. 146-152. **Pryor J.**, *The Maritime Republics // The New Cambridge Medieval History*, V. 5, c. 1198-c. 1300, ed. D. Abulafia, Cambridge, 1999, p. 438-439.

<sup>49</sup> **Ashtor E.**, *Levant Trade in the Later Middle Ages*, p. 43-44, 104.

<sup>50</sup> **Bratianu G.**, *Recherches sur le commerce Génois dans le mer Noire du XIII<sup>ème</sup> siècle*, p. 161-162.

<sup>51</sup> **Lane F.**, *Venice. A Maritime Republic*, p. 82-83.

<sup>52</sup> **Les gestes des Chipriots: Recueil de chroniques françaises écrites en Orient aux XIIIe & XVe siècles**, de Navarre P., de Montréal G., V. 5, Genève, 1887, p. 277-281. **Crawford P.**, նշվ. աշխ., էջ 133-135:

<sup>53</sup> **Rim e istoriche di un Anonimo Genovese: Vissuto nei secoli XIII e XIV**, Tratte da un codice, dell'Avv. Matteo Molino di Genova, per cura del Bonaini F. // *Archivio Storico Italiano*, Appendice 18, T. IV, Firenze, 1847, p. 10-15.

Պատմիչը ևս Այասի ծովամարտի վերաբերյալ արժեքավոր հիշատակություններ ունի, սակայն նրան Յու. Բարսեղովը, փաստորեն, չի անդրադարձել: Իսկ նրկրորդ ծովամարտի նկարագրությունը նա կապել է արդեն հիշատակված ջննդագի Անանուն պոետի ստեղծագործության հետ, որի համաձայն՝ այն տեղի է ունեցել 1294 թ. մայիսի 22-ին<sup>54</sup>: Ճշգրտումն ավելի հստակ իրականացնելու համար հարկ ենք համարում ամբողջությամբ ներկայացնել թե՛ Հնթում Բ-ի «Տարեգրությունում», և թե՛ Հնթում Պատմիչի «Ժամանակագրությունում» տեղ գտած հատվածները: Նախ, սկսենք Հնթում Բ-ի «Տարեգրությունից», ըստ որի՝ 1293 թ. «Ճնուիզացն դալեք ԺԲ (12) կռուցան ի յԱյաս ընդ ԼԲ (32) դալեք և ընդ դարիթ Վնիսնացոցն և շահեցան ի նոցանէ ԻԴ (24) ընդ դարիթ և ընդ խալե»<sup>55</sup>: Նման բովանդակություն ունի Հնթում Պատմիչի նկարագրությունը. 1294 թ. «Յայս ամի Ճնուեզացն ԺԲ (18) դալե կռուցան ի Յայաս ընդ ԼԲ (32) դալե և ընդ դարիտ Վնեցիանացն և շահեցան ի նոցանէ ԻԴ (24) ընդ դարիտ և ընդ դալե»<sup>56</sup>:

Հնթում Պատմիչն իր «Ժամանակագրությունն» ավարտել է 1294 թ.՝ հենց այս իրադարձության նկարագրմամբ, ուստի, ամենայն հավանականությամբ, նա այդ դեպքերին ականատես է եղել: Ինչպես տեսնում ենք, առաջին սկզբնաղբյուրում նշված է, որ դեպքը պատահել է 1293 թ., իսկ ջննդագիներն ունեցել են 12 զալեր, մինչդեռ նրկրորդում ծովամարտը թվագրված է 1294 թ., իսկ ջննդավկան գալերների թիվը 18 է: Դժվար չէ նկատել, որ դրանցում տեղ գտած մյուս բոլոր տվյալներն ամբողջովին նույնական են: Անշուշտ, խոսքը իրականում միևնույն իրադարձությունների մասին է: Ինչպես նշեցինք, այս դեպքերն առավել հանգամանորեն ներկայացված են

<sup>54</sup> Հարկ է նկատել, որ սույն արժեքավոր հոդվածով Յու. Բարսեղովն ամենևին նպատակ չի հետապնդել պարզել Այասի ծովամարտի մանրամասները, քանի որ նրա հետազոտության գլխավոր առարկան կիլիկյան Հայաստանի ափերին տեղի ունեցած ծովահենային դեպքերն են եղել (Барсегов Ю., Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, с. 80):

<sup>55</sup> Հնթում Բ-ի տարեգրությունը, էջ 86:

<sup>56</sup> Հնթում Պատմիչի ժամանակագրությունը, էջ 80:

«Գործք կիպրացվոց»-ի վերոնշյալ ժողովածուում, որտեղ, բացի մի քանի փոքր բախումներից, հիշատակված է Այասի ափերին տեղի ունեցած միայն մեկ խոշոր ծովամարտ: Ընդ որում, այս սկզբնաղբյուրում ճակատամարտին մասնակցած վենետիկյան գալերների թիվը (32) ճշտորեն համընկնում է վերոնշյալ հայկական ժամանակագրություններում գրանցված համապատասխան տվյալների հետ<sup>57</sup>: Գր. Միրայելյանը նույնպես, հիմք ընդունելով Հնթում Բ-ի «Տարեգրություն»-ը, գրում է ծովային մեկ ճակատամարտի մասին<sup>58</sup>: Ավելին, նույն կերպ են վարվել նաև խնդրին անդրադարձած մի շարք միջնադարագետներ<sup>59</sup>:

Եվ այսպես, 1294 թ. մայիսի 22-ին Այասի ափերի մոտ ջննդավկան նավերը, Նիկոլո Սպինոլայի հրամանատարությամբ, բախվում են վենետիկյան ընդհանուր թվով 32 գալերի և տարիդանների հետ, որոնց առաջնորդում էր ծովակալ Մարկո Բագիլիոն: Չնայած անհամեմատ քիչ նավեր ունենալուն՝ ջննդագիները փայլուն հաղթանակ են տանում՝ զավթելով վենետիկյան 24 նավ (ըստ «Գործք կիպրացվոց»-ի՝ 25) և գերի վերցնում Մարկո Բագիլիոյին: Վենետիկցիներից բռնագրավվում է ավելի քան 500000 սառակինսոյան բյուզանդ գումարի ապրանք: Որպես պատասխան՝ 1297 թ. վենետիկյան մի նավի նավապետ Տեոֆիլո Մորոզինին իր հայրենակիցների հետ ավերում է Այասում ջննդագիներին պատկանող շուկան<sup>60</sup>: Ի վերջո, 1298 թ. սեպտեմբերի 7-ին Ադրիատիկ ծովում գտնվող կորցուլն կղզու մոտակայքում ջախջախիչ պարտություն կրելուց հետո,

<sup>57</sup> Crawford P., նշվ. աշխ., էջ 135:

<sup>58</sup> Микаел ян Г., նշվ. աշխ., էջ 388-389:

<sup>59</sup> Bozoyan A., Le cadre juridique du commerce de la Cilicie arménienne, p. 131. Pitarino G., Dal governo dei due capitani al Doge perpetuo // La capitale del Mediterraneo: Genova nel Medioevo, Collana Storica di Fonti e Studi Italo-Ellenica, dir. da Pitarino G., Mazarakis A., Genova, 1993, p. 161-163. Dotson J. E., Venice, Genoa and the Control of the Seas in the Thirteenth and Fourteenth Centuries, p. 125. Lane F., Venice. A Maritime Republic, p. 83. Commendant B., նշվ. աշխ., էջ 114:

<sup>60</sup> Барсегов Ю., Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, с. 81. Lopez R. S., Storia delle colonie genovesi nel Mediterraneo, p. 278.

վենետիկը 1299 թ. Միլանում խաղաղության պայմանագիր է կնքում Ջենովայի հետ: Ջենովայի գերակայությունը միջազգային առևտրում պահպանվեց մինչև 1380 թ.: Զյոջնի ծովամարտում վենետիկից կրած պարտությունը<sup>61</sup>: Միլանի հաշտությունից հետո նրկու հակառակորդների ռազմավարությունը կիլիկյան Հայաստանում շատ ավելի պարզ է դառնում: 1302 թ. կահիրեում վենետիկի պատվիրակությունը Եգիպտոսի սուլթանից նոր արտոնագիր է ձեռք բերում<sup>62</sup>: Իսկ արդեն 1306 թ. կիպրոսի<sup>63</sup> և 1307 թ. մայիսին կիլիկյան Հայաստանի<sup>64</sup> հետ Ս. Մարկոսի Հանրապետությունն առևտրական նոր պայմանագրեր է կնքում: Ակնհայտ է, որ անհաջողություն կրելով Սև ծովում, վենետիկը փորձում էր գերակայություն հաստատել Հարավային Եվրոպայի և մահմեդական Լևանտի միջև ընթացող առևտրական փոխհարաբերություններում: Սակայն Ջենովյան փաստորեն մամլուքների և Ոսկե Հորդայի միջև ռազմամթերքի և հատկապես ստրուկների առևտրի գլխավոր միջնորդ լինելով հանդերձ, չէր ցանկանում թուլացնել իր դիրքերն Արևելյան Միջերկրականում ևս: Հիշատակելի է մի դեպք, երբ ջենովացի առևտրականը մեղադրվել էր մամլուքներին 10000 ստրուկի վաճառքի համար<sup>65</sup>: Հիշենք, որ 1288 թ. Լևոն Բ-ի՝ ջենովացիներին շնորհած արտոնագրում ամրագրվել էր ստրկավաճառությանը վերաբերող մի կետ, ըստ որի՝ հայկական կողմը միայն արգելում էր մահմեդականներին քրիստոնյա ստրուկներ վաճառել<sup>66</sup>: Իսկ այն, որ մամլուքների համար կիլիկյան Հայաստանը ստրուկների ձեռք բերման կարևոր աղբյուր է ն-

<sup>61</sup> Микаел ян Г., նշվ. աշխ., էջ 383: Sopracasa A., նշվ. աշխ., էջ 65-66: Comandant B., նշվ. աշխ., էջ 114-117:

<sup>62</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 27.

<sup>63</sup> Бл изнюк С., Мир торговли и политики в королевстве Крестовосцев на Кипре, с. 36.

<sup>64</sup> Sopracasa A., նշվ. աշխ., էջ 62-79:

<sup>65</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 27-29. Amital-Preiss R., Mongols and Mamluks: The Mamluk-Ilkhanid War, 1260-1281, Cambridge, 1995, p. 94.

<sup>66</sup> Langlois V., Le Trésor des chartes d'A ménie, p. 155.

դն, վկայում է հայ-մամլուքյան 1285 թ. խաղաղության պայմանագիրը<sup>67</sup>:

Այս իրադարձություններն ընթանում էին Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական որոշիչ ուժերի հարաբերակցության անընդհատ տատանումների պայմաններում: Թեև Ղազան խանը (1295-1304) Եգիպտոսի սուլթանության դեմ առաջին արշավանքում (1299) կարողացել էր հաղթանակ տանել, սակայն նրա կազմակերպած մյուս երեք արշավանքները (1300, 1303) ձախողվել էին: 1305 թ. Հալեպի էմիրի գորքերը ներխուժում են կիլիկյան Հայաստան, սակայն Այասի մոտ ջախջախվում են Հնթում Բ-ի գլխավորած հայկական ուժերի կողմից: Նույն թվականին Հայոց թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև կնքվում է խաղաղության պայմանագիր, որից հետո 15 տարի մամլուքները չեն արշավում կիլիկյան Հայաստանի դեմ<sup>68</sup>: Անտարակույս, մամլուքների համար այս զինադարի կնքման հիմնական շարժառիթը միմյանց անընդհատ հաջորդած պատերազմներից քայքայված և խիստ խոցելի իրենց տնտեսության վերականգնումն էր: Թեև ուղղակի վկայությունների չենք հանդիպել, սակայն չի բացառվում, որ հիշյալ պայմանագրի կնքման մեջ բավական մեծ է եղել նաև վենետիկի, Ջենովայի և Արագոնի թագավորության դերակատարությունը, որոնց համար կիլիկյան Հայաստանը և կիպրոսը, պապական արգելքների խտացման պայմաններում, անփոխարինելի էին մամլուքների հետ առևտրական կապ պաշտպանելու համար: Արգելքների երկարատև իրականացման պայմաններում Եգիպտոսի սուլթանությունում ապրանքների՝ հատկապես սննդամթերքի գներն արագորեն աճում էին<sup>69</sup>: Մի հիշատակության համաձայն՝ 1296 թ. սովի հետևանքով Ալեքսանդրիան, առանց ապօրինի ներկրված հացահատիկի, կարող

<sup>67</sup> Բակուրան, Դա ճագիր խաղաղության, էջ 75-77:

<sup>68</sup> Հնթում պատմիչ, Պատմություն թաթարաց, վենետիկ, 1951, էջ 62-63: Микаел ян Г., նշվ. աշխ., էջ 434-435: Մութաֆյան Կ., փիլիկյան կայսրությունների խաչմերուկում, էջ 459:

<sup>69</sup> Muir S., The Mamluke or Slave Dynasty of Egypt, London, 1896, p. 49.

էր նույնիսկ անմարդաբնակ դառնալ<sup>70</sup>: Պատահական չէ, որ 1308 թ. Լդնմնս V պապն (1305-1314) ավելի է խստացնում արգելքները՝ սպառնալով այն խախտողներին զրկել քաղաքացիական իրավունքներից: Նա արտոնում է Նյուրնկալների միաբանության ասպետներին բռնագրավել քրիստոնյաների նավերը, որոնք առևտուր էին անում մամլուքների տիրապետության տակ գտնվող բոլոր տարածքների հետ<sup>71</sup>: Հուլավանների և Պապության ու եվրոպական միապետների միջև երկար բանակցությունները, որոնց նպատակն էր միասնական պայքար կազմակերպել Եգիպտոսի սուլթանության դեմ, անցնում են ապարդյուն<sup>72</sup>:

Հենց այս ժամանակամիջոցում էր հակամամլուքյան ակտիվ գործունեություն ծավալել վենետիկցի քաղաքական հայտնի գործիչ Մարինո Սանուտո Տորսելլո Ավագը: Երկար տարիների ընթացքում՝ 1306-1321 թթ., Սանուտոն մշակում էր ռազմաքաղաքական նախագծեր՝ ուղղված մամլուքների դեմ ավելի արդյունավետ պայքար կազմակերպելուն: Եվ արդեն 1321 թ. սեպտեմբերին նա հռոմի պապ Հովհաննես XXII-ին (1316-1334) է ներկայացնում իր գաղտնի ծրագիրը, ըստ որի՝ մամլուքների դեմ պայքարը պետք է ընթանար երեք փուլերով: Ինչպես ժամանակին հեղուկ Ա.-ն, այնպես էլ Մարինոն, առաջին հերթին խորհուրդ էր տալիս տնտեսապես շրջափակել Եգիպտոսի սուլթանությանը: Քանի որ վերջինս չուներ թանկարժեք մետաղների պաշարներ, հացահատիկի ինքնաբավ մշակություն և, եթե հաջողվեր արգելափակել Ադննով գնացող ծովային ուղին, իսկ հարավեվրոպական ծովային պետություններն, իրենց հերթին, դադարեցնեին ապրանքների մատակարարումը եգիպտական նավահանգիստներին, ապա շատ կարճ ժամանակամիջոցում մամլուքներն ամբողջովին կհայտնվեին տնտեսական ծայրահեղ

ճգնաժամի առջև: Եվ միայն դրանից հետո կարելի էր ներխուժել քրիստոնյաների համար չարիք դարձած այդ երկիր և բավական հեշտությամբ կործանել այն: Իր ծրագրերում Մարինո Սանուտոն թազմավարական հույժ կարևոր նշանակություն էր տալիս Հայոց թագավորությանը: Թե՛ Պապությանը, և թե՛ եվրոպական միապետներին հղած նամակներով նա կոչ էր անում օգնել Կիլիկյան Հայաստանին՝ մամլուքների և Փոքր Ասիայի թյուրքական ցեղերի դեմ պայքարում: Սանուտոյի կարծիքով Թավրիզով, Սև ծովով ու Կիլիկիայով իրականացվող առևտուրը կարող էր ամբողջովին լրացնել ապրանքների այն քանակությունը, որ ստացվում էր Ալեքսանդրիայի միջոցով<sup>73</sup>: Իրականում, նրա ծրագրերի հիմքում խաչակրաց նոր արշավանքի կազմակերպման գաղափարն էր, որն այս անգամ պետք է իրագործվեր բոլորովին այլ, բազմակողմանիորեն մշակված դիրքերից: Սակայն այդ նախագիծն այդպես էլ իրականություն չդարձավ:

Սանուտոյի կողմից պատին իր ծրագիրը ներկայացնելուց մոտ վեց ամիս առաջ՝ 1321 թ. մարտի 19-ին, Լևոն Դ-ի և Վենետիկի միջև կնքվել էր առևտրական նոր պայմանագիր: Նրանց բանակցությունները սկսվել էին դեռ 1320 թվականից՝ Լևոն Դ-ի գահակալման առաջին իսկ տարում: Ի դեպ, նախաձեռնությունը պատկանում էր Վենետիկի հանրապետությանը, որը մի շարք պատմիրականություններ էր ուղարկել Հայոց արքունիք: Ուշագրավ է, որ 1320 թ. հոկտեմբերից մինչև 1321 թ. մարտի 19-ի միջակայքով թվագրվող՝ դոժ Ջիովաննի Սորանցոյին ուղղած՝ իր նամակում հայկական կողմը, ի թիվս այլ նրաշխարհումների, խոստանում էր ազատ և անվտանգ անցում ապահովել Թավրիզ և նույնիսկ Ասորիք ուղևորվող վենետիկցի վաճառականների համար<sup>74</sup>: Նույն ամսին Լևոն Դ-ը<sup>75</sup> վերահաս-

<sup>70</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 21.

<sup>71</sup> Menache S., Clement V, New York, 1998, p. 105. Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 19-21. Housley N., The Avignon Papacy and the Crusades, 1305-1378, Oxford, 1986, p. 12-13.

<sup>72</sup> Михаел ян Г., նշվ. աշխ., էջ 439: Boyle J., The Il-Khans of Persia and the Christian West // The Mongol World Empire, XIII, London, 1977, p. 557-563.

<sup>73</sup> Marino Sanuto, p. 3. Михаел ян Г., նշվ. աշխ., էջ 450-452: Bozoyan A., Le cadre juridique du commerce de la Cilicie arménienne, p. 131. Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 110. Aziz S. Atiya, The Crusade in the Later Middle Ages, New York, 1970, p. 119-124.

<sup>74</sup> S opracasa A., նշվ. աշխ., էջ 82-93:

տատնի էր նաև Մոնպելիեի վաճառականներին իր հոր՝ Օշին աքրայի 1314 թ. շնորհած արտոնագիրը<sup>76</sup>: Իսկ մինչ այդ Օշինը վերահաստատել էր նաև կատալոնացի առևտրականների արտոնությունները<sup>77</sup>: Արևմուտքի հետ քաղաքական և տնտեսական մերձեցումները, անշուշտ, անուշադրության չմատնվեցին ո՛չ մամլուքների, և ո՛չ էլ Փոքր Ասիայի թյուրքերի կողմից: Դժվար չէր համոզվել, որ տատնամյակների ընթացքում թմբկահարված խաչակրաց նոր աքշավանքի կազմակերպումն այլևս իրատեսական չէր: Մյուս կողմից՝ արդեն 1320-ական թվականներին ավելի նկատելի էր դարձել Մերձավոր Արևելքում Իլխանության դիրքերի անկումը: Ուստի ժամանակն էր, որ Եգիպտոսի սուլթանությունը վերսկսեր իր գրավողական քաղաքականությունը: Ավելին, հակառակ պարագայում, Փոքր Ասիայում Իկոնիայի սուլթանության մասնատման հետևանքով (1307) ձևավորված թյուրքական պետական կազմավորումներն իրենք կարող էին ստանձնել այդ դերը: XIV դ. սկզբին Միլնթը, Եփեսոսը և Ջոյուռնիսը գրավելուց հետո Այդինի թյուրքական էմիրությունը կարճ ժամանակում ստեղծել էր մեծաքանակ նավերից կազմված հզոր նավատորմ, որի ծովահենային գործողություններն ուղղակի չարիք էին դարձնել նվրոպացիների համար: Օսմանյան թյուրքերն արդեն XIV դ. 20-ական թվականներին աստիճանաբար գրավում էին Մարմարա ծովի շրջակա բյուզանդական տարածքները, իսկ կարամանյան թյուրքմենների նվաճողական քաղաքականության թիրախը Կիլիկյան Հայաստանն էր<sup>78</sup>: Կարամանյան թյուրքմենների առաջնորդ Թիմուրդաշը 1321 թ. ներխուժում է Կիլիկիա և մեծ ավերածություններ պատճառում: Կարճ ժամանակ անց՝ 1322 թ.

<sup>75</sup> Հարկ է նկատել, որ Լևոն Դ-ը այդ ժամանակ դեռևս անչափահաս էր, ուստի վենետիկի և մոնպելիեցիների հետ բանակցություններն իրականացվել են արքայի խնամակալների, ամենայն հավանականությամբ, նրանցից առավել հզոր Օշին կողմնացույց կողմից:

<sup>76</sup> Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 178-179, 185-186.

<sup>77</sup> Finke H., նշվ. աշխ., էջ 741-742:

<sup>78</sup> Микаелян Г., նշվ. աշխ., էջ 447-449: Фионова Н., Столкновения Венеции с турецкой опасностью в первой половине XIV века // Страны Средиземноморья в эпоху феодализма, Вып. 2; Горький, 1975, с. 89-96.

գարնանը, մամլուքյան զորքերը ներխուժում են Կիլիկյան Հայաստան և գրեթե հիմնովին ավերում Այասի բերդերը: 1323 թ. Հայոց կաթողիկոս Կոստանդին Դ Լամբրոնացին (1323-1326) Կահիրեում սուլթան Ալ-Նասիր Նասրեդդին Մուհամմեդի (1294-1295, 1299-1309, 1309-1340) հետ կնքում է խաղաղության պայմանագիր, որով Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էր Այասի բաժնից տարեկան 1200000 դրամ (ըստ Ղ. Ալիշանի՝ 50000 ֆլորին)<sup>79</sup> վճարել Եգիպտոսի սուլթանությանը: Իսկ սուլթանը հանձն էր առնում սեփական միջոցներով վերականգնել իրենց ավերած քաղաքներն ու բերդերը՝ բացի Այասից<sup>80</sup>: Ընդ որում, մինչ այդ մամլուքները ձեռնարկել էին նրել Ասորիքում վերականգնելու Լաթաքիա նավահանգստի նրբեմնի հզորությունը, որը պետք է հնարավորինս նվազեցնել Այասի առևտրական նշանակությունն Արևելյան Միջերկրականում: Սակայն հայկական քաղաքն ասպատակելուց հետո նրանք դադարեցնում են այդ ձեռնարկումը<sup>81</sup>:

Կիլիկիայի առևտրական գլխավոր դարպասի կարևորությունն այնքան մեծ էր, որ նրա ավերումն Արևմուտքում քաղաքական որոշ գործողությունների ալիք առաջացրեց<sup>82</sup>: Դեռևս 1320 թ. Հովհաննես XXII պապը նվրոպական պետություններից կտրականապես պահանջել էր դադարեցնել Եգիպտոսի սուլթանության հետ առևտրական շփումները: Տեղի տալով Պապության ճնշումներին՝ 1323 թ. վենետիկյան իշխանությունները նույնպես նման արգելքներ սահմանեցին իրենց հպատակների համար, որոնք տարածվում էին նույնիսկ հասարակ ճանապարհորդների վրա: Ալեքսանդրիայում վենետիկցիները ստիպված են լինում նույնիսկ փակել իրենց հյուպատոսությունը: Կայացվել էր վճիռ, որով բոլոր վենետիկցիները մինչև

<sup>79</sup> Ալիշան Ղ., Միսուրն, էջ 390-391:

<sup>80</sup> Մմբատ Սպարապետ, էջ 121-122: Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 232-233. Микаелян Г., նշվ. աշխ., էջ 454:

<sup>81</sup> Labib S., Egyptian Commercial Policy in the Middle Ages // Studies in the Economic History of the Middle East, From the Rise of Islam to the Present Day, Oxford, 1978, p. 67.

<sup>82</sup> Housley N., նշվ. աշխ., էջ 22-23: Richard J., Le Royaume de Chypre et l'embargo sur le commerce avec l'Égypte (fin XIIIe – début XIVe siècle), p. 86.

1324 թ. ապրիլ պետք է թողնեն իրենց տարածքները, իսկ չինագանդվողները ստիպված կլինեն մեծ գումարի տուգանք վճարել: Հովհաննես XXII-ը 1326 թ. կայացնում է աննախադեպ որոշում՝ իրեն նախորդած արավերի գահակալման ժամանակ մամլուքների ռազմամթերք վաճառած բոլոր անձինք այդուհետև համարվելու էին հերետիկոսներ<sup>83</sup>: Այն, որ եվրոպացիները մամլուքների հետ իրենց առևտուրը նրկար ժամանակ իրականացրել են միջնորդ երկրների միջոցով, բավականաչափ հիմնավորվում է մի արժեքավոր սկզբնաղբյուրի օգնությամբ ևս, որը պատմում է, թե ինչպես Եգիպտոսի սուլթանը 1345 թ. ասել էր, որ արդեն 23 տարի է, ինչ վնաստիկյան ոչ մի նավ չի տեսել իր տերության նավահանգիստներում<sup>84</sup>:

Նույն՝ 1323 թ., Հովհաննես XXII-ը Այասը վերականգնելու համար որոշում է 30000 ֆլորին գումար ուղարկել կիլիկյան Հայաստան: Այս մասին ուշագրավ վկայություններ է հաղորդում Ներսես Պալիանենցը. «Այսպես կորեալ Այաս երկրքին, բերդովս իւր, գերեալ ի Տաճկայն: Չայս աղէտ կսկծանաց իբր լուստ պապն Ջոհանէս առաքեաց ԼՌ. (30000) ֆլորինս ոսկոյ, զի դարձեալ շինեսցեն գերդն Այասոյ...»<sup>85</sup>:

Լևոն Դ-ին ուղղած նամակում Հռոմի պապը գրել էր, որ իր նվիրակներին պատվիրել էր այդ 30000 ֆլորինը փոխ առնել ֆլորենտական Բարդի ընկերությունից և տրամադրել Հայոց թագավորությանը, միաժամանակ նշելով, որ այդ ձեռնարկումն իրեն հորդորել է իրականացնել Մարինո Սանուտոն: Այդուհանդերձ, գումարը բավական ուշացումով է տեղ հասնում, իսկ մինչ այդ հայերը սեփական ուժերով և կարճ ժամանակում վերականգնել էին Այասը<sup>86</sup>: Ի դեպ, Ի. Ռենուարի տվյալներով Հովհաննես XXII-ն իր գահակալման շր-

<sup>83</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 44-49. Նույնի՝ Observations on Venetian Trade in the Levant in the XIVth Century, p. 534-535. Housley N., նշվ. աշխ., էջ 203-204:

<sup>84</sup> Ashtor E., Observations on Venetian Trade in the Levant in the XIVth Century, p. 535.

<sup>85</sup> Ներսես Պալիանցի ժամանակագրական հատվածները, էջ 189:

<sup>86</sup> Ալիշան Ղ., Սիսուսն, էջ 390-391:

ջանում Հայոց արքային ընդհանուր հաշվով՝ 35722 ֆլորին գումար է ուղարկել<sup>87</sup>: Վերոնշյալ փաստերից կարելի է միայն եզրակացնել, որ XIV դ. 20-30-ական թվականներին Այասի ռազմավարական նշանակությունն էլ ավելի էր մեծացել՝ ոչ միայն տնտեսական, այլ նաև աշխարհաքաղաքական առումներով:

Լևոն Դ-ը փորձում է էլ ավելի սերտացնել կիլիկյան Հայաստանի առևտրական կապերն արևմտամերձրկական պետությունների հետ: Հայոց արքան 1330 թ. ամուսնանում է Սիկիլիայի թագավոր Ֆրեդերիկ III Արագոնացու դստեր՝ Կոնստանսի հետ<sup>88</sup>, իսկ մեկ տարի անց նրկու թագավորությունների միջև կնքվում է առևտրական պայմանագիր<sup>89</sup>: Բավական նրկար բանակցություններից հետո 1333 թ. նոյեմբերի 10-ին Լևոն Դ-ը Վենետիկի դոժ Ֆրանչեսկո Դանդոլոյի (1328-1339) ղեկավարին նոր արտոնագիր է շնորհում: Հարկ է նկատել, որ վենետիկյան կողմի խնդրանքով այստեղ ամրագրվել էր մի կետ, որը չկար նախորդ պայմանագրերում: Այն վերաբերում էր հայկական կողմի ապահովության երաշխիքներին՝ ուղղված կրնտնից, Պելոպոնեսից, սևծովյան շրջաններից և այլ վայրերից կիլիկյան Հայաստան ժամանող վենետիկցի վաճառականներին<sup>90</sup>, ինչը փաստում է, որ, չնայած մամլուքների արշավանքներին՝ Հայոց թագավորությունում միջազգային առևտրի ծավալները ոչ միայն չէին նվազել, այլ նույնիսկ աճել էին: Ավելին, ջնստվագիների և վենետիկցիների հակամարտությունը կիլիկյան ափերին դեռևս շարունակվում էր. 1332 թ. Այասի ափերի մոտ նրանց միջև նոր բախում էր տեղի ունեցել: Այս միջադեպի հանգամանքներից հայտնի է միայն, որ իրականացվել էր հարձակում կիպրոս ուղևորվող ինչ որ նավի վրա<sup>91</sup>: Ավելի ուշ՝ 1335 թ., Լևոն Դ-ը ֆլորենտական Բարդի ընկերության ներկայացուցիչ Ֆրանչեսկո Պելոլոտտիի հետ առևտրական պայմանագիր է կնքում: Վերջինիս անմիջական վկայությամբ՝

<sup>87</sup> Renouard Y., նշվ. աշխ., էջ 795:

<sup>88</sup> Յովհան Դարդիլ, էջ 29-30:

<sup>89</sup> Լևոն Ե-ն իր հրովարտակը, էջ 92:

<sup>90</sup> Sopracasca A., նշվ. աշխ., էջ 102-112:

<sup>91</sup> Ալիշան Ղ., Հայ-վենետ, էջ 78-79:

Պերուցցի ընկերության գործակալները ևս բավական արտոնյալ կարգավիճակ ունեին Կիլիկյան Հայաստանում: Նկատենք, որ թեև Այասի անկմանն ընդամենը մեկ տարի էր մնացել, ըստ Պեգոլոտտիի՝ այնտեղ առևտուր էին անում ոչ միայն ջենովացի ու վենետիկցի, այլ նաև կատալոնացի, պրովանսացի ու սիկիլացի վաճառականները<sup>92</sup>:

1335 թ. իլխան Աբուսայիդի (1317-1335) մահից հետո Իլխանությունը սկսում է արագորեն քայքայվել: Հովհաննես XXII և նրան հաջորդած Բենեդիկտոս XII (1334-1342) պապերի՝ Լևոն Դ-ին ուղղած հավաստիացումները, թե Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ VI վալուան (1328-1350) նախապատրաստում է խաչակրաց նոր արշավանք՝ մնացին սոսկ խոսքեր: Եվ արդեն 1335 թ. Եգիպտոսի սուլթանի հրամանով Հալեպի մամլուք էմիր Ալթուն-Բուդայի գործերը ներխուժում են Կիլիկյան Հայաստան և հասնելով Տարսուս՝ ճանապարհին թալանի ենթարկում Մամեստիան և Ադանան: Հաջորդ տարի մամլուքները և կարամանյան թուրքմենները կրկին ներխուժում են Կիլիկիա: Միայն 1337 թ. Եգիպտոսի սուլթանը համաձայնում է խաղաղության պայմանագիր կնքել՝ ծանր պայմաններ դնելով Լևոն Դ-ի առջև: Կիլիկյան Հայաստանը զրկվում էր մինչև Պիրամոս գետն ընկած տարածքներից՝ այդ թվում և Այասից<sup>93</sup>: Հայկական խոշորագույն նավահանգստի կորուստը ծանր հարված էր նրկրի տնտեսությանը: Պատահական չէ, որ մինչ այդ Կիլիկիայի վրա իրականացված բոլոր՝ նույնիսկ ամենաավերիչ ասպատակություններից հետո էլ միջազգային մեծածավալ առևտրից զրկվող նկամուտների շնորհիվ բավական կարճ ժամանակում պետության տնտեսական կյանքը բնականոն հունի մեջ էր ընկնում: Փաստորեն կարելի է ասել, որ Այասի կորուստը միջազգային առևտրում Հայկական Կիլիկիայի փառահեղ դերակատարության վերջակնոտն էր:

<sup>92</sup> Pegolotti, p. 59-63.

<sup>93</sup> Микаелян Г., նշվ. աշխ., էջ 457: Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 405-407:

Չենք կարող անուշադրության մատնել վերոնշյալ դեպքերին սերտորեն ամնչված շատ հետաքրքիր մի դրվագ ևս: Ավինյոնում հաստատված Պապության տարատեսակ փաստաթղթերի հրատարակված հավաքածուներից մեկում ներառվել է մի շատ արժեքավոր փաստաթուղթ: Այն Բենեդիկտոս XII պապի հանձնարարությունն է Բարդի ընկերությանը, որով վերջինս պետք է 10000 ոսկե ֆլորինի ցորեն գներ Ապուլիայից և որպես օգնություն ուղարկեր 1336 թ. մամլուքների ավերիչ արշավանքների հետևանքով ծանր կացության մեջ հայտնված Կիլիկիայի թագավորությանը<sup>94</sup>: Այս ձևնարկման նրկար «ողիսականից» առանձնացնենք առավել ուշագրավ հատվածները: 1336 թ. ապրիլի 3-ին պապը նամակ էր հղել Սիկիլիայի թագավոր Ռոբերտ Անժուացուն (1309-1343), որպեսզի նա հնարավորինս դյուրացներ ապուլական նավահանգիստներից (Ապուլիան գտնվում էր Սիկիլիայի (կամ Ննապոլիտանական) թագավորության տարածքում) ցորենի գնման և Կիլիկիա ուղարկելու գործընթացը: Սակայն Ռոբերտ Անժուացին դժկամությամբ է ընդունում պապի խնդրանքը<sup>95</sup> և հայտարարում, որ 10000 ֆլորին արժեքով՝ նախնական հաշվարկված 5000 սալմա ցորենից միայն 2000-ը կարող է առաքել առանց մաքսատուրք գանձելու. մնացած 3000 սալմայից պետք է հարկվեր բավական բարձր մաքսավճար: Պապի պատվիրակներին այլ ելք չէր մնում, քան համաձայնել այդ առաջարկին: Հայտնի է, որ Բարդիի գործակալները ցորենը գնել և առաքել էին ապուլական Մանֆրեդոնիս և Բարի քաղաքներից: Սակայն թե ինչ քանակություն է իրականում հասել Կիլիկիա՝ չի հիշատակ-

<sup>94</sup> Benoit XII (1334-1342), Lettres Communes, p. 371. Benoit XII (1334-1342), Lettres closes, patentes et curiales, p. 101-104.

<sup>95</sup> Թեև Հայոց արքա Օշինը 1316 թ. ամուսնացել էր Ռոբերտ Անժուացու եղբոր դստեր՝ Հովհաննայի (Ժաննա-Իրեն) հետ, սակայն Լևոն Դ-ն էլ, իր հերթին, ամուսնացած էր Ննապոլյան Սիկիլիայի թագավորության հակառակորդ՝ Արագոնի թագավորների իշխանության տակ գտնվող Սիկիլիայի մյուս թագավորության միապետ Ֆրեդերիկ III-ի դստեր՝ Կոնստանսի հետ: Ռատի շնք բացառում, որ Ռոբերտի նշյալ կնգվագրը կարող էր այս պատճառով ևս պայմանավորված լինել (Յովհան Դարդել, էջ 27-30: Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 391, 405-406, 436-437):

վում. առավել ևս, որ տրամադրված գումարից հանվելու էին թե՛ վերոնշյալ մաքսատուրքը, և թե՛ Բարդիի շահույթի չափաբաժինը: Թե՛ն Ի. Ռենուարը փաստում է, որ այդ ժամանակ Ապուլիայում 10000 ֆլորինով կարելի էր գնել էլ ավելի մեծ քանակությամբ գործն, սակայն փորձենք հաշվել պայմանականորեն ընդունված 5000 սալման<sup>96</sup>: Նկատի առնելով Ֆրանչեսկո Պեզոլոտտիի հիշատակած ապուլական սալմայի տեսակները, որոնք, ի դեպ, այդքան էլ միմյանցից չեն տարբերվում, 5000 սալմային համապատասխանում է մոտավորապես 1216 տոննան:

Կլիլիկիայի արքաներին այդպես էլ չի հաջողվում ազատագրել կորցրած տարածքները: 1347 թ. հայկական զինված ուժերը Լիպարիտ գորավարի հրամանատարությամբ, Կիպրոսի թագավորի ու Հռոդոսի Հիվանդախնամ ասպետների օգնությամբ, մեծաթիվ զոհերի գնով կարողանում են վերցնել Այսոը, սակայն մամլուքյան նավատորմն անմիջապես պաշարում է քաղաքը և կրկին գրավում այն: 1349 թ. Կոստանդին Բ-ը (1344-1362), օգնություն ստանալով Հռոդոսի ասպետներից, վերջին անգամ անցնում է Պիրամոս գետը և հասնում Հայկական ծոցի արևելյան ափին գտնվող Ալեքսանդրես քաղաքը, ինչը նշանակում է, որ Այսո քաղաքը նույնպես պետք է ազատագրված տարածքների մեջ լիներ<sup>97</sup>: Մամլուքների և թյուրքական ցեղերի պարբերաբար հարձակումներից հետո Հալեպի էմիրը 1360 թ. գավթում է Տարսոնն ու Ադանան: Օրիսական վիճակում հայտնված Կոռիկոսի բնակիչներն օգնություն են խնդրում Կիպրոսի թագավոր Պետրոս I-ից (1359-1369): Վերջինս ցուցաբերած օժանդակության դիմաց քաղաքը վերցնում է իր իշխանության տակ<sup>98</sup>: Ի դեպ, հայտնի է, որ 1375 թ. Կոռիկոսի մաքսատունը 3000 ֆլորինի

նկատուտ է ստացել<sup>99</sup>:

Այստի անկումով դեպի Թավրիզ ուղղվող մայրուղին արագորեն կորցրեց իր կարևոր նշանակությունը: Պատահական չէ, որ մեկ տարի անց՝ 1338 թ., վենետիկյան Սենատը որոշում է ընդունում Իրանի հետ առևտրական կապերի դադարեցման մասին, իսկ 1340 թ. նման վճիռ է կայացնում նաև Ջենովան: Պապությունը, ի վերջո, տեղի տալով իտալական հանրապետությունների համառությանը՝ 1344 թվականից սկսում է հատուկ արտոնագրերով թույլտվություններ շնորհել մամլուքների հետ օրինական առևտրական հարաբերություններ ունենալու համար<sup>100</sup>: Իսկ 1345 թ. Վենետիկի և Եգիպտոսի սուլթանության միջև կնքվում է առևտրական նոր պայմանագիր<sup>101</sup>:

Նույն վտանգը, որ կախվել էր խաչակրաց իշխանությունների վրա Անտիոքի կորստից հետո, սպառնում էր նաև Կիպրոսի թագավորությանը: Ի դեմս Կլիլիկյան Հայաստանի կորցնելով իր գլխավոր առևտրական գործընկերոջը, Կիպրոսը հայտնվում էր տնտեսապես խոցելի իրավիճակում: Նպատակ ունենալով տարածաշրջանում բարձրացնել Կիպրոսի թե՛ քաղաքական, և թե՛ տնտեսական դերակատարությունը, Պետրոս I-ը ձեռնամուխ է լինում իր ռազմական հանդուգն ծրագրերի իրականացմանը: 1360 թ. Կոռիկոսը ձեռք բերելուց հետո 1361 թ. Պետրոսը գրավում է նաև Ատտալիան: Ապա նա անցնում է իր նախագծի ամենակարևոր խնդրի իրագործմանը. 1365 թ. հոկտեմբերի 10-ին 70-100 նավերից բաղկացած կիպրական նավատորմը, որին օժանդակում էին Հռոդոսի Հյուրընկալ ասպետները, մտնում է Ալեքսանդրիա, սակայն մի քանի օր շարունակ քաղաքը թալանի ենթարկելուց հետո հեռանում է: Ծառ չանցած կիպրական նավերը պաշարում են կարամանյան թյուրքմեններին պատկանող Ալայա նավահանգիստը՝ թալանելով ու ավերելով նավակա-

<sup>96</sup> Renouard Y., նշվ. աշխ., էջ 793-824:

<sup>97</sup> Թինոյան Դ., Կլիլիկիայի հայկական թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ., Ե., 2011, էջ 97-98:

<sup>98</sup> Михаил ян Г., նշվ. աշխ., էջ 464-469: Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 179:

<sup>99</sup> Գրումն Ռ., Լևանտի կայսրությունը. Արևելյան հարցի պատմություն, Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 360:

<sup>100</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 64.

<sup>101</sup> Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 169-170:

յանը<sup>102</sup>: Նախապես պայմանավորվելով Հայոց արքա Կոստանդին Դ-ի (1365-1373) հետ 1367 թ. սևպոնմբերին Պնտրոսը գրավում է Այսար, սակայն ութ օր հայկական ուժերին գուր սպասելուց հետո, վերադառնում է Կիպրոս<sup>103</sup>: 1369 թ. Կիպրոսի արկածախնդիր արքան դավադրաբար սպանվում է իր իշխանների ձեռքով<sup>104</sup>: Ալեքսանդրիայում նրա իրականացրած հարձակումն ադնտալի հետևանքներ ունեցավ Եգիպտոսի սուլթանությունում գտնվող եվրոպացի վաճառականության համար: Իսկ Հայոց արքայի հետ նրա համագործակցությունից և Այսուի կարճատև ազատագրումից հետո, մամլուքները կրկին պարբերաբար ասպատակում են Կիլիկյան Հայաստանը: Ի վերջո, Եգիպտոսի սուլթանի հրամանով Հալեպի էմիրն արշավում է Կիլիկիա և 1375 թ. ապրիլին գրավում Սիսը՝ գերելով Հայոց արքա Լևոն Ե Լուզինյանին ու նրա ընտանիքը<sup>105</sup>:

Եվ այսպես, վերը շարադրված փաստերի հիման վրա փորձենք ներկայացնել մեր տեսակետը սույն հնտագոտության կարևոր հիմնախնդրի վերաբերյալ՝ միջազգային առևտրի ազդեցությունը Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների վրա: XIII-XIV դարերն ընդգրկող ժամանակաշրջանն աչքի է ընկնում շատ կարևոր առանձնահատկությամբ, երբ թե՛ եվրոպական, և թե՛ արևելյան պնտությունների հնտապնդած տնտեսական և քաղաքական շահերը գնալով մեկ ամբողջություն էին կազմում և միջազ-

<sup>102</sup> Machaut G., La prise d'Alexandrie en chronique du roi Pierre I de Lusignan // pub. L. De Mas Latrie, Société de l'Orient Latin, Genève, 1877, p. 57-100. Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 64-93. Ближний Восток, Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, с. 58-61.

<sup>103</sup> Կոստանդին Դ-ի կողմից Պնտրոս Ի-ին օգնություն չցուցաբերելը կարող էր պայմանավորված լինել նրկու պատճառով: Նախ՝ Կիպրոսի թագավորը հավակնություններ ուներ Հայոց գահի նկատմամբ, ինչն, անշուշտ, բավարար է Կոստանդին Դ-ի վերոնշյալ դիրքորոշումը բացատրելու համար: Սակայն ոչ պակաս համոզիչ է նաև այն, որ այդ նույն ժամանակ Կոստանդինը զբաղված էր Կիլիկյան Հայաստան ներխուժած թշնամու դեմ պայքարով (Թիմոյան Դ., նշլ. աշխ., էջ 113):

<sup>104</sup> Մուրաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 466: Բակուրյան, Կիպրոս կղզի, էջ 53:

<sup>105</sup> Տեր-Պետրոսյան Լ., նշլ. աշխ., հ. Բ, էջ 460:

գային հարաբերությունների ասպարեզում դրսևորվում գրեթե համարժեք առաջնահերթությամբ: Ընդ որում, դիվանագիտական պայքարում տնտեսական շահն առավելապես արտահայտվում էր միջազգային առևտրում նպաստավոր դիրքեր գրադեցնելու մեջ: XIII դ. սկզբից, երբ Կիլիկյան Հայաստանը դեռ սկսում էր դառնալ միջերկրածովյան առևտրի համակարգի մի մասը, հարևան պնտությունների՝ մասնավորապես Իկոնիայի սուլթանության և Անտիոքի դքսության հետ նրա հարաբերություններում արդեն իսկ զգացվում էր տնտեսական շահի վրա խառնված քաղաքական որոշակի գործողությունների իրողությունը: Սովորաբար դրանք արտահայտվում էին կարևոր նավահանգիստների կամ ճանապարհային հանգուցակետների համար պայքարով: Բարձր մակարդակի առևտրական կապեր հաստատելով միջերկրածովյան բազմաթիվ պնտությունների հետ՝ Հայոց թագավորությունն անխուսափելիորեն ներգրավվում էր տնտեսական շահով շաղախված աշխարհաքաղաքական գործընթացներում: Ակնհայտ է, որ Կիլիկիայի արքաները գիտակցում էին միջազգային հարաբերություններում որակական այդ փոփոխությունների դերն ու նշանակությունը: Նրանց երաշխավորած բացառիկ պայմանների շնորհիվ Կիլիկյան քաղաքները կարճ ժամանակամիջոցում օտարներկրյա՝ հատկապես եվրոպացի վաճառականների համար դառնում են ամենագրավիչ հանգրվաններից: XIII դ. կեսից՝ մամլուքների իշխանության հաստատումից սկսած, Եգիպտոսի սուլթանության արտաքին քաղաքականության գերխնդիրն է դառնում հնարավորինս չեզոքացնել Իլլահանության և Եվրոպայի դաշինքի համար ամուր նախապայմաններ ձևավորող յուրաքանչյուր գործոն: Հայկական Կիլիկիան այդ բազմակողմանի համագործակցության հիմնական դերակատարներից էր: Ընդ որում, առանձնահատուկ կարևորություն ուներ Կիլիկիայի դերն առևտրական փոխհարաբերություններում, որի հետ մեկտեղ, Հայկական թագավորությունը կամրջի դեր էր կատարում Հուլավյանների տնտեսության և

Եվրոպայի միջև ընթացող թանկարժեք մետաղների հիշատակության համար<sup>106</sup>:

Պատկերն ավելի համակողմանի ներկայացնելու համար, նախ և առաջ, հարկ է առանձնացնել քաղաքական այն լծակները, որոնց միջոցով հնարավոր էր լինում ճնշում գործադրել Եգիպտոսի սուլթանության վրա: Այդ ճնշումն իրագործելու շահագրգիռ հիմնական կողմերից մեկն Արևմուտքն էր՝ ի դեմս Պապության, Ֆրանսիայի, Անգլիայի, ինչպես նաև հարավեվրոպական առևտրական տնտեսությունների: Քաղաքական մյուս բևեռն Իլխանությունն էր, որը կատաղի պայքար էր մղում ոչ միայն մամլուքների տնտեսության, այլ նաև Ոսկե Հորդայի և Չաղաթայի ուլուսի դեմ: Քանի դեռ Մերձավոր Արևելքում հույսերով ռազմաքաղաքական գերակայություն ունեին, իսկ Արևմուտքը, շնորհիվ խաչակրաց արշավանքների սպառնալիքների ու արգելքների քաղաքականությանը իրականացվող տնտեսական շրջափակման, ազդեցիկ քաղաքական լծակներ ունեւ, մամլուքներն իրենց ռազմավարական ծրագրերում ստիպված էին բավական զգուշություն ցուցաբերել: Եթե XIV դ. առաջին քառորդին Եվրոպայում հնչող խաչակրաց արշավանքների կոչերից Եգիպտոսի սուլթանությունը կարող էր նույնիսկ շատ չզգուշանալ, ապա տնտեսական շրջափակումը նրան ճնշելու թերևս ամենաազդեցիկ գործիքն էր: Նման պարագայում Կիլիկիան և Կիպրոսը մամլուքների համար կենսական նշանակության ապրանքների կարևորագույն աղբյուրների էին վերածվում: Արդեն նշել ենք, որ այդ միջնորդական դերում Հայոց թագավորության նշանակությունը շատ մեծ էր: Ինչպես նկատել է Է. Աշթորը, Կիլիկյան Հայաստանը Թավրիզ, Բաղդադ և Պարսից ծոց ուղղվող քարավանային ուղու մեկնակետն էր, իսկ Այասը, ըստ նրա՝ XIII դ. ներկրող կեսի և XIV դ. առաջին կեսի Լևանտի առևտրի գլխավոր կենտրոնն էր<sup>107</sup>: Չունենալով

թանկարժեք մետաղների մեծ ծավալների արդունահանում՝ Եգիպտոսի սուլթանության պետական գանձարանի համար միջազգային առևտուրը դրանց կուտակման հիմնական միջոցն էր: Այսպես, որն Ալեքսանդրիայի մրցակիցներից էր, ինչը կարող էր նրա հաճախակի ավերումների առիթ դառնալ, միևնույն ժամանակ, եգիպտական նավահանգիստներին տարատեսակ ապրանքներ մատակարարող կարևորագույն կենտրոններից էր: Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ կարծում ենք, որ Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների վրա միջազգային առևտուրը նրկակի ազդեցություն է ունեցել: Աշխարհաքաղաքական որոշակի իրադրության պայմաններում, փաստորեն, այն սանձիչ դեր էր կատարում մամլուքների հարձակումներն ինչ որ չափով կանխելու համար: Նման իրավիճակներ ձևավորվում էին հատկապես Իլխանության հետ նրանց ռազմական բախումներից հետո, ինչպես նաև պապական արգելքների խստացման պատճառով, երբ Եգիպտոսի սուլթանությունը հայտնվում էր սովի ու ճգնաժամի մեջ: Մոնղոլների հետ տարվող պատերազմներից հետո թեև մամլուք սուլթաններն ավերիչ արշավանքներ էին ձեռնարկում Կիլիկյան Հայաստանի դեմ, սակայն դրանց ավարտին, հաճախ, նրկարածակետ խաղաղության պայմանագրեր էին կնքում Հայոց արքաների հետ, որոնց մեջ ներառվում էին առևտրի կարգավորմանը վերաբերող կարևոր կետեր: Այդ ժամանակամիջոցները թույլ էին տալիս վերականգնել Եգիպտոսի սուլթանության տնտեսությունը, տարիների ընթացքում նորից լցնել գանձարանը և ապա միայն իրականացնել ռազմական նոր ծրագրեր: Հայոց թագավորությունում ևս տնտեսական կյանքն ուղղորդվում էր բնականոն հուն, իսկ Այասում ու մյուս նավահանգիստներում իրականացվող առևտուրն արագորեն մեծ ծավալների էր հասնում: Այնուամենայնիվ, մամլուքները պարբերաբար իրականացվող արշավանքներով պետք է կասեցնեին Կիլիկյան նավահանգիստների չափից ավելի զարգացումը, քանի որ տնտեսական մեծ ներուժի շնորհիվ վերջիններս կարող էին շրջանցել իրենց եգիպտական մրցակիցներին: Սակայն XIV դ. 30-ական թվականների վեր-

<sup>106</sup> Spufford P., Money and Its Uses in Medieval Europe, p. 149-156. Նույնի՝ Le role de la monnaie dans la révolution commerciale du XIIIe siècle, p. 389.

<sup>107</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, p. 104.

ջին, նրբ այլևս չկար մոնղոլական վտանգը, խաչակրաց նոր արշավանքի հիմնական կազմակերպիչներ Ֆրանսիան և Անգլիան աստիճանաբար ընկղմվում էին Հարյուրամյա պատերազմի մեջ, իսկ Պապության գործադրած արգելքների մտրակը սպառել էր պիտանմլության ժամկետը՝ Եգիպտոսի սուլթանությունն իր ռազմաքաղաքական նախագծերում գրեթե լիակատար ազատություն էր ստանում: Թեև 1320-ական թվականներին Պապությունը խստագրեմ էր տնտեսական արգելքների պայմանները, սակայն հետագայում դրանք գնալով մեղմանում են: Հետևաբար, եվրոպացիների և մամլուքների միջև առևտրական կապերում Կիլիկյան Հայաստանի միջնորդական դերը կորցնում էր իր նշանակությունը: Մյուս կողմից՝ Փոքր Ասիայում գնալով հզորացող թյուրքական պետական կազմավորումները սպառնում էին իրենց ձեռքը վերցնել Մերձավոր Արևելքում գրավողական քաղաքականության զերակայությունը: Առաջ անցնելով մամլուքներից՝ թյուրքներն իրենք կարող էին գրավել թե՛ Կիլիկյան Հայաստանը, և թե՛ Կիպրոսը, ինչն ի վերջո կհանգնեցներ նրանց առևտրատնտեսական, իսկ ապա նաև քաղաքական գերակայությանն Արևելյան Միջերկրականում ու Մերձավոր Արևելքում: Այս դեպքում արդեն Եգիպտոսի սուլթանությանը մնում էր անցնել վճռական քայլերի, որոնցում Հայոց թագավորության գրավմանն առաջնահերթ նշանակություն էր տրված:

XIII-XIV դդ. միջերկրածովյան առևտրի համակարգում Կիլիկիայի հայկական թագավորության դերակատարության քննության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

